



ՄԻՈՆ

ՅՈՒՆՈՒԱՐ – ՓԵՏՐՈՒԱՐ – ՄԱՐՏ

ԹԻՒ 1.2.3 2008

ԱՄԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ԶԲ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

2008	ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ - ՄԱՐՏ	ԹԻՒ 1-2-3
2008	JANUARY - FEBRUARY - MARCH	No. 1-2-3

S I O N

VOL. 32

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE.

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՇԵՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՍԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ
(Սուրբ Էջմիածին, 6 Յունուարի, 2008 թ.)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ սրանում երևաց Աստծու սէրը մեր հանդէպ.
այն, որ Աստուած Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց,
որպէսզի Նրանով կենդանի լինենք» (Ա Յովհ. Դ 9):

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ,

Սուրբ Ծննդեան և Աստուածայտնութեան տիեզերանորոգ անճառելի խորհրդի ուրախութիւնն է վերստին համակել մեր հոգիները: Եւ մենք այսօր աշխարհի բոլոր կողմերում Փրկչին յուսացեալ հոգիների հետ շտապում ենք դէպի մասուր՝ հաւատքով միանալու Բեթղեհէմի խոնարհ այրում Աշխարհի Փրկչին ընծաներ մատուցող իմաստուն մոգերին ու երջանիկ հովիւներին, երկրպագելու Մանկանը, տեսնելու Աստծոյ ողորմութեան լոյսը դէպի երկիր իջնող և հրեշտակների հետ փառաբանելու Աստուածորդու Սուրբ Ծնունդը. «Փառք ի բարծունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Որդին է Աստծոյ, Միածինը Հօր, որ իբրև սեր աշխարհի եկաւ: Անպարունակ սիրով Նա յաղթեց աշխարհին, փոխեց պատմութեան ընթացքը և Աստծուց հեռացող մարդկութեանը պարզեց շնորհը փրկութեան ու յաւիտենական կեանքի, շնորհը՝ դէպի Աստուած դառնալու: «Եւ սրանում երևաց Աստծու սէրը մեր հանդէպ. այն, որ Աստուած Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպէսզի Նրանով կենդանի լինենք» (Ա Յովհ. Դ 9):

Երկու հազարամեակ աւետուում է Սուրբ Ծնունդը և աստուածային Յայտնութիւնը Փրկչի՝ դէպի մարդու հոգին ճանապարհի հարթելով մարտիրոսների նահատակութեամբ, սրբերի կեանքով, բիրաւոր մարդկանց մաքուր սրտի անկեղծաւոր հաւատքով, առաքինազարդ գործերով: Վկայուում է Աւետարանը կենարար յոյսի, մարդասիրութեան արժեքներով նորոգելով ժողովուրդների կեանքը, ոռոգելով խաղաղութեան, արդարութեան և իրաւունքի արահետները: Քրիստոնէական ճանաչողութիւնն ու ըմբռնումները Աստծոյ ներկայութեան ապրումով ծնունդ են տուել հասարակական կեանքի վերափոխման ծրագրերի, մարդու արժանաւորման մտածողութեան ու մշակոյթի՝ կոչուած ծառայելու աշխարհի բարօրութեանն ու մարդկանց երջանկութեանը:

Մարդկային կեանքի անդաստանները, սակայն, միշտ չէ, որ արգասաւորուում են Աստծոյ ներկայութեան հաւատով: Ոսկեհունդ բարի հասկերի կողքին բարձրանում է նաև չարի որոմը: Այսօր էլ աշխարհը նման է Բեթղեհէմին, որտեղ ծնունդ առած

Յիսուս Քրիստոսին երկրպագում են իմաստուններ ու հովիւներ՝ հաւատալով Նրա պարգևած փրկութեան շնորհին: Բայց աշխարհը մնան է նաև այն Բեթղեհէմին, որ մերժեց օթևան տալ Փրկչին, որտեղ կան մանուկներ կոտորող իշխանատենչ հերովդէսներ, անմեղին երեսուն արծաթով մահուան մատնող յուդաներ, անարդարութեան հանդէպ ծեռքերը լուացող պիղատոսներ, նորօրեայ բազմադէմ խաչելութիւններ՝ պատերազմներ, ահաբեկչութիւններ, կեղծիքներ, կարիք և անօգնականութիւն: Աստծուց հեռացող այսօրինակ ընթացքներով աշխարհը միշտ պիտի զգայ խաղաղութեան, արդարութեան պակասը, ազնուութեան, խոնարհութեան, գթութեան ու կարեկցութեան պակասը:

Արդարև, սիրելիներ, այս չէ կամքը Աստծոյ, այս չէ կոչումն աշխարհի և մարդու: Աստծոյ պարգևը Քրիստոսով նորոգուած կեանքն է, Աստծոյ պարգևը Քրիստոսով յայտնուած սէրն է, որ մեծ ու սքանչելի Սուրբ Ծնունդով Փրկիչ մեր Տիրոջ, այսօր եօթնարփեայ ծիածանել են բնեռներն աշխարհի: Եւ Բեթղեհէմի խաւարացիք աստղալոյսով աշխարհի տազնապներից, խարդաւանքներից ու անօրինութիւններից վեր յոյսն է շողում երկնահեղ սիրով մարդկանց հոգիների նորոգութեան, «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» հրաւերով նոր կեանքի կառուցման:

Սուրբ Ծննդեան խորհրդով սիրոյ մեծագոյն պատուիրանն է, որ փոխանցուում է աշխարհին. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց,- ասում է Տէրը,- ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցէք» (Յովհ. ԺԳ 34): Չկայ ավելի մեծ ու ժ մարդկանց, ժողովուրդների, հասարակութիւնների կեանքը վերափոխող, քան սէրը, որ «... չի նախանձում, չի ամբարտաւանանում, չի գոռոզանում, ... իրենը չի փնտռում, ... չար բան չի խորհում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ. ամէն բանի դիմանում է, ամէն բանի հաւատում է, մշտապէս յոյս է տածում» (Ա Կորնթ. ԺԳ 4-8): Այսպէս պիտի ծնունդ առնի այն աշխարհը, ուր խաղաղութիւնն ու արդարութիւնն են թագաւորում, ուր բարին ու բարիքն են արգասաւորուում եղբայրսիրութեամբ, ժողովուրդների համերաշխութեամբ, պետութիւնների գործակցութեամբ: Իրաւամբ, կեանքը բարեփոխելու մարդկային ջանքերը ապարդիւն չեն լինելու ճշմարիտ սիրով և աշխարհի մէջ Աստծոյ ներկայութեան հաւատով: Տիրոջ ճանապարհը միշտ նոր կեանքի ճանապարհն է, միշտ դէպի անելի լաւը, դէպի կատարեալը, որ պիտի իրականանայ մարդկանց հաւատոյ գործերով, Աստծոյ ողորմութեամբ և օրհնութեամբ:

Սուրբ Ծննդեան և Աստուածայայտնութեան ուրախարար այս օրը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, գոհութիւն ենք մատուցում Տիրոջը, որ փրկութեան Իր շնորհն է պարգել նաև մեր ժողովրդին, օրհնել մեր կեանքը յոյսի, հաւատի և սիրոյ իմացութեան լոյսով և արարումի ոգով: Փրկչին ապաւինած, Նրա սիրոյ պատգամով է, որ մեր հայրերը Հայրենիքում թէ տարագրութեան մէջ կարողացել են դիմակայել դարերի փորձութիւններին, մաքառել սեփական ինքնութիւնն ու ժառանգութիւնը պահպանելու համար և վերստին նոր կեանք կառուցել ու շէնացրել: Աշխարհասփիւռ հայ կեանքից ներս խնամք, հոգածութիւն, ջանք և նուիրում, սխրանք է դարձել միմեանց հանդէպ սիրով գործելու ոգին: Այդ ոգով այսօր Հայաստանի և Արցախի ազատ եղբայրներում, ի սփիւռս աշխարհի հոգևոր և ազգային մեր կեանքի վերազարթօնքի հորիզոններում մեր հայրերի յոյսերն ու աղօթքները, մեր ժողովրդի

հաւատքն են մարմին առնում՝ որպէս գործեր հայրենամուկիրումն ու եկեղեցասիրութեան, որպէս բարի արգասիքներ մեր կեանքի: Նոյն այդ ոգով, պիտի շարունակենք ապրել՝ յաղթահարելու համար մեր առջև ծառացող հրամայականները, պաշտպանելու համար ազատութեան, արդարութեան և իրաւունքի, ազնուութեան ու մարդասիրութեան արժէքները, որոնցով պիտի շարունակի խնամուել աստուածասէր հոգին մեր ժողովրդի, որոնցով պիտի զօրանայ մեր կեանքը ի Հայրենիս և ի Սփիւռս: Արդ, առաջ ընթանանք ուխտաւորի անկուն հաւատքով և Աստուծոյ օրհնութեան ներքոյ միշտ գործենք սիրով միաբան ու կամքով միասնական, քանզի ճշմարիտ է ասուած, որ միաբանութեամբ փոքրերը մեծանում են, մինչ անմիաբանութեամբ՝ մեծերը փոքրանում:

Յիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ և Փրկչի Սուրբ Ծննդեան աւետիսով ողջունում ենք ձեզ, սիրելի հաւատացեալներ, և օրհնում ենք ձեզ ամենքիդ: Ի Քրիստոս եղբայրական սիրոյ Մեր ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Սանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սութաֆեանին և ուխտապահ հոգևոր դասին:

Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակո Սահակեանին, հայոց պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Աղօթենք միասնաբար, որ Փրկչի Սուրբ Ծննդեան և Աստուածայայտնութեան խորհրդով երկնային շնորհի ու սիրոյ պարգևները առատաման աշխարհում՝ համայն մարդկութեանն առաջնորդելով դէպի բաղձալի ճանապարհները բարու, արդարութեան ու խաղաղութեան:

Աղօթքով և Փրկչի օրհնութեան հայցով Միածնաւէ սրբազնասուրբ այս Խորանից, հայոց Սայր Աթոռից կրկին բերում ենք ձեզ հոգեւորոգ աւետիսը Սուրբ Ծննդեան.

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ
Ձեզ և Մեզ մեծ աւետիս:

Յունուար 18, 2008

Սիրեցեալ ժողովուրդ Հայոց
Որ ի Հայաստան եւ յԱրցախ
ի Յորդանան եւ ի Պաղեստին,
Երուսաղէմ եւ յԻսրայէլ
եւ ի սփիւռս տարացրուեալ.

Փառք կուտանք Աստուծոյ որ արժանի եղանք Քրիստոսի
Ծննդեան Սուրբ Տաճարին մէջ համախմբուելու, եւ Երուսաղէմի Սրբոց
Յակոբեանց Միաբանութեան եւ մեր ժողովուրդի հաւատաւոր եւ
ուխտաւոր զաւակներուն հետ կը փառաւորենք յիշատակը Քրիստոսի
Աստուածայայտնութեան, համաձայն Սուրբ Երկրի սրբավայրերուն մէջ
հաստատուած դարաւոր մեր առանձնաշնորհումներուն եւ Հայկական
աւանդութեանց:

1. Գոհունակութեամբ կը նշենք մեզի հետ ներկայութիւնը
Պաղեստինեան Ազգային Իշխանութեան Պետական Աւագանիին եւ Տիար
Վարչապետ Սալլամ Ֆայյատին:

2. Նաեւ մասնակցութիւնը Թուրքիոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարքին,
Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, Կոստանդնուպոլիսէն:

Եւ ուխտաւորներ Ս. Էջմիածնէն, Երեւանէն, Պոլիսէն:

Մեր սրտագին մաղթանքը կ'առաքենք Հայաստանեայց Եկեղեցւոյ
նուիրապետական Աթոռներու գահակալներուն.

3. Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս, Նորին Ս.
Օծուրին, Տ. Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետին, ի Ս. Էջմիածին:

4. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Նորին Ս. Օծուրին Տ. Տ.
Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, յԱնթիլիաս:

Հայ ժողովուրդին դարերու փորձառութեան եւ տառապանքի
փութալով ջրդեղեալ, ու ջրլապինդ հաւատին մաղթանքն է՝ լսել կոչը
խաղաղութեան աստուածարեալ իշխանին, եւ աննահանջ ընթանալ, եւ չը
կրնալ հետապնդել անխարդախ երազը՝ մարդերու եւ ժողովուրդներու
համերաշխ համակեցութեան, հակառակ Զարին կործանարար բոլոր
սադրանքներուն: Մանաւանդ երբ մարդկային քաղաքակրթութեան եւ
գիտական հնարամտութեանց հրաշալիքները անսահման հնարաւորութեանց
ասպարէզներ կը բանան մարդ արարածի մտքի եւ հոգիի ստեղծագործ
շնորհներուն առջեւ:

Աստուածապարգեւ այդ հրաշալիքները օրհնութիւն պիտի դառնան,
երբ անոնք օգտագործուին մարդկային տառապանքները ամոքելու,
ազգերու միջեւ լարուած անվստահութեան, իրեքամբոժ սադրանքներու
կասկածն ու վախը փարատելու, եւ մարդն ու մարդկային ընկերու-
թիւնը խոռվող հարցերուն խաղաղարար լուծումներ գտնելու:

Այն ատեն պիտի դադրին ռերապարտ ցեղասպանութեան ահաւոր
նախնիքները: Այն ատեն պիտի խնայուին սովալըլուկ մանուկներու
սրտանմլիկ մահացումները:

Անտոն ու թափառական ընտանիքներ պիտի վերադառնան իրենց հայրենի տունը, եւ օրհնեալ երդիքի տակ, իրենց նակտի քրտինքով պիտի վաստկին իրենց հացը եւ ապրուստը: Ու սերունդներ իրենց դաստիարակութիւնը պիտի ստանան անկաշառ եւ արժանավայել խտելներով ու ձգտումներով: Ու պիտի դառնան ռահվիրաներ, մարդկային իսկական ֆաղափակրթութեան:

Այն ատեն, մարդը իսկապէս մա՛րդ պիտի կոչուի, ստեղծուած "ըստ պատկերին Աստուծոյ":

Նոյն է պատգամը Քրիստոսի մարդեղութեան եւ Աստուածայայտնութեան խորհուրդին: Պատգամը յոյսի եւ փրկութեան: Անհատներուն, ինչպէս նաեւ ազգերուն համար: Որոնք Չարին կործանարար սադրանքներուն դէմ, հոգիի պատերազմն է որ պէտք է սորվին պատերազմի:

Եւ արդարեւ, Բեթղեհէմի խոնարհ մտւրին մէջ ծնած խոստացեալ Փրկիչը, մարգարէներու նախագուշակած Մեսիան, եւ "Մարդացեալ Աստուածորդին", եղա՛ւ եւ է՛ հրաշագործ Վարդապետը եւ յաւերժական տիպարը՝ հոգիի պատերազմը պատերազմող, եւ իր Խաչելութեան խորհուրդով՝ հոգիի խաղաղութեան եւ երջանկութեան երաշխիքը ապահովող: Անհատներուն, ինչպէս նաեւ ազգերուն, եւ ամբողջ մարդկութեան համար:

Այսօր ամբողջ աշխարհը պէտք ունի երկնառափ այդ նոյն Վարդապետին եւ Անոր լուսատու նախապարհին եւ փրկութեան խրախուսանքին:

Անխորտակելի այս հաւատքին հանդէպ անսասանելի հաւատարմութիւնն է, որ պայծառ պահած է Հայ ժողովուրդի գաւակներուն նայուածքը դէպի աստղը Բեթղեհէմի, եւ անշեղ առաջնորդած է անոր ապրելու կամքը, քարոյական խղճմտանքը, եւ անոր գործելու եւ ստեղծագործելու աննկուն հոգին:

Հայ Երուսաղէմի սրբավայրերուն օրհնութիւնը կը յղենք մեր ժողովուրդի գաւակներուն, որ ի Հայաստան եւ ի տարասփիւս ցրուեալ, եւ կը յիշեցնենք թէ անհրաժեշտ է վերսկսիլ շարանը Հայ Ուխտաւորներուն, այնպէս ինչպէս, դարեւ շարունակ, մեր հայրերն են կատարեր, թերեւս անկի դժուար պայմաններու մէջ:

Թող հնչէ միշտ հայաբարբառ երգը հրեշտակներուն, աւետելով աշխարհին...-

"Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ."

"Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:"

Թ.Ա.Մ.

CHRISTMAS MESSAGE 2008

Beloved children of the Armenian Apostolic Church,
dwelling in the Motherland of Armenia and dispersed in the
Diaspora;

And Faithful Children of the Creator God of the Universe.

We greet you from the Grotto of the Holy Manger, in the
city of Bethlehem, with the Song of the Angels, who proclaimed
to the shepherds in the field: "Glory to God in the highest;
Peace on Earth; and Good Will among men."

We are pleased that joining us in our prayers are:

1. The Honorable Prime Minister Sálam Fayyád
And Representatives of the Palestinian National
Authority;
2. The Armenian Patriarch of Istanbul and of All Turkey
His Beatitude Archbishop Mesrob Mutfian,
And pilgrims from Holy Etchmadzin, Erevan,
Istanbul.

We extend our heartfelt best wishes:

3. To His Holiness, the Catholicos of All Armenians,
Karekin the Second, of the Holy See of Etchmiadzin,
Armenia.
4. To His Holiness, Aram the First, the Catholicos of
the Great House of Cilicia, in Antelias.

We are surrounded with the real life practice and execution
of victimization, war and violence, homelessness, economic
depression, religious tensions, and the loss of hope in the hearts
of many men and women.

In these troubled times, when real peace seems to be at one
moment within our grasp, and at the other tantalizingly
unreachable, we pray the Lord to grant tranquility to the whole

troubled world, as well as peaceful co-existence to all peoples, in dignity and brotherly love. It is the crisis of this uncertainty that is devouring the younger generation, the youth of all backgrounds – Jewish, Christian, Muslim alike.

We witness all their sufferings with sadness, because it is a tragedy that bloodshed and horror should prevail in the Holy Land of Peace, of Shalom, and of Salaam. And we all, as leaders and communities, are directed, instructed and commanded to speak in the name of the same Lord, and to love our neighbour and each other, as the children of the same God of the Universe.

It is in this Spirit of Love, that we have been requesting, asking the Heads of States, the Leaders of Nations, and the conscientious faithful of all the Children of Jehovah, the God of Israel, and of all of the compassionate and merciful Allahu rahman ul-rahim of the Koran, and of all of the God the Father, the Creator of heaven and earth, as He has revealed Himself in the Holy Books of the Old and the New Testaments, to join in prayer and in action, to alleviate the plight of suffering of the people of this Holy Land, whether Christians, Jews or Muslims, in order to lend their hearty support in establishing permanent security and lasting peace, for generations to come.

And thus the inhumanity of man-to-man would have been vanished, if everyone of us individually, and all communities collectively, with the Leaders of Nations, heeded to the heavenly voice, that speaks through the wise men of the children of the Heavenly Father.

One such wise man would incessantly remind us, that before taking any drastic action, remember and let your conscience repeat that:

"To do Evil to Evil, is beast-like;
To do Evil to Good is devil-like;
To do Good to Good is human-like;

To do Good to Evil is God-like."

God promises us peace on earth if only we could purify our hearts and accept each other as brothers of the same family, and love each other, without distinction whether the other is a friend or a foe, an enemy. For without such love, particularly "the impossible love" of loving your enemy, there shall be no peace on earth.

May our God of Peace, the Allah of Salaam, and the Jehovah of Shalom, shine His face upon the people and the land of Palestine, of Jordan and of Israel.

And may He grant all the nations of the world, the hope for His compassion and Peace, the assurance of the dignity of man, and the security of life.

And may the Universe join the Choir of Angels in joyful harmony, as they herald the good news:

"Glory to God in the highest;

Peace on Earth; and

Good will among men."

Amen.

Archbishop Torkom Manoogian

«ՈՐԴԻՔ ՈՐՈՏՄԱՆ»

«Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել զոմանս յեկեղեցւոյն: Եւ սպան զՅակոբոս՝ զեղբայր Յովհաննու, սրով»:

«Այդ օրերուն, Հերովդէս արքայ սկսաւ չարչարել եկեղեցւոյ անդամներէն ոմանք: Ան սուրով սպաննել տուաւ Յովհաննէսի եղբայր՝ Յակոբը»:

(Գործք Առաքելոց. ԺԲ. 1-2)

Կը պատմուի թէ նշանաւոր ֆանդակագործ մը օր մը ցեխին մէջ մարմարիոնի կտոր մը կը գտնէ: Շատեր անցած էին այդ տեղէն, բայց անտեսած էին այդ փարի կտորը, սակայն ֆանդակագործը առնելով զայն, կը լուայ եւ իր ամբողջ արուեստին նարտարութիւնը դնելով մարմարիոնի այդ կտորին վրան, կ'արն ժամանակամիջոցի մը մէջ կը յաջողի ցեխին մէջէն ելած այդ փարը ֆանդակելով վերածել սփանջելիօրէն գեղեցիկ հրեշտակի մը: Քրիստոս եւս, նման այդ ֆանդակագործին, խոնարհելով, գետնէն վերցուց իր տասներկու առաքելները, զանոնք վերածելով տասներկու սիւներու, որոնց վրայ պիտի հիմնէր իր եկեղեցին:

Հեթանոսաց Առաքելը՝ Պօղոս, Կորնթացիներուն ուղղած իր Առաջին Նամակին մէջ կը յայտնէ իր անխառն հիացումն ու զարմանքը, թէ ինչպէս Քրիստոս սովորական ու պարզ միջոցներով մարտահրաւէր կը կարգայ աշխարհին, երբ կ'ըսէ. «Բայց Աստուած ընտրեց այս շխարհի յիմարները, որպէս զի ամէջնէր իմաստունները, ինչպէս նաեւ ընտրեց տկարները՝ ամէջնելու այս աշխարհի զօրաւորները» (1: 27): Առաքելներու հաւատքը հիմնուած չէր նոխութեան, հարստութեան եւ գիտութիւններու վրայ, այլ անոր միակ աղբիւրը՝ կեանքի բուրան էր, հալա-

ծանքներն ու չարչարանքները. եւ անոնք իրենց կեանքի վախճանը կնքեցին իրենց իսկ արեան հեղումով, մարտիրոսութեամբ:

Առաքելական տօն է այսօր. հանդէսը Տասներկու Առաքելներէն, Յակոբոս Գլխադիր Առաքելին, եւ եղբօրը՝ Յովհաննէս Աւետարանչին, որոնցմէ առաջինն, անուան վրայ հիմնուած է այս հոյակերտ եւ սուրբ տաճարը: Երկու եղբայրներն ալ եղան Քրիստոսի «Լոյսին», Խօսքին փառ եւ աներկիւղ փարզիչները, որուն համար ալ իրենց Վարդապետին կողմէ կոչուեցան Որոտման Որդիներ: Յակոբոս եղաւ առաջինը, տասներկու առաքելներէն արժանանալու մարտիրոսութեան պսակին, որ ինքզինք զոհաբերեց Քրիստոսի լոյս կրօնքի զոհասեղանին վրայ, մինչ անոր եղբայրը՝ Յովհաննէս, դարձաւ Լոյսին՝ Քրիստոսի Կենաց Խօսքին, անոր Աւետարանին հեղինակը. «Նովա կեանք էր եւ կեանքն էր լոյս մարդկան»:

Անոնք՝ որոնք ծանօթ են Աւետարաններուն, փառ պէտք է յիշեն, որ այս սրբազան ու պատմական հաստատութիւնը կոչուած է Որոտման Որդիներու, եւ կամ Զերեդեան եղբայրներէն՝ Յակոբի անունով, որ եղբօրը՝ Յովհաննէսի հետ կու գար պարզ ու համեստ ընտանիքէ մը: Երկուքն ալ արհեստով ձկնորսներ էին, որոնք մտային կամ հոգեկան որեւէ յատուկ

պատրաստութիւն կամ պաշար չունենալով հանդերձ, բողոքով իրենց ձկնորսական նաւն ու ուղեւորները, գիտցան իրենց կեանքը սիրով, պատրաստակամ կերպով ու ամբողջական նուիրումով ընծայել Աստուածորդւոյն գործին՝ Լոյսին ու անոր Աւետարանի տարածման ու նոյնիսկ դառնալ անոր չարչարակից:

Ու անոնք, ինչպէս նաեւ միւս առաքելները, հետեւեցան Իրենց Տիրոջ եւ Վարդապետի խօսքին, «Ահաւասիկ ես ձեզ կը դրկեմ իբրեւ գառնուկներ՝ գայլերու մէջ. հետեւաբար խորամանկ եղէ՛ք օձերու պէս եւ միամիտ աղաւնիներու նման» (Մատթ. Ժ:16): Երեւակայեցէ՛ք սիրելի եղբայրներ եւ քոյրեր, թէ ինչպէս Որոտման Որդիները, նման մնացեալ առաքելներուն, իբր անմեղ գառներ եւ միամիտ աղաւնիներ մտան գայլերու մէջ: Սակայն Աստուածային իմն միջամտութեամբ, այդ գայլերը ո՛չ միայն չյաջողեցան յօշոտել զիրենք, այլ անոնք իրենց անմեղութեան եւ սրբութեան շնորհիւ կրցան գայլերը վերածել գառներու, իրականացնելով Եսայիի մարգարէութիւնը. «Եւ գայլը պիտի ճարակէ գառնուկին հետ, յովազը՝ մանուկին, ինչպէս նաեւ հորթը, ցուլն ու առիւծը միասին պիտի ճարակեն» (Եսայի ԺԱ:6): Ու նիշդ այդ էր որ առաքելները յաջողեցան ընել, հոգ չէ թէ ի գին իրենց արեան:

Աւետարանները տալու համար Զեքեղեան եղբայրներու յախուռն եւ համարձակ նկարագիրը, կը ներկայացնեն դէպք մը, ուր անոնք մօտենալով իրենց Վարդապետին, խոստում մը կը պահանջեն անկէ, իր Հօրը բազաւորութեան մէջ զիրենք իր աջ եւ ձախ կողմերը նստեցնելու: Եւ ի՞նչ կը պատասխանէ Քրիստոս: Ան դժգոհ անոնց այս փառամոլ առաջարկէն, կ'ըսէ. «Արդեօք կրնա՞նք ըմպել այն բաժակը զոր ես պիտի ըմպեմ, եւ

ընդունիմ այն մկրտութիւնը՝ որով ես պիտի մկրտուիմ»: Քրիստոս չըսաւ իր աշակերտներուն թէ անոնց հալածանք, չարչարանք եւ նոյնիսկ մահապատիժ կը սպասէր, այլ պարզապէս հարցուց եթէ պատրաստ էին ըմպելու այն բաժակէն որմէ ինք պիտի ըմպէր: Ան շարունակելով՝ իր չարչարանքն ու մահը մկրտութիւն կը կոչէ, որովհետեւ ատով էր որ ամբողջ աշխարհը պիտի մահրուէր: Ու Որոտման Որդիները նման իրենց նկարագրին՝ յախուռն կերպով կը պատասխանեն. «Այո՛ Տէր, կրնանք եւ պատրաստ ենք ենթարկուիլ հալածանքի, համբերել անարգանքներու, նոյնիսկ եթէ բնեն մեր վրայ, պատրաստ ենք տանջուելու քու անունիդ համար»:

Երկու եղբայրներուն այս պատրաստակամ յայտարարութիւնն ու խոստովանութիւնը թէեւ սրտառուչ եւ ինքնամատոյց, սակայն տակաւին պակաս բան մը ունէր իր մէջ: Թերեւս այդ մարդկային բնազդէ եկած առաջարկ մըն էր, սակայն ինչ որ մարդուն կը ներուի՝ այդ կրնայ մարդկային չըլլալ: Յակոբոս եւ Յովհաննէս առաքելներու առաջարկը իրենց Վարդապետին, կրնար մարդկային ըլլալ, բայց ո՛չ այն մարդկայինը՝ զոր Քրիստոս կ'ակնկալէր իր հետեւորդներէն: Թերեւս Որոտման Որդիները պատրաստ էին արբենալ իրենց Տիրոջ խմած բաժակէն եւ մկրտուիլ նոյն մկրտութեամբ, որով ինք պիտի մկրտուէր, բայց տակաւին անոնց համար ժամը չէր հասած ըմբռնելու քո՛ւն մարդկայինին գերագոյն իմաստը:

Բնականաբար, միւս առաքելները վիրաւորուած զգացին Զեքեղեան եղբայրներու այս ամբարտաւան եւ անբնական առաջարկէն, որուն Քրիստոսի պատասխանը պիտի ըլլար բողոքին. «Որդի Մարդոյ ոչ եկն պաշտօն առնուի՝ այլ պաշտել»։ որով ըսել կ'ուզէր անոնց,

«Ձեր առաքելութեան եւ կոչումին մէջ մի՛ փնտո՛ւմ մեծութիւն, փառք եւ պատիւ. ձեր մեծութիւնը պիտի կայանայ միմիայն մարդոց ծառայութեան եւ սպասաւորութեան մէջ»։ Ու այս մէկը կու գար քարոյական նոր դաս մը տալու շփոթահար առաքելներուն, թէ Մարդը չէր ստեղծուած ծառայելու միայն ինքզինքին, այլ աւելի իր եղբայր Մարդուն, եւ թէ մարդկային բոլոր փառասիրութիւնները դատապարտուած էին ջախջախելու եւ խայտառկուելու, եւ թէ միմիայն ծառայութեամբ էր որ անոնք պիտի կարենային դառնալ իր եւ իր Աւետարանին հաւատարիմ սպասաւորները, վերջաւորութեան ըսելու Պօղոս Առաքելին հետ. «Ծառայ անպիտան եմք. գոր ինչ պարտ էր առնել՝ արարաք»։

Փոքրիկ տղայ մը կը հարցնէ մօրը թէ որո՞ւն էին իրենց եկեղեցւոյ գումազեղ ապակիներուն վրայ նկարուած անձերը։ Մայրը կը պատասխանէ թէ անոնք եկեղեցւոյ սուրբերն էին, ու կու տայ կարգ մը սուրբերու անուններ։

Օր մըն ալ նոյն տղեկին կը հարցնեն թէ «Ո՞վ էր սուրբը»։ Որուն տղեկը կը պատասխանէ ինքնավստահ. «Սուրբը ան է՝ որուն մէջէն լոյսը կ'արտացոլայ»։

Որոտման Որդիներու հանդէսի օրն է այսօր, այն սուրբերուն՝ որոնք իրենց անձերուն մէջէն արտացոլացողին Քրիստոնէութեան լոյսը։ Սուրբ Յակոբոս Առաքելի տօնն է այսօր, անոր՝ որ քաժակակից ու մկրտակից դարձաւ իր Տիրոջ ու Վարդապետին. անոր՝ որ իր եղբօրը նման գիտցաւ ըսել. «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ո՛չ օգնէ»։ Եթէ մենք, սիրելի հաւատացեալներ եւ

մանաւանդ միաբանակից եղբայրներ, գիտնանք նշգրիտ դիրքորոշում մը որդեգրել այսօր մեր ընկերային կեանքին, ընտանիքին եւ ինչո՞ւ չէ եկեղեցւոյ նկատմամբ, այն ատեն Գլխադիր Սուրբ Առաքելը, իր Աւետարանիչ եղբօր հետ պիտի ունենան այն խոր գոհունակութիւնն ու երանութիւնը որոնք զլացուած էին իրենց կեանքի ընթացքին։

Թող այսօր, հոգեկից եւ սիրելի եղբայրներ, քանակ մեր հոգիի ականջները, լսելու ձայնը մարմնէն անջատուած Սուրբ Գլխին՝ որ յանուն բոլոր Առաքելներուն լո՛ւռ կը խօսի մեր Զինուորեալ Միաբանութեան անդամներուն, ըսելու թէ ի՞նչպէս իրենք տկար էին ու զօրացան, անուս էին եւ իմաստուն դարձան Աւետարանին լոյսով, եւ հլու եւ հնազանդ ծառայեցին անոր՝ որ աղֆատ էր՝ սակայն հարստացուց աշխարհը. հասարակ շինական մըն էր, քայց մեզ դասեց ազնուականներու կարգին։ Եւ այս կը նշանակէ, սիրելի հոգեւոր եղբայրներ, որ գերագոյն նպատակի համար իրա՛ւ նուիրուած կեանք յումպէտս վատնուած չըլլար, եւ թէ մենք մեր վարձքը բազմապատկուած պիտի ստանանք հանդերձեալին մէջ։

Այն հաւատքը, որ այս Աթոռի Մեծ Սուրբինն էր, ինչպէս նաեւ առաքելներունը, պարտինք որդեգրել նոյնութեամբ, որպէս զի կարենանք դառնալ եւ մնալ մշակներ առանց ամօթի, հաւատով եւ նուիրումութեամբ սպասաւորելու մեր Փրկչին Լոյս Աւետարանին, ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն։

ՆՈՒՐԶԱՆ ԱՐԲ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

«ԵՐԿՆԱՅԻՆ ԲՈՅՍ»

«Բանաւոր երկիր տիրուի եւ անդաստան մաքուր ի փշոց մեղաց. որ զբոյսն երկնային առանց սերման ծնար. որով զկենացն ետուր զհաց սովեալ բնութեանս»
(Շարական)

Շարականի այս խօսքը կը նկարագրէ Տիրամայրը ըլլալ փուշերէ մաքրուած անդաստան եւ հող, որմէ բուսաւ երկնային բոյսը՝ Քրիստոս, եւ որուն միջոցաւ մարդկային սոված բնութիւնը ստացաւ կեանքի հացը:

Այս խօսքերէն առաջնորդուելով, քննարանը կապի է բաժնել երեք մասերու. Առաջին մասը ցոյց կու տայ կարեւոր անձնաւորութիւն մը՝ յատուկ նկարագրով, որ բոլորիս յայտնի Աստուածամայրն է: Մարիամ Աստուածածնի պատմականը շատ կարճ ձեւով հասած է մեզի: Անոր ծնողները եղած են Յովակիմ եւ Աննա: Մարիամ ուխտեալ զաւակն էր Աննային, եւ միակ աղջիկը: Ուստի, իր կատարած ուխտին համաձայն, երբ Մարիամ երեք տարեկան կ'ըլլայ, ծնողքը զինք կը նուիրեն Տաճարին, յանձնելով զինք այնտեղ գտնուող կոյսերուն: Տաճարին նուիրուած Մարիամին նման կոյսեր շատ կային: Երբ այս նուիրեալ փոքրիկները կը մեծնային եւ կ'ըլլային 12-15 տարեկան, անոնցմէ շատեր կը վերադառնային տուն, յետոյ ամուսնանալու համար: Չմոռնալ սակայն որ ընդհանուրին կարծիքն էր սպասուած մեծիան պիտի ծնէր այսպիսի պատրաստուած աղջիկներէ:

Այսպէս ուրեմն, Մարիամ մինչեւ իր 12 տարիքը մեծցաւ Աստուծոյ շունչով՝ աղօթքով եւ սաղմոսերգութեամբ: Իր մէջ զարգացաւ հնազանդութիւն Տիրոջ նկատմամբ, որով եւ գերադաս նկատեց Աստուծոյ կամքը իր կեանքին մէջ: Հետագային ի յայտ եկաւ այս, երբ

Գաբրիէլ Հրեշտակապետ երեւցաւ եւ յայտնեց Աստուծոյ կամքը թէ ինք Որդի մը պիտի ծնի, որ պիտի ըլլայ Աստուծոյ Որդին: Աստուածամօր համար այս աստուածայայտնութիւնը պատիւ էր, բայց ան իր խոնարհ նկարագրին պատճառով քիչ մը տատամսեցաւ, որովհետեւ Մարիամ ինքզինք անարժան նկատեց այդ գերազանց պաշտօնին համար:

Նման աստուածայայտնութիւն մը ունեցաւ Յովհաննէս Մկրտիչի հայրը Ջաֆարիա: Բայց Ջաֆարիա չհաւատաց իրեն եղած այդ աստուածայայտնութեան, եւ այդ պատճառով ան անմիջապէս համր եղաւ մինչեւ որոշ ժամանակ մը: Իսկ Մարիամի տատամսիլը անհաւատութեան նշան չնկատուեցաւ, այլ նշան նկատուեցաւ վայրկեանապէս չըմբռնելու կացութիւնը, մանաւանդ որ Մարիամ ամուսնացած չէր, մինչեւ որ Հրեշտակապետը վստահեցուց իրեն ըսելով՝ «Հոգին Սուրբ եկեացէ ի քեզ եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»: Ջաֆարիա հասուն եւ ամուսնացած ֆահանայ էր, եւ պէտք էր որ ուրախութեամբ ընդունէր իրեն եղած այդ աստուածայայտնութիւնը: Հետեւաբար մեծ է տարբերութիւնը այս երկու տատամսումներուն:

Պատահական չէ որ չհերկուած եւ չցանուած հողը չարդիւնաւորութիւն եւ չտայ պահանջուած արդիւնքը, սակայն անխուսափելի է որ փուշեր եւ անպիտան բոյսեր չբուսնին հոն: Ահա ճիշդ այս վիճակին չհասած, Մարիամ կ'ընդունի իրեն եղած աստուածայայտնութիւնը, եւ

իր մէջ իջնելով Ս. Հոգին, ինք կը դառնար «անդաստան մաքուր ի փշոց մեղաց»։ Այստեղ մեր նպատակը չէ քննել Աստուծոյ խորհուրդները եւ կամքը, սակայն կը հետեւինք կատարուած իրողութեանց, պարզապէս գնահատելու, հասկնալու եւ արժեւորելու իւրաքանչիւր աստուածայայտնութիւն եւ սրբազան գործ։

Քարոզիս բնաբանին երկրորդ մասը, այդ մաքուր անդաստանին վրայ անած երկնային բոյսն է, որ է ի նմանութիւն Քրիստոսի։ Մարիամ Աստուածածնի առանց ամուսնութեան ծնունդ տալը իր որդւոյն՝ Քրիստոսին, մեր աստուածաբան Հայրերու կողմէ կը բացատրուի Քրիստոսի անապական մարմին ունենալով, քանզի, կ'ըսեն, ապականութիւնը արդիւն է եւ յառաջ կու գայ ամուսնութենէն։ Առանց խորանալու Քրիստոսի մարմնին ապականացու եւ կամ անապական ըլլալու հարցին մէջ, կը բաւէ պարզօրէն ըսել, հիմնուելով աւետարանի խօսքերուն վրայ, թէ Ս. Հոգիի հովանիին ներքեւ ծնած անձը, չէր կրնար չըլլալ անապական՝ զերծ բոլոր մեղքերէ եւ արատէ, եւ թէ անպատուութիւն պիտի ըլլար աստուածութեան եթէ ապականացու մարմին մը միանար աստուածութեան բնութեան։

Մարիամ Աստուածածին ծնաւ զՔրիստոս իբրեւ Որդի Աստուծոյ՝ երկնային բոյս, որ երեւցաւ եւ ապրեցաւ իբրեւ մարդ, մեզի նման, ներարկելու մեր մէջ երկնային աւիւն, որպէս զի մենք իբրեւ երկրաւոր բոյսեր կարողանայինք պատուաստուիլ իր վրայ, որպէս զի մեր մէջ անէր եւ արդիւնաւորուէր երկնայինը եւ աստուածայինը, որ միակ հաճելին է Աստուծոյ։

Մեր շարակնոցը շատ գեղեցիկ խօսքերով կը նկարագրէ Կոյս Մարիամը իր ունեցած գերազանց դերին համար, որ մեծ կարեւորութիւն ունի Քրիստոսի

կատարած փրկագործութեան գործին մէջ։ Ուրեմն, Մարիամ եղաւ այն օրինակելի եւ միակ պատուանդանը՝ քարծրութիւնը, որուն վրայ յայտնուեցաւ Քրիստոս՝ երկնային բոյսը, անոր նայելու եւ անով առաջնորդուելու։

Իսկ բնաբանիս երրորդ մասը ցոյց կու տայ կատարուած աշխատանքին արդիւնքը եւ նպատակը։ Ըսուած խօսքերը պարզ են եւ յստակ։ Մարիամի միջոցաւ մեզի տրուեցաւ կենաց հացը, որ է նոյն ինքն Քրիստոս՝ երկնային բոյսը։ Զարմանալի բող չբուի որ Քրիստոս է կենսատու հացը։ Կեանք գոյութիւն չունենար եթէ սնունդի մատակարարում չի կատարուիր։ Աստուած ըլլալով կեանք, իր շուրջ կը սփռէ կեանք։ Անիմաստ պիտի ըլլար եթէ Աստուած չսնուցանէր իր ստեղծած կեանքը։ Եթէ նկատենք մեր այս կեանքը ստուեր երկնային կեանքին, այդ ժամանակ հասկնալի կ'ըլլայ գոյութիւնը երկնային կեանքին։ Շատեր կը գոհանան մնալ ստուերի մէջ, որ է այս երկրաւոր կեանքը. իսկ ուրիշներ, օգտագործելով այս կեանքը կը ցանկան եւ կը դիմեն երկնային կեանքին։ Երկրայինին կարողութիւնը միայն երկրային է։ Ահա ճիշդ ասոր համար մեզի դրկուեցաւ եւ ունեցանք երկնային բոյսը, որ եղաւ ճշմարիտ մանանան, կենսատու հացը՝ սնունդը, սնուելու եւ համտեսելու երկնային կեանքը, որպէս զի անով ունենանք յաւիտեանական կեանքը։

Երկրային կեանքը կը տեսնենք եւ կ'ապրինք, դիւրաւ կը հաղորդուինք անոր ինչ որ երկնային է՝ ուրախալի թէ տխուր։ Մեր կարողութեամբ կը կառավարենք եւ կը ծրագրենք մեր այս կեանքը։ Իսկ երկնային կեանքը տնօրինողը Ինք՝ Աստուած է։ Երկնային կեանքը ունենալու համար, անհրաժեշտ է ուտել այն երկնային հացը որ բաշխուեցաւ աշխարհին։ Այդ երկնային կեանքը

բանձրացաւ, ըմբռնելի դարձաւ Քրիստոսով՝ Իր մեզի տուած կենսատու հացով, որ իր մարմինն է, եւ որ կը պատարագուի ամէն օր այս Աստուածամօր տանարին մէջ: Շատ շատեր կը ցանկան ներկայ ըլլալ այստեղ մատուցուած պատարագին եւ ստանալ այս կենսատու հացը, որպէս զի իրենց մէջ ծնի այդ երկնային կեանքը փրկելով իրենց հոգիները:

Սակայն, դժբախտաբար, պատարագներու ամէնօրեայ կրկնութիւնները մոռցնել կու տան մեզի անհրաժեշտութիւնը եւ կարելորութիւնը այդ կենսատու հացին, որուն շատ յաճախ մօտենալ չենք ուզեր: Ըսէ՛ք, ինչով կրնանք արդարանալ մեր այդ ընթացքին մէջ: Որոշ է, փոփոխութեան եւ վերագարթնումի անհրաժեշտութիւնը շատ զգալի է. բայց թէ ո՛վ պիտի ըլլայ այն ռահվիրան որ բանայ ճանապարհը ընդհանուրին համար, որպէս զի թաշխուած կենարար հացը չմնայ առանց ճաշակողներու: Ճաշակելով ընդհանուրին համար, որպէս զի թաշխուած կենարար հացը չմնայ առանց ճաշակողներու: Ճաշակելով կը սրբանանք եւ կը դառնանք մաքուր անդաստաններ, արդիւնաւորուելու աստուածավայելուչ արարքներով եւ զգացումներով, որոնք ցուցանիշներն են մեր պատուաստումին «երկնային քոյս»ին

վրայ: Այսպիսով միայն կ'արդարացուի մեր որդեգրութիւնը Աստուծոյ արքայութեան: Այս խօսքերը բոդ չնկատուին բարոյախօսութիւն, ոչ իսկ նկատենք մենք զմեզ ժամանակաւոր դերակատարներ՝ կենարար հացը մատուցանողներ եւ ստացողներ:

Ուստի, ըստ այսօրուան քննարանին, Աստուածամայրով ներկայացուեցաւ եւ յայտնուեցաւ երկնային կեանքը մարդկութեան. «Բանաւոր երկիր տիրուհի եւ անդաստան մաքուր ի փշոց մեղաց. որ զքոյսն երկնային առանց սերման ծնար. որով զկենացն ետուր զհաց սովեալ բնութեանս»:

Իբրեւ վերջաբան, այստեղ կը մէջբերենք մեր շարականէն հետեւեալ գնահատական խօսքերը ուղղուած Տիրամօր՝ «Քեզ ո՛վ մեր փրկչին մայրը եւ աղախինը, ոչ միայն մարդիկ, այլ եւ երկնային զօրութիւնները, անմարմին հոգեղէններու, հրեղէններու, զուարթունքներու եւ հրեշտակներու դասերը կը գոհարանեն եւ կը բարձրացնեն եւ կը փառաբանեն»:

Եկէ՛ք, մենք եւս միանանք այս խմբակին եւ փառք տանք Աստուծոյ՝ վասն Տիրամօր մատուցած ծառայութեան՝ յօգուտ մարդկութեան:

Թող Աստուծոյ օրհնութիւնը մեր բոլորին վրայ ըլլայ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԴ. ԱՂՈՅԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

«Որք զարդարեցին տնօրինարար զիմաստն անեղին...»

Տարուան մէջ երկիցս կը տօնենք Ս. Թարգմանչաց յիշատակը. առաջինը՝ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի տօնին առիթով, եւ երկրորդը՝ Թարգմանչաց աշակերտաց ընտրեալ գունդին տօնին առիթով:

Գրեթէ գիտը միւս ազգերու մօտ այնքան կարեւորութիւն չէ ունեցած որքան մեր մօտ: Գիրի եւ գրականութեան հանդէպ այնքան սէր չէ սնուցուած միւս ազգերու կողմէ որքան մեր կողմէ: Գրեթէ գիտը մեր պատմութեան մէջ այն ոսկի օղակն է, որ կը կապէ մեր անցեալը ներկային, եւ ժամանակաւորը յախտեանկանին հետ:

Ինչպէս Մովսէս մարգարէն ցեղախումբ մը ազգի վերածեց եւ անոր համար Աստուծոյ խօսքը իջեցուց երկինքէն երկիր, նոյնպէս Սուրբն Մեսրոպ՝ մեր Մովսէսը, Անեղին իմաստը ներշնչեց եւ Աստուծոյ շունչով ու խօսքով զարդարեց մեր Հայաստան աշխարհը:

Հայոց Պատմութեան մէջ երեք խորհրդաւոր բուականներ կան, որ կը կազմեն այն երրորդութիւնը, որով հայը իրրեւ վահան գործածեց ու պաշտպանեց ինկզինք ներկայի ու ապագայի բոլոր սպառնացող հոսանքներուն դէմ: Այդ երեքն են իրարմով շաղկապուած երրորդութիւնը, սիրելիներ, կազմեցին այն խարխիսն ու ամուր շաղախը, որուն վրայ մենք կ'երտեցինք մեր ապագան ու ապահովեցինք մեր ինքնութիւնը տեղը փառափառք ազգերու շարքին:

301 թուին, մեր հաւատքի հայր՝ Գրիգոր Լուսաւորչի ձեռնով հայ ազգը մկրտուեցաւ Քրիստոնէական կրօնի աւագանին մէջ, իր հոգիին մէջ, ընդունելով Աստուածորդին որպէս փրկիչը

մարդկութեան եւ դարերով սպասուած Մեսիան, իր հոգիին խորը հաստատելով Աստուածային ճշմարտութիւնը, ու հաւատաց քէ ի՛նք է Նոր Իսրայէլը, այն փոքրիկ հօտը, որուն Աստուած խոստացաւ տալ Արքայութիւնը:

Քրիստոնէական կրօնի պետականօրէն ընդունմամբ, Հայը այրեց կռապաշտական կրօնի հնացած շապիկը, ու հագաւ մարտիրոսներու վերապահուած սպիտակ շապիկը, ընդմիշտ արինելու զայն իր անձնուէր զոհողութեամբ ու զոհաբերութեամբ:

Դարը չբոլորած, 387 թուականին պարսկա-հռովմէական դաշնագրով, Հայաստան աշխարհը քաժնուեցաւ երկուքի: Արեւելեան տարածքը՝ պարսկականի, արեւմտեանը Բիզանդականի, ընդ որում եթէ արեւելեան Հայաստանի մէջ պարսկական արքունիքի թոյլտուութեամբ կը հանդուրժուէր Արշակունեաց քաղաքութիւնը, ինչպէս նաեւ Հայոց Կաթողիկոսութիւնը, ապա սակայն Բիզանդական կայսրութիւնը դարձուցած էր Արեւմտեան Հայաստանը լոկ նահանգային դրութեան, զրկելով քէ՛րնիկ արքունական գերիշխանութենէն եւ քէ՛րնիկ հոգեւոր իշխանութենէն:

Վիճակը օրհասական էր Հայ ժողովուրդի ազգային վերապրումի առումով, երկու տէրութիւնները՝ եւ՛ր Բիզանդական եւ՛ պարսկական հակահայկական փառափառութիւնը կը վարէին չէզոքացնելու Հայաստանը իր բնիկ ժողովուրդէն: Սակայն Բիզանդական հակահայկական փառափառութիւնը աւելի դառն էր, որովհետեւ ոչ միայն փառափառական այլ նաեւ կրօնական գետնի վրայ, կը հետապնդէր ամէն գնով ձուլել հայ ժողովուրդը ու կը տփնէր վերածել



667-2017

զայն երկարնակ եկեղեցւոյ մարմնի մէկ անդամին, յունական մշակոյթով ու աստուածաբանութեամբ, մերկացնելու հայր իր սեպհական մշակոյթէն:

Ահաւասիկ հոս է որ կը սկսի յուզուիլ Հայ Ազգի ճակատագիրը: Հայ ազգի հոգին ու ոգին կը տառապի ընդմէջ այս երկու հզօր տէրութուններուն: Զուլման վտանգի ցանցին մէջ բակարդուած հայ ժողովուրդը՝ ի մէջ երկու չարեաց խաչուեցաւ նման Քրիստոսին:

Ճար ու դարման էր պէտք հայ ազգը ձուլման վտանգէն ազատելու համար:

Ահաւասիկ Նախախնամութիւնը կ'ընծայէ գիւղացի տղեկ մը Հացեկաց գիւղէն՝ Մեսրոպ Մաշտոց անունով, մեռած փիւնիկը մոխիրներէն յարութիւն տալու համար:

Մեսրոպի վարձագիրը՝ Կորիւն, հետաքրքիր ձեւով կը ներկայացնէ մեր հերոսին խորհրդապատկերը: Սուրբ Մեսրոպ՝ Տառնի մէջ յունական դպրոց յանախած է ու սորված յունագիտութիւն ու աստուածաբանութիւն: Ինքնաշխատութեամբ, ըստ երեւոյթին, հմտացած է նաեւ պարսկերէն, ասորերէն, վրացերէն եւ մասամբ նաեւ աղուաներէն լեզուներուն: Իր քարձրագոյն կրթութիւնը եւ լեզուագիտութիւնը հնարաւորութիւն ընծայած են իրեն ընդունուելու իրրեւ «արժուական դպիր» Արշակունեաց պալատին մէջ: Զուգընթացաբար՝ հմտացած է նաեւ Ռազմագիտութեան մէջ, անցած է զինուորական կեանքի, քացառիկ հեղինակութիւն ձեռք բերած իր կարողութիւններով ու ռազմավարական իմացութեամբ: Քիչ յետոյ նաեւ զինքը կը տեսնենք որպէս վանական:

Վերոյիշեալը ինքնին ցոյց կուտայ որ Մեսրոպ արդէն իր մանկութենէն կը տառապէր հայ ժողովուրդի ազատութեան

տենչով:

Լեզուական իր իմացութիւնը եւ հմտութիւնը զինք առաջնորդեցին պալատ, այնտեղ աւելի մօտէն տեսնելու գալիք վտանգը: Դարձաւ զինուորական ու հմտացաւ ռազմավարական գիտութեան, խորհելով որ կը կարողանար Հայաստանը վերամիացնել ռազմական ուժով: Բայց ինչ որ ակնյայտ էր, այն էր թէ այդ երկու հզօր կայսրութիւններուն միջեւ հայ ժողովուրդը պիտի կարողանար ընել ոչինչ:

Հետեւաբար, միակ լուծումը որ պիտի յաջողէր միացնել երկու հայաստանները եւ փրկէր հայ ազգը քովանդակ ձուլումէ՝ զիրն ու գրականութիւնն էր:

Եւ ո՞վ հրաշք: Տարիներու տանջալից բափառումներէ եւ չարչարանքներէ յետոյ, Մեսրոպ վերադարձաւ Հայաստան 36 տառերէ բաղկացեալ գրահամակարգով մը, այնպէս, ինչպէս Մովսէս մարգարէն Սինա լեռնէն վար իջաւ տասնաբանեայ տախտակները ձեռքին, տալու զայն իր ժողովուրդին՝ որպէս փրկութեան գրաւական:

Մեսրոպ՝ դրօշակակիրը, կեդրոնական դէմքը եւ համազգային փայփայլած մեծ երագի իրականացնողը, ոչ միայն հայատառ գիրբնու գիւտը ըրաւ, այլ նաեւ Սահակ կարողիկոսի հետ միասնաբար ձեռնարկեցին հայ ժողովուրդի համար՝ ամենէն կարեւոր առաքելութեան՝ Աստուածաշունչի բարգմանութեան: Աստուածաշունչը կը համարուէր բոլոր մատենագիրներու հիմը, պատմագիրներու համար: մարդկութեան ծննդոցը, իմաստասէրներու համար՝ Աստուծոյ միտքն ու խօսքը, բանաստեղծներուն համար՝ Աստուածային անշահախնդիր սէրը մարդկութեան հանդէպ, եւ ի վերջոյ մարդ-Աստուծոյ



յարաբերութեան ու մարդկային պատմութեան քանկագին գիրքը: Ու ոչ միայն այս, այն նաեւ կը ներկայացնէր Աստուածորդիին յարութեամբ պսակուած իրականութիւնը:

Բնական էր, որ գրերու գիւտէն եւ Աստուածաշունչի թարգմանութենէն ետք, նաեւ թարգմանութիւն այդ օրերու եւ աշխարհիկ եւ կրօնական հսկայական գրականութիւնը, որպէս զի հայը հայերէնով կարդար եւ հայերէնով գրէր ու սորվէր: Սուրբ Մեսրոպի ու Սուրբ Սահակի եւ ստուար թիւով անոնց աշակերտներուն գործերէն կարելի է մեկնաբանել որ հայ ժողովուրդի ծարաւը ոչ միայն գիր ու գրականութիւնն էր, այլ նաեւ հաւատքի ու կրօնական ջերմեռանդութեան սարսափելի սովը: Դիր ու գրականութեամբ՝ Հայ ազգը հայացուց բոլոր ժողովուրդներու Արարիչը, ու սկսաւ անոր հետ խօսակցիլ ու հաղորդուիլ Հայերէնով:

Հայ ժողովուրդը հայացուց հին կտակարանի Արարիչն ու մարգարէները, հայացուց Աստուածորդին ու իր աշակերտները: Անոնց հետ խօսիլ սկսաւ հայերէնով ու Աստուածորդիի աշակերտներու թիւին վրայ աւելցուց բազմաթիւ աշակերտներ ու մարտիրոսներ, սակայն այս անգամ իր շարքերէն ու իր ազգի զաւակներէն:

Դրերու գիւտով միացան երկուքի բաժնուած Հայաստանը եւ հայ ազգը: Զուլման վտանգէն փրկուեցաւ հայը, ու իր առաջնորդներուն ու եկեղեցիին այս անգամ աւելի կառչած հայը սկսաւ կերտել իր ապագան իր գլուխը գմբէթներու ձեւով հասցնելով մինչեւ երկինք ու Աստուած:

Դրերու գիւտով ստեղծուեցաւ քովանդակ հայաշունչ ու հայոցի ու հայոն գրականութիւն, սեփական ու ինքնատիպ մտածողութիւն, ազատ ու

անշատ՝ ազդեցիկ տէրութիւններու մշակոյթէն. թէեւ անոնցմէ օգտուելով ու փաղեւով իրեն անտեղեակ գիտութիւնը ու հայացնելով հրամցուց հայ մանուկին որպէս բանաւոր կեանքի հաց անոր մտքի սեղանին:

Ստեղծեց ու ստեղծագործեց իր իսկ ինքնատիպ ու սեփական մշակոյթն ու մտածողութիւնը, պատմութիւնը, նարտարապետութիւնը, երաժշտութիւնը, բանաստեղծութիւնը, եւ հոգեւոր գրականութիւնն ու աստուածաբանութիւնը: Դպաւ ամէն տեսակ արուեստի երեսին ու խորաթափանցելով իւրաքանչիւրի հոգիին, դուրս եկաւ նորով:

Եւ իրօք շատ չանցած, արքեպաւսարսկական փիղը ու ըրաւ անկարելին հայու սէգ ու երկնասլաց արծիւը ոտնակոխ ընելու: Հայ ազգն ու եկեղեցին միահամուռ ու միաբռունցք պայքարեցաւ Վարդանի ու իր զինակիցներուն նեցուկ կանգնելով: Վասն Հայրենեաց ու վասն Կրօնի հայը պայքարեցաւ ու ցոյց տուաւ համայն մարդկութեան, թէ Միածինը ոչ թէ միայն իշաւ Հայաստանի հողին վրայ այլ նաեւ նա իշաւ հայու սրտի ու հոգիի դաշտին վրայ ու հոն կառուցեց հայկական նարտարապետութեամբ՝ Աստուածորդիին Իշման տեղին նուիրուած սրբազնասուրբ տաճարը:

Օրհնեալ ըլլան Մեսրոպի ու Սահակի ու անոնց աշակերտներու նման հայկազուն զաւակները: Թարգմանչաց սերունդի աղուոր յիշատակը միշտ թարմ մնայ բոլորիս մտքին ու հոգիին մէջ: Թող Աստուած հարիւրապատիկը շնորհէ անոնց որոնք գրչով ու մտքով պատճառ կը դառնան քովանդակ ազգի մը զարգացման ու գոյատեւման:

Թարգմանիչները «Ջարդարեցին Անեղին իմաստը» կ'ըսէ Շարականը, «Կենդանի գիրքըր հաստատելով» հայ երկրին վրայ:

Արդարեւ, բարգմանիչները զարդարեցին ու սրբացուցին հայ երկիրը Աստուածորդիին խօսքով ու կեանքի օրինակով: Թող իւրաքանչիւր ծնող գերազույցն պարտականութիւն համարէ իր զաւակներու հայեցի դաստիարակութեամբ ուսում չամբելը:

Այսօր, քարի ու քախտաւոր զուգահեյպութիւն է, որ Սուրբ Արոտոյս Դահակայ Պատրիարք Արքագան Հօր Դահակայութեան 17րդ տարեդարձն է: Այս առիթով նաեւ ի սրտէ կը մաղթենք

Ամենապատիւ Հօր՝ առողջութիւն մաքմնոյ եւ առաւել եւս պտղաբերութիւն մտքի ու հոգիի: Պատրիարք Արքագան Հայրը՝ լինելով գրչի մարդ, կը շնորհաւորենք զինքն ու նաեւ այն ամէն գրչի մարդերը, որոնք իրենց կեանքով եւ մտքով տուած են ու աւելին տուած են այս ժողովրդի զաւակներուն մտքի ու հոգիի քարօրութեան համար: Ի վերջոյ, փառք անոր է որ տուիչն է բոլոր շնորհներուն, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԲԱԳՐԱՏ ՎՐԴ. ՊՈՒՐՃԷՔԵԱՆ

ԳԵԹԱՍԵՄԱՆԻԻ ԵՐԿՈՒՆՔԸ

Երուսաղէմ քաղաքի եւ Զիքենեաց լեռան ստորոտներուն երկարած գուած քարաբլուրէ հովիտ մըն էր Գերսեմանի կոչուած պարտէզը:

Գերսեմանին, սերտօրէն առնչուած ըլլալուն Քրիստոսի երկրաւոր կեանքին եւ Սուրբ Կոյսի Վերափոխման հետ, պատմակրօնական կրկնակի արժէքներով յաւերժացած, եզակի ուխտավայր մ'է, որ, մինչեւ այսօր նոյն անունով կը յորջորջուի:

Արդարեւ, յիշատակութեան արժանի յատուկ այս վայրը, ուշագրաւ էր իր հաստատուն պատկանելի ձիւններով:

Երուսաղէմ քաղաքի արեւելեան թեւէն կախուած, բնակավայրերէն երկու մղոն հեռաւորութեամբ, գերծ գործարարական եռուզեռէն, հովտին արտասովոր ամայութեան սրտին քացուած, արծառաշաղովափս մ'ինչպէս, խորհրդաւոր իր խաղաղութեամբը հմայական, մեկուսացման խոկումներու աստարոդ իտէալ մթնոլորտով վայր մըն

էր Գերսեմանիին տարածքը:

Մտերմութեան մենաշնորհը ըմբռնելու միտումով, իր սովորութեան համաձայն, Գերսեմանին ընտրած էր Աստուածորդին առանձնանալ, առաքելութիւն հետ հանգստանալու վերադառնելու այլ եւ հոգեկան խաղաղութիւնը, հոգեմաշ օրուան մը ճնշիչ եղելութիւններէն ձերբազատուելէ ետք, եւ, օգտուելով գիշերային անդորրէն, առանձնացած աղօթելու:

Եւ այդ գիշեր, միապաղաղ Գերսեմանին, շահագրգռիչ իր սոսկական բնութեամբ կը յարդուէր խորասուզուած, արտասովոր անբարեաւան նակատագրի մը զօդուած: Խաւարին քացուած իր ծոցին մէջ, եղեմական կեանքէն վիժած աղամական ժառանգն էր որ իր հոգեվարքը կ'ապրէր: Թանձր էր խաւարը այդ գիշերուան եւ լուսիւնը անբաժան: Մարդը այլ եւ հասած իր շնորհագուրկ կենցաղի վիճիկն, վերափոխեալ, տակաւ մուտք պիտի գործէ վերածնող նոր աշխարհի մը

ծիրեն ներս, ուր աշխարհը պիտի ստովի, կրկին անգամ վերականգնիչ նոր տեսիլով մը սպառագէն:

Գիշերն այդ հովասուն էր, հակառակ տիրող փոքորկայոյց անձկութեան, եւ ոլորտը բազմաթիւ բոյրով անոյշ ծաղիկներու, կարծես, դիւրող խարկան մ'ըլլար, օծանելով հովտին ամայական կողերն անողորկ, իր բնշուրքամբ կը սփոփէր խաւարաստուէր Գերսեմանին:

Գիշեր մըն էր անծայրածիր ժամանակի խորութեան մէջ ընկղմած, որ կը բացուէր ժամանակի կարգէն անկախ, փրկագործ եղանակի մարագահոս նոր կշռոյթով պայմանաւոր, հետզհետէ հեռացնելով նորահաւատ հոգիներէն անհատակ բերկրանքը Աստուածառաք Վարդապետին յուսադրական յորդորներուն, տալով անոնց նախագիծը յաւերժական նոր կեանքի մը ալլապէս դժուարին պայմաններուն:

Գիշերը այդ, ուր կը սկսէր Գերսեմանին խաւարին մէջ խորանալ, լոկ բնաբարախ, գիշեր մը չէր, ոչ իսկ նախերգանք մը պարտութեան, ինչպէս շատեր կարծեցին, այլ սպասուած վերջալոյսը աղջամուղջին, շօշափելի ներկայութիւնը գերմարդկային զօրութեան եւ մեկնումը Աստուածորդւոյն անյիշաշար իշխանութեան: Անձնութեան առաքինի վարկը եւ անբաժանի առանձնութեան անձկութիւնը յայտնաբերող: Հաստատումը յաղթահարող տիրոջ կամքին եւ փրկարար արեւածաղը վաղուան յուսարքնոր առաքելութեան:

Այդ գիշերին էր, որ, աշխարհը պիտի երկնէր Հինէն բխող Նոր տեսիլքը ոսկեհուր, մարմին պիտի զգենոյր ազատութեան երազանքը հոգեկաշկանդ ազգերու, եւ, առատացող արշալոյսով պիտի բխրեղանար սպասումը անվշտական Առաւօտին:

Այդ գիշերը անտարակոյս, Գերսեմանին, իր ստորադաս բնութեամբ, վերադարձ մ'էր նախաստեղծման բառային վիճակին, ուր ակնյայտ, փուլումի ենթարկուած առաքինի սկզբունքները արարչութեան տնօրինած Աստուածահաճոյ պատուիրաններուն, վերադարձած դէզադէզ, կը սպասէին ժամանակի ախտագրեման, նորոգման:

Ընդունուած երեւոյթ մ'է, թէ, դէպքերը պատմութեան մէջ կը կրկնուին առանց իրար նմանելու, ծնունդ տալով յար եւ նման ոգեղէն արժէքներու: Այս առումով յիշենք այստեղ, բառային միգամած անարշալոյս գիշերը տիեզերքին, թէ ինչպէս Աստուած հանեցաւ, նման այս գիշերուան, միջամտել ելաւերժական խաւարապատ ստեղին նոր դիմագիծ մը պարզելու եւ, կասեցնել խառնաշփոթ աննպատակ բաւալումը անոր, հաստատելով ներդաշնակ համագոյակցութիւնը բաղադրիչ տարրերուն՝ խլելով լոյսը՝ խաւարէն, երկինքը՝ երկրէն, հողը ջուրէն եւ օդը կրակէն:

Գիշեր մըն էր, Աստուածային խորհուրդով տնօրինուած ուր, տիեզերքը հերքարար, հեւնոտ ֆայլով, իր հոգեկան անհակտելի բառային թննուէն դուրս կու գար:

Գիշեր մըն էր, տրտմութեան մէջ յայտնաբերող, անբուժելի խոցող վէրքը ուրացումի եւ մատնութեան, ուր կը բացուէր պատգամաբեր Աստուածորդւոյն նոր հորիզոնը լուսաւոր եւ կը սկսէր խոր կսկիծով՝ իր բրտնաբոր փերուն մէջ լուալ մեղքը նախամարդուն, գամելու զայն խաչափայտի անարգութեան բեւեռներուն եւ այդ ազատարար բեւեռներէն, կենսանորոգ ձեռք կարկառէր մարդկութեան:

Գիշեր մըն էր տագնապալից Տիրոջ կեանքը բռնագործիկ գիշերուան

մէջ առաջնորդող, նախադրեալ այց մը կարծես խաչէն անցին խորտակուելիք գեհեներին, ուր մահուան հետ համակերպեալ, դժոխապարտ հոգիները գալարուն կը կոտտան:

Այդ գիշերը, այն ցանկալի անգերազանց գիշերն էր որ, ուր անհերքեք բշնամին ատելութեամբ գերերջանիկ, յագուրդ տալու տարիներով իր մէջ սնած, մղձաւանջով մոռնալացած վանողական անբարեխիղճ ներշնչումին, փշէ բագի ծիծաղաշարժ բազադրութեան երազանքով խելագարուած, նազովրեցի Աստուածորդին որպէս արքայ հրէից, իր տժգունած երջանկութեան դափնեկիրը պիտ ընէր:

Այս էր ահա այդ անըստուեր գիշերին, խաղաղասփիւռ Գերսեմանին յափշտակող նենգախորհուրդ պարտէզին մէջ ծնունդ առած արհաւիրքը, որ, գիշերուան անհետացող խաւարին հետ անտարակոյս, Բողազերծեալ պիտ յայտնուէր ատելութեամբ ուրուագծուած հետգհետէ դժուարագուսպ նպատակը:

Գիշերը այդ Քրիստոսի դէմ անող ատելութեան դաւադրական արտայայտութիւնը ի լոյս կը հանէր երուսդէմի մեղսակից իշխանաւորներու կամակոր աջակցութիւնը որպէս խրախուսիչ զօրակցութիւն ռարբիներու Բինախնդրութիւնը հրահրող, եւ այդ որպէս հաւաքական բացայայտ կամքի մը արդար ենթադրուած համոզում, կը վնոէին միանգամընդմիշտ կոտրել բափր Աստուածորդի բանեղ Վարդապետին եւ կասեցնել անոր երկնաւոր իշխանութեան հզօրութիւնը գերադասող անհանդուրժելի գաղափարախօսութիւնը:

Իրագեկ էր երեւելիներով գոյացած ատելութեամբ սնած, արբուն հսկող բշնամական ջոկատը, որ այս գիշեր, ինչպէս պատուար, պէտք էր արգելք հանդիսանար ամենեւին՝ բանձրացեալ

հաւատքի նամբով աստուած ավախութեան վերադարձին: Հոս եւս, հաւատքը որպէս հաւաքական արտայայտութեան մը անժխտելի զօրութիւն պէտք էր որ ան վերակենդանանար:

Երկրաւորին չէզոքացումը եւ անոր հարկադրած իշխանութեան արժեզրկումը, անհրաժեշտ պահանջք պարտադրուելու սպառնալիքը որպէս չարիք, ոչ միայն պէտք էր խեղդել իր պատեանին մէջ որ, հոգեկանին գերադասումը մնար որպէս անմատչելի խորհրդանիշի մը մտասեւեռում, պղտոր հեռանկարի մը սին երեւակայութիւն, այլ եւ հրապարակաւ օրինակելի պատժամիջոցով, վիատեցնել այն բեկնածուներուն, որոնք ապաւինելով նորահաստատ վարդապետութեան յուսադրումներուն, որպէս նորադարձ ուխտեալներ, կը յաւակնին յաւիտեական կեանքի Բարոզութեան նպաստել եւ իբր այդ, արժանի ժառանգորդները հանդերձեալին:

Այդ գիշերին էր որ կը պարզուէր յաչս իշխանաւորներու, նոր վարդապետութեան ներգործող յառաջողէմ խաղաղ զօրութիւնը եւ անոր շփոթութեան մատնող մտահոգութիւնը, որ ոչ միայն վնասկանօրէն կ'ամրապնդէր Աստուածահանոյ նոր կառոյցի մը հիմնաւորումը, այլ եւս կը ժայթէր բօրափելով անցեալի անհանդուրժելի ապականութիւնը որպէս հետագայ դարերու հոգեզարբման եւ բարենորոգ սկզբունքներու ներշնչման կենսատու աղբիւր:

Ահա այսպէս՝ Գերսեմանի գիշերին կը դարբնուէր Աստուածորդւոյն հրաշափառ մուտքը այն օրուան, ուր՝ հանգրուան առ հանգրուան, Աստուածային իր զօրութեամբ, նուանելով իշխանութիւնը անիշխանական իշխանաւորներու, պիտի բարձրանար մինչեւ գողգոթա գոհամատոյց խորանին,

դիմագրաւելով սոսկումը իրեն վերապահուած նակատագրին՝ խաչելութեան եւ յետ խաչի մահուան, պիտի սպառէր մեղանշանքը մարդկութեան:

Պատահական չէր Աւետարանչի գրչին տակ այդ ժամուան խաւարման յիշատակութիւնը: Այլ եւ յիշեցնելու բէ՝ նման այս գիշերուան, աշխարհը նախ քան իր կարգաւորման, խաւարի մէջ կը խարխարէր: Այսպէս, աշխարհը այս գիշեր, Քրիստոսի մէջ ամփոփուած, կարծես վերջին անգամ ըլլալով կը կրէր բանձրութիւնը խաւարին՝ ոչ որպէս հոգեկան անկում, այլ բնական հոլովոյթ, ուր կոշտակուող հիմքերը հին քարհերուն՝ հիմնայատակ պիտի կործանէին եւ Աստուծոյ պարգեւատրած յաւերժական կեանքի լոյսը, փրկութեան եւ սիրոյ յոյսը՝ դարձնալ եւ միշտ պիտի պայծառանար:

Գիշերը այդ անտարակոյս՝ եղաւ նաեւ խոր երկունքի մը գիշեր, ուր, դէմ դիմաց, կրկին անգամ յայտնուեցան մարդուն յատուկ օրինազանց բնութենէն մարմնաւորուած չարն ու քարին: Անխուսափելի նակատագիրը երկու ներհակ՝ անհաշտ աւանդներու:

Տէրունական ոտհերուն տակ այդ գիշեր, արտասովոր էրտնանքի մը կաթիլներով բրջուած, կարծես հողը անարգաւանդ կենդանացած կը շնչէր, նոր սիրտ մ'առած իր կոշտացած կրծքին տակ, կը փորձէր կրկին փափախել, տրոփներով տատամտտ:

Հողէն ծանօթ առհաւական հրապուրիչ բոյր մը դարձնալ կը բարձրանար կուգար մինչեւ Աստուածորդւոյն ոռոնգներուն: Այլիք այլիք շեշտառու, ընտանի կանչ մը հեւասպառ որ կը տնկար շարունակ եւ կ'աղերսէր որ դարձնալ, Աստուած ձեռքը երկարէր որպէս ատաղձ նախամարդու կերպարին,

այնպէս որ «է»նն հանեցաւ ի սկզբանէ աշխարհին եւ սիրաւէտ վերակերտէր վերանորոգ ազամին:

Եւ այդ գիշեր Քրիստոսի մէջ ալիստով, որպէս վերջին խաղաղաշունչ հանգստաւայրը Քրիստոսի, իր փարբամ ձիքներին երկունքէն կը ծնէր եւ կ'ուռնանար գերմարդկային զօրութիւնը յատկանշող, նոր ոյժի մը գերակայութիւնը եւ ահա պահ մը, աննախատես տուեալի մը ներխուժումով, փրկագործութիւնը կ'անհետի կարծես Աստուածային կամփառաջադրութենէն, դրսեւորելով Քրիստոսով իրագործուելիք, իրմով միայն մարմնանալիք փրկութեան կենսունակութիւնը, հեռացնելով նպատակակոռոյց միջոցին դաժանութիւնը, եւ այսպէս կը բաղիսի անգութօրէն, ժամանակի արտացոլած անդենական ժառանգելու խոստումին, տէր կանգնելով ինչպէս պարգեւատու փրկագործութենէն ակնկալելիք հոգեփրկութեան եւ կը դառնայ անտարակոյս, անվիճելի արգասիքը, մարմնաւորեալ վշտածոր Աստուածորդւոյն, անձնուրաց անխուսափելի առաքելութեան:

Արդար պիտի ըլլար անդրադառնալ այլ եւս, բէ որքա՞ն ինքն Աստուած որպէս մարմնացեալ էակ, ենթարկուեցաւ միաձուլուած իր ստեղծած մարդուն վերապահուած մարդկական պարտադրանքներուն: Քալեց մարդոց բալած փողոցներով: Ապրեցաւ բայլ պահելով անոնց առօրեան յուզող վերիվայրումներուն: Կրեց իր տրտմահեղձ հոգւոյն մէջ, հոգեկան տանջանքը մարդոց եւ, իր կարգին որպէս կատարեալ մարդ՝ ինքն Աստուած՝ ի տես անոնց տառապանքին տկարացաւ: Փշրել ուզեց կապանքները դիւրագրգիռ սնահաւատներու եւ ազատել արարածին՝ հալածելով, դատապարտելով չարաղէտ իշխանութիւնը անոնց: Խրախուսեց վշտակիրները «եկայ՛ առ

իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք,
եւ ես հանգուցից զձեզ» ըսելով. Մատթ.
իա 28:

Ահա հրաւեր մը, մարդկային
բարձր արգահատանով ազնուականա-
ցած, ուր կեանքը, որպէս արտայայտու-
թիւն Աստուածային կամքին, կ'արժանա-
նայ Անոր գթասիրտեան եւ գեղեցկացած
կ'արժեւորուի որպէս շնորհիք երկնային:

Քարոզեց անոնց մօտալուտ վերջը
աշխարհին, այն աշխարհին՝ որուն իբրեւ
նախախրեմք փրկութեան, Գեթսեմանիի
մը գիշերը պէտք էր ստեղծուէր որ,
հողաստեղծ մարմնին միատարր
անպատեհ արժեւորումը վերացուէր եւ
դադրէր յագեցնել դրուած մարդոց
դաւադրական սպասումները, իր մէջ
տարրալուծելով առաքինութիւնները
ոտնահարող ամէն ժամանակներու ախտը՝
մարդկային խժոժութիւնները, եւ ոչնչա-
ցնէր մարդուն հոգեկանին սպառնացող
ժանտախտը յաւիտեանական դատապարտու-
թիւնը. եւ այս ի փառաւորումն
անմահութեան ձգտող անեղծ հոգեկանին:

Ահա թէ ինչու այնքա՛ն սրտայոյզ
էր ընկրկումը տրտմահալած Քրիստոսին
Գեթսեմանիի բազմաբախիժ գիշերին եւ
խորայոյզ աղօթքի օգնութեամբ, շնորհի
հայցը ամենագոր Առաքիչէն, հեռանալու
գինքը տանջող իր ըմպելիք բաժակէն:
Բայց, ի՞նչ փոյթ թէ՛ Աստուածորդին կը
տագնապի Հօրը սրտին յորդող անհուն
բաժակէն:

Առաքեալներէն՝ միայն Յուդան
էր արքուն, չղագրգիռ իր ճակատագրէն:
Տիրոջ օրինակին՝ ինքն ալ կ'ուզէր հե-
ռանալ, իր ըմպելիք բաժակէն: Անհրա-
ժեշտ էր որ այդ բաժակը պարպուէր
յանուն երբեակ ազատութիւններու:
Ազատութիւն Յուդային, ի գին անձնասպա-
նութեան, ազատութիւն մարդկութեան
խաչելութեան փրկութեամբ, ազատութիւն
Քրիստոսի՝ իր Աստուածութեան

հրաշափառ Յարութեամբ: Պահը սակայն,
Հօրը կամքով նախատեսուած՝ հետզհետէ
կերպարանեալ ժամանակի ընդերքէն խոյս
կու տար եւ դաւաճոտ առանձնութեան
գիշերին, անհնարին վերելք մ'ինչպէս,
կ'ուրուագծուէր դառնաշունչ՝ արահետը
Գողգոթային:

Լուսինն անգամ տրտմահեղձ,
անհունութեան խորութեան մէջ նման
Տիրոջ միայնակ, ամբաստանիչ տխրա-
հոչակ այդ գիշերին, կարծես անգօր
գաղտնի հսկող աչքը ըլլար երկնին:
Արտասուաբոր հրաժեշտի իր ցոլերով
մեղմանոյշ, անհետանալ կը փորձէր,
գուցէ այլ եւ մերժել ուզէր ականատեսն
ըլլալ իր արարչին՝ ձերբակալման տրամին:

Արարն սակայն պէտք էր հասնէր
իր աւարտին: Նախատեսուած
մատնութիւնը Նազովրեցի Վարդապետին,
լրջօրէն պիտի խոչընդոտէր անոր մինչ
երէկուան քարոզչութեան խաղաղ
ընթացքը, եւ արարք մատնութեան պիտի
դառնար խորհրդանշիչ դաւանութեան:

Ատելութիւնը այլ եւս, պէտք էր
յայտնուէր իր աւերիչ բնոյթով, լրացնելու
նախագուշակութիւնը մարգարէութեան
եւ այդ գիշերուան դաւադրական
նախատեսութիւնները: Մինչ, Տէրը
պատրաստ յանձնուելու դահիճներուն,
ահա Յուդան մութին մէջէն կ'երեւայ:
Շրթները ուռած, լեցուն մաղձով Տիրոջ
այտին կը մօտենայ:

«Ընդ որում ես համբուրեցից, նա
է, զնա կալարումք» նշանն էր
պայմանադրուած, համբուրելով պէտք
էր զոհը առաջնորդէր սեղանին:

Նշա՞ն մըն էր մատնութեան թէ
զղջումի հառաչանք: Խօսքի մը փոխարէն,
գուցէ համբո՞յրն էր աւելի մեղմ:

Յուդայի տուայտանիէն ծլած այդ
համբոյրը, ինչ անունով ալ որ որակենք,
անտարակոյս, չերմ գղջումի մը, լեղի
համը կը սփռէր: Աղբսանք մ'էր

վստահաբար լուելեան մեղանչանքը
բաւելու, ու թերեւս, վկայութիւն մը
սիրոյ՝ տիրոջ կողմէն մնալու:

Աստուածորդին զարմացած՝
«Համբարեւել»-ի կը մատնես Որդին
Մարդոյ» խօսքը ուղղեց Յուդային,
կարծես կ'ուզէր այդ համբարեւելն անարգ
դերը մերկացնել:

Դժբախտաբար, Աւետարանիչները,
ոչ մէկ խօսակցութիւն կը յիշեն Տիրոջ եւ
ուխտադրութեան առաքելին միջեւ: Որքան
շահեկան պիտի ըլլար Քրիստոնէական
համայնքին համար, որպէս հոգեւոր
ապրում, հոգեկան տառապանքի
արտայայտութիւն, եւ որպէս գղջման
չափանիշ հակասելու մատնութեան
խորհրդանիշ համբարեւելին, եթէ երբեք
Յուդան, ամենադոյզն պատասխան մը
տուած ըլլար Յիսուսին:

Ոչ մէկ մեկնաբանութիւն կարելի
է առաջադրել, կարենալ երեւակայելու
Տիրոջ տառապանքէն պարզաբանուած
ահաւորութիւնը Գեթսեմանիի գիշերին:

Անպատասխան Իսկարիոթացիին
այդ գիշեր, գլուխը կախ, անյայտացաւ
Գեթսեմանիի պարտէզէն:

Ինչ որ կրնամք հետեւցնել
Աւետարանչի խօսքերէն, Գեթսեմանիի
գիշերէն ետք, ամօթահար Յուդան, խղճի
խայթէն հալածուած, չ'ուզեց ապրիլ
պարանոցէն ափ մը արծաթ
զարդարուած:

Յուդայի անձնասպանութիւնը,
արդար եւ գովելի յանգումն էր իր
գղջումին:

Այս առումով, ինչ որ Յուդան
ստանձնեց շատ մը մեկնաբաններու
համաձայն առաքելութիւն մըն էր, որ,
խթանող մէկ մասնիկը եղաւ
վերապահուած փրկութեան:

Աւանդոյթ մը կը պատմէ թէ, այն
շրթները որ մօտեցան տիրոջ այտին, հող
չը դարձան, որովհետեւ հանդերձալին
դռները բացին մարդկութեան:

Համբարեւել որպէս նշան
մատնութեան, ինկած սիրոյ երազներու
պատուանդանէն, եզակի դէպք մը կը
մնայ մարդկային պատմութեան մէջ:

Ինչպէս անցեալին, այսօր եւս,
այս վարկածը, կը շարունակէ արդարօրէն
շահագրգռել մասնագէտները, թուիչ
տալով բազմաբանգ մեկնաբանութիւն-
ներու: Սին աշխատանք մը չըլլար եթէ
երբեք հետազային, «Յուդայի համբարեւել»-ին
շուրջ մեր հետաքրքրութիւնները ջանամք
խորացնել, փորձելով լուսաբանել թէ:-

Ինչո՞ւ մէկը տասներկուէն պիտ
ըլլար մատնիչը եւ ոչ մէկը՝ վարդապետին
հետեւող ժողովուրդէն, կամ, մէկը զայն
հետապնդող իշխանութեան ծառա-
յողներէն:

Ինչո՞ւ համբարեւել եւ ոչ
մատնանշումը, հակառակ Յիսուսի
յականէ տեսնուելուն:

Ինչո՞ւ հանդուրժողական եւ ոչ
յանդիմանական ոճը Յուդայի հանդէպ:

Ահաւասիկ հարցեր խոկումներու
արժանի, որոնք ոչ միայն կենսական են
Աւետարաններու ողջմիտ ըմբռնումին,
այլեւ, կը բարեւաւեն առօրեան զարդարող
մեր հայեցողութիւնը:

Ինչպէս ամէն մութ գիշեր
վաղորդայնի լուսաբացին պայծառութեան
մէջ կ'անհետի, նոյն ոգիով մեր մութ
սրտերը բացուին մշտանորոգ արշալոյսին,
հալածելու մեր ճամբէն, աղէտաբեր
մութը գիշերին, արժանանալու Աստու-
ծոյ բարեգութիւն հովանիին ի սփոփանս
մեր կարօտեալ հոգիներուն:

ԶԱՐԵՀ ԹՕՓԱԼԵԱՆ

«ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐԻՏ ՈՐԹԱՏՈՒՆԿԸ»

Յով. Ժե. 1

Յիսուս ինչո՞ւ ինքզինք
բարձրաբերձ արմաւենիի մը չի նմանցներ,
կամ մշտադալար կաղնիի մը, որ իր մե-
ծայադբ ու պանծալի հասակով, վերէ՛ն
կը դիտէ բոլոր ծառերը եւ ինքզինք
տիտան կը սեպէ:

Մինչ տիեզերքի ճարտարապետ
Յիսուս, ինքզինք կը նմանցնէ գետնի
հողին վրայ տարածուող խոնարհ
որբատունկի: Որբատունկը, թէեւ կը
տարածուի ու կ'ընդարձակուի գետնի
վրայ, սակայն մենակեաց բոյս մը չէ՝
նման ուրիշ բազմաթիւ հաստարուն
ծառերու: Ան, բազմաթիւ ու բազմապիսի
նիւղեր կ'արձակէ, որոնք զինք կը մե-
ծարեն ու զինք անբաղդատելի կերպով
կը գովաբանեն: Իր հիւթը (գինի),
նոյնիսկ տեղ կը գտնէ արքայական
պալատներէ ներս, ու մարդիկ իրենց
մաղթամբ կը կատարեն ըմպելով Անոր
հաղցրահամ հիւթը՝ գինին:

Քրիստոս ցոյց կուտայ, թէ Ինքն
է ճշմարիտ որբատունկը, այսինքն՝ Իրմով
է որ կը սկսի Աստուծոյ իսկական
ժողովուրդը:

Յիսուս Քրիստոս տարածելով իր
հաւատարիմ եւ պտղատու նիւղերը, կը
տարածուի ու կը տիրէ եւ կ'իւրացնէ Իր
շրջապատը: Ան կը փափաքի, որ Իր
նիւղերը դառնան իր հարազատ նմանները:
Ան կ'աղօթէ Հօրը ըսելով. «Ես տուի
անոնց այն փառքը զոր Դուն տուիր
ինծի, որպէս զի մէկ ըլլան անոնք,
ինչպէս որ մէկ ենք մենք: Ես՝ անոնց
մէջը, եւ Դուն՝ իմ մէջս,» որպէս զի
կատարեալ ըլլան Մէկի մէջ: Ինչո՞ւ:
Որովհետեւ պտուղները որբատունկին
բունին վրայ չեն բուսնիր, այլ նիւղերուն:

Յարուցեալ Յիսուս Քրիստոսի

հաւատարիմ առաքեալները եւս, փոխանակ
դառնալու բարձրահասակ եւ փառահեղ
կաղնիներ եւ մայրիի ծառեր, դարձան
խոնարհ եւ համեստ նիւղերը Յիսուս
Որբատունկին: Անոնք կոխկոտուեցան
եւ անարգուեցան, հալածուեցան ու
բանտարկուեցան, սակայն անո՛նք եւս
տարածուելով երկրի վրայ, հարողեցին
իրենց Տիրոջ փրկարա՛ր Աւետարանը
համա՛յն աշխարհի:

Յիսուսի հիմնած եկեղեցւոյ
առաքելութիւնը նոր ուղղութիւն, նոր
ընթացք եւ շեշտեալ կարեւորութիւն
ստացաւ, որովհետեւ ընտրեալ աշակերտ-
ները՝ նիւղերը, իրենց հարողածը ապրեցան
կենդանի վկայութեամբ: Յիսուսի աշա-
կերտները, Քրիստոնէութիւնը գիտութե-
նէն, դաւանաբանութենէն անդին անցուցին
եւ քրիստոնէական հաւատքը գիրքէն
առնելով զայն կենսի՛ փոխակերպելով
միայն կրցան կոչուիլ առաքեալներ:
Առաքելութիւնը ինքնամատուցում է,
ինքնագոհողութիւն եւ ծառայութիւն:
Ճշմարիտ արուեստը մարդո՛ւ՝ մարդկայ-
նացման իդէալին ծառայելո՛ւ
առաքելութիւնն է:

Տան մը մայրը երբ լրիւ
ժամանակով հրաժարի իր բնատուր
մայրական առաքելութենէն եւ նետուի
շուկայի ասպարէզ, հոգեկան տարր մը
կը պակսի այդ ընտանիքէն: Նմանապէս
այլ, երբ կղերական մը աշխարհիկ
ոլորացուցիչ հրապոյրը սիրէ, հոգեկան
տարր մը կը պակսի այդ եկեղեցիէն:

Առաքելական դարու աշխարհա-
կան հաւատացեալները երբ տարածուեցան
Հրէաստան երկրէ դուրս եւ առեւտրական
կամ ծառայական գործերով զբաղիլ
սկսան, իրենց անկեղծութիւնն ու

նուիրումը գրաւեց տեղացի ժողովուրդներու ուշադրութիւնը: Քրիստոնեայ հաւատացեալներու այս նուիրումի եւ անկեղծութեան հոգին պատճառ դարձաւ, որ հալածուած հաւատացեալներէն շատեր ընդունուին մեծահարուստ Յոյն եւ Հռոմայեցի ընտանիքներէն ներս որպէս սպասաւորներ եւ դայեակներ: Քրիստոնեայ դայեակներու հաւատարմութիւնը եւ նուիրումը հանդէպ մանուկներու այնպիսի կենդանի վկայութիւն մը դարձաւ, որ անոնք ակամայօրէն վկայեցին իրենց հաւատքը եւ Տէր Յիսուսը:

Այս անուս ախարհական սպասաւորներու եւ խնամակալներու պարզ վկայութիւնը քաւարար եղաւ, որ քաղմաքիւ քաղաքական քարձրաստիճան անձեր Յիսուս Քրիստոսի հաւատքին դառնան: Այս գորութեան գաղտնիքը, ո՛չ թէ աստուածաբանական կամ իմաստասիրական ուսումին մէջն էր, այլ խոնարհ սպասաւորներու եւ մանկաբարձներու սրտերուն մէջ ապրող եւ գործող Սուրբ Հոգւոյն ներկայութիւնը: Յիսուս Քրիստոս կը փափաքէ որ իր վրայ եղած իւրաքանչիւր ճիշդ զինուած ըլլայ Սուրբ Հոգւոյն գորութեամբ եւ վկայութեամբ:

Օտար երկիրներ ապաստանած Քրիստոսի հաւատացեալները երբ տեսան այն նոր երկրին մէջ գտնուած հարստութիւնը, գուարճութիւնը եւ հեշտանքը, չուրացա՛ն իրենց Փրկիչը, այլ ուրացան աշխարհիկ ցանկութիւնները եւ աւելի մօտեցան Աստուծոյ, որպէս զի զիրենք պահէ ստոյգ մոլորութենէ եւ աշխարհիկ հրապոյրներէ: Ներկայ առաքելայաջորդներ եւս, տարածուեցան Արեւմտեան աշխարհ եւ հարուստներու քնակարաններէն ներս, սակայն առանց դարձի բերելու զանոնք, եւ աւա՛ղ իրենք դարձան դրամասէրներ եւ փառասէրներ:

Մեր Տէրը՝ մարդեղացեալ Աստուած Որդին, ոչ թէ իր հանդերձանով

կամ արտաքին տարագով կը ճանչցուէր որպէս հոգեւորական մը, այլ իր քարեհամրոյր գրութեամբ եւ կարեկցութեամբ: Անոր հպո՛ւմն ու հայեացքը մեղաւորի մը, քաւարար էր որ պոռնիկը՝ դառնար սուրբի եւ դրամասէր անգութ մաքսապետը՝ աստուածասէր քարեհարի: Սրբարար Խաչելութենէն օր մը առաջ, աշակերտները ականատես եղան իրենց Տիրոջ մէկ կենդանի՝ եւ անմախքնաբար դէպք եղելութեան: Աշակերտները ապշահար եղան, երբ տեսան իրենց Վարդապետը անձեռոց մը կապած մէջքին, ծուկի եկաւ եւ սկսաւ լուալ իւրաքանչիւր աշակերտին փոշոտ եւ աղտոտ ոտքերը: Վերոյիշեալ կենդանի օրինակէն յետոյ, Յիսուս պատուիրեց իր ընտրած աշակերտներուն, ըսելով.

«Գիտե՛ք թէ ինչ ըրի ձեզի: Դու՛ք զիս Վարդապետ եւ Տէր կը կոչէք, եւ լաւ կ'ընէք, քանի որ իրապէս ե՛մ. իսկ արդ, եթէ ես՝ Տէրս եւ Վարդապետս, ձեր ոտքերը լուացի, դու՛ք ալ պարտաւոր էք իրարու ոտքերը լուալ. որովհետեւ օրինակ մը տուի ձեզի, որպէս զի ինչպէս որ ես ձեզի ըրի, դու՛ք ալ այնպէս ընէք» -- Յով. ԺԳ. 13-15: Ահաւասիկ մեր Տիրոջ Յիսուսի արտաքին կենդանի՝ ելոյթը, որ Զինք կը զանազանէ աշխարհականէ ու կը դարձնէ իրական Աստուծմէ ուղարկուած Հոգեւորականի մը:

Յիսուս գիտցաւ որ առանց Խաչելութեան Իսրայէլի ժողովուրդը պիտի չի կրնայ բերել աստուածանաչումի: Ուստի մարդկութեան հոգին ու խիղճը ցնցելու նպատակով Յիսուս Քրիստոս վեռնեց զոհաբերել իր Անձը: Վերջին շաբաթն էր երբ Յիսուս կ'անցնէր Երիւզով քաղաքէն ու կը փախէր դէպի Երուսաղէմ, դիմագրաւելու վեհագոյն անձնագոհողութիւնը: Երիւզովի փողոցներուն մէջ Ան շրջապատուած էր հարիւրաւոր հետաքրքիր փառքներով եւ

բարձրախօս անձերով: Այս բոլոր ժխտքին մէջ Յիսուս լսեց աղաչանք մը, խնդրանք մը եւ փափաք մը բժշկուելու, որ կու գար կոյր Բարտիմէոս անուն մուրացկանէ մը:

Յիսուս աննկատ առնելով Զինք շրջապատող հետաքրքիրներու աչքերը կանչեց այդ կոյր մուրացիկը, որ Իրմէ խնդրանք մը կ'աղերսէր: Ան, որպէս բարի Որբատունիկ գտաւ ա'յն ճիւղը որ Իր վրայ հաստատուած էր, բաց կոյր աչքերով չէր կրնար պտուղ տալ: Ան ո'չ թէ կտրեց ու նետեց այդ անպտուղ ճիւղը, այլ բժշկեց որ կարենայ պտուղ տալ: Յիսուս ա'յսպէս կը սիրէ Իր հաւտարիմ ճիւղերը: Աղֆատ եւ անուս կո'յր մուրացկանի մը աղերսը կեցուց Յիսուս Մարգարէն Իր երթին մէջ, որովհետեւ այս մուրացկանը բժշկութիւն կ'աղերսէր Իրմէ: Ի՞նչ է մեր խնդրանքը Յիսուսէ:

Ի՞նչ է որբատունիկի մշակման գլխաւոր նպատակը: Միթէ անոր խաղողին ուտութիւն է, անոր տերեւներով լի՞ցք (տոլմա) շինութիւն է: Այդ բոլորը կրնան օգտակար ըլլալ մարդոց անօրութիւնը յագեցնելու համար: Որբատունիկի մշակման գլխաւոր նպատակը անոր խաղող պտուղէն գինի՝ պատրաստելու գաղտնի արուեստն է:

Աշխարհի արքաներն ու մեծամեծները ի՞նչ բարձրացնելով կը կատարեն իրենց մաղթանքը, վարդնգ մը, տա՞նձ մը, արմա՞ւ մը: Ոչ, այլ որբատունիկի հիւրով պատրաստուած գինին: Աշխարհի վրայ չի կա'յ ուրիշ հեղուկ մը, որով մարդիկ կարենան մաղթանք ընել,

խոստում կատարել կամ ուխտել բացի գինիէն: Մարդեղացեալ Յիսուս Ի՞նչ իսկ բարձրացնելով գինիին բաժակը, վերջին ընթրիքին ըսաւ Իր աշակերտներուն.

«Խմեցէ՛ք ասկէ ամէնէն ալ, որովհետեւ այդ է նոր Ուխտի իմ Արիւնս, որ կը բափի շատերուն վրայ՝ մեղքերու թողութեան համար: Բայց կ'ըսեմ ձեզի, այսուհետեւ ես այլեւս որբատունիկի բերէն պիտի չի խմեմ մինչեւ այն օրը, երբ ձեզի հետ պիտի խմեմ նորը Իմ Հօրս այգայութեան մէջ» -- Մատթ. ԻԶ. 26:

Ոչ թէ միայն ա'յս աշխարհի գորաւորներն ու մեծերը իրենց մաղթանքը կը կատարեն որբատունիկի հիւրով, այլ նոյնիսկ Յիսուս ուխտեց նորէն խմել երկնայի՛ն որբատունիկի նոր գինին Իր Հօր Արգայութեան մէջ Իր աշակերտներուն հետ:

Գինին, ուրախութեան սեղանի անբաժան ընկերն է: Հացն ու գինին յաւերժական ներկայութիւնն է Սրբազան Միութեան: Որբատունիկի հեղուկ հիւրը անխառն հիացումով ոչ միայն հանելի կու գայ մարդ արարածի Բիմբին այլ՝ Յիսուսի բարձրացուցած բաժակը հոգեկան մխիթարութիւն եւ ներշնչում կու տայ յոգնած հոգւոյն եւ տկարացած մարմնոյն: Յիսուս Քրիստոսի առաջնահերթ նպատակը հասնի՛լ է կորսուած մարդուն հոգիին եւ անոր էութեան, ոչ թէ գայն պատժելու համար, այլ անոր մեղքերուն թողութիւն տալով ուրախացնելու եւ ներշնչելու:

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՅԱՄԵՑՈՂ ԳԱՐՈՒՆԸ

Այդ դժուար տարիներին անգամ վեհափառութեան պատիւը դեռ շարունակում էր մնալ իր վեհութեան պատուանդանին:

Գարունը յամենալով էր գալիս: Ցրտաշունչ ծմեռը դեռ զգացնել էր տալիս իր խստադէմ ներկայութիւնը:

Մաղկազարդի երեկոն էր: Իր հին փառքից ու պանունանքից մերկացած, ասես անպատեհ ժամին յայտնուած մարդկային մի խլեակ, երբեք ունէր փայլուն մարդկային մի խլեակ, երբեք ունէր փայլուն մարդկային մի խլեակ, երբեք ունէր փայլուն մարդկային մի խլեակ:

Կրօնական հալածանքների ու անհատական լայնատարած այդ ժամանակաշրջանում աղօթքի այդ տունը մնացել էր կանգուն՝ իրբեւ կենդանի վկայ լեռնակուտակ անարդարութիւնների եւ անցեալի տխրահուշակ դէպքերի: Այդ բոլորով հանդերձ նա վկան էր նաեւ խիզախ մահառումների, ի խնդիր քրիստոնէական հաւատի եւ ազգային սրբութիւնների անաղարտ պահպանման: Նոյնիսկ նշուած այդ դժբախտ օրերին դեռ գոյութիւն ունէր հրաշքի գօրութիւնը, ֆանգի բոլորովին չէր հանգել Մայր Տաճարում պալլացող հայ ժողովրդի հաւատի սրբազան կանթեղը:

Ժամանակի ոգուն անյարիր, զառամեալ եկեղեցականների այդ նուազկուն թափօրի առաջնորդն էր նոյնինքն Ամենայն Հայոց Գեորգ Զ Կաթողիկոսը, որի դէմքի զսպումութիւնը, տառապանքից ու սուրբ կմախք դարձած կերպարանը, դէպի հեռուները սեւեռուած թախծոտ նայուածքը ներկայացնում էին պատկերը մի գերբնական, անդրաշխարհային անձնաւորութեան, հին դարերի խորքից եկած ու միայն իրեն յայտնի ուղղութեամբ գնացող մի յաւիտեական ու յաւերժախորհուրդ նամբորդի:

Խումբը մուտք գործեց Մայր

Տաճար, ուր, աւանդութեան համաձայն, իջել էր Քրիստոս: Ի յիշատակ այդ իրողութեան տաճարի կենտրոնում կանգնեցուած էր մարմարեայ մի յուշարձան՝ յայտնի Իջման Ս. Սեղան անունով, որի շուրջը շուրջը, գեղակերտ սիւների վրայ քարձրանում էր մի փառաւոր գմբէ՝ գունագեղ նախշերով ու Աստուածամօր մանրանկարով (այն այսօր իր տեղում չէ): Քառանկիւն սեղանը խորհրդանշում էր երկիրը, իսկ սիւների վրայ հանգչող գմբէ՝ երկնքի նախադուր: Սեղանից դէպի երկնապագ գմբէ եւ այնուհետեւ դէպի աստուածային անհունութիւններն էին քարձրանում հաւատացեալների մահուր սրտերի բոլորանուէր աղօթքն ու պաղատանքը:

Հայրապետը տեղ գրաւեց Ս. Սեղանի դիմաց: Նրա շուրջը կանգնած էին մի քանի շփոթահար եկեղեցականներ, որոնցից յատկապէս երեքն ապրում էին իրենց կեանքի մայրամուտը, իսկ մնացածները բուն հալածանքների օրերին հրաժարուել էին հոգեւոր կարգից, այլապէս իրենց բազմաթիւ պաշտօնակիցների նման պիտի ախորոտէին կամ էլ գնդակահարուէին: Բայց երբ մի քիչ մեղմացել էին պետութեան կողմից գործադրուող անմարդկային ճնշումները հոգեւորականների վրայ, կաթողիկոսը համոզել էր վերջիններին վերադառնալ իրենց առաքելութեանը: Այդուհանդերձ նրանց մտքից չէր հեռանում ձերբակալուելու վախն ու կասկածը:

Տաճարի ծախակողմեան դասում տեղ էին գրաւել հազիւ մի քանի տարի առաջ վերաբացուած Հոգեւոր ձեմարանի սակաւաթիւ սաները: Կային նաեւ մի քանի աղօթող կանայք, որոնց միայն մահը կարող էր քաժանել այդ սրբավայրից: Այնքան գորաւոր էր նրանց կապը Աստուծոյ հետ, որ այս աշխարհի խաւարչտին ուժերը ոչնչով չէին կարող

ազդել նրանց հաւատի վրայ: Նրանք մեծ անձկութեամբ սպասում էին Աստուծոյ հրաշքին, այնպիսի մի գարնան րացունելուն, որ իր հետ պիտի բերէր մեղմաշունչ զեփիւռների կախարդիչ հրճումներ: Բայց այդ գարունը շատ էր ուշանում:

Իջման Սուրբ Սեղանի առաջ կանգնած՝ կաթողիկոսի փակ շուրթերը դժուարութեամբ շարժուեցին: Ոչ ոք չէր ակնկալում, որ նա մի քան կ'ասի, ոչ ոք չէր կարծում, թէ նա այդ պահին մտքով հետեւում էր եկեղեցական արարողութեանը: Լսուեց նրա առնական խորխտ ձայնը.

- Երգի՛ր, տէր Նիկո՛ղ, երգի՛ր...:

Տէր Նիկոլը, էջմիածնի այդ ամենաձայնեղ շարականագէտը, լսելով իր անունը, սթափուեց մտածումներից, եկաւ խոնարհուեց հայրապետի առաջ, ապա շրջուեց դէպի Իջման Ս. Սեղանը, ծնրադրեց այնտեղ, խոր շունչ փաշեց եւ իր աստուածատուր ձայնով ու քացառիկ ներշնչանքով սկսեց երգել.

- Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց, զգուռն ողորմութեան...:

Ունկնդիրները համակուեցին մի սրբազան սարսուռով, յուզումից փարացան: Մեղեդու քառերը թէեւ աղաչական էին, բայց երգողի ձայնը անսպառ էր ու յաղթական: Թւում էր, թէ ամբողջ տաճարը երգի էր վերածուել. երգում էին եկեղեցու յարութիւն առած բոլոր սրբերը, երգում էին եկեղեցու նահատակները, ամտորած ու անմեղօրէն զնդակահարուած ֆահանսները, նրանց անմխիթար այրիներն ու որբերը: Սակայն Հայրապետի միտքն ուրիշ տեղ էր: Ոսկրացած դէմքի վրայ ոչ մի արտայայտութիւն, ոչ մի պրկում, հայեացքն էլ բոլորովին անհաղորդ իրականութեան հետ:

Տէր Նիկոլն իր թոքերի ողջ ուժով կրկին անգամ սկսեց երգել, «Բա՛ց մեզ, Տէ՛ր»ը: Վեհափառն այս անգամ երկար նայեց ձեռնարանի սաների կողմը, ապա

դարձաւ դէպի խորան, մի փոքր ցնցուեց: Նրա մինչայդ անհաղորդ ու անտարբեր կարծուած չափերից արցունք էր հոսում: Դէմքը ողողուել էր սրբութեան նաճանջով, ասես սրբալոյս միւռնոնով նորած սրբապատկեր լինէր: Սակայն ի՞նչն էր պատճառը նրա այդօրինակ յուզումի: Ձեռնարանի սաները դրանից շատ քան չէին հասկանում, բայց տարեց միաբանները իրենք էլ ապրում էին Հայրապետի խոռովքը:

Նրանք գիտէին, օրինակ, որ պետական հովանաւորութիւնը վայելող անհաւատութեան ալիքը ահաւոր վայրագութիւններ էր գործել եկեղեցու եւ եկեղեցական սպասաւորների հանդէպ: Նախորդ կաթողիկոսի դառնադէտ վախճանումից յետոյ պետութեան ծրագիրն էր քանգարանի վերածել էջմիածնի Մայր Տաճարը՝ հայ ժողովրդի հաւատի ամրոցն ու կանգուն մնացած միակ սրբավայրը ամբողջ Հայաստանում: Գէորգ Զ. Վեհափառը ոգի բռին պայքարում էր այդ հրէշային ծրագրի դէմ: «Թող մեռնեմ, - ասում էր նա - բայց չտեսնեմ էջմիածինը քանգարանի վերածուած»: Անհաւատութեան ոգով դաստիարակուած երիտասարդները դրսում Վեհափառին տեսնելիս՝ նոյնիսկ անարգում էին նրան: Մի օր, երբ նա դեռ եպիսկոպոս էր, գնացել էր քանաստեղծ եւ Գէորգեան ձեռնարանի նախկին դասախօս Յովհաննէս Յովհաննէսեանին այցելելու: Նրա տունը վաճառից շատ հեռու չէր: Այդ նոյն երիտասարդները հայիռյաններով յարձակուել էին նրա վրայ եւ եկեղեցականի սեմը ամբողջութեամբ անարգել: Բանաստեղծի կինը արցունքն աչքերին, իրրեւ Յիսուսի ոտքերը օծող մի նոր Մարիամ, սրբել էր հայ երիտասարդների թողած կեղտը Սրբազանի սեմից: Խորապէս խոցուած էր Սրբազանի սիրտը, բայց էջմիածնի հանդէպ ունեցած նրա անսահման սէրը, ինչպէս նաեւ քարոս եւ ճշմարտութեան

յաղթանակի յոյսը երբեք չէին բողոքում, որ նա վիստուքեան մատնուի: Նրա անդուլ ջանքերի շնորհիւ միայն հնարաւոր դարձաւ վերաբացել էջմիածնի Հոգեւոր ձեմարանն ու մի քանի փակուած եկեղեցիներ, ինչպէս նաեւ վերատիրանալ պետութեան կողմից բռնագրաւուած վանքերից երեքին:

Գէորգ Զ. Կաթողիկոսը մեծութեան եւ արիւթեան, իսկական վեհափառութեան խորհրդանիշ էր: Այս յատկանիշներով էր աւելի շատ պայմանաւորուած Հայրապետի գերագոյն փառքը, քան նրա ունեցած աստուածաբանական ու երաժշտական խոր գիտելիքներով: Վեհափառը Յիսուսի նման նախատուած, բայց նրա նման էլ ժողովրդին սիրող մի անյիշաչար անձնաւորութիւն էր:

Հին ու վեհատեսիլ սրբապատկերի դէմքով Վեհափառ Հայրապետը, Դոնրացէ՛քի այդ երեկոյին, ո՞վ գիտէ, թէ ինչպիսի՜ խռովալից մտածումներէ մէջ էր: Նա գգում էր կարծես իր մօտալուտ վախճանը: Դրա համար էլ Դոնրացէ՛քի մեղեդիին հազիւ թէ աւարտուած, նա առանց իսկ նայելու երգողի կողմը, շշնջաց:

- Մի անգամ էլ երգի՛ր. Տէր Նիկոլ, մի անգամ էլ, գուցէ չհասնեմ գալի՛ք Դոնրացէ՛քին:

Տէր Նիկոլն իր փառահեղ ձայնով դարձեալ սկսեց «Բա՛ց մեզ, Տէ՛ր»-ը որին յաջորդեց ձեմարանի սաների երգած շարականը, ուր աւետիսն էր տրուում մի նոր աւազանի հաստատման՝ մեր մեղքերի բողոքեան եւ մեր սրտերի մաքրաջրման համար: Դա իրօք էլ այդպէս էր. վշտալի Հայրապետի առաքիւնի ոգով դաստիարակուած այդ նեմարանականներն էին, որ պիտի կարողանային քրիստոնէութեան աւազանի կենսահաղորդ ջրերում լուանալ սրբութիւնները անարգողների հոգիները եւ չար գազանի բունալից նետերով խոցուած ու շատ անգամ նոյնպէս գազանացած մարդկանց գարշահոտ

վերքերը: Դա էր պատճառը, որ հայոց Հայրապետը այդ երեկոյ նայում էր միայն երկու ուղղութեամբ՝ Իջման Սուրբ Սեդանի եւ նեմարանականների, այսինքն՝ դէպի Աստուած եւ դէպի յուսալից ապագայ:

Գէորգ Զ. Կաթողիկոսը չհասցրեց մասնակցիլ Դոնրացէ՛քի յաջորդ արարողութեանը: Իր խարխլած մեքենայի ետեւի նստարանին տեղաւորուած՝ մօտեցաւ Երեւանի գլխաւոր հրապարակին, ուր մարդկային ուրախ եռուզեռ կար, եւ հրահանգեց վարորդին:

- Վազգէ՛ն, մի պահ կանգնի՛ր այստեղ, ուզում եմ հեռուից նայել, թէ ինչպէ՞ս են հագնուած մեր երիտասարդները, ինչպէ՞ս է նրանց առողջութիւնն ու տրամադրութիւնը:

Հրնում էր Հայրապետը՝ տեսնելով նոր սերնդին առողջ, ժիր եւ կենսասիրտ: Սակայն այդ երիտասարդները կտրուած էին հայոց անցեալից, դարաւոր սրբութիւններից ու եկեղեցուց: Նրանցից մի քանիսը նշմարեցին կաթողիկոսին եւ սկսեցին հայեոյել տէրտէրների հասցէին...:

Վարորդը բշեց մեքենան: Այս անգամ, սակայն, ծերունազարդ Հայրապետը հառաչանքի ու ներքին տառապանքի ոչ մի նիշ չարձակեց, այլ ինքնավստահ շեշտով ասաց:

- ձեմարանի մեր տղաները կը կրթեն սրանց:

Մի քանի շաբաթ յետոյ, ձեմարանի տղաներով շրջապատուած հայոց Հայրապետը աւանդում էր հոգին՝ այնպէ՛ս խաղաղ, այնպէ՛ս հեշտ, որ կարծես թէ շտապում էր նորից բնել, որպէս զի տեսնի շարունակութիւնը կիսատ մնացած իր հիասքանչ երագի:

Այս դէպքը կատարուեց Մայիս ամսին: Հայաստանում պէտք է գարուն լինէր, բայց այդ իսկական գարունը յամենալով էր գալիս:

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ԿԸ ՓԱՌԱԽՈՐԵՄ ԱՆՈՒՆԴ ՍՈՒՐԲ

Գիշեր է... Բունըս չի տանում: Գիշեր է... սաստիկ ցուրտ գիշեր:

Երկնի զօրքի բազմութիւնը հիւր է եկել, մտել տունը,
Սուրբ Մենդեան Աւետիսով, Ու խաբարել հոգիս, Բունս:

Իմ ձանձրացած կոպերի տակ
Տեսարաննե՛ր, տեսարաննե՛ր սիրուն ու տա՛մ
Դեքսեմանի չֆնաղ պարտէզ, Զիբենեաց Լեռ, Յարութեան Տանար,
Կանա, Սիոն եւ Նազարէթ. «Յիսուսի Մով»՝ Դալիլեա...
Սրբութիւններ ու մասունքներ, Պատարագներ հոգեզմայլ...

Վե՛ր կաց, պոետ... Ժամն է երգի,
Թող որ տիրի խաղաղութիւն անխախտելի,
Արդարութիւն չքեկանուող:
Վե՛ր կաց, պոետ... Սուրբ Մենդեան այս գիշերը
Հոգու զուլալ բերկրանքներով
Պատմագրել մեզ խոստացիր
Հոգեմորոգ ուխտի մասին դէպ Սուրբ Երկիր:

Մայրամուտ էր Բերդեհէմում...
Գաղտնատեսիլ երեք մոգեր Արեւելի մութ երկնում
Լուսանաճանչ աստղը տեսան. հետեւեցին աստղի լոյսին.
Ապա՝ մտրի մէջ ծնած տեսան խնկարուրող Յիսուսին՝
Կոյս Մարիամի խառնուրդըն Սուրբ:
Ալէլուիա՛, Օրհնեալ է Մնունդդ... Լոյս եղիցի...

Եւ... եղաւ լոյս... Ահա դարեր անց...
Ի՞նչ տօն է այստեղ: Այս ո՞ւմ ծնունդն են նշում, եւ այնպէ՛ս,
Որ ողջ աշխարհն է ցնծում ծփանքով:
Այս ի՞նչ Թագաւոր է - Ոսկէ բլերով
Դարերն է կարում Իրեն անունով:

Նա է... Յիսուսը՝ Արքայից Արքան
Դարերից եկել՝ Դարերն է գնում
Դարերի՛ն է իր անունը մնում...

Ալէլուիա...

ԼՈՒՍԻՆԷ ՄԱՐԱԲԵԱՆ

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ (1860-1930)

Կրտսեր եղբայրը վաղամեռիկ մեծ ֆերթոդին Պետրոս Դուրեանի, Եղիշէ Արք. Դուրեան իր եղբոր հոգեկան փոքորիկին կը հակադրէ խոհուն, հանդարտ եւ իմաստուն պատանիի մը խառնուածքով: Պետրոսի եղբրական շունչին ու կեանքը չկարենալ ապրելու հրայրֆին՝ Եղիշէ (աւագանի անունով՝ Միհրան) կը հակադրէ իմաստաբան, խորասոյգ, վերլուծող մտֆի մը րիւրեղներով:

Երկու խառնուածքներու այս հակադրութիւնը՝ անտարակոյս անոնց կոչումէն է եւ շինուածքէն, որովհետեւ ամէն մարդ ապրելու որոշ ոճի մը սահմանուած է, անկախ՝ արտաֆին ազդակներու րերումէն:

Ծնած է Սկիւտար, կը յաճախէ նախ Զեմարան, ապա՝ Ս. Խաչ վարժարան: 1878ին կը ձեռնադրուի վարդապետ, (1880-1889) իրրեւ ֆարոգիչ եւ տեսուչ կը պաշտօնավարէ Պարտիզակի մէջ, գրեթէ զուտ հայութեամբ, իմացական հետաքրքրութիւններով խանդավառ այս գիւղին մէջ՝ Նիկոմիդիոյ մերձ, Պոլիսէն ֆիչ հեռու:

1889ին, Ազգային Պատրիարքարանի կողմէ պաշտօն կը ստանայ այցելելու Եւրոպայի հայկական գաղութները: 1890ին, կը կարգուի դեր-տեսուչ՝ Արմաշու դպրեվանֆին եւ ուսուցիչ՝ հայագիտական նիւղերու: 1896ին, վերատեսուչ է Արմաշու դպրեվանֆին ու վանահայր Վանֆին:

1890-1896 գլխաւոր գործակիցն է Օրմանեանի, Արմաշու Վանֆին մէջ, որ իր ամէնէն պատմական ու ֆառաւոր

շրջանը կ'անցնէր այդ օրերուն: Արմաշը՝ «դպրոց» մը կը դառնար մեր հոգեւորականութեան համար, որ ազգին ու եկեղեցւոյ պիտի տար խանդավառ, հմուտ եւ պատրաստուած եկեղեցականներու հոյլ մը: Մեր գրականութեան մէջ Արմաշականներու սերունդ մը ունինֆ՝ որուն վաստակը անկորնչելի է:

«Օրմանեան», «Դուրեան», «Բարգէն Կաթողիկոս Կիւլէսէրեան», «Թորգոմ Արք. Դուշակեան», «Գարեգին Արք. Տրապիզոնի (Խաչատուրեան)», «Մեսրոպ Արք. Նարոյեան», իրենց րանասիրական, լեզուական, պատմական եւ այլ աշխատանֆներով, կ'անդրանկարուին իրրեւ «գրագէտի» խառնուածքով ու կոչումով հոգեւորականներ, որոնֆ հայ եկեղեցականութեան իմացական եւ գրական վերին կարելիութիւնները կը խորհրդանշեն ու կ'իրագործեն:

1898ին, Էջմիածնայ մէջ կը ձեռնադրուի Եպիսկոպոս՝ Խրիմեան Հայրիկէն:

1904ին՝ Իզմիրի Առաջնորդ է:

1909ին՝ Պոլսոյ Պատրիարք է իրրեւ յաջորդը Իզմիրլեանի:

1911ին՝ կը հրաժարի պատրիարքական պաշտօնէն ու մինչեւ 1921 ֆարոգչական պաշտօն կը վարէ Պոլսոյ եկեղեցիներուն մէջ: 1921ին կ'ընտրուի Պատրիարք Երուսաղէմի, ուր եւ կը վախճանի՝ 1930ին:

Նախ այստեղ, Դուրեանի պատրիարքական շրջանը կը պատմականանայ այն նպաստով, զոր կը

քերէ ան՝ վանքին թէ վանքի «պաշտօնա-
քերք» «Սիրոն»ի, ժամուն չափ ու ժամուն
գուգահեռ՝ նախ գրական աշխատանքի
տեղնդ մը ստեղծելով հոգեւորականութեան
մէջ:

Կէս դարու իր գործունէութեան
մէջ, Դուրեան Սրբազան անխոցելի անուն
մը մնաց միշտ՝ գրական թէ
պատմաբանասիրական իր աշխատանքնե-
րով, որոնք որքան իր խառնուածքէն,
նոյնքան եւ ախորժներէն կը խօսին:

Հոգեւորականի տիպարը, նախ
չմնաց գիրքերուն ծառայելու
ստրկամտութեան մը մէջ, գոց ստրկելու
եւ արտասանելու ընթացիկ շնորհով մը:
Գրքունակ իմաստով «ստրկող»ը չէր, իր
պատանութեան օրերէն իսկ: Որոնող,
խորացող, մարսող, միտք մըն էր, որուն
թափանցելու արժանիքը՝ զայն ըրած է
մտածողի եւ վերլուծողի բոլոր ձեւերուն
պատրաստ, խուզարկելու եւ ինքնաբաւ:
Անհատականութիւն մը եղաւ ու մնաց
գրականութեան թէ հոգեւորական կոչումի
մարգերուն մէջ, ստեղծագործական
համեմատաբար սահմանափակ
վաստակին՝ թէ բանասիրական, լեզուական
պատմական ճիգերուն մէջ: Մեր սրբազան
մատենաներուն մօտեցաւ ու տրուածը
փոխանցեց աւելիով, իրենց խորունկ
իմաստին մէջ վերծանելով Ս. Գրոց կամ
աւետարանական պատմումները: Անիկա
եկեղեցականն էր, որ սպասաւորեց իր
կոչումին՝ այդ գիրքերու մարդկային,
բարոյական եւ ընկերային բաժինին
աշակերտելով, ապրումի եւ կեանքի
աշխարհայեացքի մը վերածելով
փրկստնէական վարդապետութիւնը: Իր
անձով իսկ ապրեցուց այն սկզբունքները
որոնց քարոզիչը ըլլալու էր կոչուած:

Մասնաւորաբար ֆերոզութեան
մէջ, իր վաստակի իմացական ու իմաստա-
կան ամբողջ ծանրութիւնը՝ կու գայ այդ
մատենաներէն: Աստուածաշունչէն,

Աւետարաններէն, աղօթքներէն եւ
ընդհանրապէս փրկստնէական
վարդապետութեան էութենէն: Սակայն,
անոնք, այդ ֆերոզութենէն՝ հետեւակու-
թեան յանախ անխուսափելի նակատագրէն
ձերբազատուած են, քանի որ կամ
փոխադրութիւններ չեն իմացումներ են,
հանգանակներ են, քերուած են մարդոց
միջինին համար քարախուն ու
քելադրական գործութեան մը: Դուրեանը
ֆերոզութիւն չէ՝ որ վերլուծումի կու
գայ սա տողերուն մէջ: Կուգեմք ընդ-
գծել միայն, որ անհատականութիւն
ունեցաւ այդ մեծ եկեղեցականը:

Իր կոչումը իմաստաւորելու եւ
իր իսկական դերին մէջ ներկայանալու
համար իր ժողովուրդին, մարդկայնօրէն
մտածեց ու նուիրումով գործեց, ծա-
ռայութեան անսահման կիրով ապրեցաւ:
Մեր եկեղեցականութեան պատմութեան
մէջ բացառիկ տիպարներ են ասոնք, -
մանաւանդ այսօր: Գիրքերու մտերմու-
թիւնը, եպիսկոպոսական իշխանութիւնը,
պատրիարքական հանգամանքները՝
իմաստի մը տարաւ ու փորձեց նաեւ
յետևորդ սերունդներուն փոխանցել այդ
գիտակցութիւնը:

Ուսուցիչ եղաւ մանաւանդ: Բա-
ռին ո՛չ գրքունակ իմաստովը այլ՝ այդ
առաքելութեան ալ քաղցրագին,
եռանդուն ըմբռնումովը: Բազմապատ-
կուեցաւ, վաստակեցաւ, ներշնչուեցաւ ու
ներդնեց: Իր շրթունքէն գիտէր «կախել»
իր աշակերտները: Ժողովուրդն ալ:
Սորվեցնելու նարտաբանք կամ
կարողութիւնը չէ՝ որ կ'արժեւորէ անոր
ուսուցչի հանգամանքը, այլ՝ սիրցնելու,
խանդավառելու եւ ոգեպնդելու շնորհին
ու ձիրքը: Դաստիարակիչ ուսուցչութիւնն
էր ատիկա, որուն ամէնէն անայլայլ եւ
անտեղծելի ներկայացուցիչներէն մէկը
եղաւ:

Բանասէր-պատմաբանը՝ իր մէջ,

կը յատկանշէ զանազանութիւնը անոր մտքի հետաքրքրութիւններուն եւ կարելիութեանց: Դասագրքերու շարք մը փոխանցուած է մեզի իր անունով («Ընթացքի գրոց բարբառ»ներու երեք հատորները, «Այբուբենի հայերէն բանասիրութեան», «Ազգային պատմութիւն» մինչեւ Բագրատունիներու շրջանը, «Պատմութիւն հայ մատենագրութեան» մինչեւ ԺԴ դար, «Բառագիտութիւն կամ ուր մասունք բանի», «Հայոց հին կրօնը», «Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան», «Դասական Մատենագրութիւն», «Կրօններու պատմութիւն», «Բարոյագիտութիւն» եւ այլն), ինչպէս նաեւ՝ ուսումնասիրական փորձեր «Ուսումնասիրութիւնք եւ Քննադատութիւնք»: Նոյն հետաքրքրութիւններով առաջնորդուած է նաեւ իր թարգմանական էջերուն մէջ: Դուրեանի ինքնագիր թէ թարգմանածոյ քերականութիւնները կը խօսին որքան բանաստեղծէն, նոյնքան եւ ճաշկաւոր ու խորիմաց թարգմանիչի շնորհներէն: Զեմք կրնար չընդգծել, թէ Դուրեանի թարգմանութիւններուն մէջ բառերու փոփոխութիւն մը կայ յաճախ. մոռցուած բայց տոկուն բառերու՝ որոնք անակնկալի կը բերեն ընթերցողը, եւ անոր տպաւորութիւններուն՝ զարմանք, դանդաղութիւն, ապշանք կը խառնեն: Դուրեանը ալլազանութեան փաստին վրայ, ձեռք դնելով ունենալու համար մտածող բանաստեղծին, ուսուցչին եւ հոգեւորականին տիպարը:

Բանաստեղծ Դուրեան Սրբազան՝ համեմատաբար քիչ տուած է մեր քերթողութեան, իր «Հովուական սրինգ» տաղարանով (1909): Այդ հատորին մէջ, մինչեւ 1908ի անոր երեսունեւորս տաղերը կան համադրուած, գրեթէ բոլորն ալ Աւետարաններէն, սուրբ գիրքերէն

կամ թուղթերէ թելադրուած, ու քերթողին մտածումին եւ խորհրդածութեան խառնուրդովը, բայց իրենց ձեւին մէջ՝ միշտ տպաւորիչ: Մեր բանաստեղծութեան մէջ եղիշէ Արք. Դուրեան ձեւի հին վարպետներէն մէկն է, հայագէտի ու գեղագէտի գոյգ արժանիքներով, որոնք եթէ երբեմն կը վնասեն իրարու, սակայն յաճախ կ'ամբողջացնեն ալ զիրար: Քիչ անգամ Դուրեանի բառերը կը դաւանանեն անոր քերթողական ուժին, կ'ընդլայնեն իր անհատական շնորհաշնչականութիւնները ստեղծելու համար իր բանաստեղծութիւններուն մէջ: Գրեւորակ ըլլալու մեծ վտանգէն կրցած է զերծ մնալ ընդհանրապէս, շնորհիւ գեղագէտին՝ որ միջամտած է հայագէտին ա՛յս կամ ա՛յն նախապաշարումին, ուղղափառութեան կամ ճշգրտութեան կիրքին. «Հովուական սրինգ»ը, որուն մէջ ի յայտ կը բերեն քերթողու արուեստին հագուազիւտ շնորհներէն մէկը, ու աւելին՝ կը կարողանան մտածումները վերածել երգի:

Բառերու, յատուկ անուններու եւ դէպքերու ծանր տողանցք մը կայ Դուրեան Սրբազանի քերթումն մէջ, լեզուական եւ պատմականօրէն ճշգրիտ ըլլալու փոյթով մը, ու նաեւ զգայնութեամբ թէ ալլաբանական տարազներով յատկանշուելու անհատական արժանիքներով: Ամէն մարդ չի սիրեր Դուրեան կարդալ մանաւանդ մեր օրերուն, որովհետեւ այդ քերթումները իրենց լման իմաստին կը հասնին կրօնական ու գիտական որոշ պատրաստութեամբ մը միայն: Սակայն, ամէն ոք կը գտնէ անոնց մէջ մարդկայինին բաժինը, սրտին ու հոգիին տուրքը՝ տաղաչափական ցայտուն յատկութիւններով:

Հասուն տարիքի, աստուածաշնչական պատմումներու եւ պատկերացումներու ծանօթ մարդոց, չեմօրէն մատչելի քերթողն է Դուրեան

Արք. առաւելապէս մտածողական արժանիքներով ու շնորհքներով օժտուած եւ խորանալու մասնաւոր տրամադրութեամբ մը ամբողջացած:

Իր բոլոր արտասանած հարոգները՝ հոգեւոր մշակոյթի գոհարներ են, քաղուած

հայ մշակոյթի անսպառ ակունքներու ծաղկեփունջէն:

Եղիշէ Արք. Դուրեան, հայ գրականութեան մէջ Գեղապաշտ Սերունդի առջին եկ ներկայացուցիչներէն է շօշափելի արժանիքներով:

ԺԻՐԱՅՐ ՆԱՏԵԱՆ

ՕՇԱԿԱՆ

- Օշակա՛ն ,

Քանի՞նե՛ր այսօր քեզ ուխտի եկան,
Ու դեռ քանի՞նե՛ր պիտի գան նորէն,
Համբուրել այն քարն, որ անշքօրէն
Կը ծածկէ Տիրի փառքն յափըշտակող
Հայ գրքի հսկան՝ իրրեւ լուռ կոթող:

- Օշակա՛ն,

Բերդիդ բեկորներն որ վաղուց ինկան,
Եթէ իրար գան՝ չեն կըրնար մրցիլ
Այն սուրբ քարին հետ, որ իրր երփնածիլ
Անուրջի խորան՝ կայք մ'է Բեթելի,
Սրբուած հայ մտքի օժումովն առլի:

- Օշակա՛ն,

Հողերդ, ուր ոսկրեր փրտած են այնա՛ն
Թէ ի կըշիռ կան հոծութեամբ ժայռի,
Ձեն գօրեր շարժել մէտ մը նըժարի
Դէմ այն անիւնին, ուր հայ հոգւոյն պերն
Կրակն է անթեղուած՝ դարերով անվերջ:

- Օշակա՛ն,

Թէ քու անուշակ հոյզերդ այգեկան
Մէկ հնձանի մէջ նմլուին առատ
Ձեն կըրնար ծորել կաթիլ մ'անաբատ,
Դէպի խառնարանը մեծ Մըշակիին,
Ուր խանդ եւ խորհուրդ կը պղպըջակին:

- Օշակա՛ն

Քեզ ձօնուած խունկերն այն կայսերական,
Որ երկար ատեն ծըխեցան քու մէջ՝
Ձեռն կրցած պահել բոյրի մ'ելեւէջ.
Մինչ ծոցըդ թափուած իւղ անուն մը հեզ,
Դեռ նարդի հոտով կը խնկէ՛ ըզքեզ...

- Օշակա՛ն

Շողի ու ստուերի նախանձ մը կը զգան
Ցերեկներդ նախկին, գիշերներդ յետին,
Լուսաւորութեան մեծ Շահապետին
Անմուտ արեւէն, կամ՝ իր շիրմին սառ
Սընարքը պըննող աստղերէն պայծառ:

- Օշակա՛ն,

Իրմով սրբաւայր մ'ես նըւիրական.
Եթէ Մօրիկ մ'իսկ ցանկայ մականի,
Հոդ չըկայ դափնի մ'իրեն արժանի.
Գըրի՛չը միայն՝ նիշերով անմաշ,
Հոդ իր բեմն ունի՝ ջի՛նջ ու սըրբատաշ:

- Օշակա՛ն,

Օր մ'ալ ե'ս եկայ իբրեւ ուխտական,
Ու այն փարին քով՝ որուն ներքեւ նա
Կը հսկէ արթուն, փան թէ կը փնանայ,
Ըսի. հողին տակ գիրը երկաթէ շունչով մը կ'ապրի.
Իսկ փա՛րը. միթէ չէ՞ երազին վէմն՝ ուր դեռ կը յածին
Իր միտքն ադամանդ, մատներն ոսկեծին:

- Օշակա՛ն,

Ո՛վ սուրբ Մեսրոպի հանգիստ սիրական,
Եթէ օր մ'երբեք նոր հովիւ, նոր հօտ՝
Պաշտամունքի նոր ծէսով գան քեզ մօտ,
Ու իրենց համար նոր Աստուած մ'ուզեն,
Արթընցո՛ւր հսկան Գըրի՛ երազէն...:

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

ՍՈՒՐԷՆԸ

«Նիւ Եօրֆցիները» Շարէէն

Թերեւս ինծի համար այսպէս մտերմականօրէն արտայայտուիլ արտօնուած չէ մէկու մը մասին որուն ճանչցայ վերջին մէկ քանի տարիներուն եւ որ հաւանաբար ունէր նաեւ իմ կրկին տարիքը: Ընդհանրապէս՝ վերջին այդ հանգամանքը կը պարտադրէ յարգալիք կեցումով եւ սակայն քաղաքական նման նկատումներ երբեմն մենք մեզի կը բոլորեմք անտեսել, ստեղծուած բարեկամութենէն մեկնելով:

Սուրէնը՝ Սուրէն Մանուէլեանն է:

Ամերիկահայ գրողներու այն սերունդէն որոնք երբեք չկարողացան օրօսփիւլ Երկրին սէրն ու կարօտը, եւ ի վերջոյ իրենք եղան ողջակիզուող գոհերը այդ կարօտին: Փաղաղիչ այդ սէրը այրեց զիրենք, իրենց կեանքի վախճանին հրկիզելէ ետք իրենց երիտասարդի եռանդն ու ստեղծագործական ամբողջ խանդը:

Զինք չէի ճանչնար: Լսել էի իր մասին ու կարդացել էի քանի մը պատմումով: Նիւ Եօրֆ գալէս ետք ծանօթացանք, եւ այդ պաշտօնական ծանօթացումը կ'արտօնէր միայն հակիրճ գրոյց մը հազիւ ամէն ոչ-յանախաղէպ հանդիպումի: 1983ի ամրան՝ Առաջնորդ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսի քաջալերանքով եւ ձեռն Անդրէասեանի մղումով ու միասին երբ որոշեցինք ընել «Նոր Գիր» հանդէսի հրատարակութեան երեսնամեակը եւ մեծարել ապրող հիմնադիրները, սիրելի եւ աւելի մտերիմ տարագումով «Նոր Գիր»ի տղաք, այն ատեն միայն առիթ եղաւ զինք մօտէն ճանչնալու իր ընկերներուն հետ:

Ինչ որ անմիջապէս յայտնի եղաւ ինծի համար - երբ աչքէ կ'անցնէի

ամբողջական շարքը «Նոր Գիր»ի քիւներուն - այն էր թէ այդ տղաքը, քառիկ իսկական առումով տղաներ էին, 20-25 տարիքի մէջ, ամենէն երէցը մէջերնէն Նուրիկեանը (եւ ժամանակէն առաջ «հասունցած» այդ ջահելները՝ Ալէքը, Անդրանիկը, Բենիամինը, Սուրէնը) չես գիտեր ինչպէ՞ս, յանդգներ էին ու գրեթէ յաջողքը հրատարակել պատկառելի գրական հանդէսը:

Սկիզբը վերապահ էի, վստահ չէի թէ նման բան մը պէտք էր ընել թէ ոչ, բայց երբ սկսայ թղթատել ու կարդալ թերթը, անդրադարձայ թէ ոչ միայն պէտք էր, այլեւ ուշացել էին տալու մեր յապաղած յարգանքը այդ տղոց՝ այժմ արդէն կեանքի արեւամուտին մէջ ապրող: Ընտրութիւններուն սկսայ եւ իրմէ ընտրեցի երկու պատմումով որ լոյս տեսան «Նոր Գիր»ի ժողովածուին մէջ: Յառաջաբանը երբ կը գրէի ինքզինքս գտայ նուրբ կացութեան մը առջեւ: Թերթին մէջ ոչ մէկ ակնարկութիւն կար ստալինեան մահազործումներուն մասին, ոչ մէկ խօսք Զարեանի, Բակունցի եւ անոնց ընկերներուն եղեռնական ճակատագրի մասին: Թերթեր էին խմբագրի եւ աշխատակցի իրենց պարտաւորութեանց ու պատասխանատուութեանց մէջ: Կարելի էր գուշակել պատճառները: Հարցը հոն էր թէ պէ՞տք էր այդ թերթումին ակնարկել յառաջաբանին մէջ գրքի մը որ կը միտէր այդ հանդէսը հիմնողները մեծարել, մանաւանդ երբ հրաւիրեք էինք զիրենք մեծարելու հրապարակային ձեռնարկով: Եթէ չակնարկէի, իմ կարգին, թերացած պիտի ըլլայի: Ուրեմն, որքան որ կարելի էր, անդրադարձայ այդ ակնարկ անտեսու-

մին առանց վիրաւորական որեւէ արտայայտութեան, ըսուելիքը նաեւ ըսելով առանց տատամսումի:

Մեծարանքի նաշկերոյրը կանխող հանդիսութեան եկած էին քաւականաչափ բուով մարդիկ: Գիրքը լոյս տեսած էր արդէն: Ներկաներու մէջ էր եւ Սուրենը: Քանի մը վայրկեան ետք դէմ դիմաց եկանք: Ինքն էր, ամբողջական ու գոհունակ ժպիտը դէմքին եւ առանց որեւէ յառաջարանի.

- Ապրիս, մենք թերացանք մեր պարտաւորութեան մէջ քայքայութեամբ որ այդ մատնանշումը ըրած ես «Յառաջարան»իդ մէջ: Վարձի կատար:

Այդքան:

- Եկուր տղաս, նակատդ համբուրեմ:

Նիւ Եօքի մէջ համբուրողները ընդհանրապէս կիները կ'ըլլան: Կը համբուրեն ու քարեքախտաբար շուտով կը մոռնան, յաջորդ այցելուն համբուրելու համար: Բայց այս մէկ համբոյրը լաւ էր, չեքմ ու անկեղծ, կու գար երեք գրողէ մը, երեք ընկերոջմէ մը: Ազկէ ետք առիթ եղաւ տեսնուելու քանի մը անգամ եւ միշտ նոյն չեքմ, սիրագեղ ժպիտն էր իր խորշամած դէմքին որ կը շողար ու կ'ողջունէր զիս: Գոհ էի եւ կարծէք բեռ մը իջած էր ուսերէս:

Պատահաբար այսօր Նուպար Քիւփելեանէն, Առաջնորդարանի քարտուղարէն, իմացայ թէ հիւանդանոց էր փոխադրուած: Հիւանդանոցը իմ աշխատատեղիէն տասը վայրկեան անդին կը գտնուէր: Գործերս դասաւորեցի եւ շիտակ հիւանդանոց գացի՝ Calvary հիւանդանոցը: Հիւանդանոցի անունն իսկ լաւ քան գուշակել չէր տար:

Պառկած էր անկողնին. եւ երբ զիս տեսաւ նոյն քարի, տաք ժպիտն էր, ուրախութիւնը ակներեւ, առաւ ձեռքս համբուրելու համար: Ահռելի էր

տեսարանը՝ զգալիօրէն հիւծած էր քաղցկեղէն, քայքայուած տեղն էր: Կամաց մը ձեռքս ետ քաշեցի: Ինչպէ՞ս ձգել այդ տարեց մարդուն նման քան մը ընելու: Ինչպէ՞ս պիտի կրնայի ընդունիլ նման յարգանք մը: Անդրադարձաւ.

- Եկուր տղայ, նակատդ բեր:

Հոդ որեւէ տատամսումի պէտք չկար:

Խօսեցաւ իր սիրած նիւթերէն՝ «Նոր Գիր»էն, կրկին շնորհաւորեց, շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Գերշին. Թորգոմ Սրբազանին որ նեցուկ էր կանգնած ու քաջալերած՝ մեր գործը: Խօսեցաւ Մեսրոպ Սրբազանի մասին.

- Բարեկամս է եւ իր գործը Թաղիաթեանի մասին, լաւ, խոշոր գործ է:

Յայտնեց իր գոհունակութիւնը Արայ Գալայեանէն, ափսոսալով որ իր ժամանակը կը տրամադրէր «Mirror»ը խմբագրելով՝ գոհելով հայերէնը: Բաւարարուած էր նաեւ Գրիգոր Քէօսէյեանի «Պայքար»ի մէջ կատարած փոփոխութիւններէն:

Մաշած էր մարմնով: Մեռելները կը խօսի՞ն: Չեմ գիտեր ու այս պարագային անգիտութիւնը աներկբայօրէն... սփռուելի է: Ահա՛ Սուրենը, թերեւս իր կեանքի վերջին օրերն են ու կը սպասէ Էնդիի Աշխարհէն գալիք կանչին: Հաշտ՝ ինքզինքին հետ, հաշիւ փակած՝ կեանքին հետ: Կը սպասէ, եւ այդ ժամը հաւանաբար չուշանայ: Աշխատեցաւ մեր կեանքին մէջ եւ իր գործով, իր ոյժերուն ներած չափով գեղեցկացուց այդ կեանքը իր պատմութեամբներուն ճամբով: Երկրէն էր՝ Բալուէն: Տասըմէկ տարեկան երեխայ էր երբ Բալուէն արմատախիլ ըրին զինք ժողովուրդին հետ: Երկրի կարօտով տոչորուած ու այժմ կեանքի վերջնագոյն սահմանագծին վրայ՝ կը սպասէր: Աչքերուս առջեւ եւ իրեն հետ քիչ մը

եւս մեր երկիրը կը հեռանայ մեզմէ: Իրեն հաւատով քիչ մը ամէն օր մենք կը մօտենանք մեր երկրին նորոգելու մեր կապը, մեր հաղորդականութիւնը անոր հետ: Ինք շուտով կը մեկնի ետին քողած մահուր ու ազնիւ մարդու կերպարն ու յիշատակը:

Բարի ճանապարհ: Յաւիտենական հանգիստ ոսկրացած մարմնիդ: Զէ՞ր կարելի որ քաղցկեղը խնայէր վերջին

ցաւերուդ: Ունեցած ցաւդ չէ՞ր քաւարար սիրելի Սուրէն: Յայտնօրէն ոչ, քայց ինչպէս միւս Ցաւը կրեցիր պէրախող հոգւոյդ ու մտքիդ մէջ, այս ցաւն ալ պիտի կրես՝ տարբերութեամբ մը միայն, այս ցաւը քեզ պիտի տանի իրեն հետ, շողացող ժպիտով ու շողացնող ներկայութեամբ իմ քարի ու ազնիւ քարեկամ:

ՄԱՐԶՊԵՏ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն առիթով, շնորհաւորանքի գիրքը եւ հեռագրեր առաւուեցան Հոգեւոր ու Կառավարական պետներուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագիրքը ստացած է Պատրիարք Արքազան Հայրը.-

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ս. Օծուրին Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսէն.

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծուրին Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսէն.

- Հոռվմէական Կաթողիկ եկեղեցւոյ Քահանայապետ՝ Նորին Սրբութիւն Պենետիկոյ ԺԶ. Արքազան Պապէն:

- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալէէսէյ Բ. Արքազան Պատրիարքէն.

- Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Մարթին Եսայեանէն:

- Թեմակալ Առաջնորդներէն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներէն:

ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՃՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 2077

Սուրբ Ծնունդ, 2008 թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻԿ

Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺ

Երուսաղեմ, Իսրայել

Սիրելի Արքազան Պատրիարք,

Ամանորի և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոների առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ողջույնն ու շնորհավորանքներն ենք հղում Ձեզ, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ուխտապահ միաբանությանը:

Այսօր վերստին ունկնդիր ենք «Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» հրեշտակաձայն ավետիսին, որ զորացնում է քրիստոնյաներիս հոգիները՝ առավել արդյունավորելու ջանքերը աշխարհում խաղաղ, բարությանը ու սիրով լի մարդկային կյանքի կերտման:

Գոհություն ենք մատուցում Երկնավորին, որ Սուրբ Ծննունդով արշալույսվող 2008 թվականը ազգս հայոց դիմավորում է փրկչական պարգևներով զորացյալ ոգով: Հուսառատ է Մեր հոգին, որ մեր ժողովուրդը առ մարդացյալն Աստված ապավինությանը եկող տարում պիտի շարունակի արդյունավորել հայոց կյանքի անդաստանները ի Հայրենիս և ի Սփյուռս, մարմնավորել իր իղծերն ու ձգտումները՝ ի խնդիր Մայր Հայրենիքի բարօրության և համագգային առաջընթացի, միջազգային ասպարեզում Արցախի անկախ պետականության ճանաչման և Հայոց Ցեղասպանության համընդհանուր դատապարտման:

Աղոթում և հայցում ենք Ամենակալից, որ խաղաղություն պարգևի աշխարհին, երկնառաք Իր շնորհի ներքո վերականգնի ապահով կյանքը պատերազմական իրավիճակներով խռովյալ երկրներում, և պահպանի համայն մարդկությունը, Մերծավոր Արևելքի ժողովուրդներին ու տարածաշրջանում ապրող մեր հայորդի զավակներին՝ նրանց հոգիներում Սուրբ Ծննդյան մշտահեղ շնորհներով զորավոր պահելով լույս հավատքը մեր հայրերի:

Թող Ամենակարողն Աստված հանապազ զորակից լինի Ձեզ տերունապատվեր հոգևոր առաջնության մեջ և Ձեր առաջնությունն ընդունող շնորհյալ ու պայծառության մեջ պահի Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը՝ ի փառս Աստծո, ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և ի մխիթարություն բարեպաշտ մեր ժողովրդի:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Ձեզ եւ Սեզ մեծ աւետիս

Եղբայրական սիրո ողջունիվ,
աղոթակից՝

ԳԼՐԵԳՈՐ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻՆԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

ԹԻՂՅՈՒՄ

ԱՆՔԻԼԻԿԱ, Ս. ԾՆՈՒՆԳ՝ 2008

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
ՆրուաղԼՄ

Սիրեցեալ՝ Նորայր ի Քրիստոս,

Տեսուն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուածայայտնութեան տօնին եւ Նոր Տարուան ուրախ առիթով եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ձերդ Ամենապատուութիւնը:

Աստուծոյ Որդւոյն մարդեայացումը Բեթղէեմի մէջ տիեզերքի Արարիչին մօտեցումն է իր արարածին. նրկնաւոր Հօր փնտրութիւնն է իր որդւոյն: Արդարեւ, հեռացած էր ստեղծագործութիւնը իր Ստեղծիչէն ու հնարաւոր դարձած մեղքի ու չարի իշխանութեան: Աստուածային ստեղծագործութեան պսակը նկատուող մարդը դաւանանքով էր իր աստուածատուր կոչումին ու դարձած անառակ որդի: Բեթղէեմի ճամբով Աստուծոյ Որդին աշխարհ կու գար ողջ ստեղծագործութիւնը ու մարդը վերադարձնելու իրենց հարազատ արմատներուն ու նշմարիտ կոչումին: Ահա քէ ինչու Քրիստոսի մարդեայութիւնը նկատուած է Առաքելից կողմէ. որպէս "երկրորդ արարչութիւն":

Աստուածայայտնութեան պատգամը՝ աշխարհին ու մարդուն վերադարձնելու Աստուած: Բեթղէեմի յաւերժակամ պատգամին միշտ հաւատարիմ եղաւ մեր եկեղեցին՝ նշմարելով պատմութեան ամենէն դժեղակ պայմաններուն մէջ: Քրիստոսի Աստուածայայտնութեան տօնը, հետեւաբար, պէտք է առիթ մը դառնայ մեր եկեղեցւոյ՝ Բեթղէեմեան իր առաքելութեան վերանորոգման:

Կ'աղօթենք առ Աստուած, որ Բեթղէեմէն ճառագայթող լոյսի ու յոյսի ծիածանով պարուրէ երկինքը մեր ժողովուրդի կեանքին՝ ի Հայաստան եւ ի սփիւռք աշխարհի: Կը մաղթենք, որ 2008 տարին Ձերոյ Ամենապատուութեան ծառայութիւնը լեցնէ եկեղեցւաշէն ու ուզեցանէր նոր իրագործումներով:

Եղբայրական սիրոյ ողջունելով,

Աղօթակից՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



SECRETARIAT OF STATE

No. 84.160

From the Vatican, 20 January 2008

Your Beatitude,

Pope Benedict XVI was pleased to receive your kind Christmas wishes and he reciprocates with gratitude.

In the joy of Christmas we have remembered that "the goodness and loving kindness of God our Saviour" has appeared to us, as Saint Paul reminds us in his letter to Titus. In the Child of Bethlehem, God has revealed his love for all humanity in a definitive way. God is close! He is with us in our joys and in our sorrows, and his merciful goodness is stronger than our human weakness and sin.

Pope Benedict XVI prays that Christians of all traditions will increasingly work together in spreading the peace and joy of the Christmas message throughout the world, and especially where the fury of war seems to deny the merciful love of God for his people.

Wishing you a happy and blessed New Year, His Holiness assures you of his cordial regard in the Lord.

Secretary of State

His Beatitude Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem
JERUSALEM



**Патриарх
Московский
и всея Руси**

119034 Москва, Чистый пер., 5

**ЕГО БЛАЖЕНСТВУ,
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА**

Ваше Блаженство!

В нынешние дни светлого торжества, когда на Небе и на земле радостно звучит ангельская песнь: «Слава в вышних Богу, и на земле мир, в человеках благоволение» (Лк. 2, 14), мы, христиане, следуем призыву святителя Иоанна Златоуста: «Возрадуемся же о проявленной к нам благодати и о дарованных нам преимуществах и восхвалим Бога, Который стал Человеком, за Его великое снисхождение».

Сердечно поздравляя Вас с Рождеством Христовым, желаю Вам изобильной милости от Родившегося Богомладенца, доброго здравия и помощи Божией в несении Вашего высокого служения.

С любовью о Христе Родившемся

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Рождество Христово
2007/2008 г
Москва

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՅՑ ՏՕՆԵՐԸ ԸՍՏ ՏՕՆԱՑՈՅՑԻ

2008 Նահանջ Տարւան Յատուկ

Ս. Շնունդ Կիրակի Յունուար 6 - Ս. Չատիկ Կիրակի Մարտ 23

ՄՈՒՏԸ

2008 տարին Նահանջ Տարի է որ կը պատահի չորս տարին անգամ մը Փետրուար ամսու 29-րդ օրուան յաւելումով: Այդ պատճառով Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցը կը պարտադրէ զոյգ մը գիրք որպէս Գիր Տարւոյ, փոխան մէկի, հրահանգելով որ առաջին գիրք կիրարկուի մինչեւ Չատիկ, եւ երկրորդը՝ տարւուան մնացեալ տօներուն որպէս ուղենիշ: 2008 տարւուան համար Տօնացոյցը կը նշէ **ԳԲ** միացեալ տառերը որպէս Տարեգիր որուն հետեւողութեամբ կը ճշդուին մեծ ու փոքր տօներու թուականները համապատասխանաբար:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին տարւուան ընթացքին յատուկ խմբաւորումներով դասաւորած է Տէրունի, Սրբոց, եւ Ազգային տօները, ու լայն տեղ տուած նաեւ Պահոց օրերուն համար: Տօներուն մեծագոյն մասը շարժական տօներ են, այսինքն տարուէ տարի իրենց թուականները կը փոխուին, որովհետեւ անոնք կը սահմանուին ՉԱՏԻԿի Կիրակի օրուան թուականին համեմատ: Անշարժ տօները, որոնք շատ քիչ են, կը տօնուին անշարժ թուականներով, առանց կախում ունենալու Չատիկի թուականէն, նկատի ունենալով որ անոնք Նոր Կտակարանի տուեալներու հիման վրայ ճշդուած ըլլալով կը մնան անխախտ: Պահքի օրերը թիով գերակշիռ են Տէրունի եւ Սրբոց տօներուն բաղդատմամբ: Ներկայ գրութիւնը նպատակ ունի ՏՕՆԱՑՈՅՑԻ երկու հատորներու ցուցմունքներով եւ հրահանգներով խմբաւորել **այս տարւուան 366 օրերու** տօներն ու յիշատակելի դէպքերը, ներառեալ Պահքի օրերը:

ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

Հայ Եկեղեցւոյ տօները յատուկ դասաւորումով եւ իրենց ուրոյն նկարագրով երեք դասակարգերու վրայ բաշխուած են: Անոնք են.

Տէրունի Տօներ, որոնք Յիսուսի Զրիստոսի կեանքին եւ տնօրինութեանց պաշտամունքը կը կազմեն, ինչպէս նաեւ Ս. Կոյս Մարիամ աստուածածնի յատուկ յիշատակութիւնն ու յարգանքը կը մատուցանեն իր կեանքի այլազան հանգրուաններուն:

Սրբոց Տօներ, որոնք Սուրբերու յիշատակին ձօնուած յատուկ օրեր են, թէ՛ Սուրբ Գրական անձերուն ուղղեալ, եւ թէ՛ Եկեղեցւոյ նախնագոյն Վկաներուն եւ Հայրերուն յատկացուած: Վերջինները Եկեղեցւոյ կողմէ կանոնականացուած Սուրբերն են, որոնցմէ շատեր Հայ Եկեղեցին ընդունած է եւ պատիւ ընծայած որպէս վկաներ Զրիստոսի եւ բարեխօսներ Անոր մօտ:

Պահոց Օրեր, որոնք նպատակն է ապաշխարանքով պատրաստ ըլլալ Տիրոջ կեանքի հանգրուաններուն արժանի դառնալու համար: Եկեղեցին մեծ կարեւորութիւն ընծայած է ՄԵԾ ՊԱՂՔԻՆ եւ առ հասարակ պահեցողութեան,

որպեսզի հաւատացեալը կարենայ իր հոգեկան կեանքը մաքրելով մօտեցնել զայն Աստուծոյ:

ՏԵՐՈՐՆԻ ՏՕՆԵՐ

1. Յիսուս Զրիստոսի Կեանքն ու Տնօրինութիւնները

Ա) Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն Մկրտութիւն Տեառն Ութօրեքի 6 օրերը Անուանակոչութիւն Տեառն Տեառնընդառաջ	ԿԻՐ. Յունուար 6 (անշարժ) ԿԻՐ. Յունուար 6 (անշարժ) Յունուար 7-12 (անշարժ) ԿԻՐ. Յունուար 13 (անշարժ) ԵՇ. Փետրուար 14 (անշարժ)
-----------------------------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Բ) Պայծառակերպութիւն Տեառն (Վարդավառ) (Չատիկէն 14 շաբաթ ետք)	Կիրակի, Յունիս 29
-----------------------------------------------------------------	-------------------

Գ) Յիսուսի Յարութիւնը Ս. ՉԱՏԻԿ Աւագ Շաբաթ Համբարձում Հոգեգալուստ	Կիրակի Մարտ 23 Մարտ 16-22 Հինգշաբթի Մայիս 1 Կիրակի Մայիս 11
---------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------

Դ) Տարուան բոլոր Կիրակիները որպէս կանոն: Սակայն 2008 տարուան 52 Կիրակիներէն պիտի պակսեցնենք այն Կիրակիները որոնք հաշուուած են այլապէս, ինչպէս Ծննդեան Յունուար 6-ի եւ Անուանակոչութեան Յունուար 13-ի Կիրակիները, առաւել՝ Մեծ Պահոց 6 Կիրակիները, ներառեալ Ծաղկազարդի Կիրակին, Փետրուար 10-Մարտ 16, որոնք ՊԱՅԶԻ Կիրակիներ են: Մնացեալ Կիրակիներու զումարն է 44:

2. Սուրբ աստուածածնի Տօներ

Ծնունդ Աստուածածնի Յղութիւն ի յԱննայէ Աւետումն Ընծայումն Վերափոխումն Գիւտ Գօտւոյ Գիւտ Տփոյ	Սեպտեմբեր 8 (անշարժ) Դեկտեմբեր 9 (անշարժ) Ապրիլ 7 (անշարժ) Նոյեմբեր 21 (անշարժ) Կիրակի Օգոստոս 17 Կիրակի Օգոստոս 31 Կիրակի Յունիս 15
--------------------------------------------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

3. Խաչի Տօներ

Երեւման Ս. Խաչ Վերացման Ս. Խաչ Վարագայ Ս. Խաչ Գիւտ Խաչ	Կիրակի Ապրիլ 20 Կիրակի Սեպտեմբեր 14 Կիրակի Սեպտեմբեր 28 Կիրակի Հոկտեմբեր 26
-----------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------

4. Եկեղեցւոյ Տօներ

Նոր Կիրակի Աշխարհամատրան Վերացման Ս. Խաչ Կաթողիկէ Ս. Էջմիածնի Շողակարթ	Կիրակի Մարտ 30 Կիրակի Ապրիլ 6 Կիրակի Սեպտեմբեր 14 Կիրակի Մայիս 25 Շաբաթ Օգոստոս 16
------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------

ՍՐԲՈՑ ՏՕՆԵՐ

Հայ Եկեղեցին ՍՈՒՐԲԵՐՈՒՆ յատկացուցած է շաբթուան չորս օրերը՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ Շաբաթ: Կիրակի օրերը Տերունի օրեր են եւ նուիրուած են Զրիստոսի Սուրբ Յարութեան: Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը պահքի յատուկ օրեր են:

89 Սուրբերը Աստուածաշունչէն քաղուած Սուրբեր են, Հին եւ Նոր Կտակարաններէն: Մնացեալները Եկեղեցւոյ առաջին հինգ դարերու Առաքելական Հայրերն են որոնք ուղղափառ հաւատքը հաստատեցին ու Հաւատոյ Հանգանակը բանաձեւեցին: Հայ Եկեղեցին աւելցուց անոնց վրայ Ս. Գրիգոր Լուսաւորիչն ու իր շառաւիղէն եկած հայ Եկեղեցւոյ Հայրապետներն ու յաւելեալ Հայ Սուրբերը, հինգերորդ դարէն մինչեւ տասնհինգերորդ դարու տարածքին:

ՊԱՅՈՑ ՕՐԵՐ

Համաձայն Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցին Պահքի յաւելեալ օրեր յատկացուած են հետեւեալ տօները կանխող օրերուն՝ համապատասխան տեւողութեամբ: Պահքի օրեր են.

1. Ս. Շնունդի նախորդող 6 օրերը, (Դեկտեմբեր 30-էն մինչեւ Յունուար 4)
2. Առաջաւորաց Պահքի 5 օրեր (Յունուար 14-18)
3. Ս. Չատիկը նախորդող Մեծ Պահքի 48 օրերը, ներառեալ Շաղկազարդն ու Աւագ Շաբաթը, (Փետրուար 4-էն մինչեւ Մարտ 22)
4. Պայծառակերպութիւնը կանխող 5 օրերը (Յունիս 23-27)
5. Խաչվերացը կանխող 5 օրերը (Սեպտեմբեր 8-12)
6. Եղիա Մարգարէի Պահքի 5 օրերը ամառնամուտին (Մայիս 12-16)
7. Ս. Գրիգոր Լուսաւորիչի Պահքի 5 օրեր (Յունիս 2-6)
8. Վարազայ Ս. Խաչի Պահքի 5 օրերը աշնանամուտին (Սեպտեմբեր 22-26)
9. Յիսնակաց Պահքի 5 օրեր (Նոյեմբեր 17-21)
10. Ս. Յակոբայ Պահքի 5 օրեր ձմեռնամուտին (Դեկտեմբեր 8-12):

Վերելի պահքի օրերու գումարն է 94: Իսկ տարուան պահոց օրերու ընդհանուր թիւն է 139:

ԱՄՓՈՓՈՒՄ

Որպէս եզրակացութիւն մեր ներկայ ուսումնասիրութեան, յիշեալ երեք խմբաւորումները միասին, **Տերունի, Սրբոց եւ Պահոց** օրերը, հետեւեալ թիւերը կը ներկայացնեն 2008 Նահանջ Տարւոյն համար:

Պահքի օրեր	139
Ուտիքի օրեր	57
Սրբոց օրեր	113
Կիրակիներ	44 (ինչպէս բացատրեցինք վերել)
Անշարժ Տօներու օրեր	13 (ներառեալ Ուրբօրեցի 6 օրերը)

ԳՈՒՄԱՐ**366 օրեր**

Նշուած տօներն ու անոնց թուականները 2008 Նահանջ տարւոյն յատուկ են, ինչպէս ըսուեցաւ: Կատարուած աշխատանքը կարելի է գործադրել նաեւ որեւէ տարուան համար, Նահանջ կամ Հասարակ տարի, պայմանաւ որ հետեւինք ՏՕՆԱՅՈՅՑԻ երկու հատորներու ցուցմունքներուն եւ հրահանգներուն: Չմոռնալ որ Հասարակ տարուան համար Տօնացոյցը ՄԵԿ գիր կը նշէ որպէս Գիր Տարւոյ, իսկ Նահանջ տարիներուն համար՝ ԵՐԿՈՒ գիրքով:

ԶԱԻԷՆ Ա. ՔԷՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ՈՒՐ ՄԿՐՏԵՑ ՅՈՎՀԱՆՆԵՍ

Յողումի մէջ քննարկուող վայրը կրնայ ըլլալ եւ կրնայ չըլլալ Յորդանան գետի մէջ այն տեղը, ուր Յովհաննէս Սկրտիչ մկրտեց Յիսուսին, սակայն Բիւզանդացի քրիստոնէականներ կը խորհէին թէ այդ վայրը ճիշդ մկրտութեան տեղն էր: Եւ այդ վայրը՝ գետին արեւմտեան ափին չէ, այլ արեւելեան ափին՝ ժամանակակից Անդր-Յորդանանի մէջ:

Երբ Աւետարաններու մէջ յիշուած վայրերը տեղորոշելու հարց կ'առաջանայ, հարկ է Բիւզանդացի քրիստոնէականներուն լուրջ մօտեցում ցուցաբերել: Սուրբ Յարութեան Եկեղեցին կառուցուած է Յիսուսի գերեզմանի կարծեցեալ տեղոյն վրայ Դ. դարուն, Բ. Ե., եւ երկար տարիներ առոր հաստատումը կը կարծուէր ըլլալ անհաւանական, եթէ ոչ տարօրինակ եւ մոռացածին, քանի որ անիկա Երուսաղէմի Հին Բաղարի պարիսպներէն բաւական ներս է: (Հին ժամանակներուն բնորոշ էր, որ գերեզմանները քաղաքի պարիսպներէն դուրս ըլլային): Բայց Բիւզանդական վայրի ճանաչումը այժմ հնագիտականօրէն հաստատուած է: (Տես՝ Տան Պախար, «Սուրբ Յարութեան Եկեղեցին կը՝ նշէ Յիսուսի թաղման վայրը», *Biblical Archaeology Review*, May/June 1986):

Երկար ժամանակ Յիսուսի մկրտութեան վայրի հնագիտական փաստը հնարաւոր չէր հետազօտել, որովհետեւ այն Յորդանանեան փնտրական վայրի մէջ էր: Այժմ, 1994-ի Յորդանան-Իսրայէլ Խաղաղութեան Դաշնագրէն ետք, Յորդանանցիները փութաջանօրէն մարբեցին մօտակայ ականապատ դաշտերը, եւ տարածքը անգամ մը եւս մատչելի եղաւ հնագէտներուն, ուխտաւորներուն եւ պօսաշրջիկներուն: Հնագիտական այդ նոր փաստն է, որ հարց կ'առաջանէ թէ մենք իրապէս որոշա՞ծ ենք Յովհաննէս Աւետարանի մէջ յիշուած «Բեթանիա Յորդանանէն անդին» վայրին ճիշդ տեղը:

Ունենալով այցելուներու նոր կեդրոն, աշխարհի չորս կողմերու քրիստոնէայ ուխտաւորներու համար այս վայրը արագ կերպով կը վերածուի գլխաւոր նպատակատեղի: Տեղադրուած ըլլալով Մոռեալ Ծովէն շուրջ եօթ մղոն (մօտ 12 քմ.) հիւսիս, այն դիրքութեամբ հասանելի է թէ՛ Յորդանանէն եւ թէ՛ Իսրայէլէն: Ամմանէն ինքնաշարժով կրնան հոն հասնիլ շուրջ քառասուն վայրկեանէն եւ երկու ժամէն՝ Երուսաղէմէն:

Յորելեանական 2000 թուականին, Յովհաննէս-Պողոս Բ. Պապը, իր Սուրբ Երկիր կառարած Ուխտագնացութեան ընթացքին այցելեց այս վայրը, որը Միջին Արեւելքի Կաթոլիկ Եպիսկոպոսներու կողմէ որոշուած է Յորդանանի հինգ ուխտատեղիներէն իբրեւ մէկը: (Միւսներն են Նեպօ Լեռ, Մուկավիր (Մակերուս), Հերովդեան Պալատը, ուր աւանդութիւնը կ'ըսէ թէ Յովհաննէս Սկրտիչ բանտարկուած եւ ապա գլխատուած է, Մար Բիլասի բլուրը (Թէլ Մար Բիլաս)՝ վայր մը, որ առնչուած է Եղիա Մարգարէի ծննդեան հետ, եւ սրբավայրը մեր Տիրոջ՝ Անճարա Լեռ):

Յովհաննէսի Աւետարանին մէջ, փարիսեցիները Երուսաղէմէն կ'այցելէին Յովհաննէսին այն տեղը, ուր ան կը մկրտէր: Անոնք կ'ուզէին գիտնալ թէ Յովհաննէս ինք իր մասին ինչ կը մտածէր՝ որպէս Մեսիա թէ թերեւս որպէս Եղիա (ան որ պիտի վերադառնար՝ յայտարարելու Մեսիան):

Յովհաննէս անոնց կը պատասխանէ, - «Ես շուրջով կը մկրտեմ: Ձեր մէջը մէկը կայ, որուն դուք ծանօթ չէք, այն որ ինձմէ վերջը պիտի գայ, եւ արժանի չէմ անոր տրեխին կապելը քակելու: Այս տեղի ունեցաւ Բեթանիայի մէջ՝ Յորդանանէն անդին, ուր Յովհաննէս կը մկրտէր» (Յովհ. Ա. 26-28): (Այս «Բեթանիան Յորդանանէն անդին» պէտք չէ շփոթել այն Բեթանիի հետ, որ Չիթենեաց Լեռան վրայ է եւ ոչ ալ Երուսաղէմի մէջ

գտնուող Բեթանիի հետ, որ Մարիամին, Մարթային եւ Ղապարոսին տունն էր):

Հետագային, դեպքի մը ընթացքին, Յիսուս Երուսաղէմի մէջ կը փախչի չարակամ Փարիսեցիներէն եւ նորէն կ'երթայ «Յորդանանի միւս կողմը, այնտեղ ուր կը գտնուէր նախապէս Յովհաննէս եւ կը մկրտէր» (Յովհ. Ժ. 40): Այս վայրը, եւս, կը պարուրի, որ կը գտնուի Յորդանան գետի արեւելեան ափը: Այդ գետի միւս կողմն է, եթէ Երուսաղէմէն կու գաս եւ կը թուի նախապէս կոչուած նոյն «Բեթանի Յորդանանէն անդին» տեղը ըլլայ:

Յովհաննէս Աւետարանի առաջին գլխուն մէջ, անմիջապէս «Բեթանի Յորդանանէն անդին» ակնարկութեան յաջորդող պարբերութեան մէջ, բնագիրը կը նկարագրէ Ս. Հոգիի էջը Յիսուսի վրայ.

Եւ Յովհաննէս (Սկրտիչը) վկայեց եւ ըսաւ, - «Տեսայ Հոգին, որ կ'իջնէր երկինքէն որպէս աղանի եւ կը հանգչէր անոր վրայ, եւ ես չէի ճանչնար զայն, սակայն ան, որ որկեց փս ջուրով մկրտելու, ան ըսաւ ինծի. «Որուն վրայ որ տեսնես թէ Հոգին կ'իջնէ եւ կը հանգչի, ա՛ն է, որ կը մկրտէ սուրբ Հոգիով»: Եւ ես տեսայ եւ վկայեցի թէ ասիկա՛ է Աստուծոյ Որդին» (Յովհ. Ա. 32-34):

Այս հաստատածը կը ներկայացնէ առաջին - եւ թերեւս միակ - Աստուածաշնչական յստակ ակնարկութիւնը Սուրբ Երրորդութեան յայտնութեան: Սկրտիչը կը նկարագրէ, թէ ինք ինչ տեսաւ եւ լսեց, երբ ան Յիսուսին մկրտեց: Այս նկարագրութեան մէջ Հայրը կը խօսի երկինքէն, Որդին կը մկրտուի, եւ Սուրբ Հոգին կ'իջնէ աղանակերպ:

Նաեւ, հոս, Յովհաննէս Յիսուսին կը կոչէ «Աստուծոյ Գառնուկը» (Յովհ. Ա. 29, 35) եւ Յիսուս կը գրասէ իր առաջին առաքեալները Յովհաննէսի հետեւորդներէն (Յովհ. Ա. 35-51):

Ինչեւէ, ընդհանուր առմամբ երբեք ընդունուած չէ թէ «Բեթանի գետէն անդին» կը գտնուի Յորդանանի արեւելեան ափին: Երկու շատ լայնօրէն օգտագործուող Ս. Գրային բառարաններ, (The Harper Collins Bible Dictionary) եւ «Erdmans Dictionary of the Bible», կ'ըսեն թէ «Բեթանի Յորդանանէն անդին» տեղադրութիւնը «անյայտ» է: Եւ Մատապայի նշանաւոր քարտէսը, վեցերորդ դարու մասամբ քանդուած խճանկար քարտէսը Յորդանանի Մատապա (Ս. Գեորգ) եկեղեցւոյ մէջ, կը թուի թէ զայն կը տեղադրէ Յորդանան գետի արեւմտեան կողմը: Կ'ըսեն «կը թուի թէ» ոչ թէ որովհետեւ կասկած կայ անոր գետի արեւմտեան կողմի տեղադրութեան, այլ որովհետեւ այն չէ կոչուած «Բեթանի Յորդանանէն անդին» անունով: Այն կոչուած է Պէթ Ապարա, փոխանակ Բեթանի: Երրորդ դարու եկեղեցւոյ Հայրերէն Որոգինէս (Origen), անկարող եղած է տեղորոշել Յովհաննէս Աւետարանի առաջին գլխուն մէջ ակնարկուած Բեթանի վայրը, փոքր ինչ քնահամութեամբ առաջարկուած է սրբագրել բնագիրը եւ կարդալ «Պէթ Ապարա Յորդանանի միւս կողմը»: Պէթ Ապարա կը նշանակէ «Անցնելու Տուն», հաւանաբար նոյնացնելով ծանծաղուտ մը Յորդանան գետի մէջ: Թալմուտի մէջ եւս այդ անունով վայր մը կ'երեւայ: Հետեւելով Որոգինէսի, Եւսեբիոս եւս իր «Օւօմասթիկոն» (վաղ չորրորդ դար) կ'ակնարկէ միայն այս անունին՝ զայն ինչեւով Պէթապարա: Յելոնիստի «Liber Locorum» գրքին մէջ (չորրորդ դարու վերջը) հեղինակը վայրը կը կոչէ Պէթապարա: Շատ մը հին ձեռագիրներ, ինչպիսիք են գլխաւոր կանոնագիրքերէն «Vaticanus» եւ «Sinaiticus» (չորրորդ-հինգերորդ դարեր), Յովհաննէսի Ա. գլխու 28-րդ համարի մէջ կը կարդան Բեթանի: Այնուամենայնիւ, Պէթ Ապարան ըստ երեւոյթին տարածում գտած եւ օգտագործուած է Աւետարաններու Ասորերէն բնագրին մէջ: Եւ Մատապայի քարտէսին վրայ՝ Յորդանան գետի

արեւմտեան ափին կ'երեւայ Պէթ Ապարա եւ ոչ Բեթանի: Պէթ Ապարայի անունին ներքեւ կայ կարմիր գոյնի երեք տողնոց մակագրութիւն մը, որ մնայի կ'ըսէ թէ այս «Սր. Յովհաննէսի մկրտութեան» վայրն է:

Թերես, Մատապա քարոտէսի խճանկար շինողը (mosaicist), որ ապրած է Յորդանան գետի արեւելքը, գետին «անդին» հասկցած է գետին արեւմուտքը – չնայած Յովհաննէսի Աւետարանի բուն գրողը Յորդանանի «Անդին» յատակօրէն հասկցած է Յորդանան գետի արեւելքը:

Համատես Աւետարանները (Մատթէոս, Մարկոս եւ Դուկաս) կը յիշատակեն Յիսուսի մկրտութիւնը: Մատթէոս եւ Մարկոս կը նշեն թէ մկրտութիւնը կատարուած է Յովհաննէսի կողմէ, իսկ Դուկաս չի նշեր, սակայն անոնցմէ ռեւէ մէկը չի նշեր թէ մկրտութիւնը Յորդանան գետի արեւելեան թէ արեւմտեան ափին տեղի ունեցած է: Ինչեւէ, հաւանական է, որ մկրտութիւնը եղած պիտի ըլլայ արեւելեան ափին: Յիսուս կու գար Գալիլիայէն խորէն բացալայտօրէն կը նշեն Մատթէոս եւ Մարկոս: Գալիլիայէն բնական ճամբան Դեկապոլիսի (տասը հռոմէական քաղաքներու խումբ՝ այդ շրջանին մէջ) մէջէն պիտի շրջանցէր թշնամական Սամարիայէն, անցնելով Յորդանան եւ յառաջանալով դէպի հարաւ՝ գետի արեւելեան ափով:

Հակառակ Մատապա քարոտէսի մէջ Պէթ Ապարա տեղադրուած է Յորդանանի արեւմուտք, շատ մը հին հեղինակաւոր աղբիւրներ կ'ապացուցեն, որ Սկրոփշը կ'ապրէր եւ կը մկրտէր Յորդանան գետի արեւելեան կողմը: Վաղ չորրորդ դարու սկիզբը, Սուսանդիանոս Կայսեր մայրը Հեղինէն անցաւ Յորդանան գետը եւ այցելեց այն քարայրը, ուր կ'ըսուի թէ կ'ապրէր Յովհաննէս Սկրոփշը: Եւսեբիոս, (եկեղեցական պատմիչ) կը տեղեկացնէ, թէ ան հոն եկեղեցի մը կառուցեց:

Թիոնոսիոս Աւագ Սարկաւագը Բ. Ե. շուրջ 530-ին ճամբորդած է դէպի Պաղեստին որպէս ուխտաւոր եւ կը նկարագրէ քառաձեւ եկեղեցոյ կառոյց մը կանարաշարքերով ու մարմարէ սիւներով, եւ երկաթ խաչ մը, որ կը նշէ Յիսուսի մկրտութեան վայրը: Եկեղեցին կառուցուած էր կանարներու փայ, որպէսզի ջուրը կարենար կանարներու տակէն անցնել, բայց ան տեղի տուաւ Յորդանան գետի յաճախակի հեղեղներուն եւ ի վերջոյ փլուզուեցաւ: Այս վայրը Յորդանանի արեւելեան կողմն է:

Վաղ քրիստոնէական աւանդութիւն մը Յիսուսի Յորդանանի անցքը կը կապէ Հին Կտակարանի Կուգահեռականի մը հետ. Ինչպէս որ Յեառն առաջնորդեց Իսրայէլացիները Յորդանանի մէջէն դէպի խառնացուած երկիրը, այնպէս ալ Յիսուս պիտի անցնի Յորդանանը՝ առաջնորդելու համար Նոր Իսրայէլը դէպի փրկութիւն: Ուխտաւորական աւանդութիւն մը կը հաստատէ, որ Յորդանանի փրայ այդ նոյն վայրը թէ՛ Յեառնի անցման եւ թէ՛ Յիսուսի մկրտութեան վայրն է: Այս աւանդութիւնը, ինչպէս պիտի տեսնենք, մնայի պիտի օգնէ հաստատելու, թէ վերջերս կատարուած հնագիտական պեղումները «Բեթանի Յորդանանէն անդի»-ն է:

Հին Կտակարանի ուրիշ Կուգահեռական մը կապուած է Եղիա մարգարէին եւ իր աշակերտ ու յաջորդ՝ Եղիսի հետ: Եղիս կը պնդէ ընկերակցիլ իր ուսուցչին, մինչ ան կ'երթար տեղէ տեղ: Վերջապէս Եղիա կը համի Յորդանան գետ: Ամէն ոք գիտէր թէ Եղիայի կեանքը կը մօտենար իր վախճանին: Երբ անոնք գացին դէպի Յորդանան, Եղիան կ'ողորէ իր թիկնոցը եւ կը վարնէ ջուրին: Գետը հրաշքով կը բաժնուի, որպէսզի երկուքը անցնին ցամաքէն: Յորդանանի միւս կողմը, հրեղէն կառք մը երեւցաւ իր հրեղէն երիւկարներով եւ Եղիան պրոտահողմի մէջ դէպի երկինք վերացաւ (Անգլերէն Ս. Գիրք Երկրորդ Թագաւորաց Բ. 4-14, իսկ հայերէն Աշխարհաբար Դ. Թագաւորաց Բ. 4-14): Պորսոյի (Bordeaux) [Ֆրանսա] անանուն ուխտաւոր

մը (գրեղով 333 Ք. Ե.) կը տեղադրէ մեր վայրը այնտեղ, ուրտեղէն Եղիան Երկինք վերացաւ: Բիւզանդական շրջանէն ի վեր, այս վայրի մէջ գոնեւորդ գլխաւոր բլուրը, որ մենք կը հետապօտենք այժմ, կը կոչուի Եղիայի բլուր (Արաբերէն Թէլ Մար Ելիաս):

Վայրը, որ այժմ ներկայացուած է որպէս «Բեթանի Յորդանանէն անդին», եղած է հնագիտական հետաքրքրութեան կեդրոնի մէջ 1899-էն ի վեր, երբ Երոսաղէմէն Հայր Ֆէտերլին (Father Federlin), առաջին անգամ հետապօտեց այս վայրը: Ան նկարագրեց բազմակեղեցական համալիր մը, ներառեալ եկեղեցի մը՝ կառուցուած կամարներու վրայ, որ կը յիշեցնէ Ք. Ե. 530-ին Թէոդոսիոսի տեսած կամարաձէն եկեղեցին:

Այս վայրը, որ այսօր կը կոչուի Սկրտարանի Հնագիտական Զբօսավայր (Baptism Archaeological Park), կ'երկարի 1.5 մղոն Ուստի Էլ-Խարրարա հովիտի երկայնքով: Այս չցամքող վտակը եւ գետի հունը արեւելեան կողմը կը հոսի Թէլ Էլ-Խարրարայէն դէպի արեւմտեան կողմ՝ Յորդանան գետ: 1996-2002 թթ. այս տարածքը պեղուեցաւ Մօհամմադ Ուահիպի կողմէ, որ Յորդանանեան Հնագիտութեան բաժանմունքի անդամ է: Բլուրին վրայ Ուահիպին խումբը հետապօտեց բիւզանդական վանք մը, ինչպէս նաեւ վաղ հռոմէական դարաշրջանէ մնացորդներ: Յորդանան գետին յարակից, Ուահիպի խումբը պեղած է բիւզանդական դարաշրջանէն ընդարձակ բազմակեղեցական համալիր մը: Բիւզանդական վանքի եւ բազմակեղեցական համալիրի միջեւ կան մի քանի աւելի փոքր բիւզանդական մատուռներ, վանականներու ճգնարաններ, քարայրներ, ճգնաւորներու խուցեր, կաւ խողովակներ, ընդարձակ ծեփուած աւապաններ եւ նուապագոյնը երկու պանդոկներ՝ ուխտաւորներու համար, որոնք հոս կ'իջեւանէին՝ դէպի Նեպօ Լեռ ճամբորդութեան ընթացքին, ուրտեղէն Մովսէս դիտեց խոստացուած երկիրը:

Բլուրի վանական համալիրին մէջ, Յորդանանեան հնագէտները յայտնաբերեցին ոչ միայն ճարտարապետութիւն, այլ նաեւ մետաղադրամներ, կաւ ամանեղէն, քարէ անօթներ, արձանագրութիւններ եւ արուեստի ուրիշ նմուշներ, որոնք ցոյց կու տան թէ այս վայրը սքանչելի էր ու շատ հաւանական էր վաղ Հռոմէական շրջաններէն (երկրորդ դար Ք. Ա. մինչեւ երկրորդ դար Ք. Ե.) մինչեւ ուշ Բիւզանդական եւ վաղ իսլամական շրջանները (հինգերորդէն ութերորդ դար Ք. Ե.), եւ նորէն ուշ Օսմանեան շրջան (18-էն 19-րդ դար):

Այն թէ այս վայրը Յիսուսի ժամանակ բնակավայր եղած է կ'ապացուցեն ծանր քարէ կուժերու մնացորդները, որոնք յատկանշական են հրէական համայնքներուն, Ք. Ա. առաջին դարէն մինչեւ 70 թուական Ք. Ե.: Այս կուժերը կը նմանին քարէ այն վեց ջուրի կուժերու, որոնք յիշուած են Կանայի հարսանիքի պատմութեան մէջ, ուր Յիսուս ջուրը գինիի փոխեց (Յովհ. Բ. 5-6):

Հայր Միշէլ Փիգիլլո (Father Michele Piccirillo), որ անդամ է Երոսաղէմի Ֆրանսիական Հնագիտական ինստիտուտին ու Նեպօ լեռնէն եւ այն գիտնականներէն մէկն է, որ 1995-ին վերագտաւ այս վայրը, կը հաւատայ թէ այս կուժերը ցոյց կու տան, որ Յիսուսի ժամանակ այս վայրը բնակեցուած էր: Շատ յարգուած հնագէտ մը, Փիգիլլո կը հաւատաւոր այս վայրը որպէս «Բեթանիա Յորդանանէն անդին»:

Վանքին մէջ նուապագոյնը չորս եկեղեցիներ կային, ինչպէս նաեւ կառարեւագործուած ջրափոխադրութեան եւ պահեստի համակարգ, երեք աւապաններ եւ պարիսպ մը՝ գլխաւորաբար ծրագրուած արգիլելու բլուրին քայքայումը, քան թէ՛ պաշտպանելու վայն:

Գլխավոր եկեղեցւոյ մասամբ պահպանուած խճանկար յատակը կը պարունակէ հինգ տողոց յունարէն արձանագրութիւն մը խորանի տարածքին մօտ, որուն թարգմանութիւնն է. - «Մեր Աստուծոյ՝ Բրիստոսի շնորհքին օգնութեամբ, ամբողջ վանքը կառուցուած է Աստուծմէ շատ սիրուած երեց եւ վանահայր Ռոթորիոսի (Rhotorios) ժամանակ: Թող Աստուած Փրկիչը ողորմի իրեմ»:

Վանական համալիրին մէջ ուրիշ եկեղեցի մը կառուցուած է քարայրի մը շուրջ, որ կը պարունակէ բնական աղբիւրի ջուր- հաւանաբար սա այն նոյն քարայրն է, զոր բիւզանդացի ուխտաւորներ կը կոչէին «Յովհաննէս Սկրոջի քարայրը»: Բիւզանդական շրջանին քարայրը վերածուած է եկեղեցւոյ մատուռի: Բարայրի առջեւ կառուցուած է նաեւ պատ մը իր դուռով՝ քարայրին առջեւ կապնելու համար սրբարան (խորանի մաս) պաշտպանակ մը կառուելով եկեղեցւոյ գլխավոր սրահը (ստեան) մատուռի խորանէն: Տակաին տեսանելի են քարէ կամարներու քառակուսի հիմքերը, որոնք յենարան ծառայած են եկեղեցւոյ նաւի (ստեան) առաստաղին:

Այս քարայր-եկեղեցւոյ պեղումներու ընթացքին յայտնաբերուած շատ հետաքրքիր գտածոյ էր մարդու կողմէ շինուած ջրանցք մը, որ սկիւրք կ'առնէ քարայրին առջեւէն՝ աղբիւրի ջուրով եւ կը հոսի 20 ոտք՝ (մօտ. 6 մէթր) նախքան Ուստի Էլ-Խարրարի հարաւային ափ թափուիլը: Ջրանցքն ունի 10 մատնաչափ (մօտ. 25 սմ.) լայնութիւն եւ 6 մատնաչափ (մօտ. 15 սմ.) խորութիւն եւ տակաին կարգ մը տեղեր այն պատուած է սալաքարերով: Ջրանցքը բաժնուած է եկեղեցւոյ յատակի ներքեւի այն հողէն, որը բաղկացած է կրակաւն եւ ծեփուած է կրաշաղախով. Այդ յատկանշական է բիւզանդական ոճին եւ գոյնին: Այս ջրանցքը թերեւս կը փոխադրէր եկեղեցիէն ներս մկրտութեան համար օգտագործուող աղբիւրին ջուրը կամ ալ հաւանաբար այն կը փոխադրէր քարայրին մէջէն բնականօրէն հոսող աղբիւրին ջուրը:

Եկեղեցւոյ խճանկար յատակի տակ գտնուած է շուրջ 20 տարեկան մարդու մը զանկ, որը թաղուած էր փոքր փոսի մը մէջ եւ ծածկուած էր կրաքարէ գլխաքարով: Իբրեւ արդիւնք հալուագիւտ բնական վիճակին, երբ զանկի խոտի ոսկորները կը միանան, խաչի մը ձեւը կը կապմոխ: Ուստիայ կ'ենթադրէ, թէ այս պատճառաւ մոռցած են, թէ զանկը կարեւոր նշանակութիւն ունի եւ այն արժանացած է յատուկ թաղման տեղի: Ան կ'աւելցնէ, թէ այդ կրնայ ըլլալ վանքի հիմնադիր Ռոթորիոս (Rhotorios) եկեղեցականի զանկը:

Ուրիշ ջրուղի մը հեռավոր աղբիւրներէ ջուր բերած է երեք ծեփուած ուղղանկյին աւապաններուն, որոնք կը գտնուէին վանքի պատերէն ներս: Գիտնականները բաժնուած են երկու խմբի այն հարցի շուրջ, թէ այս աւապանները արդեօք մկրտութեան աւապաններ եղած են, թէ՛ ջրամբարներ: Հարաւային աւապանի ամբողջ արեւելեան երկանքով ձգուող լայն սանդուղքը բացայայտ նշան մըն է, թէ այդ մկրտարանի յարմարութիւն մը եղած է: Այն որ աւապանները օգտագործուած են մկրտութեան ծէսերու համար կը փաստեն նաեւ աւելի փոքր այն սանդուղքները, որոնք մուտք ապահոված են դէպի միւս երկու աւապաններ: Ջրամբարները այցաւի լայն սանդուղքներու կարիք չունէին, որոնք մեծ տարածք կը գրաւէին:

Բլուրէն դառնալով դէպի Յորդանանի ափը, Ուստիայի խումբը փնտռեց վաղ Դ. դարուն Ս. Հեղինէի կողմէ կառուցուած եւ շուրջ 530 թուին Բ. Ե. Թէոտոսիոս ուխտաւորի կողմէ տեսնուած Ս. Յովհաննէս Սկրոջի եկեղեցւոյ մնացորդները: Անոնց կողմէ յայտնաբերած մնացորդները ճշգրտօրէն կը հաստատեն այն, ինչ որ բիւզանդական բնագրերը կը նկարագրեն. Կամարներուն փրայ կառուցուած եկեղեցի մը՝ գետի արեւելքը: Դարեր առաջ կամարները փլած են, եւ այժմ քարերը կը գտնուին գետին վրայ:

Իրականության մեջ, այս վայրին մեջ երեք եկեղեցիներ կան, որոնք մակադդուած են մէկը միւսին վրայ: Ըստ աւանդութեան՝ եկեղեցին կանգնած է այն տեղը, ուր Յիսուս թողուց իր հագուստները մկրտութեան ատեն:

1998-ին, ափին մօտ՝ իրար վրայ մակադդուած եկեղեցիներու արեւելքը, Ուսիկայ յայտնաբերեց չորրորդ եկեղեցի մը – իրականութեան մեջ մատուռ մը 13-ով 20 ոտք (4-ով 6 մէթր) չափերով: Այն կը ներկայացնէ միջանցքի ձեւով կառուցուածք մը՝ մարմարէ սանդուղքով, որ Ս. Յովհաննէս Սկրսիչ եկեղեցին շուրջ 100 ոտք (մօտ. 30 մէթր) դէպի արեւելք կ'իյնայ: Սանդուղքը ունի սեւ մարմարէ պատրաստուած 22 աստիճաններ: Թէեւ, տակաւին չեն հասած սանդուղքի յատակին, այդուհանդերձ, մինչ այժմ պեղուած ամենացած մակերեսն արդէն իսկ ցած է Յորդանան գետի ջրի մակարդակէն: Փոքր մատուռը կը գտնուի ճիշդ սանդուղքի վերջաւորութեան: Սանդուղքի պեղումներէն գտնուած խեցեղէնի կտորները եւ շինարարական գիտարուեստը ենթադրել կու տան, թէ այս աստիճանները վեցերորդ դարէն են: Սանդուղքի պատերուն փորագրուած են քանի մը խաչեր: Այն որ աստիճանները կ'իջնեն Յորդանան գետի մակարդակէն աւելի ցած, ենթադրել կու տան, թէ սանդուղքը ծրագրուած էր ուխտաւորներու համար, որոնք կ'իջնէին Յորդանան գետի ջուրը՝ մկրտուելու համար:

Ար թուի թէ այս վարկածը կարելի է ժխտել այն փաստով, որ այսօր գետը մօտաւորապէս 300 ոտք (91 մէթր) հեռու է աստիճաններէն: Ինչեւէ, հին ժամանակները այս աստիճանները կրնայ ըլլալ կ'առաջնորդէին ուղղակի դէպի գետը: Յայտնի է, որ հին ժամանակները, ձմրան եւ գարնան եղանակային ծանր հեղեղներու պատճառաւ Յորդանանը շատ անգամներ փոխած է իր հունը: Այս հեղեղները այլեւս չեն պատահիր, քանի որ ջուրը ամբարտակներով թակարդուած է Մուրիոյ, Յորդանանի, Լիբանանի եւ Իսրայէլի կողմէ: Այսօր Յորդանան գետը դանդաղօրէն հոսող փոքր գետակ մըն է, բայց Յիսուսի ժամանակէն մինչեւ 20-րդ դարու կէտը ան տարեկան գրեթէ մէկ միլիոն (1.60 քիլոմէթր) կը լայնար:

Հնագէտները այս վայրին մէջ տակաւին նշան մը չգտան, որ ըսէր «Բեթանիա Յորդանանէն անդին», բայց բոլոր հին թէ ժամանակակից ապացոյցներէն այդպէս կ'երեւայ, թէ այդ այժմ տեղադրուած է:

Ռամի Խուրի

«Պիպիզը Արգիօլօնի Ռիվիո» խմբագրութեան կողմէ
Արեւմտեան Կողմի Պատմութիւնը

Ինչպէս Ռամի Խուրի կը բացատրէր վերոյիշեալ յօդուածին մէջ, «Բեթանիա Յորդանանէն անդին» վայրի տեղադրութիւնը շուարեցուցած է գրողներ եւ ուխտաւորները դեռ Բրիտանական արշալոյսէն ի վեր: Վիճաբանութիւններ առաջացած է՝ Յիսուսի մկրտութեան վայրը տեղադրելու Յորդանանի արեւելեան ափին, մինչ շատեր ալ պահանջած են տեղադրելու պայն արեւմտեան ափին:

«Մուրք երկիրը» (The Holy Land) կոչուած եւ բարձրօրէն գնահատուած Ուղղեցոյցի հեղինակ Ճերօմ Մըրֆի-Օ'Գանըրը (Jerome Murphy-O'Connor) կը նշէ, թէ հարցը վիճելի է: Անցնող 2000 տարիներու ընթացքին Յորդանանը յաճախակի փոխած է իր ուղղութիւնը: Մարդիկ տեւական կործողներ շինած են գետի մօտերը. Ար նշանակէ թէ, երբ գետը տեղաշարժուած է ետ-առաջ, կործողներու դիրքը բազմապատկուած է, ժամանակի ընթացքին ստեղծելով խմբուած եւ բազում վայրեր նոյն ընդհանուր միջավայրի մէջ, որը սակայն լայնացուած է Յորդանանը: Այն ուխտաւորներ, որոնք եղած են այս վայրը,

հետեւաբար, իւրաքանչիւր պահի կրնային շինութիւններ տեսնել գետի այս կամ այն կողմը, որոնք շփոթութիւն կ'աւելցնեն եղած անորոշութեանը:

«Ս. Գրային Պէթանի»ի գետի որ կողմը գտնուելու հարցը այսօր ունի քաղաքական բովանդակութիւն: Գետի արեւելեան կողմը կը պատկանի Յորդանանի, իսկ արեւմտեան կողմը՝ Իսրայէլին: Երկու երկիրները, համեմատաբար մինչեւ վերջերս թշնամիներ էին եւ պաշտօնապէս կը գտնուէին պատերազմական վիճակի մէջ:

Ուրախայի է, որ այդ պատերազմական վիճակը այլեւս գոյութիւն չունի: Ուխտաւորներ եւ պօսաշրջիկներ դիւրին մուտք ունին Յորդանան գետի երկու կողմի ափերն ալ: Խուրիին յօդուածը կը նկարագրէ այժմեան դիւրութիւնները, որոնք մասշտաբի են Յորդանանեան կողմի այցելութեան, սակայն Իսրայէլի կողմը աւելի մեծ թուով ուխտաւորներ կը քաշէ դէպի իրեն: Ուխտաւորներուն մասշտաբի են կարգ մը մատուցներ, որոնք կառուցուած են Իսրայէլի ներկայ քրիստոնէական մեծ համայնքներու կողմէ: Անուանեալ այդ համայնքներէն միայն ամենագլխաւորները՝ Յոյն Ուղղափառ, Հռոմէական Կաթոլիկ, Ռուս Ուղղափառ, Հայկական եւ Հապէշական (Եթովպիական):

Մըրֆի-Օ'Գանըր (Murphy-O'Connor) կը մատնանշէ, թէ ուխտաւորները զալով Երուսաղէմի սրբավայրերէն կ'երթան Յորդանանի արեւմտեան կողմը, որովհետեւ այն իրենց համար ամենաուօրն է: Յորդանանի եւ Սուրիայի ուխտաւորներ աւելի դիւրին մուտք ունին դէպի արեւելեան ափ: Սակայն, արդարեւ, ըստ Մըրֆի-Օ'Գանըրի պնդման՝ ուխտաւորներուն աւելի Յորդանան գետի ջուրը կը հեռաքրքրէ:

Վերջ ի վերջոյ, ինչ որ ճշգրիտ եղած է հապարամեակներու համար, ճշգրիտ է նաեւ այսօր: Բսկական սուրբ վայրը ինքը՝ գետն է:

Ռամի Խուրի. Պաղեստինեան-Յորդանանեան լրագրող: Ան՝ Պէյրութ հաստատուած «Daily Star» թերթին գլխաւոր խմբագիրն է, որ կը հրապարակուի ամբողջ Միջին Արեւելքի մէջ: Ռամի Խուրի նաեւ միջապգային ընկերակցութեան քաղաքական սինակի զրոյ մըն է:

Ան յաճախակի հարցալրոյցներ կու տայ CNN-ին եւ National Public Radio-ին Միջին Արեւելքի դէպքերու կապակցութեամբ եւ Յորդանանեան պօսաշրջիկութեան նախարարութեան մէջ խորհրդական եղած է Սուրբ Գրային հնազանդութեանց վայրերու հարցով:

Biblical Archaeology Review, 2005
(Յունուար-Փետրուար, էջ՝ 34-43)

Անգլերէնէն թարգմանեց՝
Բարսէղ Վրդ. Գալէնտէրեան

Ծանօթ.- Անգլերէն յօդուածը կը պարունակէ բաւանքալի լուսանկարներ եւ քարտէսներ՝ իրենց բացատրութիւններով: Թարգմանութեան ընթացքին անոնք զանց առնուած են:

ԷՄՄԱՌԻՍԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

(Ղուկ. իդ)

Թափուր գերեզմանը Յարուցեալին, վերջնականապէս կը գրկէր նորադարձները Փրկչին մարմնական ներկայութենէն, խորացնելով անոնց մէջ, տարակուսանքը հանդէպ իրենց իտելիին, ինչ մ'աւելի հեռացնելով զանոնք, մօտակայ անցեալի մը երանելի պահերէն, դիմագրաւելով անորոշութիւնն՝ ուրուագծուող նոր հորիզոնին:

Որքան իրաւ էր Վարդապետին հետեւողներուն ապրած հոգեկան երջանկութիւնը, նոյնքան խորն էր վիշտը անոնց անբարեկեցիկ առանձնութեան:

Մեսիական մարգարէութիւններուն ներդաշնակ՝ իրականացումները քաջալերական ազդակներ էին Քրիստոսի հետեւորդներուն համար, որոնք, մասնաշատուկ վարկով, իրենց ունկնդրած քարոզչի խօսքերը կ'իմաստաւորէին: Բնականաբար կ'ենթարկուէին իրենց հոգեկանը բրձող արտասովոր ոյժի մը ներգործութեան, որ սկսած էր հիմնականօրէն իրենց հայեցողութիւնը քարեփոխել, արթնցնելով անոնց մէջ գիտակցութիւնը իրենց կեանքին էականին՝ Աստուծոյ կենդանի շունչին:

Անտարակոյս, յաջորդական յայտնութիւնները ուրիշ քան չէին ենթադրեր եթէ ոչ Աստուածային կամքին անխուսափելի վերահաստատումը, որ վերջապէս, պիտի կասեցնէր դարերու դիզած՝ կրճող ժանգը կեղեքող իշխողներուն եւ խուճապի պիտի մատնէր Տիրոջ խաչահանները:

Քրիստոսի անարգ Խաչելութենէն ենթադրուած ահարկութեան փոխարէն, փրկագործութեան խորհուրդն էր որ կ'իրագործուէր, սփռելով մարդկութեան շնորհուած Աստուածային անհուն սիրոյ ջերմութիւնը, որ կոչգար հրահրելու նոր

Յոյսի ակնկալութիւնը նորադարձներուն, ետ բերելով փայլքը, մարդուն կորսնցուցած առանձնաշնորհեալ պատկերին:

Այո՛, քափուր էր Տիրոջ գերեզմանը: Անոր պատանքը կար միայն հոն:

Տարակուսանքի երկունքն էր զով գեփիւռ արշալոյսին որ կը փայփայէր իւղաբեր կանանց երեւակայութիւնը, երբ երկնային էակներ, լուսայեղց գերեզմանին մօտ, Տիրոջ Յարութիւնը կ'աւետէին անոնց: Ապադարձ մը հրէից պատէփի աւանդական տօնակատարութեան իւրաքանչեւ ընթացքին: Գուցէ նախագագում մ'ըլլար կնդրուկն ի ձեռին երանելի այդ կիներուն, որոնք կարծես, եկած էին ոչ թէ Տիրոջ մահը սգալու, այլ անոր լուսափայլ Յարութիւնը խնկելու:

Մտաբերելով պահ մը, Ծաղկազարդէն մինչեւ Յարութիւն, իրագործուած գերմարդկային դէպքերու բնոյթը, զգլխիչ Յաղթանակի մը շփոթանքը կ'ապրէր նորադարձ համայնքը, երբ ամպրոպ անձկութիւնը կը պատէր զայրոյթով ողողուած ռաբբիներուն:

Ահա կանգնած երկու ուսուցումներու եզրին, աննախընթաց փորձութեան շրջան մը կը բոլորէր նորածին համայնքը: Մովսիսական օրէնքներու վախճանին եւ Նոր Ուխտի սեմին միջեւ տարութեբոլ:

Ի՞նչպէս քացատրել անոնց հիասքափ հոգեվիճակը ի տես քափուր գերեզմանին, եթէ ոչ՝ անոնց հոգեկան տկարութիւնը գուշակող յոռետես խօսքերովը Վարդապետին, որ իր մատնութենէն ինչ առաջ կը զգուշացնէր անոնց «դուք ամենքդ այս գիշեր պիտի

գալթակղիք ինձմէ, որովհետեւ գրուած է թէ «Հովիւը պիտի գարնեմ եւ հօտին ոչխարները պիտի ցրուին» (Մտք. ԻԶ. 31)

Քայլաշուած համայնքի, ցրուած հօտի տպաւորութիւնը՝ որպէս վիրաւորանք մարդկային արժանապատուութեան, վայել չէին համարէր առաքելներ վերագրել գայն, որպէս երաշխիք իրենց բերահաւատութեան: Ձէին ուզած Փրկչին Յարութենէն վերջ պարգուած վշտահարեալ համայնապատկերին մաս կազմել:

Կարճ՝ շատ կարճ էր այդ ժամանակամիջոցը, որ կը բաժնէր Յարուցեալը իր հետեւորդներուն հետ ապրած հրաշալի պահերէն, որոնք, հոգեգրաւ խաղաղութեամբ, այնքան ոգեւորուած Տիրոջ կը հետեւէին, պատրաստ՝ զոհելու ամենաթանկագինը՝ իրենց անձը, որպէս փրկագին ակնկալուած նոր խոստումին:

Տակաւին քարմ էին եւ ուժգին Վարդապետին սփանչելագործ քարոզչութեան արձագանգները մարդոց սրտերուն մէջ: Հերթաբար կը բազմապատկուէր ազդեցութիւնը այն խօսքերուն՝ որոնք, տկար հոգիներուն զօրավիգ կը հանդիսանային, «Որդին մարդոյ պէտք է որ մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի ու խաչը ելլէ ու երրորդ օրը Յարութիւն առնէ»: Ղկ. ԻԳ-7:

Եթէ յոռետես էին Տիրոջ նախատեսութիւնները իր երկրաւոր կեանքի վախճանը նկարագրող, այլ եւ խրախուսական էր իր յուսադրիչ Յարութեամբ, նոր կեանքի ժառանգութեան արժանանալու խոստումը:

Օրինաց կարգն ու սարգը իր լրումին յանգած երկնային շնորհաց աւետումով, կենսանիւթն էր եղած նախաքրիստոնեաներու նետած առաջին վեհերոտ քայլերուն, նման կեանքի մտնող երեխաներուն, որոնք կառչած մօր ամրապինդ ձեռքերուն, իրենց տարտամ

քայլերը կ'արդարացնեն:

Տիրոջ ներշնչած անդենականի յոյսը, իր Յարութեամբ ամայացուցած էր հոգեկան աշխարհը նորադարձներուն, խորտակելով սկզբունքները իրենց նոր դաւանած վարդապետութեան, անոնց՝ որոնք կը կարծէին փրկութեան շառաւիղին ընտրեալներն ըլլային:

Մինակ էին նորադարձները վտարանդի մը ինչպէս, բնութեան մէջ յուսաբեկ: Հակառակ Տէրունական վարդապետութեան հաւատալու անոնց բուն փափաքին, բերահաս էին տակաւին ըմբռնելու յայտնութիւնը երկնային փառքին: Անգիտակ անոր քարոզչութեամբ շնորհաբաշխ տարողութեան, որ անցնուի հրաւեր մ'էր զգաստութեան՝ տանելու մարդը երանաւէտ յաւերժականութեան:

Դժուար էր մարդուն ողջունել լուսածագը պայծառ մեսիականութեան, որ կը ճառագայթէր աշխարհին, տալիս նոր միտքն ու հոգին ապերջանիկ, շնորհագուրկ մարդկութեան, փորձելով զանազանել երկրաւորը երկնայինէն առանց ամենադոյզն ընդդիմամարտի:

Նորահաւատները, միաձուլլ ամբողջութիւն մը կը կարծէին ըլլալ բնութեան քաղաղրիչ երկու հակատարբերը. եւ որպէս բնական երեւոյթներ՝ համաստեղի համակարգին կը հնազանդէին երկինքը երկրին խառնուած:

Վարդապետին բովանդակ չանքերը, իր երկրաւոր առաքելութեան աւարտին երկնայինը գերադասող, ապարդիւն կը թուէին ըլլալ յաջս նորադարձներուն:

Լուսափայլ խոստումները Վարդապետին, կարծես վաղանցիկ ցնորամտութիւններ եղած ըլլային իր Յարութեամբ: Անոր վարդապետութեամբ եղբայրացած քաղմութիւնը չէր կրցած հաշտուիլ Աստուածորդայն խաչելութեան եւ Յարութեամբ բողած բափուր

գերեզմանին հետ, որոնք սկսած էին խախտել տկար հոգիներու երերուն հաւատքը: Անդենականի հեռանկարը տժգունած՝ ամայացած տեսարան մը կը պարզէր այլեւս:

Այնքան ապաւինած էին նիւթի քարութեան եւ բիրտ ուժերու ստրկացնող տիրապետութեան, որ պիտի չի վարանէին իրենց յուսախարութիւնը յայտնել ըսելով. «Իսկ մենք կը յուսայինք որ անիկա Իսրայէլը պիտի ազատէր»: Ղուկ. ԻԴ: 21:

Խոկումներու յանձնառու՝ մեկուսացած էմմաուսի գիւղը ընտրած էին առանձնաւ աշակերտներէն երկուքը՝ Կղէովպասը եւ Սիմոնը: Հեռացած էին վէտ վէտ մարած տեսիլի քաղաք՝ երուսաղէմէն: Յնորք էին հրապոյրը երէկուան երազներուն եւ Փրկարար բոլոր Տիրոջ արեան: Զէին ուզած ընկալել, նայուածքները հարցախոյզ հասարակութեան, թափուր գերեզմանի մը առեղծուածը լուծելու եւ ծածկելու մանաւանդ տեսութիւնը իրենց յեղեղով հաւատքին եւ փորձելու լուսաբանել պարտութիւն պարզող մթնոլորտը:

Աշակերտները կը մտաբերէին Վարդապետին խօսքերը, մերթ փառանքական «... որպէս զի ինձմով խաղաղութիւն ունենաք, աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջասիրտ եղէք...» Յվհ. ԺԶ: 33 եւ մերթ փառանքական «... պէտք է վախճալ մարմինը սպաննողներէն, այլ պէտք է վախճալ հոգին սպաննելու իշխանութիւնը ունեցողներէն» Ղկ. Ժ: 10-28:

Էմմաուսի դէպքը, խաղաղ յաղթանակի մը տխուր հաշուեյարդարն էր կարծես:

Յարուցեալը տրտմութեամբ կը յիշէր կալանաւորուած հոգիներու ալիքոծ թերահաւատութիւնը: Փիլիպպոսի

շահագրգռուիլը Աստուծոյ հետ ծանօթանալու, որպէս պայման հաւատալու Յիսուսի երկնաւոր գորութեանը (Յվհ. ԺԴ: 8-10):

Պետրոս առաքեալ, որ պատրաստ էր մահը դիմակայելու Տիրոջ սիրոյն եւ տասներկուքին մէջ առաջինն ըլլալու յաւակնութիւնը կը ցուցաբերէր որպէս ամենանուիրեալը Անոր, ի՜նչ հեշտութեամբ ուրացած էր Վարդապետը՝ մարմնաւոր սպառնալիքի մը դիմաց (Ղկ. ԻԲ: 60):

Յուդան կը մատնէր Յիսուսը գերծ մնալու ապագայի ամբաստանութենէն որպէս գործակալը Նազովրեցիին (Յվհ. ԺԸ: 1-11):

Թովմաս առաքեալ շօշափել կ'ուզէր Տիրոջ վերքերը հաւատալու Յարուցեալին ճշմարտութեան եւ Անոր Աստուածային բնութեան (Յվհ. Ի: 24-25):

Այս տխրահռչակ եղելութիւններուն կ'աւելնար նաեւ էմմաուսի նախապահին՝ Կղէովպասին եւ Սիմոնին տարակուսեալ խորհրդածութիւնները, որոնք հարազատ արտացոլումն էին մնացորդներուն հարցականին: Տէրը ականջալուր անոնց վարանումին, կ'ընդմիջէր անոնց խօսակցութիւնը սաստելով. «ո՛վ անմիտներ ու թուասիրտներ, հաւատալու այն բոլոր բաներուն, որոնք մարգարէները խօսեցան: Զէ՞ որ Քրիստոս պէտք էր այս չարչարանքները կրէր եւ իր փառքը մտնէր» (Ղկ. ԻԴ: 25-26):

Մայրամուտի մէջ անհետացող, աշակերտներու յամբարաց փայլերէն, ուրացութեան դոփին էր որ կը տնօրէնէր, էմմաուսի ճամբուն վրայ: Անգամ մը եւս, մարդկային տկարութիւնն էր որ, նահանջել կու տար մարդուն, հոգեկան այնքան սպասուած եւ այնքան այժմէական յաղթանակի մը սեմին:

Տէրը, միշտ ներկայ էր ընկրկած աշակերտներու կողքին, ուշադիր՝ անոնց

խարխափումին, զարհուրանքին: Էմամաուսի նանապարհը, լուսեղեն տաղաւար մ'ինչպէս երկնքին բացուած, ընտրեալ վայրը պիտի ըլլար Յարուցեալին, եզրափակելու վերջին արարը Մեսիական առաքելութեան, հաստատելու նշմարտութիւնը իր Աստուածային բնութեան: Հոն, Տէրը, մտերմիկ հանդիպման մը եզակի առիթը պարգեւելով աշակերտներուն, երկնային շնորհքով կրկին պիտի պարուրէր զանոնք, հեռացնելով երկչոտութիւնը անոնց այնքան յեղեղով հոգիներու ծալքերէն:

Աշակերտները տարուած, Յարուցեալին միջամտութիւնը որպէս երրորդ խօսակից՝ կը փորձէին խորհրդակցիլ Անոր հետ: Կը ջանային բնաւարկել Տիրոջ չարչարանքներուն, խաչելութեան եւ Յարութեան ապշեցուցիչ եղելութիւնը: Կը զարմանային որ իրենց խօսակիցը տեղեակ չէր երուսաղէմի անցուդարձէն, թէ, ինչպէս Ռաբբիները համարձակեւ էին Նազովրեցի Յիսուսին չարչարել վերջ, խաչել, թաղել եւ թէ երեւ օր յետոյ մարմինը Անոր անհետացած էր գերեզմանէն եւ թէ այս դէպքերուն որպէս հետեւանք, անոր մարգարէի համարաւ աւելի եւս շեշտուած եւ անոր հեղինակութիւնը հաստատուած էր երուսաղէմի եւ շրջակայքի մէջ:

Յարուցեալ մարմինը Տիրոջ, Աստուածային անարատութեամբ կը վրիպէր աշակերտներու հողաստեղծ աչքերէն, կը վրիպէր նաեւ անոնց հոգիէն՝ խաչելութեան վաղորդայնը յաղթական: Արժանի չէին տակաւին անոնք, համբուրելու փառքին բաշխող վիրաւոր ձեռքերը փրկչական: Մտքերը անոնց դեռ չէին բացուած յայտնուած նշմարտութեան, գիտակցելու Յարուցեալ փրկչին անմահական բնութեան եւ անոր՝ մշտնջենական գոյակցութեանը իրենց կողքին: Սրտերը անոնց ի գորտէ չէին

հերքելու խեղաթիւրուած Հին Ուխտին՝ յանկերգ դարձած մեղապարտ բարքերը, հաղորդակից ըլլալու Տիրոջ յետ Յարութեանական լուսափայլ փառքին, Անոր՝ որ քանի մը օր առաջ, յաղթական դուրս կուգար մեռելներու աշխարհէն, փարատելով քանձորութիւնը ահաւոր խաւարին: Մահրուած մարդկային ատելութեան թողած հետքերէն, անգամ մը եւս պիտի վկայէր արարչական զօրութիւնը Աստուծոյ, պատճառը կեանքի եւ մահուան, տիեզերքի սկզբին եւ վախճանին:

Տէրունական անպարտելի կամքին դիմաց, կեանքը մարդուն, լոկ հոսանք մ'է ծննդեան եւ մահուան միջեւ օրօրուող, նման, դէմ յանդիման բաց դռներէն օդի փախչող վաղամեռիկ հոսանքին:

Դարձեալ Յարուցեալ փրկիչը սրտաբեկ, լուսաբանելու աշակերտներուն պղտորած մտքերը եւ զօրացնելու անոնց տկարացած հաւատքը, անգամ մը եւս իր Յարուցեալի փառաւորումով պիտի յայտնուէր անոնց եւ մեկնաբանէր այն գրութիւնները Հին Կտակարանի գիրքերուն, որոնք գուշակած էին իր յայտնութիւնը աշխարհին եւ իր երկրաւոր կեանքի վախճանն ու Յարութիւնն մեռելներէն:

Յարուցեալը, աշակերտներուն յայտնուելէն ետք, կասկածը փարատելով անոնցմէ, վախը ներխուժած էր անոնց սրտերուն մէջ: Խնդրած էին Տիրոջմէն որ առանձինն չմնային այլեւս: Ղուկ. ԻԴ: 29:

Արդարեւ, վախը յատկանիշն էր Սիրոյ տկարութեան, որ, կը կոտորէր եռանդը անոնց, կենաց քանին վաղուան ֆարոգիչները դառնալու:

Ուրացուած Աստուածային Սէրն էր աներեւոյթ այդ շղթան, իր խորտակուած օղակներով երկարաձգուած մեղապարտ երուսաղէմի կամարներէն

մինչեւ էմմաուսի խաղաղ հովիտները անգիտակ, զորս խաչի նամբով, շղթայած էր մարդը իր Աստուծոյն:

էմմաուսի ճանապարհը, ճշմարտութիւն որոնելու խորհրդանշը եղաւ: Հոն էր աշակերտներու տարակուսանքը հարթուած՝ հոգեկան աշխարհը բեւակոխեցին, գիտակցելով Յարուցեալին Աստուածութեան: Տիրոջ խօսքերովը գօտեպիկը, վերադարձան դէպի տրտմեալ փողափն երուսաղէմ, տանելով իրենց հետ, իրենց մէջ վերածնած Յոյսը յաւիտեական եւ բարմութիւնը օրհնութեան յետ Յարութեան հանդիպման:

էմմաուսի ճանապարհը, դրսեւորեց նաեւ, մարդկային կամփի տկարութիւնը, մարդուն նիւթապաշտ յակումները, ընչափաղց, ազահ նկարագիրը: Զոհ իր սնափառութեան՝ ընկերային իր դիրքը կը չարաշահէ իրրեւ չափանիշ կեանքին, ներկայանալու անպարկեշտ եւ կեղծ դիմակով, անով՝ ինչ որ չարաչար կը պակսի իրեն պէս բարոյական հայեցողութիւն, աւելի եւս ստորնանալով, կեղեքելու իր նմանները, ցեխոտելով

կենցաղային ամենատարական արժէքները եւ անոնց համադրական ներդաշնակութիւնը, որոնք, հանելի կը դարձնեն մարդը՝ յաչս Աստուծոյ եւ մարդկանց:

Այսպէս է դժբախտաբար կերտուած մարդկային տկար բնութիւնը: Մարդը յանախ կանգնած ճշմարտութեան եզրին ճշմարտութիւնը կը փնտռէ: Այս առումով, էմմաուսի ճանապարհին պատահարը, տրամ մըն է համամարդկային, ուր, հեզնանքով կ'առանձնանայ ճշմարտութիւնը նօսրացած եւ ջատագովը անոր, որպէս զոհ՝ փառութեան նոխազը կը դառնայ:

Ամէն մէկ դրուագ Սրբազան Մատեանէն ինչպէս գանձ մը հոգեւոր, մեզի հասած ժառանգական պատգամ մըն է լուսարորբոք կարօտ անդրդուելի հաւատքի, նման մեր լուսաշաւիղ հայրերու օրինակին, բանալու ամէնախորը մեր սրտերուն, ակօսներ նորանոր, ինչպէս էմմաուսի ճանապարհին, մշակելու խոպան դաշտը մեր վարանոտ հաւատքին:

ԶԱՐԵՀ ԹՕՓԱԼԵԱՆ

ՄՐՏԱՌՈՒԶ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ

«Իսկ Ջինի Ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն
իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու
ո՛չ արեան նամբով եւ ո՛չ մարմինի կամ
մարդկային կամքով, այլ՝ Աստուծոմէ
ծնելով» (Յովհ. 1. 12-13):

Սովորական մկրտութեան արարողութեան մը նկարագրականը չէ որ կ'ընթերցէք, այլ՝ կ'ուզեմ ձեզի հետ բաժնեկցիլ մկրտութեան արտառուշ խորհրդակատարութիւն մը, Սեւանիկի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած:

Մկրտութեան խորհուրդը ինքնին արտառուշ է, թէ՛ մանուկներու պարագային եւ թէ՛ մեծահասակներու: Սրտառուշ է այն իմաստով, որ ծնողներ, իբրեւ հաւատքի արտայայտութիւն, Աստուծոմէ ստացած իրենց կեանքին մեծագոյն պարգեւը՝ իրենց արիւնէն ու մարմինէն ծնած զաւակը կու գան վերընծայելու Աստուծոյ, զայն Աստուծոյ որդեգրելու, իրենք մնալով այդ զաւակին խնամատարներն ու դաստիարակները: Իսկ մեծահասակներու պարագային, մեղաւորութեան ինքնագիտակցութեամբ՝ «Անառակ որդիին» զղջումնալի դարձն է առ երկնաւոր Հայրը:

Աստուծոյ որդեգրութեամբ վերածնունդի այս իրողութիւնը ինքնին անբացատրելի խորհուրդ մըն է, որմէ աւելի հոգեյոյզ երեւոյթ չի կրնար ըլլալ մարդկային կեանքին մէջ ու մանաւանդ հոգեւոր հովիւի մը համար, որուն պատասխանատուութիւնն է՝ հրաւիրել մարդիկը Աստուծոյ ընտանիքին միանալու:

Այս իմաստով, 8 Յունիս 2007ը Սեւանիկի Ս. Աստուածածին եկեղեցւոյ

համար եղաւ յատկանշական օր մը: Ինն մեծահասակներ եւ մայր մը իր երկու զաւակներով, ընդամենը 11 հոգիներ, հաւաքարար մկրտուեցան եկեղեցւոյս սուրբ աւագանին մէջ եւ դրոշմուեցան սրբալոյս միւռոնով:

Այս հոգեպարար խորհուրդի արարողութեան ընթացքին, Աստուծոյ աներեւոյթ ներկայութեան ստեղծած անմեղունակ սիրոյ եւ ուրախութեան յուզումնախառն մթնոլորտը պիտի չուզէի նսեմացնել եւ արժեզրկել թուրքին յանձնուած մի քանի քառերով, որոնք երբեք ալ չօրոյ չեն մթնոլորտին հոգին փոխանցելու:

Հակառակ ընկալեալ սովորութեան, քաղմութիւն չկար, ուստի եւ՝ յաճախ ստեղծուած «շուկայական» աղմկարար կացութիւնը: Հետաքրքրականօրէն՝ մկրտողները աւելի էին քան ներկաները (թիւով 3), իսկ երկիւղալի լուրքիւնը ստեղծած էր խորհրդաւոր պահ մը:

Սոսկ հաւաքական մկրտութիւն մը չէր սակայն. այլ առաւելարար՝ գիտակցական մկրտութիւն մը: Ածականներ չէ որ կը շռայլեմ: պարզապէս կատարուած իրողութիւնն է որ կը վկայեմ:

Բացատրեմ:

Մկրտութեան բուականէն շուրջ երեք շաբաթ առաջ, երախաները մկրտութեան դիմում կատարեցին եւ ստուգելէ ետք պայաններն ու իրենց պարտաւորութիւնները, ամենայն

լրջութեամբ՝ խնդրեցին նախօրօք քացատրողական հանդիպում մը ունենալ հոգեւոր հովիւին հետ, լաւապէս հասկնալու համար մկրտութեան խորհուրդը, ոչ միայն արարողական ընթացքի իմաստով, այլ՝ խորքի եւ իմաստի հասկացողութեամբ:

Արդարեւ, դիմումի ներկայացումին յաջորդ շաբաթն իսկ, բոլորը միասնաբար համախմբութեան Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւ սուրբ խորհուրդին մասին ստացան անհրաժեշտ քացատրութիւններ: Աւելին, անոնք փափաքեցան արարողութեան ընթացքին արտասանուելիք աղօթքներուն մասնակցութիւն բերել. ուստի, անոնց տրուեցան «Հրաժարիմ»ի եւ «հաւատամք»ի բաժինները, զորս միասնաբար արտասանեցին արարողութեան ընթացքին:

Արդար պիտի չըլլար նման մկրտութիւն մը անշուք ձգել եւ անոր պատգամը թողուլ անարձագանգ: Տասնըմէկ մկրտեալները իրենց այս կեցութեամբ կու գան մեզի յիշեցնելու:

ա. Մկրտութիւնը անյետաձգելի անհրաժեշտութիւն մըն է, որովհետեւ անյետաձգելի է մեր թերութիւններէն, սխալներէն եւ մեղքերէն հրաժարելու անհրաժեշտութիւնը եւ մեր դարձը առ Աստուած:

Բ. Մկրտութիւնը խորհուրդ մըն է, որուն հարկ է մօտենալ հաւատով եւ գիտակցութեամբ, կարենալ վայելելու համար մեղքերէ ազատագրուած եւ նոր

կեանքով մը ծնած ըլլալու հոգեկան բերկրանքն ու միխթարանքը:

գ. Իւրաքանչիւր հաւատացեալի իրաւունքն է քացատրութիւն պահանջել, հասկնալու համար թէ՛ ի՞նչ եւ ինչո՞ւ կ'ընէ, իր հաւատքի կեանքին մէջ:

դ. Կարեւոր չէ, թէ՛ որքան հրաւիրեալներ ապահոված ես: Կարեւորը որքան հաւատք ունիս սրտիդ մէջ, կատարածիդ նկատմամբ:

ե. Կարեւոր չէ, թէ՛ որքան շփեղ ու փառաւոր խրախնամ կը կազմակերպես մկրտութեան արարողութենէն ետք (թէ՛ եւ սխալ եւ գէշ չէ հարազատներով ուրախանալը նման առիթի մը). սակայն, կարեւոր է՝ թէ որքան ուրախ ես նոյնիմէն խորհուրդով. որքան ուրախ ես մկրտութեամբդ. եւ որքան ուրախ ես, իրապէս, «Աստուծոյ որդեգիր, Քրիստոսի ժառանգակից եւ Սուրբ Հոգիի տաճար» (Մաշտոց - Ծիսարան, մկրտութեան խորհուրդ) դառնալովդ:

Մկրտութիւնը շատ աւելի խոր եւ խորհրդաւոր է, շատ աւելի քաղցր ու գեղեցիկ է, շատ աւելի սրտաշարժ եւ սրտառու է, քան՝ յաճախ մեր տեսածը: Հաւատքն ու գիտակցութիւնն են տարբերութիւնը զգալի դարձնող տարրերը:

Աստուծոյ որդեգրութիւնը ձրի շնորհիքով կը ստանանք, քայց պատասխանատուութեամբ կը պահենք ու կ'ապրինք զայն, Աստուծոյ զաւակները ըլլալու ամենօրեայ ինքնագիտակցութեամբ մը:

ԳԵՂԱՐԴ ԱԲՂ. ՔԻՒՍՊԷԿԵԱՆ

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՀԱՅՈՑ

(Շարունակում ՍԻՈՆ-ի 2007 Յուլիս-Դեկտեմբեր միացեալ թիւէն)

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

Պէտք է համագոյ ըսել Տէրունական մարմինը
Բանն Աստուծոյ, կամ թէ մարմինն համար ըսե՞լ
Բան եւ մէկ բնութիւն, թէ ոչ:

Եթէ փրկչական մարմինը համագոյ ըսուի Բանն Աստուծոյ, ապա այդ իր բնութեամբ համագոյ եղած կ'ըլլայ նաեւ Հօր եւ Հոգիին: Որովհետեւ, համագոյները (հոմագոյներն) պարտին նաեւ համարուն (հոմարուն) ըլլալ իրարու: Համագոյ եւ համարուն ըսել՝ ուրիշ բան մը ուրիշ բանի մը մօտ ըլլալ ըսել է, այսինքն, մարդ մը՝ (ուրիշ) մարդու մը մօտ, որ կը նշանակէ անձերուն յատկութիւնը եւ բնութեան հասարակաց ըլլալը: Եւ այս ուրիշ բան չէ, եթէ ոչ չորս անձեր մէկ բնութիւն: Այս այսպէս իմանալը անտեղի եւ անյարմար է, առաջին առիթով, իսկ ըսելը՝ կը համարեմ օտար եւ սխալ:

Բայց կ'ըսեն, ինչո՞ւ փրկչական մարմինը աստուածային եւ երկնային, անմահարար եւ կենագործող է ըսուած, եւ նաեւ անուանումներ որոնք կ'առնուին արարչականի բնութեան սահմանին մէջ:

Այդ բանին համար կ'ըսենք. մարդկայինին եղած այդ անուանումները՝ մարմնին Բանն Աստուծոյ հետ միաւորութեան համար ըսուած են: Անոնք ոչ թէ էականութիւն, այլ, ինչպէս ըսի, Բանն Աստուծոյ հետ միաւորուած մարմինը կը նշանակեն: Իսկ գոյակից, բնութենակից, անեղ եւ անսկիզբ անուանումները ամէն ինչով կը բացայայտեն բնութիւնը:

Բայց անոնք կ'ըսեն, թէ իրենք համագոյ չեն ըսեր ըստ իսկական նոյնութեան (բնութեան), այլ՝ ըստ եղելութեան:

Մենք այդ բանին համար կ'ըսենք, թէ եղելութիւն մը (եղած բան մը) համանուններէն կ'ըլլայ, որովհետեւ կան համանուններ, որոնք (առաջին), անգոյժ գոյացան, եւ անոնցմէ շատ եղած են կ'ըսուին, ինչպէս ըսուեցան ընդհանուր մարդոց համար: (Երկրորդ), կայ այն՝ որ ծնողէ մը ծնածը եղած է կ'ըսուի, որ իր մէջ կ'ունենայ հասարակականը եւ յատուկը միանգամայն: (Երրորդ), կայ ա՛յն, որ նիւթէ շինուած անօթին համար եղած է կ'ըսուի, որ՝ բնական է նիւթին, որ կը ստանայ տարրեր անուն, ձեւ եւ ներգործութիւն: (Չորրորդ), կայ ա՛յն, որ բանի մը խառնուրդէն ուրիշ բանի մը կը փոխուի անունով եւ որակով. օրինակի համար, մակարդով ոմանք կաթէն պատրաստեցին պանիրը կամ իւղը: (Հինգերորդ), կայ ա՛յն, որ իրարմով կը լուծուին իրենք, ինչպէս կը տեսնուի խոնաւութեանց պարագային, որոնք իրարու մօտիկ են, բայց ըստ տեսակի չկան իրարու մէջ: (Վեցերորդ), կայ նաեւ ա՛յն, որ երկու էականներ միասին ըլլալով՝ վեհագոյնը կը յաղթէ նուաստագոյնին (վատթարագոյնին), հաղորդ ըլլալով անոր գօրութեան: Չոր օրինակ, կրակը մօտենալով երկաթին, կը փոխէ անոր որակը, բայց չի փոխեր անոր էութիւնը, անոր մէջ զնելով իր էութեան պարագաները. կամ ծիրանագոյն ներկուած սպիտակ բուրդը կը կոչուի ծիրանագոյն, եւ այն բոլորը (յատկութիւնները) որոնք իրենն են՝ չեն կորսուիր: Արդ, այս բոլոր նշուածները համանունօրէն եղած բաներ են կ'ըսուին, որոնց եղելութեան պայմանները տարրեր են իրարմէ:

Այս բոլորը, ո՛չ թէ միայն մէկը, օրինակ բերել չեմ յանդգնիր իմ խօսքերուս: Որովհետեւ անգոյներով, (ըստ առաջինին), չենք համարձակիր սահմանել Բանն Աստուած կամ իր մարմինը, որ մարդոցմէ է, այլ՝ ինչպէս որ Բանը ունի իր գոյութիւնը Հօրմէն, այնպէս ալ Ան գոյացուց իր մարմնին էութիւնը Սուրբ Կոյս Մարիամէն:

Եւ ոչ ըստ այդ երկրորդ նշանակութեան, զոր ծնողներ կը շնորհեն իրենց ծնունդին: Որովհետեւ, Բանը իր աստուածային բնութենէն չհայթայթեց իր մարմինը, այլ՝ մարդոցմէ, ոչ ալ ինք սկիզբ առաւ Մարիամէն, այլ ծնաւ Հօր Աստուծոմէ անժամանակ:

Դարձեալ, եւ ոչ ըստ այդ երրորդ նշանակութեան՝ եղելութիւն կ'ըսուի: Որովհետեւ, Աստուծոյ Որդին մարմնանալով ուրիշ բան չընդունեց, քան թէ ըլլալով նոյն ինքն Աստուծոյ Որդին: Ան ոչ իսկ փոխեց իր մարմնին էութիւնը կամ անունը, այլ արժանի ըրաւ նոյն ինքն այդ մարդկայինը ըլլալ իրեն մարմին:

Ոչ ալ ըստ եղելութեան բաժանման չորրորդ օրինակը, որովհետեւ, Իր ո՛չ Հոգեկան եւ ո՛չ մարմնաւոր ծնունդը միջնորդի մը երթալով ծանուցուեցաւ, այլ, Հոգեւորը եղաւ Հօրմէն առանց միջնորդի եւ անժամանակ ըստ Հօր էութեան, եւ, ժամանակ մը ետք, իր մարդեղութեան (տնտեսութեանն) ծնունդը՝ մօրմէ, անմիջնորդ:

Ոչ իսկ Հինգերորդ նշանակութիւնը օրինակելով կը նմանեցնէ եղելութիւնը, որովհետեւ, Ան անշփոթաբար եւ առանց այլայլելու մարմնացաւ:

Այս բոլոր նշանակութիւններէն վերջինը, ինչպէս որ ուրիշներու կողմէ ալ իմաստասիրուեցաւ, եղանակով մը կ'օրինակէ փրկչի տնտեսութեան (մարդեղութեան) խորհուրդը: Որովհետեւ, ինչպէս որ կը տեսնենք, երկաթը կրակին մօտեցնելով իր մէջ կ'ընդունի կրակին բոլոր պարագաները՝ որոնք տարբեր են իր որակէն, եւ կրակը չի փոխեր երկաթին ընդհանուր գոյութիւնը, ոչ ալ երկաթը՝ կրակին: Ահա այսպէս պատշաճ է իմանալ Բանն Աստուած՝ մարդեղութեան մէջ, ինչպէս որ ըստուեցաւ Հայրերէն մէկուն կողմէ: Հայրեր կ'ըսէին, թէ «Որ էնն» մնաց մէկ եւ միացաւ անքակտելիօրէն եւ առանց չփոթութեան, որ վեր է մարդոց մտքէն: Ուրիշ մը (Ոսկեբերան? համեմատ Օծնեցի, երես 52) ըսաւ, թէ՝ ինք միութիւն կը խոստովանի եւ ոչ քայքայում, ոչ ալ մէկ բնութեան լուծուիլը միւսին մէջ, եւ կամ միւսինը՝ այն մէկին մէջ:

Առարկելու համար դարձեալ կը յիշեն առաքեալին խօսքը, «յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ» (Հռոմ. Թ. 5), ըսելով, «Աստուած ըսելով, զինք ոչ մէկ բանով զատուած կը տեսնեմ բնութեան սահմանող խօսքէն՝ ըստ որուն, ուրեմն, պիտի չմեղանչենք երբ փրկչի մարմինը համագոյ է ըսենք Բանին Աստուծոյ»:

Անոնց համար կ'ըսենք, թէ Քրիստոսի մասին Սուրբ Հայրերու կողմէ բոլոր այդպէս ըսուածներուն ականարկութիւնը չերթար մարմնին, այլ՝ Բանն Աստուծոյ, որ մարմնացաւ մեր փրկութեան համար, եւ ոչ իսկ կը հետեցուի Հրեաներուն ըսածը՝ մարմինը ըստ մարմնի է:

Անոնք դարձեալ կը տարակուսին՝ ըսելով, «Պօղոս (առաքեալ) Քրիստոս'ս ըսաւ եւ ոչ թէ Բան, եւ Քրիստոս երեւելիին վրայ կ'ըսուի եւ ոչ թէ աներեւելիին»:

Անոնց համար կ'ըսենք, թէ այսպէս բաժանաբար Քրիստոս անուանելը, երկու Քրիստոս եւ երկու Աստուած ըսել կու տայ, որմէ, ուրեմն, երկու որդիներ: Եւ այսպէս, կը հետեցուի, անյաւելուած Երրորդութեան չորրորդութիւն գալով կը յարի, եւ տէրունական մարմինը համագոյ ըսել կու տայ աստուածութեան: Եւ մանաւանդ, այսպիսի Հետեւութիւն մը, պարզամիտ խոստովանութեան մէջ, լայն կը

բանայ ճշմարտութիւնը քաջքշող(զօձտող) բերանները, ըսել տալու թէ երկինքէն եւ կամ աստուածութենէն բերաւ իր մարմինը, եւ կամ այլայլուով եւ փոփոխումով իմանալ միաւորութեան եղանակը, եւ կամ՝ ըստ մարմնի, եւ կամ՝ իջեցնել Բանը ստացական(մարդկային) բնութեան:

Անոնք դարձեալ կ'ընդիմանան այսպէս, «եբբ տէրունական մարմինը Հոմագոյ եւ Հոմարուն է չըսուիր, ան ո՛չ աստուածութեան եւ ո՛չ իսկ Բանին բնութեան եւ անեղութեան հաղորդ եղած կ'ըլլայ. ուրեմն, ինչպէ՞ս կը յարմարի խոստովանիլ՝ մի բնութիւն Բանին մարմնացելոյ»:

Անոնց համար կ'ըսենք, եթէ Բանին եւ մարմնին մէկ բնութիւն ըսէի, այդպիսով ըսած կ'ըլլայի որ Բանն Աստուած եւ իր մարմինը Հոմագոյ են իրարու: Նոյն օրինակով պիտի ըսուի որ Սուրբ Երրորդութիւնը(երեք անձերը) երեք յատկութիւններով Հոմագոյ են իրարու: Բայց որ մենք մարմնացեալ Բանին մէկ բնութիւն ըլլալ կը սահմանենք, այդ ամէն ինչով դուրս կը թողու Հոմագոյականի մեր այդ խօսքը եւ կ'ուսուցանէ մէկ բնութիւն ըսել ըստ միաւորութեան:

Անոնք դարձեալ կը տարակուսին, թէ «ինչպէս որ մարմնացեալ Բանին մէկ բնութիւն խոստովանիլ սորվեցանք, ուրեմն, նոյն այդ միաւորութեան խօսքով, արդեօ՞ք իր մարմինը Հոմագոյ ըլլալ չխոստովանինք Բանին»:

Անոնց համար կ'ըսենք, եթէ միաւորութեան այս խօսքը այդ Հոմանուններէն է եւ եղելութեան կու տան, այդ պատճառով մենք զանց կ'ընենք եղելութեան այլ իմաստները, եւ անոր վերջին իմաստը՝ թէ զօրաւորագոյնը ամէն ինչով կը յաղթէ տկարագոյնին, արդարացի կը գտնենք յարմարեցնել ասոր, որ անապառելի մնաց անոնցմէ, որոնք են ըստ նախասաց խօսքին: Օրինակի համար, աստղերու պայծառութիւնը կը ծածկուի մեծապայծառ արեգակի լոյսէն, մինչդեռ աստղերը պայծառ են, բայց որպէս թէ անոնք գոյութիւն չունին ցերեկ ժամանակ: Եւ ասոր համար, այդ երկու գոյութիւնները(բնութիւնք) միանգամայն միասին ցերեկ են չեն ըսուիր, այսինքն՝ արեգակի ցերեկ կամ աստղերու ցերեկ, կամ օր եւ գիշեր, կամ լոյս եւ խաւար են չեն ըսուիր, այլ՝ աստղերը անգամ մը որ Հետեւող են արեգակին, անոնցմով եւս կը կոչուի ցերեկը: Այսպէս պէտք է իմանաս նաեւ մարմնացեալ Բանն Աստուծոյ միաւորութեան խօսքը: Թէպէտեւ մարդկայինները, այսինքն՝ բնութիւնը, կերպարանքը, դէմքը, եւ ասոնց աւորներ՝ բանականութիւնը, միտքը, իմաստութիւնը, զօրութիւնը, կենդանութիւնը եւ ասոնց նմանը, որոնք անվերանալի են՝ մնացին մարմնի մէջ: Այդ բոլորը առանձնաբար մարմնին վրայ չեն ըսուիր, այլեւ յատուկ Բանն Աստուծոյ վրայ ըսուած անուանումներ են այդ բոլոր ըսուածները, որպէսզի վեհագոյնը բոլորովին յաղթէ նուաստագոյնին, ամէն ինչով: Եւ ասոր համար, թէեւ մարդկայինները անբաժանելի են, անոնք մշտնջենաւորապէս միացան Բանն Աստուծոյ Հետ, եւ այդ բոլոր ստացուածը անփոփոխելի եւ անայլայլելի պահուեցան յաղթողէն եւ անփոփոխելիէն(Բանէն): Եւ այդ բոլորը որ Ան Հագաւ չեն այնպէս (պարզ), այլ անոնք եղան ըստ առնողին, որպէսզի, հազնողին ճոխութենէն անուանուին այդ ըսուածները:

Մարմինը ըստ իր նախագոյ բնութեան մահկանացու է կ'ըսուի. բայց ան մահկանացու է չըսուիր, քանի որ անմահագոյն արմատով ներկուեցաւ, եւ բոլորովին անմահացնող եւ կենդանացնող է: Արդարեւ, Բանն Աստուծոյ մէջ կայ իր մարմնի բնութեան նկարագիրը, եւ այդ բնութիւնը ուրոյն մարմինէն է չըսուիր, քանի որ այդ ծածկուեցաւ եւ ընկղմեցաւ աստուածային բնութեան մէջ: Այս պատճառով, մեր Տէրը Յիսուս Քրիստոս մէկ բնութիւն ունի կ'ըսուի, ոչ թէ անմարմին, այլ՝ մարմնացեալ: Եւ թէ յարմար իսկ չէ յատուկ Իրեն, միայն մէկին մէկ (բնութիւն) ըսուի, այլ եւ անոր՝ որ իր Հետ եւ իր մէջ միացաւ եւ խառնուեցաւ

անքակտելիորեն: Միաւորութենէն Համագոյ է չըսել, եւ չըսել թէ մէկ բնութեան են(կը պատկանին) Բանն Աստուած եւ իր կենդանարար մարմինը, եւ ոչ ալ անփոփոխ ըլլալուն Համար՝ բաժանում եւ երկմտութիւն դաւանիլ: Ոչ ալ փրկչական մարմինը կենդանի, բանաւոր եւ մտաւոր խոստովանելով, Անոր(Քրիստոսի) մէջ երկու կենդանի, երկու բանականութիւն եւ կամ երկու միտք կայ ըսելով ամբարշտանալ, եւ ոչ ալ զինք մէկ կենդանի, մէկ բանական եւ մէկ մտաւոր դաւանելով, Համագոյութեան կարծիք տալ Բանն Աստուծոյ եւ իր մեղսաքաւիչ մարմինն:

Արդ, այս իմաստասիրեցիք անոր Համար, որ պէտք չէ Համագոյ ըսել տէրունական մարմինը աստուածութեան, ոչ ալ Հոմարուն, անսկիզբ, անեղ, անբովանդակելի եւ նման անուններ(որակումներ) ըսել անոր՝ միաւորութեան պատճառով: Իսկ եթէ մէկը յանդգնի այս անուններով Հրաշալի ցոյց տալ մարմինը, այդպիսիներուն դէմ կ'ելլէ Մեծն Աթանաս Աղեքսանդրացին, նզովելու եւ քանդելու անոնց աղանդը, որ Եպիկտիտոնի ուղղուած իր նամակն է*:

Սուրբ Հոգին թող Հեռացնէ մեզ անոր(Աթանասի) դատապարտութեան խօսքերէն եւ շնորհէ(օգնէ) մեզի որ անբիժ դաւանութեամբ մնանք այս աշխարհի մէջ եւ Հասնինք Հանդերձեալի բարիքներուն մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որուն փառք յաւիտեանս, ամէն:

*Թուղթ առ Եպիկտետոն եպիսկոպոս. Ս. Աթանասի Աղէկսանդրիոյ Հայրապետի ճառք: Վենետիկ, 1899, երես 324:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Անոնց, որոնք կ'անջատեն մարդկային
բնութիւնը երկուքի եւ կ'ըսեն, թէ այդ ուրիշ
էր մեղանչելէն առաջ եւ ուրիշ
մեանչելէն ետք:

Ժամանակի զանազանութիւնը կը բաժնուի երեքի՝ ներկայ, անցեալ եւ ապառնի: Ասոնցմէ ներկան կը զգանք եւ գիտենք, իսկ ապառնին թէպէտեւ քիչ չափով գիտենք, բայց ամենեւին չենք զգար: Անցեալը՝ մօտ է մեր զգայութեան, գիտակցութեան, իսկ Հեռաւորը՝ չատ քիչ գիտենք, բայց մեր գիտակցութեան մէջ չէ: Արդ, ինչպէ՞ս Հեռաւոր անցեալ դէպքերու մասին դուք ձեզ գիտցող ըլլալ կը խոստովանիք եւ կ'ըսէք. «նախաստեղծին(Ադամին) միեւնոյն բնութիւնը երկու բնութիւններով զանազանուեցաւ, (այսինքն), ան ունէր տարբեր բնութիւն նախ քան իր մեղանչելը, որ յետոյ այդ փոխուեցաւ ուրիշ բնութեան՝ իր մեղանչելէն ետք, ըսելով թէ, ան, նախ քան մեղանչելը, անմահ եւ անապական էր եւ անընդունակ մարդկային բոլոր կիրքերուն եւ կարիքներուն, որոնք, սակայն, չարիք աւելցան իր վրայ, մեղանչելէն ետք»:

Ապա ուրեմն, ինչպէս դուք կ'ըսէք, նախաստեղծ մարդը անբաժին եղաւ Հոգեկան երեք մասերուն ցանկականին, ցասումնականին եւ խոհականին: Ոչ միայն այս, այլ, այդպիսով, ան դուրս մնացած եղաւ եւ զգայական եւ բանական զօրութեններէն: Որովհետեւ, ցանկականը եւ ցասումնականը կը Հետեւին զգայականին, զոր օրինակ, խոհականը՝ բանականութեան: Եւ այդ պատճառով ալ անոր մէջ չեն ըլլար այդ բնական մասերը, այսինքն՝ ցասումը, ցանկութիւնը եւ

խոհականությունը, եւ չեն կրնար ըլլալ զգայական եւ բանական, որոնց մէջ բնական(բնածին) են ատոնք:

Եւ ինչո՞ւ նախաստեղծ մարդը զգայութեան ընդունակ էր կ'ըստի, եւ ըստ ձեզի՝ եղաւ անզգայ, եւ կամ բանական էր, եւ ըստ ձեզի՝ եղաւ անբան: Անոնք (Աղամ եւ Եւա) բանական էին, այդ յայտնի էր այնտեղ(դրախտին մէջ) եղած օրէնսդրութենէն, եւ անոնց իրարու հետ ունեցած հարց-պատասխանէն: Իսկ անոնց զգացողութեան առհաստիքան արգիլուած ծառն էր, որուն պտուղը ենթակայ եղաւ անոնց զգայութեան, եւ թէ անոնք բանական բնակիչներն ու պաշտօնականներն էին (Եղէմի) պարտէզին: Ուստի, զգայութեամբ է զգալին, եւ զգալիով՝ մարմինը, եւ մարմնով՝ կիրքը եւ կրական մարմինը: Եթէ կրուած կիրքերէն հանենք այս բաները, վերցուած կ'ըլլայ կրական մարմինը, եւ անկէ՝ զգալուն զգայութիւնը, բանականութիւնը, ուստի եւ մարդը: Բայց այս բոլոր ըստածները առիթ չեղան անոր(Աղամին) խոտորումին, որովհետեւ, ան ինքնիշխանութեամբ(ազատ կամքով) ճոխացած եւ պատուիրանով զգուշացուած էր: Ան կրնար ոչ միայն թոյլ չտալ իր բնութեան հպիլ խորթ բաներուն, այսինքն՝ մեղքին, մահուան եւ ապականութեան, այլ եւ իշխանութիւն ունէր սաստել բնածին զգացումներուն եւ հնազանդեցնել եւ ուղղել զանոնք Աստուծոյ կամքին սպասաւորութեան, եւ չըլլալ ծառայ հեշտասիրութեան: Եւ թէ, մարդուն ինքնիշխան կամքին ձգուած էր դէպի իրեն քաշել մեղքը կամ հեռացնել զայն: (Այս մասին) կը վկայէ պատուիրանը՝ «յորում աւուր ուտիցէք, ասէ, ի նմանէ, մահու մեռանիցիք» (Մենդ. Բ. 17): Ուստի, յայտ է թէ մարդը մեղքով քաշուեցաւ դէպի մահուան եւ ապականութեան, զոր պատուիրանը սորվեցուց արհամարհել: Օրինակ, կոտող զինուորը, որ տեղ ունէր ասպարէզի մէջ, վահաններէն ըլլալով կը մատնուէր թշնամի խիտեանին ձեռքը. այսպէս եւ մարդը ինքնախարէութեամբ յօժարելով մեղքին, ծառայ եղաւ մահուան եւ ապականութեան:

Ասոր առնթներ այս ալ կարելի է ըսել, թէ կենդանական զօրութիւնը կը բաժնուի չորսի՝ ծննդական, սննդական, աճման եւ տեղափոխական: Այս ըստածներէն ոմանք անմարմին էակներուն ալ կը յարմարին, իսկ մարմնաւոր կենդանիներս ենթակայ ենք այդ բոլորին: Արդ, յայտնի է թէ մեր նախահայրը ծնուող բնութիւն ունէր, որուն համար հողածին ալ կը կոչուի, որ հողէն յառաջ եկաւ Արարիչէն: Նոյնպէս, ան ունէր աճելու բնութիւն, ըստ որուն, անոր փոքր կողոսկրէն Եւան կամաց առ կամաց աճեցաւ՝ Ստեղծիչը կը կատարելագործէր մեր նախամայրը: Իսկ անոնք (Աղամ եւ Եւա) ունէին կերակրողական կարողութիւն, որ կը ճանչցուի դրախտի բազմազան պտուղներով, որ նախախնամողը(Աստուած) արտօնեց անոնց ուտել այդ բոլորէն, եւ չճաշակել միայն մէկէն՝ բարիի եւ չարի գիտութեան ծառէն: Իսկ անոնց տեղափոխուելու կարողութիւնը յայտնօրէն կ'իմացուի արգիլուած պտուղին դաշելէն եւ պահուրտելէն: Արդ, ուրեմն, ինչպէս որ ճշմարիտ են այն կատարողները, այնպէս ալ ճշմարիտ են անոնց կողմէ կատարուածները, եւս առաւել ճշմարիտ է ան՝ որ կը պատմէ անոնց մասին:

Սակայն, նախաստեղծ զոյգին մէջ այդ բնական կիրքերը ըլլալուն համար չէ որ անոնց մէջ մեղքը բնական(բնածին) է ըստի: Այդպէս չէ, եւ չըլլայ այդպէս է ըսել այն ինչ որ չէ. հեռու ըլլայ Աստուծմէ: Որովհետեւ, մեղքը ըստ ինքեան էութիւն մը չէ, ոչ ալ Ստեղծողը հաստատեց զայն իրրեւ մաս՝ ստեղծուած մարդուն մէջ, այլ այդ սկիզբը առաւ մեր ծուլութենէն եւ կամակորուրթենէն, եւ զօրացաւ չարին պատրանքներէն եւ բանասարկութենէն(չարախօսութենէն): Եւ դարձեալ, ոչ թէ որովհետեւ մեղքը օտար է մեր բնութեան, եւ այդ պատճառով ըսել որ մեր բնութիւնը թափուր է նաեւ այդ բնական կիրքերէն: Բայց, պարտ ու պատշաճ է

ըսել այն որ կայ, նաև ըսել՝ սահմանուած չէ այն ինչ որ չկայ: Ուստի, սուտ կարծիքներով չստել եւ չմեղանչել այս երկուքի (մեղքի եւ բնական կիրքերու) մասին:

Բայց Հարցաքննելի է այն, թէ ինչո՞ւ Համար Բէլիարի (Սատանայի) որդիները փորձեցին եղծանել աստուածային սուրբ գրութիւնները (Ս. Գիրքը) եւ խեղադիւրեցին զանոնք իրենց անձերու կորուստին Համար: Որովհետեւ, անոնք պարզապէս չկրցան պայքարիլ աստուածախօս մարդոց հետ, որոնք խօսեցան փրկչական գործերու մասին: Սրինակի Համար, անոնք որոնք չեն կրնար փոս փորել մէկու մը առջեւ, անոնք կը ջանան թակարդով սպանել զայն: Այսպէս են եւ անոնք, որոնց խօսքերը խարդախ էին, որոնք յանդիմանուեցան Աստուծմէ: Անոնք ըսին, թէ Քրիստոս ունէր նախաստեղծին անկիրընդունակ եւ անկարօտ բնութիւնը, ոչ թէ մեր այս բնութիւնը՝ որ ենթակայ է կարիքներու, որով երթալով մահուան եւ ապականութեան՝ կը կործանինք: Այսպէս ըսելով, անոնք խորհեցան հեռաւոր օրինակով ցոյց տալ որ Քրիստոս առ աչօք կրեց մարդկային կիրքերը, որպէսզի անոր մարդեղութիւնը եղած ըլլայ ենթադրաբար եւ երեւութաբար, ըստ Մանէի մոլորութեան:

Արդ, եթէ աղամական մարմնին մէջ հոգեկան եւ մարմնական կիրքերը բնածին չէին, յայտ է, ուրեմն, թէ Քրիստոս կրելով զանոնք, աղամական մարմնի չառաւ, այլ մերը՝ որ ենթակայ եղաւ մահուան եւ ապականութեան: Իսկ եթէ Ան ունէր նախաստեղծին անմահական եւ անկիր բնութիւնը, ուրեմն սուտ է՝ որ Ան, ըստ ձեզի, մէկ կողմ դրաւ իր կիրքերուն երեւնալը, երբ Ան բարկութեամբ (ցասումով) կը պատասխանէր իր աշակերտներուն յուզմունքներուն (կրիցն): Դարձեալ, եթէ աստուածաստեղծ (աղամական) մարմնին մէջ չկային հոգեկան եւ մարմնական կիրքեր, (ուրեմն), Քրիստոս փափաքեցաւ հազնիլ ոչ թէ առանց կիրքերու ստեղծուած այդ մարմինը, այլ մեր ստեղծուած մարմինը, որ մեղքի պատճառով եղաւ կիրընդունակ: Ապա ուրեմն, մենք ձեզի հետ յաւէտ շատ աւելի գեղեցկակերտուած եւ կատարելագործուած ճանչցանք մարմինը՝ մեղաւոր բնութեամբ, որ թէեւ ընտրելի եւ փափաքելի եղաւ Իրեն:

Արդ, այլեւս ինչո՞ւ երկարեմ անոնց խաբուսիկ ցնորքները եւ առասպելական յիմար խօսքերը: Յետ այսու պիտի իմաստասիրեմ (խօսիմ) մերը որ ճշմարիտ խօսքն է:

Ձեզի կ'ըսեմ, մարդկային բնութիւնը երկուքի չէ բաժնուած, այլ միեւնոյնն է սկիզբէն ստեղծուած Իր լուսափայլ պատկերը, որ մեղքով չաղախուեցաւ: Ստեղծիչը հազնելով վերստեղծեց զայն վերջին օրերը, որպէսզի, ինչպէս գրուեցաւ, Ան նմանի մեզի ամէն ինչով՝ առանց մեղքի, նոյն մեր կատարեալ բնութեամբ, որ զայն առաւ մեր փոխարէն եւ մեր մեղքերուն համար, պատերազմելու մարդասպան պատերազմողին դէմ: Ծնաւ Կոյսէ առանց սերմի, որպէսզի ցոյց տայ, թէ մեր ստեղծուած բնութիւնը ծնանելի էր, եւ այդպէս ծնիլ կարելի էր առանց զուգակիցի, եւ Ան մնաց պատուիրանապահ: Ան ապրեցաւ սնունդի եւ կերակուրի կարօտով, ցոյց տալու որ մարդկային բնութիւնը սնունդ է եւ կերակրուող: Ան զարգացաւ հասակի աճով, ծանուցանելով թէ այս բնութիւնը աճող է: Ան յայտնապէս ցոյց տուաւ իր մարմնին վրայ մարդկային բոլոր կիրքերը՝ հոգեկան եւ մարմնական, որքան որ կ'անցաւ, երբ եւ ուր: Եւ այս այն պատճառով, որ ցոյց տայ թէ երկրորդ Ադամը (Քրիստոս) նոյնագոյ եւ ազգակից է իր առաջինին (Ադամին): Եւ որպէսզի ցոյց տայ թէ մեղքերուն պատճառով չէր որ անոնք (կիրքերը) չաղկապուեցան մեր այս բնութեան, այլ յարատեւողութեան եւ բնականօրէն մեզի օգնելու համար անոնք շնորհուեցան Ստեղծիչէն: Ան մեռաւ եւ

Թաղուեցաւ եւ իջաւ դժոխք՝ անկէ անըմբռնելի(չբռնուող), որպէսզի կամովին ազատ մնացած Տէրը, ազատէ դժոխքի իւրաքանչիւր տեղերուն մէջ կամովին ինկածը, եւ ցոյց տայ բռնաւորին (Սատանային), թէ (Հոն ըլլալը) ինքնակամութեան եւ Հաւանութեան գործ է, եւ թէ ան գորութեամբ չի կրնար ծառայութեան բռնադատել (Աստուծոյ) պատկերը: Ան Երկինք Համբարձաւ եւ նստաւ Մեծութեան(Հօր Աստուծոյ) աջ կողմը բարձունքներու մէջ: Եւ, ինչպէս կարելի է ըսել, բոլոր ստեղծուածներու առջեւ դրուած է ժառանգել աստուածային փառքի աթոռը, ներկայ այս անկատար կեանքին վերջանալէն ետք:

Այս բաները խօսեցանք յանդիմանելու Համար Մանէի մոլորութիւնը եւ զանոնք, որոնք անոր չար արմատի չարագոյն շառաւիղներն են, Յուլիանէի մասին է որ կ'ըսեմ, առաջին եւ վերջին եւտիքէսներու մասին է, եւ Յուլիոս Աղիկառնացիի եւ անոր սերունդներու մասին է: Թող Արարչի պաշտօնող աջը պաշէ մեզ անոնց սպանող եւ կորստեան մատնող խօսքերէն, եւ չնորՀէ մեզ ըլլալ աւանդապաշ առաքելական աւանդներուն մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որուն փառք յաւիտեանս:

Թարգմանող Գրարարէ
ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԴ. ԱՂՈՅԵԱՆ

ԱՆԻՐԱԽ ՈՏՆՋԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄՆԵՐ (ԵՐՈՒԱՆԴ՝ ՔԱՍՈՒՆԻԻ ԿՈՂՄԷ ԿԱՏԱՐՈՒԱԾ)

Գրեց՝ ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

Բարեկամ մը ինծի ուղարկած է Պէյրուսի Հրատարակուող Հայ Աւետարանական Եկեղեցւոյ պաշտօնաթիւրթ «Ջանասէր»-ի 2007 տարուան Յուլիս-Օգոստոս թիւը: Ան իմ ուշադրութեանս փափաքած է յանձնել թերթի խմբագիր՝ Երուանդ Քասունիի Հայաստանեայց Եկեղեցւոյ դէմ կատարած շարք մը անիրաւ օտնձգութիւնները և պատմագրական խեղաթիւրումները:

Այդ թերթը կարդայէ և Հաստատելէ ետք բարեկամիս կատարած արդար մատնանշումները, անհրաժեշտ Համարեցի գրի առնել ներկայ Հերբումնագիրին:

«Հայաստանեայց» անունի անիրաւ գործածութիւնն է գլխաւոր ոտնձգութիւնը, որ թերթի խմբագիր՝ Երուանդ Քասունի կատարած է այդ թերթին մէջ, և որ պիտի ըլլայ գլխաւոր նիւթը՝ մեր այս Հերբումնագիրին:

«Ջանասէր» թերթի այդ թիւին մէջ, Երուանդ Քասունի շուրջ Հարիւր անգամներ, Հայ Աւետարանական յարանուանութեան անունին կցած է «Հայաստանեայց» անունը՝ ապօրինաբար և անվաւերօրէն:

«Հայաստանեայց» անունը կը պատկանի միայն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Այս յատուկ անունի գործածութիւնը սկիզբ առած է մեր ՊատմաՔայր Մովսէս Խորենացիի կողմէ Ե. դարէն ի վեր, և Հաստատուած է՝ մեր բոլոր պատմիչներուն և եկեղեցական մեծանուն Հայրապետներուն կողմէ:

Մեր Եկեղեցւոյ մեծագոյն դէմքերէն պատկառելի պատմագիր՝ Օրմանեան Սրբապան, իր «Հայ Եկեղեցի» գրքին մէջ, յստակօրէն շեշտած է որ «Հայաստանեայց» յատուկ անունը՝ (exclusively) կը պատկանի միայն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

ԱՊՕՐԻՆԻ ՈՏՆՋԳՈՒԹԻՒՆ

Պատմական վերոյիշեալ վկայութիւնները՝ ապացոյց են ինքնին, որ Հայ Եկեղեցւոյ միայն պատկանող «Հայաստանեայց» յատուկ անունը, ապօրինի է կցել Հայ Աւետարանական Եկեղեցւոյ անունին:

Կան նաեւ այլ կարելոր վկայութիւններ:

Հայ Բողոքական յարանուանութիւնը (Աւետարանական) Պոլսոյ մէջ Հաստատուեցաւ 1846 թուի Յունիսին:

Հայ բողոքականներու թիւը միայն 912 էր այդ առնէ: Անոնց մէջէն շուրջ 40 գլխաւորներ՝ եղան նախակարսապետները այս նոր Հայ յարանուանութեան:

Երուանդ Քասունի գիտակցարար ըսն մը չի գրեր Հայ Առաջին Աւետարանական Համայնքի Հովիւ՝ Արիստղոս Իւթիւճեանի մասին: Ան կը յայտարարէ նաեւ՝ որ իբրեւ թէ այդ թիւին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ անունին կցուած է եղեր «Հայաստանեայց» անունը: ԱնՀաստատի է որ Վերապատուելի մը կրնայ թոյլ տալ ինքզինքին կատարելու նման աննկերելի ստույթիւն մը:

Այս 40 գլխաւորները իրենք գիրենք անուանեցին «ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ»: Անոնք իրենց առաջին Հոգեւոր Հովիւ ընտրեցին, Պատուելի Արիստղոս Իւթիւճեանը:

Ո՛չ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ առաջին Հոգեւոր Հովիւ՝ պատուելի Արիստղոս Իւթիւճեանը, և ոչ ալ՝ Հայ Աւետարանականներու 40 գլխաւորները, երբեք իրենք գիրենք կոչած չեն «Հայաստանեայց» Աւետարանական Եկեղեցի:

Առաջին՝ Հայ Բողոքական (Աւետարանական) յարանուանութեան կազմութեան մէջ՝ թէ՛ նիւ-

Թական և թէ գործնական շատ մեծ ճիգ և աշխատանք տարաւ Ամերիկեան Միսիոնարական կազմակերպութեան ներկայացուցիչ Ուիլլիամ Կուտէլլ (William Gouldell) որ երկու գրքեր հրատարակեց 1867 թուին Պոսթոնի մէջ, ուր կը ներկայացնէ պատմութիւնը առաջին Հայ Բողոքական Աւետարանական Յարսնութեան: Այդ գրքին մէջ, ոչ մէկ տեղ յիշատակուած կայ «Հայաստանեայց» յատուկ անունը կցուած՝ Հայ առաջին բողոքական յարսնութեան անունին հետ:

Առաջին Հայ Բողոքական (Աւետարանական) «Բրոթէսթան Միլլէթի» յարանուանութեան կազմութենէն տասը տարիներ ետք՝ Հայ Բողոքական (Աւետարանական) Համայնքի Հոգեւոր Հովիւ ընտրուեցաւ Պատուելի Ս. Ս. Իւթիւնեանը, 1865 թուին:

Պատուելի Ս. Ս. Իւթիւնեանը իր յուշագրքի մէջ կը գրէ որ իրեն թէ Ուիլլիամ Կուտէլլ Հարցուցած է իրեն այդ թուին՝ թէ «ինչպէ՞ս կ'ուզէք անուանուիլ դուք». Ուիլլեմ Կուտէլլ այս Հարցումը ուղղած է Ս. Ս. Իւթիւնեանի որովհետեւ Բողոքական յարանուանութեան մէջ կային շատ մը այլ անուններով ճանչցուած բողոքական ճիւղեր, ինչպէ՞ս օրինակ՝ «Աւետարանականներ», «Լուստերականներ», «Ժողովականներ», «Երիցականներ», «Պեճտեկոսականներ», «Շարաթապահներ» եւ այլն: Եւ ան ալ որպէս թէ պատասխանում ըլլայ Հետեւեալը. «Կ'ուզենք անուանուիլ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի»:

Ս. Ս. Իւթիւնեան, որպէս երկրորդ պատուելի՝ իրաւունքը չունէր, ոչ իշխանութիւնը և ոչ ալ իրաւասութիւնը, իրմէ տասը տարիներ տուած կաղնուած Հայ Բողոքական («Բրոթէսթան Միլլէթի») Աւետարանական Եկեղեցւոյ անունի փոփոխման կամ վերանուանման:

Այս արտայայտութիւնը ոչ մէկ հիմք է և ոչ մէկ ապացոյց՝ որ Հայ Եկեղեցւոյ պատկան «Հայաստանեայց» յատուկ անունը կրնայ կցուիլ Հայ Բողոքական (Աւետարանական) Եկեղեցւոյ անունին: Միսիոնարական կազմակերպութեան ղեկավար Ուիլլեմ Կուտէլլ երբեք Համաձայն չէ եղած Հայ Բողոքական Աւետարանական Եկեղեցւոյ անունին կցուած տեսնել «Հայաստանեայց» անունը: Հայ Աւետարանականներէ շատեր գիտնալով այս զգուշացուցած են Ս. Ս. Իւթիւնեանը՝ չհակառակիլ միսիոնարներու ղեկավար Ուիլլեմ Կուտէլլին, որովհետեւ չհամաձայնութեան մը պարագային՝ Ուիլլեմ

Կուտէլլ կրնայ դադրեցնել Ս. Ս. Իւթիւնեանի յատկացուած ամսաթուակը:

Ու այդ պատահեցաւ սրղարիւ: Ծորջ վեց տարիներ ետք, Միսիոնարական խորհուրդը իր պաշտօնէն հեռացուց Ս. Ս. Իւթիւնեանը:

Ս. Ս. Իւթիւնեանի 1861 թուի պաշտօնականութենէն ետք, անհիմն դրոյցի նման՝ մոռցուեցաւ նաեւ իր իսկ կողմէ՝ յերիւրուած «Հայաստանեայց» անունի կցումը Հայ Բողոքական Աւետարանական Եկեղեցւոյ անունին:

Այնուհետեւ և մինչեւ ներկայ թուականները Հայ Բողոքական Եկեղեցին միշտ և միայն անուանուած է ճանչուած է որպէս «Հայ Աւետարանական Եկեղեցի» և՛ վերջ:

Այսքան տարիներ ետք՝ Երուանդ Քաստուհի, գիտնալով այս պատմական իրողութիւնները, բնաւ իրաւունքը չունի յանկարծ նման անիրաւոտնադրութիւն մը կատարելու ներկայիս և այն ալ՝ սանձարձակօրէն:

Իր սրարբը ապօրէն ոտնձգութիւն մըն է ընդդէմ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ իրաւասութիւններէն ներս: Ու այս, ոչ թոյլատրելի է և ոչ ալ՝ ներելի:

Այս ինիթի մասին կարեւոր կը նկատենք յիշատակել Հոս ուրիշ Հայ Աւետարանական Հոգեւորականի մը՝ Վեր. Կարապետ Ատանալիանի պարկեշտ և ուղղամիտ արտայայտութիւնն ու վերաբերմունքը, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ նկատմամբ:

Վեր. Կարապետ Ատանալիան մեծ պատրաստութեան տէր Հոգեւորական մը եղած է և Հեղինակած է «Յուշարձան Հայ Աւետարանական և Հայ Աւետարանական Եկեղեցւոյ» աշխատասիրութիւնը:

Ան գլխովին հակառակ է եղած Հայաստանեայց Եկեղեցւոյ Հանդէպ կառուարուած ամէն կարգի ոտնձգութեանց:

Իր վերոյիշեալ գրքէն կը մէջբերենք Հոս երեք կարճ պարբերութիւններ, ուր յստակ կ'երեւի իր ուղղամտութիւնը և աղնութիւնը Հանդէպ Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցւոյ:

«Ամէն Հայու հարկ է գիտնալ նախ իր պագային Մայր Եկեղեցին: Այս անհրաժեշտ է ամէնուրեք, ըլլայ անդամ Հայաստանեայց Եկեղեցին, ըլլայ Հայ Կաթողիկոս կամ Հայ Աւետարանականացի, և Օղոմիսկ ըլլաւ անհաւատ կամ անկրօն:

Որովհետեւ Հայ պազը և Հայաստանեայց Եկեղեցին շատ դարերէ ի վեր իրարու միացած

ու նոյնացած են: Ապզը և Եկեղեցի՞ն իրարու հոմանիշ դարձած են, մանաւանդ իր պետութիւնը կորսնցնելէ վերջը: Եկեղեցի՞ն իբր կեդրոն՝ պաշտպանող և առաջնորդող միջոց և կենսատու աղբիւր մը եղած է թէ՛ հոգեւորապէս և թէ՛ քաղաքականապէս:

«Հետեւաբար, Հայ Աւետարանական Եկեղեցի՞ն գերագոյն պարտականութիւններէն մին է պրպտել և գիտնալ Հայ Մայր Եկեղեցի՞ն հոգեւոր արժէքները, վերակենդանացնել, իւրացնել և վաճառել մշտաբարձ պահել ընդհանուր Հայ Ապգի օգտին համար, իբր ամոր օրինաւոր ժառանգորդը» (Վեր. Կ. Ատլն., «Յուլարձան», էջ 6):

Հոս կատարուած վկայութիւնները և Վեր. կարապետ Ատանալեանի կորովի արտայայտութիւնները բաւ են ինքնին որ երուանդ Քասունի ընդմիշտ վերջ դնէ իր անիրաւոտնձգութեանը ընդդէմ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ: Ան նաեւ ընդմիշտ պէտք է կասեցնէ «Հայաստանեայց» անունը կցելէ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ անունին:

ՎՐԹԱՆԷՍ ՁԸՐԹԸԼԵԱՆ (ԵԶՆԱԿԵԱՆ)

Երուանդ Քասունի «Ձանասէր» թերթի նոյն թիւին մէջ, ընդարձակ տեղ յատկացուցած է Հաւատաւորիս դարձած այս նախկին Հայ քաւահային մասին:

Ան դրուատալից բառերով փառաբանած է զինք, նաեւ լման գիրք մը լոյս ընծայած է իր մասին: Այս գրքին մէջ Երուանդ Քասունի գովասանական յաւալ բառերով պանծացուցած է զինք:

Գիրքը լեցուն է սակայն սլատմական անճշդութիւններով և աններելի խեղաթիւրումներով:

Վրթանէս Ձըրթըլեան (Եզնակեան) Հայ Եկեղեցւոյ քաւահայ մըն էր: Ան եղաւ առաջիններէն որ Հեռացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւններէն և սրբութիւններէն և յարեցաւ բողոքականութեան:

Բողոքական միսիոնարներ զրկաբաց ընդունեցին և մեծ պատիւներով մեծաբեցին զինք:

Հայոց ժամանակակից Պատրիարք՝ Մատթէոս Սրբաղան ամէն ճիգ ի գործ դրաւ տարհանողելու Վրթանէս քաւահային, որ վերադառնայ Հայ Եկեղեցւոյ գիրկը:

Վրթանէս Ձըրթըլեան (Եզնակեան) կուգայ Հայոց Պատրիարքարան և Հանդիպում կ'ունենայ Մատթէոս Պատրիարք Սրբաղանի Հետ: Այս Հանդիպումի ընթացքին՝ Վրթանէս, արդարա-

ցընել կը փորձէ իր դաւանափոխութիւնը: Ան նոյնիսկ Հաւարձակութիւնը կ'ունենայ անարգելու Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու սրբութիւնները: Ան նաեւ լրբարար «Լկտի կի՞ն» կ'անուանէ Ս. Մարիամ Աստուածածինը և «ատաղծավաճառի ապրանք» կը կոչէ Յիսուս Քրիստոսի խաչը:

Այս Հայհոյութիւնները լսելէ ետք, սաստիկ կը զայրանայ պատրիարքական փոխանորդ՝ Տ. Թաղէոս վարդապետ և դուրս կը սլանայ փայտ մը կամ երկաթ մը բերելու և քաւահային լուծար սրբապիղծ Հայհոյի՝ Վրթանէս Ձըրթըլեանի գանկը:

Հայոց Պատրիարք Մատթէոս Սրբաղան կը կեցնէ և կը Հանդարտեցնէ Թաղէոս Հայր Սուրբը:

Այս միջադէպը կ'ըլլայ պատճառ որ Հայոց Պատրիարքը մասնաւոր կոնդակով մը փիլոնաղուրկ Հոչակէ Վրթանէս Ձըրթըլեանը: Այդ կոնդակը կ'ընթերցուի բոլոր Հայ Եկեղեցիներու մէջ:

ԹԻՂՈՆԱԶՐԿՄԱՆ ՊԱՏԺԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

Այս միջադէպը իմացողներ բոլորը կ'արգարացնեն Հայոց Պատրիարք Սրբաղանը և կը մեղադրեն Հայհոյի:

Վրթանէս Ձըրթըլեանի (Եզնակեան) Ս. Մարիամ Աստուածածինի դէմ կատարած «լկտի կի՞ն» Հայհոյութիւնը՝ կ'ընդլգեցնէ նոյնիսկ Թուրքիոյ կրօնից նախարար՝ Ռէշիտ Պէլը. որովհետեւ իսլամներու Գուրանին մէջ յարգանքով յիշուած է Ս. Մարիամ Աստուածածինի անունը:

Պողոս Առաքեալ իր Գաղատացւոց գրած թուղթին մէջ կ'ըսէ Հետեւեալը. «Քաւ լիցի ինձ պարծիլ, բայց միայն ի խալն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Պողոս Առաքեալի այս խօսքը կը Հաստատուէ ինքնին որ Վրթանէս Ձըրթըլեանի Քրիստոսի խաչի նկատմամբ կատարած սրբապիղծ Հայհոյութիւնը՝ աններելի մեղք պէտք է նկատուի, նոյնիսկ «Աւետարանականներուն» Համար:

Ամերիկացի Եպիսկոպոսականներուն կողմէ Պոլիս զրկուած միսիոնար՝ Զօրէշի Սաուրկլիթ, երբ կ'իմանայ Հայոց Պատրիարքի կողմէ Հայհոյի դէմ գործադրուած պատժամիջոցը, կ'արգարացնէ զինք և «յամաւ Քրիստիկոսներ» կ'անուանէ բողոքականութեան յառաձ «Աւետարանական ըսուած Հայերը»:

Գտնուեցան սակայն երկու բացառութիւն-

ներ, որոնք չմեղադրեցին Վրթանէս Զրթըրլեան (Եղնակեանը), այլ ընդհակառակը, սլանձացուցին դիմը: Այս երկուքն ալ վերստին ստուգուեցին և Բասունիներ:

Առաջինը՝ Վեր. Եղիա Բասունի, չուրջ ութսուն տարիներ լուծելով պաշտօնական և վրթանէս Զրթըրլեանը և խստորէն քննադատած է Հայոց Պատրիարք Մատթէոս Սրբազանը: Ան պախարակած է նաեւ Եպիսկոպոսական միսիոնար՝ Զօրէշո Սաուլթէյթը:

Իսկ երկրորդը՝ Երուանդ Բասունի, պանծացուցած է Վրթանէս Զրթըրլեան Եղնակեանը և մեղադրած է Հայոց Պատրիարք Մատթէոս Սրբազանը:

Մեր Հոս ներկայացուցած վկայութիւնները կը Հերքեն ինքնին Բասունիներու. կատարած բոլոր անճիշդ վերագրումները:

ՎՐԹԱՆԷՍ ԶՐԹՐԼԵԱՆ ԵՂՆԱԿԵԱՆԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

Հակառակ Վրթանէս Զրթըրլեան Եղնակեանի բողոքականութեան Հանգէպ կատարած սրտեռանդն նուիրումին և ծառայութիւններուն՝ Միսիոնարական Ռորհուրդը ոչ մէկ պաշտօն չնորհեց իրեն. ընդհակառակը՝ ժամանակ մը ետք անոնք անգոսնեցին և ափունք քշեցին դիմը:

Արգիլեցին նոյնիսկ իր Աւետարան քարոզելը:

Իր կատարած խնդրանքներն ու բողոքները մնացին առանց արդիւնքի:

Ըսուեցաւ. իրեն, որ Միսիոնարական Ռորհուրդը Ազգային Եկեղեցիէն (այսինքն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիէն) Հեռացող Հոգեւորականները կը մերժէ և պաշտօնանկ կը կոչէ դիրհը:

Մեծ կ'ըլլայ յուսախարութիւնն ու վիշտը Հէջ Վրթանէս Զրթըրլեան Ազնիկեանի:

Ան կը վերածուի ողորմելի արարածի մը:

«...Ա՛հ, կ'ըսէ ան, Միսիոնարներու Ռորհուրդը սրտիս վրայ բացաւ. վէրք մը, որ չատ աւելի կսկծեցուցի է և խոր, քան այն՝ որ իմ ազգէս ընդունեցի...»:

Իր խոր ծերութեան և մահուան նախօրեակին, ան կ'ըսէ՝ Հետեւեալը. «...Վա՛յ, ա՛յս էր ինձի պատանջիլը»:

Վրթանէս Զրթըրլեան Եղնակեանի Բողոքականութենէ կամ Աւետարանականութենէ արտարսման և Աւետարանը քարոզելու արգիլման այս տխուր դրուագի շուրջ զոյգ Բասունիները կեղծաւոր լուծութիւն մը պահեցին և տող մը անգամ չգրեցին այդ մասին:

Ապացուցիր՝ Երուանդ Բասունիի ընթացքն է: Ան քաջ գիտեալով Վրթանէս Եղնակեան Զրթըրլեանի բողոքականութենէ անփառունակ արտարսումը, «Ջանասէր» թերթի մէջ՝ փառաբանութիւնը ըրած է անոր: Ան նաեւ, ներբողական լրիւ գիրք մը Հրատարակած է իր մասին:

Այս իրադարձութիւնները կը Հաստատեն կարեւոր ճշմարտութիւն մը՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ ճշմարիտ դաւանութիւնն է այդ:

ԱՅՆ ԱՆՃՇԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՌԵՂԱԹԻՒՐՈՒՄՆԵՐ

Երուանդ Բասունի՝ Վրթանէս Զրթըրլեան, Եղնակեանի մասին իր պատրաստած գրքին մէջ զետեղած է նաեւ չարք մը տեսութիւններ և նիւթեր, որոնք ոչ մէկ առնչութիւն ունին Վրթանէս Զրթըրլեան Եղնակեանի անձին և գործին հետ:

Իր այդ նիւթերը և տեսութիւնները կը վիստան անճշդութիւններով և խեղաթիւրումներով:

Մեզի Համար զուտ ժամանակի վատնում պիտի ըլլայ մէկ առ մէկ անդրադառնալ այդ անճշդութիւններու մասին: Պիտի անդրադառնանք միայն իր երկու տեսութեանց մասին:

Մեզի զարմացուց յատկապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ մասին իր գրած անճիշդ և ծիճաղելիօրէն անիմաստ «տեսութիւնը»:

Իր այդ տեսութեան մէջ, Երուանդ Բասունի կը գրէ որ իբրեւ թէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ «Յոյն Եկեղեցիի դուստրը եղած է»: Ան կը գրէ նաեւ, որ իբրեւ թէ «Հայաստանեայց Եկեղեցին ծնած է Յոյն Եկեղեցիի ծոցին մէջ»:

Այս արտայայտութիւնները յերիւսանքներն են պարզապէս՝ Երուանդ Բասունիի մտացածին ուղեղին:

Մեր մեծանուն պատմագէտ գիտնական՝ պրոֆեսոր Ստեփան Մայիսեանը, անհերքելի ապացոյցներով Հաստատած է որ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին Հիմնուած է 279 թուին: Այդ թուին է, որ Հայ ժողովուրդը ազգովին քրիստոնէութիւնը ընդունած է որպէս պետական կրօնը, ձեռամբ Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Այդ թուին է՝ որ կառուցուած է նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Կ'ապացուցանէ այս, որ Հայաստանեայց Եկեղեցին գոյութիւն ունեցած է Յոյն Եկեղեցիի

կազմութենէն լսողութեան 35 տարիներ առաջ: Պարզ թող ըլլայ այս՝ երուանդ Քասունի կոչեցեսլին՝ որ Հայաստանեայց Եկեղեցին չէ ծնած ոչ մէկ այլ եկեղեցւոյ «ծոցին մէջ», և «դուստրն» ալ չէ ոչ մէկ այլ եկեղեցի:

«ՊԱՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ»

Երուանդ Քասունի թէ՛ իր «Ջանասէր» թերթին մէջ և թէ՛ սլ իր վերոյիշեալ գրքին մէջ, քանիցս արտայայտուած է Հոռվմէական կաթողիկ եկեղեցւոյ մասին և «Պապական եկեղեցի» անուանած է դայն՝ անպատկառօքն:

Ան ըրած է այս՝ Հոռվմէական կաթողիկ եկեղեցին վարկարեկելու մտքով:

Հոռվմէական կաթողիկ եկեղեցին՝ Քրիստոնէական աշխարհի մեծագոյն եկեղեցին է, և երբեք ներելի չէ որ Հայ բողոքական մը, որպիսին է ինք, վարկարեկել Համարձակի Հոռվմէական Կաթողիկ եկեղեցի և սնորհովուպետ՝ Սրբապաճ Պապը:

«ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ»

Երուանդ Քասունի Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւասութիւններէն ներս կատարած ոտնձգութիւնները և պատմական խեղաթիւրումները պատճառ Հանդիսացան որ ես վերոյիշեմ Արեւմտահայ Գրականութեան անգղեզական վիպասան՝ Երուսանի (Երուանդ Սրմաբէշխանեան) գրած մէկ վիպակը:

Վերոյիշեալ վիպակը՝ «Յաջողութեան Գաղտնիքը», Հայ մեծանուն նահատակ գրագէտ՝ Երուսան, գրած է 1901 թուին, Պուլկարիոյ Վառնա քաղաքին մէջ:

Այս վիպակին Հերոսն է Մարտիրոս անուն Հայ բողոքական պատուելի մը: Վիպակին մէջ յիշուած է որ Մարտիրոս Պատուելի արտասովոր տղէտ մըն էր:

Ան Հազիւ թէ «Հասարակ ընթերցում» մը կատարելու կարողութիւն ունէր:

Պատճառը որ Ամերիկեան Բողոքականութեան Միսիոնարական Որհուրդը պատուելիութեան նման կարեւոր պաշտօն մը ընծայած էր իրեն, իր ունեցած անսովոր և վիթխարի պիւսերն էին:

Ահաւասիկ նկարագրութիւնը Պատուելի Մարտիրոսի անձին և իր նշանաւոր պիւսին՝ այնպէս, ինչպէս որ ներկայացուցած է Երուսան իր վիպակին մէջ:

«Հակառակ տարիներու խոշոր անջրպետով մը բաժնուած ըլլալուս իրմէ, Մարտիրոս պատուելին տակաւին մինչեւ Հիմակ աչքիս առջեւն է իր մարմնեղ կազմութեամբովը, դուրս պոռթկացող այտերով բռնաւոր իր դէմքովը, եզան խաղաղ ու Հեղ աշուրներովը, բայց մանաւանդ թաւաստել, խոտային, բարբարոս պիւսերովը, որոնք ոչ միայն ամբողջ բերանը կը

երուանդ Քասունի, Հայ Աւետարանական (Բողոքական) եկեղեցւոյ վերապատուել մըն է՝ Հոգեւորական մը:

Ապեցողիչ է և դարմանայի, որ Համբաւի տիրացած ուսումնական ըլլալով՝ ան թոյլ տուած է ինքզինքին, կատարել մեր թուած պատմական աններելի խեղաթիւրումները և անիրաւ ոտնձգութիւնները՝ ընդդէմ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Երուանդ Քասունի և իր Համախոհներուն վերոյիշեալ ընթացքն ու արարքները կը յիշեցնեն ինծի Սիւնեաց Աշխարհի մեր մեծանուն պատմիչ՝ Ստեփանոս Օրբելեանի ստպատմական խօսքը:

«Յամենայն ժամ ուսանից և ի լոյս

Աստուածգիտութեան ոչ հասանից»:

(Ամէն ժամ կ'ուսանին, բայց Աստուածգիտութեան լոյսին իրբեր չեն Հասնիր):

Ծածկէին, այլև իրենց խիստ ծիւրովն ու ճիւղերովը ոնգունքները խցելէ յետոյ, քթին սահմանները կը թեւակոխէին, մէկ կողմէ դէպի աչքերը արշաւելու ճիգով մը, միւս կողմէ այտուոցներէն դէպի ականջները խոյանալու յանդգնութեամբ մը: Մարմինն ամենէն յատկանշական մասը անտարակոյս պիւսն էր, ու մագի այդ Հրարխային ժայթքումը դէմքէն դուրս, տեսակ մը խորհրդաւորութիւն և պատկառելիութիւն կուտար Մարտիրոս աղային, որ իր մատուրներուն պերելութիւն ու փայփայիչ չօղափումներովը արդէն յայտնօրէն ցոյց կուտար, թէ իր էութիւնը Հիմնաւորուած էր գլխաւորապէս այդ վիթխարի պիւսերուն վրայ: Առանց ատոնց, կը մտածէի ես ամէն անգամ, որ անոնք նայուածքս խոշտանգէին, այդ մարդը ծաղրելի բան մը պիտի ըլլար, կարգ մը էականորէ մերկութեանը պէս արգասատելի ու զաւեշտական բան մը, Համարժէք ֆիզիքական բացարձակ սնանկութեան: Իրաւ է, թէ ամէն անգամ նաեւ, որ այդ մարդը տեսնելու և անոր Հետ խօսելու դժբախտ առիթը ներկայանար, կատաղի փափագը կ'ունենայի քաշելու, փեթտելու այդ զորհուրելի պիւսերը, զորս անմարդկային կը գտնէի»:

«Եւ որովհետեւ, սակայն, մարդը բողոքական պատուելի մըն էր, թէեւ շատ երկրորդական տեսակէն, այդ պիւսերը բնատուր, աստուածատուր զարդ մըն էին իրեն Համար, և ինծի կուգար, որ անոնք, երբ ժողովարանին մէջ իր թաւ և ընգային ձայնովը աղօթք կը կարդար, դերը կը կատարէին այն ոսկեհամուկ շուրջառին, զոր մեր պատարագաւոր եպիսկոպոսները կը Հագնէին պատարագաւորութեամբ:

«Առանց այդ Հաղուագիւտ պիտիին, Մարտիրոս պիտի չկարենար Պատուելի դառնալ և դրամ չահլի: Ան մեր գիւղի բողոքական Հայերու պատուելիներ», կը գրէ Երուսան:

«Կիրակի օրեր, երբեմն, իրիկուան եւ ալ կը մտնէի ժողովարանէն ներս ու կ'սպասէի, որ կարգը մեր պատուելիին գար աղօթելու: Ձէր ուշանար: Սեւ որդենկոտով մը կը կենար դասին մէջտեղը և կ'սկսէր աղօթել կոկորդային միօրինակ աղմուկով մը, որուն մէջ բառերը կը հալէին և իրարու կը խառնուէին: Աղօթած միջոցին աշուրները կը գոցէր: Պիսերը թեթեւօրէն կը շարժէին: Հաւատացեալները երեսներին ծածկած՝ կը խոնարհէին այդ պատկանելի աղօթասացին առջև: Ամենէն աւելի այդ պահերուն է, որ պիսերուն բովանդակ անհեթեթութիւնը կ'անջատուէր աչքիս: Կ'ափսոսայի այն խեղճներուն վրայ, որ արգահատելիօրէն խոնարհած էին ո՛չ թէ մարդու մը, այլ այդքան վիթխարի պիսերու առջև: Այդ Հանդիսաւոր վայրկեանին յիմար մտածումներ կ'ունենայի: Կ'ուզէի պոռալ այդ անգիտակից երկրպագուներուն՝ իրենց վարմունքին բոլոր ծաղրելիութիւնը, բեմը ցատկել և ըռնելով այդ պիսերէն՝ զանոնք ցոյց տալ Հաւատացեալ ժողովրդեան, երեսան Հանելով գործին գաղտնիքը: Բայց կամաց մը կ'առնէի կը քայլէի՝ չուզելով զայլմակղութիւն մը պատճառել»:

Երուսան կը նկարագրէ ետքէն, թէ ինչպէս 1896 թուին Պոլսոյ մէջ տեղի կ'ունենան սուլթանական ջարդերն ու կողոպուտները, որոնց Հետեւանքով ալ շատ մը Հայեր կը Հեռանան Պոլսէն: Ահաւասիկ Երուսանի կողմէ գրուած նկարագրականը այդ դէպքերուն.

Բայց ահա եկաւ Հասաւ 96-ի ուրազանը: Ամէն բան տակնուվրայ եղաւ Պոլսոյ մէջ: «Կըրցողը թող փախչի»-ի ահազանգը Հնչեց ամէն կողմ: Փախան: Փախանք: Ոմանք օրեր ու ամիսներ յետոյ զիրար գտան, դիպումով, արտասահմանի անհուն տարածութեանը վրայ: Իսկ շատեր յաւէտ կորսնցուցին՝ զիրար: Ես այն Հաղուագիւտ բախտաւորներէն մէկը եղայ, որոնք դուրսը գտան իրենց սրտին սիրածը կամ մտքին փնտրածը: Արդարեւ, Պուկարիոյ Վ... քաղաքին մէջ 96-ի վերջերը, օր մը յանկարծ Հանդիպեցայ Մարտիրոս պատուելիին: Աղմկալից բրբիջ մը բարձրացուցի: Մարդը չփոթուած երեսս կը նայէր:

— Մարտիրոս աղայ, ի՞նչ լուր, դո՞ւն ալ փախար,— Հարցուցի:

— Մարդ մնա՞ց, որ չփախչի,— ըսաւ՝ իր պիսերու մացառուտին վրայէն թօթուելով ձիւնին փաթիլները, որ Հեշտօրէն կը Հանգչէին Հոն:

— Է՛, գո՞րծ,— Հարցուցի:

— Նորէն առջի գործս, երբեմն ալ մօտակայ գիւղեր կ'նրթամ Սուրբ Գիրք ծախելու:

— Ըսել է Կիրակի օրերը նորէն ժողովարանը...

— Հա՛րկաւ,— պատասխանեց:

Եւ ձիւնին տակ, որ Հարսի պէս կ'իջնար, պատմեց ինծի, թէ Պոլսի տուն-տեղը թալլած էին, ու ինք Հաղու ընտանիքովը կրցած էր Պուկարիա փախչի:

Մարտիրոս Պատուելի կը շարունակէ ըսել.

— Փա՛ռք Տիրոջը,— վերջացուց թօթուելով նորէն պիսերը, որ ահագին քանակութեամբ ձիւն կ'ամբարէին իրենց թեւերուն վրայ մէկ բոպէի մէջ: Եւ Հեռացաւ գնաց երջանիկ մարդու քայլածքով:

«Ու մտածեցի: Վայրենիներ կողոպտած էին ինչպէս զիս, այդ խեղճ մարդն ալ, սա տարրերութեամբ, որ ինչքան ալ անգութ, երբեք չէին մտածած անոր յաջողութեան գաղտնիքը և ապրուստին միակ միջոցը՝ պիսերը, անոր ձեռքէն խլել առնել. մարդուն Հո՞գն էր. պիսերովը փախած էր ան: Ե՞ս ինչովս փախած էի, Աստուած իմ, ենթակայ ամէն տեսակ ձախողութեանց ու դժբախտութեանց: Եւ առաջին անգամ ըլլալով՝ խոշոր ու պատկանելի պիսի մը կարօտն զգացի:

Երուսան կը նկարագրէ որ քանի մը տարիներ ետք, Վառնայէն ցամաքային ճամբորդութիւն մը կը կատարէ և իրիկունը փոթորիկի պատճառով կը ստիպուի մնալ գիւղի մը յետամնաց մէկ պանդոկը:

Կը մտնէ ան պանդոկի փցուն և աղտոտ ճաշարանը, չըջապատուած պուկար և յոյն գիւղացիներով:

Հետոյն չի մը օդի կ'ապսպրէ ան, պանդոկին տէրը թուող անձէն: Երուսան կը շարունակէ.

«Մարդը ահապարեց պատուէրս կատարել: Ու քիչ յետոյ աղտոտ ափսէի մը վրայ՝ բացառիկ պատիւ քաղաքացիի Հանգամանքիս ընծայուած, նպարավաճառը առջեւս կը դնէր չի մը օդի, պանիր և ապուխտի քանի մը շերտեր: Տիրող փոթորիկէն սրտնեղած, չէի մղուէր շուրջս գտնուողները դիտել ու ինքնամփոփ սկսայ կոնծել: Պահ մը ետքը, զարմանքով տեսայ, որ սպասարկուս փոքր սանի մը մէջ եղող եփուած Հակիթ մը Հրամցուց ինծի: Այս անգամ քնա-

կանարար աւելի ուշադրութեամբ նայեցայ իրեն և շնորհակալութիւն յայտնեցի: Յիսնամեայ մարդ մըն էր, նիհար, աղերեկ ցանցառ պիւսերով ու խոշոր, վշտահար աչուրներով:

«Ինչ եղաւ դարմանքս, երբոր յոյն կամ պուկար կարծած այդ մարդս խօսքը ինծի ուղղելով, ըսաւ:

«— Պարոն Երուանդ, կարծես դիւ չճանչցար:

«— Դո՛ւք,— ըսի ապուշի պէս երեսն ի վեր նայելով:

«— Մարտիրոս պատուելին, վաղեմի ծանօթդ:

«Ձէի կրնար բառ գտնել նկարագրելու Համար դարմանքս և շփոթութիւնս: Պատուելին, սա ահաւոր պիւսերով մեր երանելի պատուելին, Պալքաններու Հեռաւոր մէկ գիւղին աղտոտ ու զարչահոտ կապելային մէջ, նիհարցած, և մանաւանդ, բայց մանաւանդ մերկացած իր պատմական, իր հսկայական պիւսերէն, որոնցմէ մէկ քանի թել-խլեակներ կը մնային ողորձիօրէն կախուած վերին շրթներէն:

«— Բայց... Ի՞նչ եղաւ, ի՞նչպէս եղաւ, որ Հոս ես, պատուելիութիւնը, ժողովարարը, Հապա... պիւսերդ, ի՞նչ եղան պիւսերդ, Մարտիրոս աղայ, ան փառաւոր պիւսերդ:

«Մարտիրոս աղայ մեքենարար ձեռքը պիւսերուն տարաւ և լալագին ձայնով մը՝

«— Թափեցան, թափեցան,— ողբաց:

«Եւ ա՛յ դէմս նստաւ: Հառաչեց: Օղիէս Հատ մը լեցուց, խմեց ու սրբելէ յետոյ իր աւերակ պիւսը, ըսաւ տրտմալի եղանակով մը.

«— Երկու տարի առաջ, չեմ գիտեր ինչո՛ւ, պիւսերս թափիլ սկսան. օր եղաւ որ Հարիւր թելը մէկտեղ ինկան: Դեղ, բժիշկ մէկ փարայ չըրաւ, ավուճով դրամ ծախսեցի: Թափեցան, թափեցան շարունակ. ջղային եղայ, Հիւրնղցայ. կը վախնայի ձեռքերս պիւսերու տանելու. նիհարցայ, գիշերը սկսայ չքնանալ. ժողովարարն աղօթած միջոցիս, ժողովուրդը սկսաւ խնդալ վրաս, փողոցէն անցած ատենս, չարաճճի տղաքները «պատուելիին պըլընները կը թափին կոր» կը պոռային. դուրս ելլել չէի ուզեր, չկրցայ գործս շարունակել: Պորտ ընկերու-

թեան ներկայացուցիչն այ կամաց մը Հասկցուց, որ պիւսերուս այդ վիճակին մէջ չէի կրնար պաշտօնս շարունակել. ուզած-չուզած Հրաժարեցայ: Անօթի օրեր անցուցի: Սուլթան Համիտը տունս-տեղս կողոպտեց, Հոգս չեղաւ. պիւսերս թափեցան՝ տունս կործանեցաւ: Ի՞նչ ընէի, դուռնէ դուռ, լեռնէ լեռ ինկայ, և վերջապէս Հոս Հասայ. քանի մը բարի մարդիկ գթացին վրաս. կինս, զաւակներս անդին մնացին ու չեմ գիտեր, թէ ինչ եղան, ու ես Հոս կ'աշխատիմ գիշեր-ցերեկ ապրուստի մը փոխարէն...

«Պատուելին գլուխը ծոցեց, ու տեսայ, որ քանի մը խոշոր արցունքներ թաւալեցան ինկան իր այտերուն ու շրթունքներուն վրայ, Հոն, ուր ժամանակին աշխարհիս ամենէն փառաւոր պիւսերը կը Հանգչէին»...

✱

Երուխանի այս վիպակը որոշ յապաւումներով ներկայացուցիւք այստեղ քանի մը կաւերուր պատճառներով.

Առաջինը և ամենէն կարեւորը ցոյց տալ է Երուխանի գրական-գեղարուեստական այն բացառիկ տաղանդը, որով ամենէն պարզ դէպքերն ու նիւթերը անգամ ան կը ներկայացնէր այնպիսի արուեստով և ճաշակով, որ ընթերցողները կը Հմայուէին:

Երկրորդը՝ մատնանշել է որ Ամերիկեան Բողոքական Միսիոնարներ, իրենք է որ կը Հովանաւորէին, կը Հոգային և կը ղեկավարէին Հայ Բողոքական (Աւետարանական) Համայնքները, ժողովարանները և պատուելիները՝ ըստ կամս, այնպէս ինչպէս կը կամենային, նոյնիսկ՝ Հայ Բողոքականութեան (Բրթթէսթան Միլլէթի) Հիմնուելէն վաթսուն-եօթանասուն տարիներ ետք:

Եւ վերջապէս, ասոնք կարեւոր պատճառներ են որ Երուանդ Քասունի և իր Համախոհները ընդմիշտ կասեցնեն իրենց ոտնձգութիւնները Հայաստանեայց Եկեղեցւոյ իրաւասութիւններէն՝ և Հայ Հաւատացեալ ժողովուրդէն ներս:

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

ԱՆՍՈՎՈՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1877ին շինուած այս աստիճանը, որ բազմահազար այցելուներ եւ ուխտաւորներ հրապուրած է, կը գտնուի Նիւ Մեքսիքո նահանգի, Սանթա Ֆե ֆաղաբը: Սակայն ի՞նչ կայ այնքան հրապուրիչ այս սովորական փայտէ շինուած աստիճանին մասին, որ փոքր եկեղեցւոյ մը վերնատունը կ'առաջնորդէ զայն գործածողները:

Անսովորը այն է, որ աստիճանը 20 ոտի իր բարձրութեան մէջ, օդին մէջ երկու անգամ ինքն իր վրայ՝ 360 աստիճան դարձած է առանց որեւէ կեդրոնական սիւնի, զարմանք պատճառելով մերօրեայ բոլոր ճարտարապետներուն, վարպետ ատաղձագործներուն, շինարարներուն եւ գիտնականներուն:

Ո՞վ կառուցած է այս հրաշալի աստիճանը:

Ահաւասիկ պատմութիւնը:

1848ին, երբ Նիւ Մեքսիքո նահանգը մաս կազմեց Ամերիկայի Միացեալ Նահանգներուն, Սանթա Ֆե ֆաղաբը բազմամշակոյթ բնակչութիւն ունէր: Ամերիկացի հնդիկներ, սպանացիներ, մեքսիկացիներ եւ անկլօ սախոններ, տարբեր գունաւորում մը կու տային սա փոքր ֆաղաբին իրենց սովորութեամբ ու կենցաղով:

Այս ժամանակամիջոցին մէջ էր, որ շրջանի հովուապետութիւնը կը ստանձնէր ժան Պարթիսք Լամի Եպիսկոպոսը, որուն առաջնորդարանը կը գտնուէր Օհայօ նահանգի Սինսինատի ֆաղաբը:

Ան հարկը զգալով Քրիստոնէական ճշմարիտ Լոյսը տարածելու խաւարամիտ մարդոց՝ նամակներ գրեց իր հոգեւոր եղբայրներուն եւ բոյրերուն, որպէս զի փութան Նիւ Մեքսիքո նահանգը եւ լծուին կրօնադաստիարակ-

չական հոգեւոր աշխատանքի: Իր խնդրանքին առաջին պատասխանը եկաւ Քէնթաքի նահանգի Լօրէքքօ Քոյրերէն: 1852ին եօթ բոյրեր, նամբորդութեան տաժանելի եւ դժուարին պայմանները յաղթահարելու կամով, նամբայ կ'ելլեն դէպի Սանթա Ֆե ֆաղաբը:

1853ին, անոնք կը հիմնեն աղջկանց վարժարան մը եւ կ'ունենան 300 աշակերտներ: Լամի Եպիսկոպոսը, որ մեծապէս սատար կը հանդիսանար մայրապետներու նուիրական աշխատանքին, կ'որոշէ փոքր եկեղեցի մը կառուցել վարժարանի կողքին, յար եւ նման Փարիզի *Sainte Chapelle* տաճարին, որ հրապուրած էր Եպիսկոպոսը իր տղայական օրերուն:

Ան Սանթա Ֆե կը հրաւիրէ տաճարի ճարտարապետը՝ Անթուան Մուլին եւ իր որդին, որ նոյնպէս կը կրէր իր հօր անունը:

Այն օրերուն Լօրէքքօ Քոյրերը, կը կարողանան 30,000 տոլար հանգանակել այս մատուռի կառուցման համար:

Կոթիկ ճարտարապետութեամբ այս մատուռը՝ ունի 100 ոտի երկարութիւն, 26 ոտի լայնութիւն եւ 69.8 ոտի բարձրութիւն: Շինարարութիւնը տեւած է հինգ տարի: Մուլի ճարտարապետը Ֆրանսայէն բերել տուած է վարպետ շինարարներ, որոնք կարողացած են Փարիզի տաճարի կրկնօրինակը կառուցել Սանթա Ֆե ֆաղաբին մէջ:

Կը պատմուի, թէ շինարարութեան ընթացքին Մուլին որ յառաջացած տարիք ունէր, տեսողութեան դժուարութեան պատճառաւ վերջին երկու տարին գործը յանձնած էր իր երիտասարդ տղուն ու մեկնած Ֆրանսա:

Մատուռը վերջապէս կը կառուցուի առանց վերնատուն առաջնորդող աստիճաններու, ինչպէս այն օրերուն սովորական էր եւրոպայի մէջ, որովհետեւ մեծ բաժին պիտի առնէր՝ հաւատացեալներուն սահմանուած աղօթատեղիէն: Յետոյ... 1800ական թուականներուն եւրոպայի մէջ իգական սեռին արտօնուած չէր անգամ՝ մաս կազմելու երգչախումբերուն: Ուստի մարդիկ՝ որպէս երգչախումբի անդամներ, փայտեայ աստիճանով դիրութեամբ կարող էին վերնատուն բարձրանալ եւ Ս. Պատարագը կամ այլ արարողութիւններ երգել վերնատունէն:

Լօրէքթօ Քոյրերուն եւ մանաւանդ վարժարանի աշակերտուհիներուն համար, մեծ անպատեհութիւն ու դժուարութիւն մը ստեղծուեցաւ, երբ անոնք հարկը կը զգային իրենց երկա՛ր զգեստներով 20 ոտք փայտեայ աստիճանի մը վրայ վերնատուն բարձրանալու:

Մայրապետներուն համար անհասկնալի էր, աստիճանի մը չգոյութիւնը:

Այս պատճառաւ ալ, քանի մը տարբերակներ կային այդ օրերուն, որ խորապէս կը չարչրկէին քոյրերը: Արդեօք նարտարապետը հարկը չզգա՞ց աստիճան մը կառուցանելու: Արդեօք մոռցուեցա՞ւ երբ գլխաւոր նարտարապետը անհանգստութեան մը պատճառաւ վերադարձաւ Ֆրանսա: Կամ արդեօ՞ք կրտսեր Մուլին որ գինեմով մըն էր, երբ հիւանդացաւ ու մեռաւ, ոչինչ յայտնած էր իր գործընկերներուն:

Ուրեմն ի՞նչ ընել:

Շինարարութիւնը հասած էր իր աւարտին: Նկատի ունենալով որ սովորական աստիճանի մը կառուցումը բաւական մեծ տեղ պիտի խլէր մատուռէն, Լօրէնքթօյի հաւատացեալ քոյրերը,

որոշեցին դիմել երկնային միջամտութեան: Անոնք որոշեցին իննը օր ծով պահել ու աղօթել Հայր Յովսէփին, որ կը նկատուի հովանաւոր սուրբը ատաղձագործներուն եւ շինարարներուն:

Հաւատացեալ մայրապետներուն համար անպայման պատասխան մը պէ՛տք էր որ ըլլար:

Եւ պատասխանը չուշացաւ:

Ծովապահուքեան եւ աղօթքի իններորդ օրը, մինչ Լօրէքթօյի Քոյրերը կ'աղօթէին մատուռին մէջ, ներմակամօրուս չափահաս մարդ մը Քոյրերուն վարժարանը գալով, կ'առաջարկէր, իրենց փափաքած աստիճանը կառուցել: Մեծաւորը անմիջապէս գործի կ'ընդունի զայն:

Այն օրերուն ամօք կը սեպուէր իգական սեռին, յատկապէս քոյրերուն կամ վարժարանի աղջիկներուն համար, խօսքի բռնուիլ յատկապէս արական սեռին հետ:

Կարելոր է նաեւ նշել, թէ այն օրերուն մասնակի վճարումներու սովորութիւն իսկ չկար: Արհեստաւորը հարկ էր որ նախ գործը վերջացնէր եւ ապա պահանջած գումարը ստանար: Ուստի Լօրէքթօ Քոյրերուն տոմարին մէջ, ո՛չ մէկ արձանագրութիւն գոյութիւն ունի վճարումի համաձայնութեան մասին, այլ միայն յիշատակութիւն կայ թէ չափահաս մարդ մը, աւանակի մը հետ եկած էր աստիճան մը կառուցանելու:

Մարդուն ձեռքին մէջ նշմարուած են մուրճ մը, սղոց մը եւ ատաղձագործներու յատուկ գծաֆաշ մը:

Անձանօր ատաղձագործը միայն խնդրած էր, որ ո՛չ ոք չխանգարէր իր աշխատանքը՝ մինչեւ գործին աւարտը:

Մայրապետները սիրով կատարած են անոր խնդրանքը:

Վերջապէս աստիճանը շինուած

է վեց ամսուայ ընթացքին:

Երեսուներեք հաւասար փայտի կտորներ կը լրացնեն աստիճանին բարձրութիւնը՝ դէպի վերնատուն, երկու անգամ ինքն իր վրայ դառնալով օդին մէջ, առանց կեղրոնական սիւնի: Հետաքրքրականը այն է սակայն, որ ատաղձագործը, ոչ մէկ գամ գործածած է եւ ոչ ալ խէժ:

Ամիսներ ետք... Քոյրերուն մեծաւորը՝ զգալով թէ ոչ մէկ ձայն կու գայ մատուռէն, ներս կը մտնայ, կը տեսնէ աստիճանը, որ շատ քիչ տեղ գրաւած է եկեղեցւոյ յատակագիծէն, եւ երբ կը փորձէ իր ուրախութիւնն ու գոհութիւնը յայտնել շինարարին... կ'անդրադառնայ որ ան մեկնած էր արդէն: Լօրէքքօ Քոյրերը ի գուր փնտռած են անձանօր վարպետ ատաղձագործը, զայն վարձատրելու յոյսով:

Շինարարը մեկնած էր առանց իսկ «մնաքարով» ըսելու կամ աշխատանքին վարձքը պահանջելու:

Հետաքրքրականն այն է սակայն, որ ո'չ ո'ք նշմարած էր թէ գործածուած փայտերը ինչպէ՞ս եւ ե՞րբ բերուած էին մատուռը: Հետագային ճարտարագէտներ ու վարպետ ատաղձագործներ, շինարարներ, գործածուած փայտին տեսակն իսկ չեն գտած Ամերիկայի Միացեալ Նահանգներու տարածքին, եւ ապշահար դիտած են օդին մէջ բարձրացող այս անսովոր աստիճանը, որուն տուած են հրաշակերտ աստիճան անունը: Հետագային՝ Լօրէքքօ Քոյրերը գեղեցիկ փայտեայ ցօղերով եզերած են աստիճանները, դիւրաւ կարենալ բարձրանալու համար:

Լօրէքքօ Քոյրերուն հիմնած վարժարանը փակուեցաւ 1968ին, երբ աշակերտներուն թիւը նօսրացաւ, պետական վարժարաններու ձրի ուսման պատճառաւ, իսկ հողատարածքը ծախուեցաւ

1971ին: Սակայն եկեղեցին, որպէս ուխտատեղի եւ պատմական քանգարան, բաց կը մնայ տարին 364 օր: Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Մնունդին օրն է միայն, որ կը փակուի:

Եկեղեցին այժմ կը գործածուի հոգեւոր եւ այլ պատշան երաժշտական հանդէսներու, ինչպէս նաեւ խորհրդակատարութիւններու համար, հարսանիք, ամուսնական ուխտերու վերահաստատում, քաղման կարգ, եւ այլն:

Բազմահազար այցելուներ, աշխարհի չորս ծագերէն ուխտի կու գան այս եկեղեցին եւ հիացմունքով կը դիտեն հրաշակերտ աստիճանը, որ ճշմարտապէս եւ ո'չ կարծեօք մեր Տէրը պատասխանած էր հաւատացեալ Լօրէքքօ Քոյրերուն աղօթքներուն եւ խնդրանքին եւ երկնային միջամտութեամբ Հայր Յովսէփ, կառուցած է այս անսովոր ու գեղեցիկ փայտեայ հրաշակերտ աստիճանը, որ կանգուն կը մնայ 130 տարիէ ի վեր:

Դժբախտաբար այսօր մարդիկ հեռացած են Աստուծէ, եկեղեցիէ, հաւատէ...: Հայ մարդը գիտէ՞ արդեօք իր Լուսաւորիչ Հայրապետին խօսքը, թէ «Հաւատի ճշմարտութիւնը լոյս է մտքի աչքերուն համար...» (Յանախապատում):

Ս. Գրիգոր Տաթեւացի կը գրէ. «Աստուած իշխանական հոգի տուած է մարդու եւ ծառայական մարմին»: Դժբախտաբար այսօր նիւթական աշխարհի ընձեռած այս մակերեսային երեւոյթները, աղօտած եւ աղարտած են մարդու հոգին: Այսօր շրջուած է Աստուծոյ պարգեւը, երբ մարմինը դարձած է իշխանական ու հոգին ծառայական:

Արանաս Աղեփսանդրացին մեզի կը յիշեցնէ... «Աստուծոյ ճանչնալու առաջին տեսակը ճշմարիտ հաւատքի դաւանութիւնն է» (Ս. Ա. Աղեփսանդրացի,

Յամենասուրբ երրորդութիւն): Իր կարգին, Հայ կղերը՝ եկեղեցւոյ Ս. Խորանէն ֆանիցս ֆարոգած է հաւատփ գորութեան մասին, ըսելով. «Եթէ մարդ մանանխի հատիկի մը չափ հաւատ ունենայ... կարող է լեռները շարժել»:

Այսօր տխուր պատկերը որ կը պարզուի մեր աչքերուն առջեւ, այն է... որ մենք՝ հոգեւորական թէ աշխարհական... առաջնորդ թէ անհատ, անտեղեակ կը մնանք մեր հոգեւոր հարուստ գրականութենէն, կամ մակերեսային երեւոյթով, բառացիօրէն կ'ըմբռնենք իմաստն անոնց: Որովհետեւ հեռացած ենք «Լոյսի շնորհէն», ճշմարիտ հաւատէն, մեր դաւանանքէն: Մեր Սուրբ Հայրապետներու հաստատած կանոնները, ոչ մէկ արժէք ունին

այսօր: Պահները, պէտք չէ խոչընդոտեն եղեր մեր օրերու նիւթական ակնկալիքները: Նիւթը՝ այնքան հրապուրիչ ու կախարհիչ եղած է՝ որ աղօթքը դարձուցած է շրթունքային ծառայութիւն, իսկ հաւատքը... նորածնութիւն: Ահա թէ ինչու... այս «ԱՍՏԻՃԱՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻԻԸ» որպէս հեքիաթ բուի եւ գուցէ ծիծաղելի դառնայ բերահաւատներուն համար:

Օդին մէջ բարձրացող աստիճանը կանգուն է այսօր եւ 130 տարիէ ի վեր կը պատմէ Կաթողիկէ Լօրէթքօ Քոյրերուն հաւատփ գորութիւնը, եթէ... ականջ ունին լսելու: Եկեղեցւոյ հասցէն է, *Loretto Chapel, 207 Old Santa Fe Trail, New Mexico, 87501*:

ՀՈՒԱՆՏԱՅԻ «ԽԵՆԹԸ»

- Հեռաձայն ունիս - ըսաւ կինս ընկալուչը երկարելով:

Նոր Տարի էր, Ս. Ծնունդ, հաւանաբար շնորհաւորող մը պիտի ըլլայ ըսի ես ինծի, ու ընկալուչը առնելով նկատեցի թէ հեռատիպ էր որ կուգար:

Սխալած չէի:

«Բարեւ Ձեզ» խորագրով եւ «Եկեղեցին Հայկական» ենթախորագրով, Յունուար 7, 2007 թուակիր նամակ մըն էր, որ կը ստանայի Հոլանտայի Ասսէն ֆաղափէն:

Կը կարդամ նամակը...

«Շատ Սիրելի եւ շատ յարգելի Հայրենակիցներ,

«Հայ ազգի ձուլման վտանգը արդէն իսկ մտել է մեր բջիջներէն ներս եւ ձուլումի հետեւանքները յստակ

հետքեր եւ ցաւալի վերքեր են բողոմ մեր հոգիներուն եւ մեր սիրտերուն վրայ:

«Հարց է ծագում, «Զուլուե՞նք թէ Մնանք»:

«2007 թուականի Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջին Սուրբ Պատարագը տեղի պիտի ունենայ Շաբաթ օր, 27 Յունուար 2007ին, երեկոյեան ժամը 18:45ին, Ասսէն ֆաղափում, մեր բոլորի կողմից սիրուած եւ յարգուած հոգեւոր հայր Տաթեւ վարդապետի օրհնութեամբ:

«Հասցէն: *Talmastraat 111, 9406 KM Assen*:

«Զեր բոլորին ներկայութիւնը խիստ կարեւոր է:

«Մնամ Յարգանքով, Նիւոլա»:
Երկրորդ էջին վրայ, ուր վահան

Թէէեանի «Եկեղեցին Հայկական» քանաստեղծութիւնը կը շնչէր... ի գուր կը փնտռեմ Ծխական Խորհուրդի մը կամ հովիւի մը անունը: Ըստ երեւոյթին անհատական նախաձեռնութիւն մըն է եղածը, կը մտածեմ:

Մանկապարտէզի օրերէս ճանչցած եմ զինք, երբ կարմիր գոգնոց հագած, մեծ մօրը ձեռքէն բռնած դպրոց կու գար:

Թէպէտ մեծ մօրը խնամփին տակ մեծցած՝ սակայն որրի մը դառնութեան քաժակը ըմպած տղայ մըն էր ան, որքան ալ փորձէր ուրախ ձեւանալ իր ընկերներուն առջեւ: Երուսաղէմի Հայոց Վանքի խնկարոյր կամարներուն տակ հասակ առած, իր ուսումը ստացած էր վանքի Սրբոց Թարգմանչաց Վարժարանին մէջ: Մեզի համար ան Նիկողոս Հայրապետեան էր: Այդպէս ճանչցած էինք վանքի սա տղան՝ իր մանուկ տարիքէն:

Հաւատացեալ, քարի ու ազնիւ մեծ մայրը որքան կ'աղօթէր Ս. Յակոբին, Ս. Գլխադրին՝ իր դստեր եւ թոռնիկին համար:

Հայրը ռուս էր, որ փոքր տարիքէն թողած էր կիներ ու միակ զաւակը՝ ու հեռացած Ս. Քաղաքէն: Մօրը հիւանդութիւնը պատճառ դարձած էր որ Նիֆոլան մեծնար մեծ մօր խնամփին տակ:

Փոքր տարիքէն իսկ, զոհողութիւնն ու ծառայութիւնը մաս կը կազմէին իր ազնիւ մարդկային նկարագրին, եւ ան օգտակար կ'ըլլար քոլոր անոնց, որոնք կարիքը կ'ունենային Նիֆոլային:

Երուսաղէմի ֆաղափատնոսական իրավիճակին պատճառաւ, շատեր հեռացան Ս. Քաղաքէն: Նիֆոլան իր կարգին, ծանօթանալով Հոլանտուհի զբօսաշրջիկի մը, կեանքի նակատագիրը

կապեց անոր հետ, ընդմիշտ հեռանալով Երուսաղէմէն:

Շատե՛ր Միջին Արեւելի տագնապին պատճառաւ հեռացան ոչ միայն իրենց ծննդավայրէն, այլեւ իրենց եկեղեցիէն, քիչ մըն ալ հայութենէն:

Նիֆոլան սակայն, ուր որ գնաց հայութիւնը, եկեղեցին, հաւատքը, հայոց պատմութիւնն անգամ սիրտին մէկ անկիւնը ծուարած, տարաւ իրեն հետ:

Հակառակ օտար ամուսնութիւն կնքելուն, զաւակներն անգամ հայերէն կը խօսին, կը գրեն, կը կարդան, կ'երգեն, կը նուագեն, մաս կազմելով հայկական ձեռնարկներուն:

Ինքն էր որ Հոլանտայի մէջ, մէկ միևնակ պայմարեցաւ ու յաջողեցաւ Ասսէն ֆաղափին մէջ Եղեռնի Նահատակներու յիշատակին յուշակոթողը կանգնեցնել ի գին մեծ զոհողութիւններու եւ քաղով խոչընդոտներու: Հակառակ թրքական կառավարութեան տարած բռնուն պայմարին, Հոլանտական Արդարադատութեան Նախարարութիւնը, վճիռ կ'արձակէր ի նպաստ հայազգի Նիֆոլային:

Հայրենիքով ու հայութեամբ տոչորտոյ սա տղուն կեանքը, լոկ պայքար մը եղաւ Երուսաղէմէն՝ Հոլանտա:

«Հայ ազգի ցաւը ինչպէ՞ս նկարագրեմ... չգիտեմ» կը գրէ վերջերս... «Իմէյլ»ով առաջած նամակին մէջ:

Ցաւը՝ Հայաստանէն եւ Սովետական նախկին երկիրներէ Հոլանտա գաղթած հայերու իրավիճակն էր, որ կը տառապեցնէր զինք: Սպիտակ Զարդի ճիրաններուն ինկած հայութեկորները փրկելու համար, ոչինչ կը խնայէր ան: Քանի մը տարի առաջ էր, երբ ամէն ջանք ի գործ կը դնէր երեսնէն հազար հատ այրբենարան ձեռք ձգելու:

Նամակներ կը գրէր, հեռաձայններ կ'ընէր իր ծանօթներուն, բարերար մը գտնելու, «Մի ֆիչ փող»ի խնդրանքով... փրկելու պանդուխտ նոր սերունդը Ասսէնի:

«Մի ֆիչ փող պէտք է, հաւատա՛ ինձ, եթէ ես այս գործը չկատարեմ, այստեղ ձուլուած է մեր ժողովուրդը: Աղանդաւորներու գիրկը ինկած են, եկուր ու տես, այս գաղութով հետաքրքրուող մէկը չկայ:

«Հիմա Ասորիներու եկեղեցին վարձեցի, որ գէթ՝ ամիսը անգամ մը, մեր ժողովուրդը հայկական Ս. Պատարագ մը տեսնէ: Հայ Առաքելական եկեղեցիէն չհեռանայ, հայութիւնը ապրում դառնայ եւ ո՛չ ձուլում»:

Հեռախօսի ընկալուէն ձեռքիս, կը զգայի հոգեկան տագնապը Հոլանտայի սա «Խենթ» տղուն, որուն մէջ հայու արիւնը կ'եռար, հոգեկան տագնապի աստիճանի մը չափ, ու իր ընտանիքին՝ անձնական մտահոգութիւնները թողած, աւելի մեծ ընտանիքի մը, հայ գաղութի մասին կը մտածէ... այրբեմարան, եկեղեցի, Ապրիլ 24ի յիշատակում, եւ հիմա...

Հիմա հայկական հսկայ Խաչքար մը պիտի գետեղէ Ասսէնի գլխաւոր մէկ հրապարակին վրայ, ի յիշատակ մէկ ու կէս միլիոն՝ առաւել մէկ՝ ՀՐԱՆԴ

ՏԻՆՔԻ յիշատակին, կրկին արծարծելով Հայ Դատը, Եւրոպայի սրտին վրայ:

Հարկ կա՞յ ըսելու որ Խաչքարը արդէն հասած է Ասսէն, եւ արտօնագիրը տրուած:

Մինչ՝ հայ բարերար մը կ'ուշանայ ձեռք երկարել սա «Խենթ»ին, ան նիւթական ըղձաճններու մշուշին մէջ կորսուած իր հայրենակիցները, կը փորձէ փրկել Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցիի ձայնով... կրօնքի ձայնով:

Այժմ Ասսէնի մէջ ամիսը անգամ մը կը մատուցուի Ս. Պատարագ: Հայ վարդապետ մը, սարկաւագ մը կու գան Ամսթերտամէն, ու հիւրը կ'ըլլան Նիֆոլային:

Բայց... այս բոլորը կ'ըլլան փողով:

Փողը կրնայ ուշանալ, սակայն Հոլանտայի սա «Խենթ» տղան, որուն հաւատքի կրակը չէ՛ սպառած եւ որուն կամքը տկարութիւն չի՛ ճանչնար, իր անձը մոռցած՝ կը վազէ տարագիր հայու բեկորները փրկելու, իր գիտցած ձեւով, իր գիտցած ճամբով... Հայո՛ւ յամառութեամբ, անձնագոհողութեամբ:

Ահա՛ նուիրումը կոչեցեալին, Հոլանտայի ազգային «Խենթ»ին:

«Մի ֆիչ փող ուղարկեցէ՛ք» պիտի գրէր Օտեան:

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳԵԿԱՆ ԵՐԿՈՒՈՒԹԻՒՆԸ

«Բանական ըլլալով հանդերձ՝ դասուած ես անասուններու կարգը»:

Գրիգոր Նարեկացի

«Մէկու մը կործանումին կամ փրկութեան համար որքան քիչ բան պէտք է»:

Guy de Maupassant

Հայ միջնադարի կարկառուն ներկայացուցիչ՝ մեծն Գրիգոր Նարեկացի, դարերու ընդմէջէն, բարոյախօսի հանգամանքով՝ իր հոգեւոր հարուստ կենսափորձով, կուռ տրամաբանութեամբ ու վերամբարձ դատողութեամբ, համայն մարդկութեան կը պատգամախօսէ, որ չի բաւեր լոկ մարդ ծնիլ, այլ հարկ է՝ մարդկայնանալ, մարդկային կերպարան ստանալ, անոր հագուազիւտ յատկութիւններով բարեգարդուիլ, առաքինութիւններով գօտեպնդուիլ, աստուածառաք շնորհներով հանդերձաւորուիլ: Այս բացառիկ հսկան, մտքի, հոգիի ու ճաշակի անգերազանցելի վարպետը, մեծագոյն խորհրդապաշտ խորհողը եւ իմաստասիրողը, կու գայ յիշեցնելու մեզի, որ մենք կրնանք բանական ստեղծուած ըլլալ, բայց եւ կամաւորապէս դասուած ըլլալ անասուններու, այսինքն՝ պաճարամիտներու, եւ կամ՝ անմիտներու կարգը: Զայս ըսելով, Նարեկայ վանքի կրօնաւորը, կ'ընդգծէ կարեւորութիւնը մարդուն մարդկայնացման, այսինքն՝ հոգեկան կերպարանափոխութեան, լուսանաճանչ պայծառակերտման:

Արդ, հարց կը ծագի, թէ մարդ էակը ինչո՞ւ պէտք է կորսնցնէ այն բարի յատկութիւնները կամ առաքինութիւնները, որոնցմով ի յառաջագունէ օժտուած ու բարեգարդուած է: Զե՞ որ մարդուն, բանականութեան ճանապարհով, պարգեւուած են այլեւայլ շնորհներ, ձիրքեր, մտային բացառիկ կարողութիւն-

ներ, որոնց լիուրի օգտագործումով, կրնայ բարձրանալ, վեհանալ, ու նոյնիսկ սրբանալ: Այս բարեպատեհութիւնները անտեսած մարդը, սակայն, կամովին ինքզինք կը նսեմացնէ ու կը հաւասարցնէ անասուններու մակարդակին, վասն զի աւելի հեշտ ու ձեռնտու կը համարէ կորսնցնել մարդկային յատկանիշները, քան՝ պահել, անտեսել, քան՝ արժեւորել, ուրանալ, քան՝ ընդունիլ: Հանգստասէրին համար նախընտրելի է ըլլալ ստորնաբար, մնալ ամենահասարակ մակարդակի վրայ, քան՝ բարձրանալ սանդուխտի վեր՝ հասնելու վեհագոյնին, ազնուագոյնին ու կատարելագոյնին: Ինչքա՞նք քովանդակալից է Մեծն Առաքելի պատգամը այս ուղղութեամբ՝ «Ոչ երէ գոր կամիմն գայն առնեմ, այլ գոր ատեամն՝ գայն գործեմ» (Հոովմ. է. 15):

Ի՞նչ ներքին ու արտաքին ազդակներ մեզ կը մղեն ու կը պարտադրեն մնալու ընդհանրապէս թերահոգ ու անտարբեր: Մեր շրջապատը, բնական է, իր մեծագոյն ազդեցութիւնը կը գործէ մեր մտային ու հոգեկան գործունէութեան վրայ: Սակաւ լոկ, չեն ազդուիր վատ շրջանակներէ, չար ունակութիւններէ, յոռի բարբերէ: Հասարակութեան մէկ մասը ոչ միայն կ'ազդուի իր շրջանակէն, այլեւ կը ջանայ նմանիլ իր շուրջիներուն: Արդեօք կամագո՞րկ ենք պահպանելու մեր ողնաշարը, անհատականութիւնը եւ նկարագրի անբծութիւնը: Կրթական-

դաստիարակչական գետնի վրայ արդեօք զլացո՞ւմ արձանագրած ենք, թե սառն անհոգութիւնը եւ կրաւորականութիւնը մեր քանականութեան հանդէպ հիմնական դրդապատճառ պէտք է նկատել: Մի՞թէ ժամանակը չէ, որ անհատաբար կամ հաւաքաբար, վեճականօրէն որոշենք վեր քարձրանալ զգուելի ասիականութենէ եւ սկսինք ցուցադրել մեր ազնուագոյն քննադոններն ու նրբագոյն զգացմունքները: Ինչո՞ւ մնալ «դասուած անասուններու կարգը», երբ կրնանք կրօնքի, գիտութեան ու արուեստի միջոցաւ ընդգրկել քարոյական նոր մարգեր, աւելի պատուաբեր ու վեհիտ հորիզոններ եւ լոյսի ու գիտութեան շողերով՝ ձեռք ձգել քարձր մակարդակ:

Մարդկութիւնը ճշմարտութեան հետամուտ է, չունի դադար, անյարատել կը պրպտէ, կը փնտռէ: Կեանքը՝ սանդխամատերէ քարձրանալու անվերջ ճիգ է, խուլ պայքար: Մեր գրողներէն՝ Կոստան Զարեան, պիտի ըսէր՝ «Կեանքը ցուլ է, որին պէտք է յաղթել: Կեանքը պատրաստ նուէր չէ, այլ բիրտ նիւթ, որին պէտք է նուաճել եւ կառուցել: Աշխարհը մի անողոք կռուի դատ է»: Եւ իրօք, կեանքը տաժանելի դպրոց է, ուր մարդ պէտք է անցնի ընդ հուր եւ ջուր ու մշտական մշակումով կրթուի, ուղղուի: Փաստուած է, որ դժբախտաբար մարդկային քննադոնութիւնն է, որ սովորաբար կը մնայ անուղղելի: Ի գուր չէ ըսուած՝ «Սապատաւորին՝ գերեզմանը լոկ կ'ուղղէ»: Այսպիսով, անուղղան միշտ պիտի տառապի եւ դառնայ հասարակութեան բեռ:

Քարոյագէտ աստուածաբաններ մշտապէս կը հարցափնտռեն այն հիմնական կէտը, թէ ուղիղ դատողութեամբ օժտուած անձի մը, ի՞նչ կը մղէ ստորնացուցիչ արարք գործելու եւ «անասուններու շարքը

դասուելու»: Վստահաբար, շատ ազդակներ կեանքի կը շեղեն ուղիղ ու պարկեշտ ընթացքը մարդկանց, կը խոտորեն զանոնք ու գետնին կը հաւասարեցնեն անոնց արժանապատուութիւնը: Մարդու անասնացման պատճառներէն յիշենք՝ հարստանալու տենչը, շահի մրցավազքը, արոճի խելացնոր կռիւր, անհատնում սէրը եւ հրապոյրը դէպի ոսկին, անվերջ շահոյք կուտակելու մոլուցքը, գայլի ախորժակը, անյագ անտաղութիւնը, անասնական անզուսպ կիրքը, շուայտ կեանքը, կրօնական մոլեռանդութիւնը: Այս կորստաբեր շեղումը յաճախ կամաւոր է ու գիտակցական, այդ պատճառով եւ՝ աւելի արգահատելի ու դսրովելի: Մարդուն անմարդկայնութիւնը նոր երեւոյթ չէ քնալ: Բանականութեամբ գօտեպնդուած ու քարեզարդուած մարդը անքանականութենէ կը բռնուի ու կը տառապի, երբ խնդրոյ առարկան, միշտ իր եսն է, կիրքը, նիւթը, շահը, հանգիստը, սին փառքը, պատիւը, մեծարանքը: Ասոնցմէ մէկուն վտանգումը, մարդս կրնայ կատղեցնել եւ գազանութեան առաջնորդել:

Քրիստոնէական քարոյագիտութիւնը, որ գերազանցապէս հիմնուած ու խարսխուած է Մեծ Վարդապետէն բխած ոսկի խօսքերուն վրայ, կը փնտրէ յարեւմտեան հարցեր եւ Աւետարանի լուսապատկերէն անցընելով՝ զանոնք մարդկութեան կը մատուցէ՝ դրական ու շինիչ պատասխաններով:

Քարոյական աստուածաբանութիւնը յանգած է այն եզրակացութեան, որ քարիի եւ չարի գոյութիւնը մարդուն մէջ յարաբերական իրականութիւն է, որ է ըսել՝ մարդիկ միահիւսուած, միաձուլուած են այս երկու իրերամերժ ու հակոտնեայ բնութիւններէ, հոգեկան երկուութենէ: Արդ, ինչպէ՞ս կարելի է

հաշտեցնել համակեցութիւնը այս երկուփին, երբ մարդս կոչուած է ձերբազատուելու չարէն եւ ընդգրկելու լոկ բարին: Այլ խօսքով, ինչպէ՞ս արմատախլել որումը, վերացնել հին ու անպէտք բոլորը, որ ապականութեան բոյն պիտի դարձնէ մարդուն սիրտը՝ խլելով անկէ ողջախոհութիւն, պայծառամտութիւն եւ դատելու կարողութիւն:

Հայոց Նահապետ՝ Հայր Ղեւոնդ Ալիշան, իրաւամբ ըսած է՝ «Աւելի մեծ յիմարութիւն չկայ, քան չիմանալ չարի մեծութիւնը եւ նոյնին յօժարիլ»: Ինչպէ՞ս կարելի է պատուար չբարձրացնել չարի դէմ եւ չկասեցնել անոր առաջխաղացումը: Բարոյական ի՞նչ դրոյթի վրայ հիմնուած կարելի է պաշտպանել չարը եւ դէմ չկենալ անոր: Կատարեալ անբարոյականութիւն է Լեւ Թոլստոյի պաշտպանած այն միտքը, ըստ որում չարին պէտք չէ հակառակիլ: Մի՞թէ կարելի է սանձազերծել չարը, որպէս զի ոչնչացնէ մարդկանց արժանիքները եւ հրոյ ճարակ դարձնէ անոնց ստեղծած բիւրաւոր հոգեւոր ու բարոյական արժէքները: Տեղին է լատինական առածը՝ «*Bonis nocet, qui malis parcit*», որ թարգմանի՝ «Լաւերը կը վնասէ ան, ով վատերը կը խնայէ»: Չարը դիմակայելու համար բարոյական փաշտութիւն ու կորով է պէտք: Չէ՞ որ մեր աղօթքներուն մէջ կ'աղերսենք՝ «Ամբացո գմեգ եւ աներկիւղ պահեալամենայն չարէ»: Աներկիւղը միայն կրնայ չարը դիմագրաւել ու խորտակել: Բարոյապէս երկչոտը եւ նկարագրագուրկը միայն ընթացք կու տայ չարին, եւ հոգ չ'ընենք թէ ինչ աղէտալի կրնայ ըլլալ անոր հետեւանքը:

Ո՛ւր է աշխարհի մարդկութիւնը այսօր եւ ի՞նչ բարձրութեան վրայ է անոր բարոյական զգացումը: Այս հարցումներուն յստակ պատասխանը,

առանց տատամսումի, տուած է Կոստան Զարեան. «Այսօր աշխարհը դեռ կոյր է, չափազանց շատ դիակներով սնած բոքներու նման: Բարոյական զգացումը մրափել է, արդարութեան վրայ ծիծաղում են... Օր կը գայ կ'արթնանան եւ սոսկումով կը հասկանան...»: Աշխարհի մտակոտութիւնը արդիւնք է ամբարշտութեան: Մետրոպոլիտ Տ. Էմիլիանոս Տիմիադիս ըսած է՝ «Երբ մարդը կը հեռանայ Աստուծմէ, կը հեռանայ նաեւ ինք իրմէ: Այս է ողբերգութիւնը մեր օրերու»: Այս կամաւոր հեռացումը եւ անջատումը առաջնորդած է մարդը անմարդկայնութեան, այլ խօսքով՝ «դասած զայն անասուններու շարքը»: Ի՞նչ ըսել այն մարդկանց, որոնց ուղեղի ու սրտի զսպանակը փնանալով, դասուած են ընկեցիկներու շարքը:

Մարդկային բնութեան երկուութիւնը ստեղծած է անելանելի վիճակ, որ մարդիկ, բռնուած հակասութեանց քաւիղին մէջ, կորստեան կը մատնուին: Ինչքան տեղին է Ֆրանսացի մեծ գրող Մօպասանին մէկ խօսքը՝ «Մէկու մը կործանումին համար, որքան էիք բան պէտք է»: Որքան դիւրին է գլորիլ անդունդն ի վայր ու յաւէտ կորսուիլ, եւ որքան դժուար է կառչած մնալ ապառաժին ու փրկուիլ:

Մարդիկ պէտք է ստեղծեն իրենց իմացական կարողութիւններու եւ մանաւանդ բնաւորութեան գիծերու համապատասխան ներքին աշխարհ, եւ ըստ այդմ գործեն ու յարաբերին մարդկութեան հետ: Այս կը նշանակէ, որ մարդ ի վիճակի պէտք է ըլլայ իր հոգեկան հզօր կորովով ու մշտապէս վերանորոգուելու պահանջով ստեղծել ծով ծարաւ դէպի մարդը, բարին, լաւը, գեղեցիկը, կատարեալը: Այլապէս, ինչպէ՞ս կարելի է հոգեկան

անդունդներու եզրին կանգնիլ ու չահագնիլ, հոգիով սնանկանալ ու չսարսափիլ, ապգագայութեամբ կլանուիլ ու չտրտմիլ, մեղքով գերուիլ ու չսմբիլ, չարութեամբ դիւրութիլ ու չընկղմիլ քանականութեամբ օժտուիլ ու «անասուններու կարգը դասուիլ»: Կենդանաբարոյ ըլլալ՝ մարդ էակին՝ բոլորատրուած չէ. ներելի ու հանդուրժելի չէ նաեւ՝ այդպիսին մնալ:

Վերստին ի կեանս կոչեմք մեծ գրագէտ Կ. Ջարեանի մէկ իմաստալից խօսքը. «Ջարմանալի քան է մեր այս կեանքը... Միշտ անբաւական, միշտ անհանգիստ, հազար ու մի գործ ենք սկսում, պայտարում, չարչարում, երբեմն բոլորովին աննշան քաների համար տանջուում, վազում կրկնեքեքներին ետեւից... ինչո՞ւ...: Ուզում ենք վերագտնել մենք մեզ... Վերագտնել մեր լիութիւնը»: Այլ խօսքով, վերագտնել մեր մէջ թմրած ու մահախուճի հրաւիրուած լաւագոյն քնազդները, մեր հոգիներուն յատակը անզգայացած զգացմունքները, ինչպէս՝ մարդասիրութիւն, քարեգործութիւն: Այդուհանդերձ, պէտք է ընդունիլ, որ ամէն մարդու սրտին մէջ գազան մը կայ թափնուած, որ լուռ քնած է, եւ կ'արթննայ, երբ հարկ է:

Էր երբեմն, երբ մարդկութիւնը աւելի հաշտ էր իր հոգեկան վիճակին ու նիւթական կացութեան հետ, հետեւաբար եւ աւելի՝ ինքնագոհ, ինքնաբաւարար: «Այն ինչ որ, դեռ երէկ, ամէնքի համար հոգիները լուսաւորող անվիճելի իդէականութիւն էր, այսօր խաւար է, չգոյութիւն: Երկրաշարժային մի ցնցում, ընկերային մի տակնուվրայութիւն, մի աղէտ՝ եւ ամէն ինչ թաւալգոր խորասուզում է վայրենութեան մէջ: Մարդը վերադառնում է իր կենդանական քնազդներին եւ

դառնում է գայլ», կը գրէ Կ. Ջարեան: Ի գուր չեն ըսած հիները՝ *Homo homini lupus est*, որ թարգմանի՝ մարդը մարդուն գայլ է: Վերստին հարցնեմք, ի՞նչն է որ կը բռնադատէ մարդը դառնալու վայրագ, ստոր, գործելու տմարդի արարք՝ ինքզինք դասելով անասուններուն շարքը, եթէ ոչ՝ կեանքի պայմանները, վերիվայրումները, բռնութիւնները, անտեղի խստութիւնները, ինչպէս նաեւ՝ մարդկային քնաւորութեան անտանելի ու անուղղելի գիծերը, ինչպէս՝ նախանձ, ատելութիւն, ագահութիւն, անաստուածութիւն, անխղճութիւն...:

Մեր իրականութեան մասին խօսելով, տարակոյս չկայ, որ մեր Հայաստան աշխարհի խիստ ու անքնական պայմանները՝ սառնաշունչ կլիման, աշխարհագրական մէկուսացումը, մշտական պատերազմները, երկարատեւ խաղաղութեան բացակայութիւնը, քաղաքական բիրտ ու անարդար վարչակարգը եւն,

Մեր իրականութեան մասին խօսելով, տարակոյս չկայ, որ մեր Հայաստան աշխարհի խիստ ու անքնական պայմանները՝ սառնաշունչ կլիման, աշխարհագրական մէկուսացումը, մշտական պատերազմները, երկարատեւ խաղաղութեան բացակայութիւնը, քաղաքական բիրտ ու անարդար վարչակարգը, եւն, մեր մէջ ստեղծած են իւրապատուկ նկարագրագիծեր: Մեր դրացի երկիրները եւս ի հարկին չեն նպաստած մեր երկրի քարելուման, մեր հոգեկան անդորրութեան, ազնուացման ու բիրեղացման: Մակերեսայնօրէն դատելով մեր ժողովուրդը, պիտի նկատուի որ ան կը տառապի անմշակութեան, բայց խորքին մէջ, ան ազնիւ է, հիւրասէր, զգայուն: Անոր չէ տրուած պատեհութիւն՝ շփուելու քաղաքակիրթ ազգերու հետ. մնացած է

ինքնամփոփ՝ իր պատեանին մէջ: Դուրս բերէ՛ գին՝ իր նեղ ծիրէն, եւ ան կը գտնէ իր ազնուագոյն գիծերը: Անոր բարեյատկութիւնները մնացած են միշտ անբեղուած՝ միշտ պատրաստ ժայթելու հրաբխային սաստկութեամբ: Այս տեսակէտէն ինչքան բնորոշ են Կոստան Զարեանի խօսքերը. «Հայ գիւղացու մէջ, նրա արտաքին կոշտութեան ետեւ, նրա անգիտակցական խորքում, արձանագրուած են մարդկային մտքի եւ բարձրագոյն հոգեկան բռնիքների բոլոր կարողութիւնները...

«Դիր նրան ուրիշ, աւելի բնականոն պայմաններում՝ եւ նա կը մտնի Պախեան եւ բոլոր մեծերի բարդ աշխարհից ներս, ինչպէս իր սեփական տունը... Նա կը մտնի, որովհետեւ բարդ աշխարհից ներս, ինչպէս իր սեփական տունը... Նա կը մտնի, որովհետեւ նրա հոգեկանը հիւստած է նոյն Պէյթիպէնի հոգու նիւթերից եւ նրանք մշակութապէս գեղակից են... Նրանք կարող են աղօթել նոյն տաճարում, յուզուել նոյն յուզումներով, ոգեւորուել նոյն ոգեւորութիւններով, նստել միասին, մէկ մէկի աչքերի մէջ նայել եւ մէկ մէկին հասկանալ առանց խօսելու... Սոսկալին այն է, որ Տաճիկը հոգեկան անցեալ չունի, նրա անգիտակցականը մութ գիշեր է՝ լեցուած գազանային բնազդներով եւ նախնական փոթակներով... Նկատուած է. տաճիկը, որ բարձրագոյն ուսում է առնում՝ այլասերում է: Նա վախում է մշակոյթից, որովհետեւ հասկանում է, որ մշակոյթը - երբ արտաքին անբովանդակ ձեւ չէ - մահացու է իրեն համար: Եւ շատ հասկանալի է. մշակոյթ ստեղծելու համար պէտք է կարողանալ այլափոխուել, հոգեպէս վերածնել, բռնիք առնել, կեանքին նոր արժէքներ տալ եւ այդ արժէքներով ապրել: Իսկ նա՝ վարժ է

փանդելու, այրելու... Ուր տաճիկը անցել է՝ անտառ չի մնացել, բոյս չի մնացել, տուն չի մնացել»: Տեղին է յիշել Վ. Հիւկոյի նշանաւոր մէկ խօսքը՝ «Թուրքերը անցած են այստեղէն»: Այս պատճառով, մեր ցեղին հանճարը վկայող բոլոր իրագործումները, մտքի սաւառնումները, ամէնքը, աւա՛ղ, անէացած են, չեացած, որովհետեւ մեր ոսոխը իր հետ բերած է հուր եւ սուր, ալան ու թալան, կապուտ եւ կողոպուտ: Փոքրիկ ու աննշան ժողովուրդի մը արժէքները այսօր մոխրացած են ի ձեռս անօրինաց եւ վայրենեաց: Մշակութատեաց այս ազգը՝ մեր սեւ ճակատագրի տխրահուշակ հեղինակը, որմէ բխած է միայն արիւն ու արցունք, տարաբախտաբար, դարձած է մեր դարաւոր հարեւանը: Չայս կը յիշենք պարզապէս մատնանշելու, որ մեր ազգը անմիջականօրէն ազդուած է այս ապարարոյ մթնոլորտէն, եւ դաժան հանգամանքներու բերումով, ինքզինքն իրենց անմիջականօրէն վասն պաշտպանութեան հայ հողին ու կեանքին:

Հայ ժողովուրդի հոգեկան տրամադրութիւնը մի՞թէ միշտ պատրաստ եղած է հակահարուածելու: «Դար դարերի ետեւից գալիս անցնում է, եւ թշնամիները նոր են. դուրս գալիս բոլոր անկիւններից, լեռնավայրերից, դաշտերից, ձորերից... Թամէրլան, Զինգիս Խան, արաբներ, թաւարներ, տաճիկներ, սելուկներ, աֆղաններ, պարսիկներ, լազեր... գալիս աւերում են, այրում, փանդում, անցնում. իսկ ինքը՝ հայ ժողովուրդը՝ հողի հետ հող, ժայռի հետ ժայռ, նստած սպասում է: Նստած սպասում է հրաշալի այլափոխութեան այն օրին, երբ մարդկանց հոգիները պիտի լեցունեն

լոյսով, երբ Արարատի ֆաշերը եւ ոգիները պիտի փշրեն իրենց շղթաները եւ ուրախութեան ճիչ արձակելով պիտի իջնեն դաշտ, երբ աւանդները արին եւ միս դառնան եւ հայր պիտի հագնի իր արեւային թագը...»: Ինչքան լաւատեսութիւն, քարութիւն ու մարդասիրութիւն կը բուրեն այս տողերը: Վսեմութիւն կայ այստեղ եւ ոչ՝ ցածոգութիւն, կեանք, եւ ոչ՝ մահ, ներողամտութիւն, եւ ոչ՝ վրիժառութիւն: Դարեր առաւ որ հայը գիտակցի, թէ՛ աշխարհի վրայ «Մարդկութիւն չկայ, կայ գալլութիւն»: Դարերու կենսափորձը մատնանշեց հայուն միանգամայն եւ վեհանձնութիւնը, եւ պարզամտութիւնը: Ինչ խօսք, որ քրիստոնէական դաստիարակութիւնը հայոց մօտ եղած է ուժգին, այդ է պատճառը որ հայը չէ հակադարձած ինչպէս հարկն է: Հայը հաւատացած է համայն աշխարհի մարդկութեան մարդկայնութեան, եղբայրութեան, համակեցութեան: Բացի անոր ազնուաշունչ դաստիարակութենէն, ան անկարող եղաւ տեսնելու խորապէս թափնուած այն ժահրը, մահաբեր թոյնը, որ մեր հայատեաց հարեւանը ծրարած էր իր սրտին մէջ:

Մարդու կործանումը մօտալուտ է ու աներկբայ, երբ կամքը թոյլ է ու քարոյական կորովը՝ ցամաք: Ոմանց՝ հարստութիւնն ու գեղխութիւնը կը հասցնեն հոգեկան սնանկացումի, իսկ այլոց՝ խստասրտութիւնը: Ռուս մեծ գրող՝ Ա. Պ. Չեխով, իր մէկ գրութեան մէջ կը հարցնէ, մարդիկ «ինչո՞ւ չեն ձգեր հարստութիւնը նոյնիսկ այն ժամանակ, երբ անոր մէջ կը տեսնեն իրենց դժբախտութիւնը», նոյն օրինակով կը հարցնենք եւ մենք՝ «մարդիկ ինչո՞ւ չեն ձգեր վատութիւնը, նոյնիսկ այն ժամանակ, երբ անոր մէջ կը տեսնեն իրենց հոգեկան փլուզումը, կործա-

նումը»: Պատասխանը կը կայանայ մարդկային տկարութեան մէջ:

Արդ, հարց է թէ ինչպէ՞ս մարդը դարձնէ իր պայծառ ապագան այս փառային դրութեան մէջ: Ոմանց համար միակ հեռատես ու խոհեմ վարուելակերպը գուցէ ըլլայ վեհականօրէն բիրտ, անհանդուրժողական, հետեւաբար եւ՝ անմարդկային: Այսպէս, «Մեր ուժը միայն անմարդկայնութեան մէջ կրնայ գերակշռել թշնամիին ուժերը», ըսած է Շահան Նաթալի: Հասկնալի է մեր հայրենասէրին զայրոյթը, բայց այստեղ քարոյական հարց կը ծագի, թէ՛ ինչպէ՞ս կարելի է իջնել ոսոխի մակարդակին: Ինչքան ճիշդ ըսած են Ֆրանսացիք, «Noblesse oblige», որ թարգմանի «Որ ունի զանձն առ ազնուականս, պարտի գնալ ազնուականօրէն.» այլ խօսքով «ազնուական անձը պարտի ազնուականօրէն վարուիլ»: Ո՞ր է մեր դաստիարակութեան վսեմութիւնը, գերազանցութիւնը: Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս գործել անմարդկային արարքներ, երբ կարելի է առաջին առնել թշնամիի անզգայ արարքին՝ առանց «դասուելու անասուններու շարքը»: Բացարձակապէս պէտք է թոյլ տալ, հանդուրժել կամ ներել, որ թշնամին ազատօրէն աջ եւ ահեակ սուր ճօճէ, բնաջնջէ, փնացնէ: Բիւրաւոր միջոցներ կան կանխարգիլելու նման ապերասան գործունէութիւն, ինչպէս՝ վարչական հզօր միտք, ռազմավարութիւն, ռազմունակութիւն, ինքնապաշտպանութեան գիտակցութիւն, ուղիղ դաստիարակութիւն եւլն:

Սարդարապատի յաղթական հերոսամարտով, հայը՝ հազիւ քօթափած էր դարերու անտանելի լուծը, երբ վրայ հասաւ Խորհրդային ահաւոր վարչակարգը, եւ իր ստրկատիրական փիլիսոփայութեամբ ճնշեց բիւրեղ ու ազնիւ հոգիները՝ մեր քարոյական մակարդակը

հաւասարցնելով կենդանականին: Այդ զսպուած պայմաններուն տակ ո՞վ կրնար մարդկայնանալ, երբ ամէն ոք հարկադրուած էր բարոյագրկուիլ, այլ բանիւ՝ անասնանալ, հեռանալով կրօնէի ու բարոյական տարրական հասկացողութենէ: Ի՞նչ խօսք կրնար ըլլալ մարդկայնութեան, երբ անպարտը դատապարտուած էր քաւելու իր մեղքը սառնամանիքի արհաւիրքի մէջ:

Խորհրդային շրջանին, Հայաստանը ապրեցաւ նկատելի յեղաքելումներ. այսպէս՝ վերափոխութիւն կատարուեցաւ բարոյական ըմբռնումներու եւ բարքերու, յեղաշրջուեցաւ հասարակական մտածելակերպը, աշխարհայեցողութիւնը, մեծ հարուած կրեց այսպէս կոչուած «միջնադարեան յետամնացութիւնը»: Համայնավարութիւնը կեանքի նոր արժեքափեր փորձեց հաստատել՝ մարդը գետնէլու իրեն արժանավայել գահին: Դրամատիքական երկիրներու պատմութիւնը համայնավար դեկավարներու կողմէ համարուեցաւ «բռնութեան ու թալանի, արեան ու կեղտի պատմութիւն»: Այսպիսով, յօդս ցնդեցան նահապետական հին բարքեր, սովորոյթներ, աւանդութիւններ, անգոսնուեցաւ եկեղեցին, կղերը, ծաղրուեցաւ հայոց դարաւոր հաւատքը: Այս ամբողջը կատարուեցաւ՝ վասն կառուցման ու ծաղկման համայնավարութեան՝ դասակարգային վերացման եւ հաւասարութեան:

Խորհրդային տասնեակ տարիներուն, հայ մարդը, նոր արշալոյսներ դիմաւորելու խանդավառութեամբ տոգորուած, համայն աշխարհով շեփորահարեց նառագայթումը «նոր ու իրական» կեանքի եւ գովքը հիւսեց մարդակերտ արձաններու: Բարոյական անարդար պարտադրանքը, որ դրուած էր հայ ժողովուրդի ուսերուն վրայ, շատ

ծանր կշռեց: Եօթ տասնամեակներու բերած կրթութիւնը, դաստիարակութիւնը, ունէր իրրեւ հիմք՝ սնամէջ գաղափարախօսութիւն, ցնորամտութիւն, բանդագուշանք, անաստուած վարդապետութիւն, ազատութեան կաշկանդում, ստեղծագործական մտքի ջախջախում, երեւակայական թռիչքներու ու ոստումներու քեկանում: Մարդը դատապարտուած էր նսեմացման, աստիճանագրկման: Ինչքան ճիշդ ըսուած է՝ «Տանիկը սպանում է մարմինը, իսկ պոլշեիկը՝ ոգին...»: Հոս էր որ ոստակոտոր եղաւ ողջ ազգ մը եւ ողբաց իր անխուսափելի ու անժամանակ կորուստը: Կրկին ու կրկին, դարեր ետք, մեր տխրալի երգը երգեցինք թախծալից ու արտասուալից աչքերով: Մեծն Նարեկացին իրաւացի է իր խօսքին մէջ. «Դուն ինքի բեզի համար անել արգելարան եւ անփախչելի որոգայթ շինեցիր», հետեւաբար եւ պարտ է բեզ արիւնաքամ՝ տուալտիլ: Աւելորդ է յիշել, որ այս տխուր կենսածել, հիմնովին փոխեց հայուն հարազատ պատկերը եւ հեռացուց գինք իր արմատներէն: Հայը, հետեւաբար, պէտք ունէր էական փոփոխութեան, հոգեկան վերագարթօնքի ու ինքնակերտման: Հայը պէտք ունէր վերադարձի՝ դէպի իր ակունքները, իր առհաւական անկապտելի արժէքները: Վերջապէս, անկախութեան դրօշի ծածանումով միայն, սկսանք վերագտնել մեր երբեմնի ազատութիւնը, մարդկային արժանապատուութիւնը եւ ազգային արժէքներու լիիրաւ գիտակցութիւնը:

Արդ, ի՞նչ կը սպասուի մարդէն: Բանականութեամբ օժտուած էն կ'ակնկալուի յստակ զատորոշում կատարել երկու ներհակ բնութիւններու միջեւ: Մարդը, իրրեւ խորհող ու դատող արարած, հարկ է որ իր մտքի

լուսաւորութեամբ տեսնէ ու ճանչնայ չարը եւ զգայ անոր կործանարար ազդեցութիւնը: Այդ ճանաչումով է միայն որ չարը կը վերացուի եւ կը սրբուի: Ուրեմն, յիմարութիւն է չտեսնել, չզգալ, չխորաչափել չարը իր հազգնութեամբ:

Ճիշդ է՝ «հայ լինելը անողոք եւ

հերոսական բան է: Ճակատագիր է եւ պատգամ: Դարերի խորքից եկած հրամայական պատգամ», սակայն շատ աւելի դժուար է ըլլալ մարդ՝ քառիս ամբողջական առումով: Յիշել է պէտք՝ «*Amat Victoria curam*», որ է՝ «Յաղթանակը ջանք կը սիրէ»:

ՋԵՆՈՒ Ա. ՔԶՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԹԷ ՅՈՒԵՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս մասին սկսել եմ մտածել այն պահից, երբ իմ մէջ եւս հարց առաջացաւ որոշակիօրէն կողմնորոշուել դէպի սրանցից մէկը: Երկար մտորումներից յետոյ ինձ համար քացայախտից գաղտնիքը, որը հանգստացրեց թափառ մտքերիս յոգնութիւնը եւ ստիպեց ինձ պատմել դրա վերաբերեալ: Ահա հիմա գրասեղանի առջեւ նստած փորձում եմ դրանք սեղմել գրական որեւէ ստեղծագործութեան շրջանակներում, սակայն վստահ եմ, որ ստեղծագործելու սահմանափակ կարողութիւնս չի կարողանալու սանձել մտքերիս վարքը ամենալուրբ գրական ասպարէզներում: Ստիպուած ընտրում եմ «էսսեի» լայն հրապարակը, թէեւ կարծում եմ, որ այնուամենայնիւ անհասկանալի եմ մնալու շատերին, որովհետեւ ինձ հասկանալու համար անհրաժեշտ է մի փոքր ինձ պէս մտածել: Եւ այսպէս մտքերիս կոյտից ընտրում եմ առաջին նախադասութիւնը եւ սկսում:

Ես յոռետես չեմ եւ ոչ էլ լաւատես՝ ըստ այս հասկացութիւնների ըմբռնման դասական իմաստի: Սրանով ոչ թէ ուզում եմ ընդգծել ինքնատիպութիւնս, այլ քացայայտել մարդկանց այն

մեծամասնութիւնը, որի անունը կարելի է որակել յատկապէս յոռետեսական որոշիչներով: Չնայած որ յոռետեսութիւնը միշտ չէ, որ անարժէք է, այնուամենայնիւ իրերը իրենց անուններով կոչելը նախընտրելի է: «Ի՞նչ է լաւատեսութիւնը եւ երբ է այն առաջանում», - թեման վերլուծելուց առաջ անհրաժեշտ է ինքնեքս մեզ հարցնենք: Լաւատեսութիւնը՝ ուրախութեան եւ երջանկութեան յոյսն է, որն ուղեկցում է մարդուն մանաւանդ կեանքի մթին ֆառուղիներում: Նոյնիսկ երբ կեանքի վերջը կախաղանն է, այն չի դադարում գործելուց եւ մարդուն տալիս է ցաւը յաղթահարելու մտասեւեռում: Այն ծնւում է մտածումից եւ երջանկութեանը տիրելու կամ այն կորցնելու վախից: Վախ, որը նոյն հեռաւորութեամբ է ընկած լաւատեսութեան եւ յոռետեսութեան միջեւ, սակայն երբ սնւում է յոռետեսութեան ակունքներից ի վերջոյ թափւում է տիրութեան ուկէանոսը, ամէն մի մտածում, յոյս ու երազ ընկուզելով նրա անթափանց ջրերում: Ահա այստեղ՝ կեանքի ու կենսակերպի լաբիրինթոսում, որտեղ ելքի ընտրութիւնը միանգամայն պարզ է թւում, մեզ մօտ առաջանում է

յաջորդ հարցը, թե արդեօք գերադասելի՞ է ողջ կեանքի կամ ընդհանրապես կեանքի բոլոր վայրկեանների համար, իրրեւ նշգրիտ կողմնացոյց ընտրել դրանցից մէկը կամ միւսը: Հարցի որեւէ կմկմացող պատասխան՝ աւելի վախի, քան տգիտութեան արդիւնք է, քանի որ հարցն առնչուում է մեր սեփական եւ հարազատ երջանկութեանը: Սակայն սա չէ էականը, որի վրայ կ'ուզենայի կենտրոնանալ: Սա միայն հարցի երեսն է, որի պատասխանով գոհանալը հաւասար է խմորի արտաքին շերտը այրելով հաց ստանալու, ինչը տուեալ դէպքում չպիտի յագեցնէր մեր մարմնական պահանջը: Այնինչ՝ հարցի լուծումը կարելի է գտնել համադրման եղանակով, ինչպիսին հենց խմորն ու աղն են: Որքան էլ լաւատեսութիւնը օժտուած լինի դրական լիցքերով, այնուամենայնիւ հարցական է, թէ դրանք ի՞նչ հաղորդակցութեան մէջ կը պահեն մեզ երջանկութեան հետ: Ես մի դասախօս ունեմ, որ մի անգամ «Ահեղ Դատաստանի» մասին խօսելիս ասաց, թէ պէտք է երկնչել դրանից, այլ առաւել պէտք է մտածել Աստուծոյ ողորմութեան, քան արդարութեան եւ պատժի մասին: Ահա այստեղ է, որ կարծում եմ, թէ բացարձակ լաւատեսութեան ճանապարհը կեանքի նոյն լարերինընթուում անընկատ միանում է անհոգութեան մայրուղուն: Նոյն բանը

կարելի է ասել ծայր յոռետեսութեան մասին, որի ընթացքը մեզ կարող է հասցնել մինչեւ յուսահատութեան անդունդը: Արդեօք բացառուա՞ծ է դրանց տարրերի փոխ-թափանցումը, նոր արահետների միջոցով դրանց փոխ-կապակցութիւնը այնքանով, որքանով հնարաւոր կը դառնայ վտանգի միանգամայն սրափ գիտակցութիւնը, ապագայի եւ իրավիճակի նշգրիտ գնահատումը: Իւրաքանչիւր մահացած հերոսի մտքում անկասկած եղել է մահուան գիտակցութիւնը սակայն անմահութեան գլխաւոր գաղափարն իր մէջ է ծծել նրա յոռետեսութիւնը, եւ միայն համեմուել է նրանով: Եւ ի՞նչն է այստեղ ամենահետաքրքրականը, եթէ ոչ այն՝ որ յոռետեսութեան զէնքերով կարելի է պայքարել ընդդէմ հենց իրեն՝ յանուն բարի ապագայի: Մտացածին հնչող այս գաղափարը մասնաւորելու համար այն թերեւս կարելի է համեմատել կշեռքի հետ, որի մի նժարին լաւատեսութեան կշռաքարն է, իսկ միւսին՝ յոռետեսութեանը, միայն այն տարրերութեամբ՝ որ վերջինս լոկ ձեւով է նման առաջինին, այնինչ դատողութեան եւ կարծիքի կշիռը պայմանաւորուած է մեր սրափ գիտակցութեամբ, ինչն էլ ձգտում է հաւասարակշռութեան եւ ներդաշնակութեան մէջ պահել մեր կեանքը, մեր երջանկութիւնը:

ՍԱՄՈՒԷԼ ՍՐԿ. ՍԱՖԱՐԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԱՅՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ Ս. ՓՐԿԻԶ ՎԱՆՔԻՆ

Երկուշաբթի է, 2007 Սեպտ. 18
ըստ Հին Տոմարի. Յիշատակ Մեռելոց
(երէկ Խաչվերաց տօնուեցաւ
Երուսաղէմի հայ մայրավանքի Սրբոց
Յակոբեանց տաճարին մէջ, յետմիջօրէի
հանդիսաւոր անդաստանով հանդերձ):

Օրացոյցս ինձ կը յիշեցնէ թէ
այսօր՝ Հոկտ. 1 իմ եւ երէցկնոջ
կարճատեւ ուխտագնացութեան վերջին
օրն է. մի քանի ժամ եւս ունինք
արեւամուտէն առաջ, եւ կէս գիշերէն
շատ չանցած Հայ Պատրիարքարանի
մէկ վարորդը պիտի գայ փոխադրելու
մեզ հիւրանոցէն դէպի օդանաւակայան
Թէլ Ավիվ:

Պատրիարք Սրբազան Հօր Ամեն.
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի
հոգածու տնօրինութեամբ այսօր
կ'ունենանք պատեհութիւն քաջալով
Սիոնի մէջ բարձունքին վրայ
դարերէ ի վեր կանգուն Ս. Փրկիչ հայ
վանքը, որ կը պարունակէ
գերեզմանատուն: Մեզի կ'ընկերակցի
Օր. Ճօյս Սիւլահեան, ամերիկահայ որ
օգտակար աշխատանք կը կատարէ
Պատրիարքարանի դիւանատան մէջ:

Հասնելու համար Ս. Փրկիչ հարկ
է որ քաջալով մայրավանէն դէպի հարաւ,
յառաջանալով մայթէ գուրկ մեղ փողոցէ
մը, ուրկէ կ'անցնին ոչ միայն այլեւայլ
մեծութեամբ ինքնաշարժ մեքենաներ
(մէկ ուղղութեամբ միայն), այլ նաեւ
քեռնատար չորհրտանիւններ, զբօսա-
շրջիկներ եւ խուռներամ քաղաքի
հրեաներ ամէն տարիքի: Այս շարք տօնական
շրջանէ թէ՛ հրեաներու եւ թէ՛ իսլամներու
համար: Հին Երուսաղէմի հրէական
մասը իր Լացի Պատով հարեւան է
պարսպապատ Երուսաղէմի ուշագրաւ

հայկական մարզին:

Ահաւասիկ Սիոնի Դուռը, մի
քանի դար առաջ Սուլթան Սիւլէմանի
շինել տուած պարիսպին մէկ դարձակէտ
անկիւնը: Սրբոց Յակոբեանց վանքի
նախկին ժառանգաւորաց Վարժարանի
շէնքէն եւ անոր արեւելքէն հարեւան
Հրեշտակապետաց Հայ Վանքէն հազիւ
մի քանի քարքարէք հեռու է այս
դուռը: Անկէ դուրս՝ կարելի է յա-
ռաջանալ դէպի հարաւ արեւմուտք եւ
մի քանի վայրկեանէն հասնիլ հայկական
գերեզմանատան դրկից Գերմանական
(Բենեդիկտին Կաթոլիկ) Տորմիսիոն
վանքը իր մեծ գմբէթով եւ քիչ անդին
Երկնապաշտ մամուլոյ զանգակատունով:
Վիլիէլմ Բ. Կայսեր 1898ին Երուսաղէմ
այցելութեան առիթով կառուցուած են
այս արդիական շէնքերը շնորհիւ
հայատեաց Սուլթան Ապտիլ Համիտի
հողային մէկ նուէրին:

1915ին, երբ Կ. Պոլսոյ հայ
նախկին պատրիարք Երջանկայիշատակ
Մաղաֆիա Արք. Օրմանեան կը գտնուէր
Երուսաղէմ իբր վարչական պատուիրակ՝
դրկուած Թիւրքիոյ Հայոց Պատրիարքու-
թեան կողմէ (Երուսաղէմի Հայ
Պատրիարք Յարութիւն Վեհապետեան
վախճանած էր 1910ին եւ յաջորդին
ընտրութիւնը կ'ուշանար), հաշուելու,
չափելու ընդունակ ծերունազարդ
Օրմանեան Սրբազանը ձեռնարկեց
գրելու գիրք մը՝ ՀԱՅԿԱԿԱՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄ, աւելի քան 200 էջ, որ
նկարագրութիւնն է Սրբոց Յակոբեանց
կարգ մը սրբավայրերուն, հաստատու-
թիւններուն եւ գործունէութեանց: Գրքին
12րդ գլուխը՝ բաղկացած 18 էջերէ,
յատկացուած է Ս. Փրկիչ վանքին:

Տակաւին չէր յօրինուած տապանաւար Օրմանեանի ժամանակակից Յարութիւն Պատրիարքի գերեզմանին համար: Երուսաղէմ յաջորդ վեց հայ պատրիարքներէն ննջեցեալները, իրաց առեալ Տ. Կիւրեղ Իսրայէլեանը, թաղուած են Ս. Փրկիչ վանքի գերեզմանատան պատրիարքներու վերապահուած քաժինին մէջ՝ մօտ այս վանքի երկյարկանի այն կառոյցին որ կը պարունակէ խորան քացօթեայ պատարագի մատուցումի համար, յարակից անհրաժեշտ պահարանով: Երջանկայիշատակ Տ. Եղիշէ Դուրեան Պատրիարքի վախճանումի բառասունքը գուգադիպելով Հոգեգալուստի Տօնին՝ 1930ին, հոգեհանգստեան պատարագը այդ առիթով հանդիսաւոր կերպով մատուցուած է Ս. Փրկիչի խորանին վրայ: Նոր Կտակարանի Դործք Առաքելոց գրքին մէջ նկարագրուած Սուրբ Հոգւոյ Իջման Վերնատունը, ուր հաւաքուած էին Յիսուսի աշակերտները, կը համարուի վայրը ուր հաստատուած է հայկական Ս. Փրկիչ վանքը: Ըստ Օրմանեանի «Փրկիչի վանքը ժամանակով ծաղկեալ եւ ընդարձակ հայ վանք եղած է,» իսկ այժմ պարզ տեսչութիւն մըն է, որուն յանձնուած են ազգային գերեզմանատան հսկողութիւնը եւ Ս. Աստուածածնայ գերեզմանին հոգածութիւնն ալ:

Ներկայ ուխտաւորը 1935-1941 շրջանին որպէս նախ ժառանգաւոր, ապա սարկաւագ, մասնակցած է Հոգեգալստեան Տօնի առաւօտ այս սրբավայրին մէջ մատուցուած պատարագներուն: Ներկայիս Դուրեան Պատրիարքի յաջորդներէն Տ. Կիւրեղ Իսրայէլեանի վախճանումէն ի վեր, Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը տակաւին չէ փորձած վերսկսելու Հոգեգալստեան Տօնի պատարագի

մատուցումը փլած վիճակի մէջ մնացող խորանին վրայ: Տ. Կիւրեղ Իսրայէլեան, 1948ի Արար-Հրեայ կոիւնքու տագնապալի օրերուն հիւանդացած եւ 1949ին վախճանած, շարունակուող պատերազմին պատճառով հարկադրաբար թաղուեցաւ մայրավանքի Ս. Յակոբայ տաճարի գաւիթին մէջ: Ի կենդանութեան յաճախ մեկուսանալու տրամադիր, սակայն եւ այնպէս ժրջան, Կիւրեղ Պատրիարքը իր մահէն ետք ալ ահա կէս դարէ աւելի կը մնայ զրկուած Ս. Փրկիչի հայ պատրիարքներու յատուկ գերեզմանոցին մէջ տեղ գրաւելէ: Վերոյիշեալ կոիւնքուն՝ Երուսաղէմի հայ մայրավանքը ապաստանած հայեր իրենց մեռելները չէին կրնար փոխադրել անմեծեցեալի դարձած Ս. Փրկիչ վանքի գերեզմանատուն: Հետեւաբար մեռելաթաղեր արտօնուեցան փոսեր փորել Չամ Թաղի անտառակին մէջ՝ հարաւը Գ. Կիւլպէնկեան Մատենադարանին, որ իմ ուսանողութեան տարիներուն հաճելի վայր մըն էր, մեկուսացումի, նեմելու եւ դէպի արեւմուտք հայեացք սեւեռելու համար:

Օրմանեան, Ս. Փրկիչի իր նկարագրութեան մէջ, կը յիշէ մասնաւոր կերպով տնկուած նոնի ծառերով եւ ծաղիկներով յարդարուած ծառուղի մը փողոցի մուտքէն դէպի ժամապաշտութեան յատուկ եւ տապանաւարներով նոխացած քաժինը վանքին: 19րդ դարու մեծահարուստ հայ բարերարի մը ընտանեկան վանդակապատ ու արձանաւոր դամբարանին (խորանէն մի քիչ հեռու եւ ցած մակարդակի վրայ կառուցուած) նկարագրութենէն ետք կը կեդրոնանայ վերի յարկի բնակելի մօտ տասն խուցերու շարքի մը վրայ: Ներկայիս որքա՞ն կ'օգտագուծուին այս խուցերը, յայտնի չէ: Մեր այցելութեան պահուն վերի յարկի արեւմտեան թեւին

մէջ նստած մի ֆանի չափահաս անձեր, հաւանաբար թոշակ ստացող պահակներ, բերել հագած արտասովոր տօթին պատնառով, կը ծխէին, կը խօսակցէին եւ հեռատեսիլի հայկական յայտագիր մը կը դիտէին: Խուցերու այդ շարքը յիշեցուց ինձ 1941ի Օգոստոսեան մէկ երեկոն, երբ այս վանքի եւ Գեթսեմանիի ձորը գտնուող Ս. Աստուածածնի Գերեզմանի սրբավայրին ծառայող իմ նախկին դասընկերս՝ «Ընկեր Յակոբ Սէմէրեան», թոյլ տուաւ որ գիշեր մը օրեւանիմ այստեղ ընծայարանէն ի սպառ հեռանալու վաղորդայնին, յաջորդ առտու Քինկ Տէյվիս պանդոկ գտնուող անգլիացի գինուորականի մը ուղեւորական «Լէսէ փասէի» համար դիմելուս նախօրեակին: Երկու հսկայ որբատունները որոնք Օրմանեանի օրով որբոց մը կազմելով կը ծածկէին բակը, իմ ապաստանած պահուս կը շարունակէին մատուցանել խաղողի իրենց ողկոյզները: Փակ բուացող այս խուցերը ունի՞ն արդեօք որեւէ օգուտներկայիս: Նայելով ամենօրեայ մաքրութեան եւ խնամքի կարօտ շրջապատիս, փորձուցայ պատկերացնել ամերիկահայ սակաւաթիւ սաները Նիւ Ռոշէլի (Ն.Ե.) Ս Ներսէս հայ ընծայարանին, որոնք շրջանաւարտ յայտարարուելէ առաջ բերելու որպէս գիշերօթիկ ուսանողներ միաժամանակ գրաւեն այս խուցերը եւ հետեւին հայերէն գրաբարի «խտացեալ» դասընթացի մը: Պարզապէս ցնորք է մտածումս, զի այստեղ առայժմ չկայ դասասրահ, ոչ ալ կ'երեւի որեւէ սեղանատուն կամ բաղնիք:

Կայ սակայն մի ֆանի հարիւր կանգուն անդին Արարայի (Պաղեստին) 1918ի ճակատամարտին Թուրք բանակին դէմ՝ զոհուած հայ կամաւորներու

յուշարձանը: Ժառանգաւորացի իմ ուսանողական միջոցին ամէն Ապրիլ 24ին թափօրով կու գայինք մայրավանքէն հոգեհանգստեան պաշտօն կատարելու յուշարձանին եւ, ծաղկող գարունին խոստմնալից մթնոլորտին մէջ: Վերջին անգամ 1992ին ունեցայ այդ փորձառութիւնը. երեցկին Մարիամի եւ մի ֆանի ամերիկահայ ուխտաւորներու ընկերակցութեամբ: Ադէլ մէկ ու կէս տարի ետք, մասնաւոր տխուր թափօր մը եւս մայրավանքէն դէպի Ս. Փրկիչ, Նիւ Եորքի մէկ գերեզմանէն դէպի Երուսաղէմ փոխադրուած մարմինը 1957ին Պատրիարք ընտրուած Տիրան Արք. Ներսոյեանի, բաղելու համար փոսի մը մէջ՝ հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի հողադամբանէն մի ֆանի մէքր անդին: Այժմ, երկու այս պատրիարքներու (նախապէս տեսուչ եւ ուսուցիչ շատերու, նաեւ ինձ) գերեզմանները ծածկուած են մութ մոխրագոյն մարմարանման շիրմաքարերով, յօրինուած միեւնոյն ոճով: Ասոնք, արեւի, անձրեւի եւ այլ տարրերու հարուածներուն տակ, փոշեթաթախ են: Զկայ շրջապատին մէջ թարմ, ծաղկաւետ եւ յօտոցի յարդարանք ստացող կանաչութիւն: Մեծանուն գոյգ մը այլ պատրիարքներու պերճաշուք տապանաքարերը կարծէք ճշմունք են մութ անկիւն մը, անմեղ զոհեր Արար-Հրեայ սկզբնական ընդհարումներուն, եւ կը մնան անմերձեանալի այսօր տարի:

Պիտի գա՞յ օրը, երբ այս վանքի հողին մէջ թաղուած բազմաթիւ հայ մեռելներու հոգիները պիտի ուրախանան ի տես մաքրուած, նորոգուած, կենդանացած Ս. Փրկիչի մը:

ԱՐՏԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՇՃԵԱՆ

ՀՐԱՆԴ ԴԻՆԲԻ ԱՆՍԱՐ ՅԵՇԱՏԱԿԻՆ

Մէկ տարի առաջ՝ յունուարի 19-ին, Թուրքիայի տեղական ժամանակով ժամը 15-ին, Ստամբուլի «Ակոս» լրագրի խմբագրատան առջեւ երիտասարդ թուրք սպգայնանոյ Օզին Սամուառի թիկունքից արձակած երեք դատադիր գնդակից ընկաւ վերջին ժամանակների մեծ հայորդիներից մէկը՝ Հրանդ Դինքը: Նրա մահը սգուն էր ողջ պոլսահայութիւնը, ողջ հայութիւնը, ողջ առաջադր մարդկութիւնը:

Աշխարհի բոլոր անկիւններում ամէն օր տեղի են ունենում բազմաթիւ սպանութիւններ, երբեմն սահաբեկութեան փոխ են դառնում միաժամանակ մի քանի տասնեակ անմեղ մարդիկ, քաղաքացիական եւ փնտրական հակամարտութիւնների եւ բախումների հետեւանքով ամէն օր փոխում են հարիւրաւոր մարդիկ, սովամահ են լինում անհամար անմեղ մանուկներ: Հարց է ծագում. ինչո՞ւ է Հրանդ Դինքի սպանութիւնը առանձնանում միւս բոլոր սպանութիւններից եւ թէ, առհասարակ, առանձնանում է թէ՞ ոչ: Դինքի սպանութիւնը առանձնանում է միւս բոլոր սպանութիւններից նրանով, որ սպանելով Դինքին Թուրքիան լռեցրեց Պոլսոյ հայ համայնքի ազատ արտայայտւելու ձայնը, իրաւունքներ պահանջողի ձայնը, ճշմարտութեան ձայնը, նրանք սպանեցին պոլսահայի վաղուայ տեսիլքը, իսկ որ ամենակարեւորն է, այդ սպանութեամբ նրանք մէկ անգամ եւս ապացուցեցին, որ Թուրքիան չի հանդուրժում այլախոհութիւնը, որ Թուրքիան չի հանդուրժում օտարի ներկայութիւնը թուրքական հողի վրայ:

Իր կենդանութեան օրօք Դինքը փորձում էր մօտեցնել հայերի եւ թուրքերի տեսակետները Հայոց Յեղասպանութեան հարցում, որպէսզի Թուրքիան ճանաչի Հայոց Յեղասպանութիւնը: Նա փորձում էր բարելաւել նաեւ հայ-թուրքական յարաբերութիւնները: Թուրքիայի հասցէին կատարած իր քննադատութիւնների եւ դատապարտութիւնների համար նա շատ անգամ մեղադրուեց թրքութիւնը վիրաւորելու մէջ եւ տիրաւորչակ 301 յօդուածի միջոցով բազում անգամներ կանգնեց թուրքական արդարադատութեան առջեւ: Իր պրագմատիկ մոտեցիլակերպի եւ ազատ արտայայտւելու համար նա վճարեց ամենաթանկ գինը՝ իր կեանքը:

Հրանդ Դինքի սպանութիւնից անցել է մէկ տարի: Ի՞նչ է փոխուել այդ մէկ տարուայ ընթացքում:

Կարելի չէ անտեսել այն փաստը, որ անցնող մէկ տարուայ ընթացքում Հրանդ Դինքը արժանացել է մի շարք միջապգային մեծ համբաւ վայելող մրցանակների եւ կոչումների ինչպէս օրինակ «Տարուայ լրագրող», «Տարուայ լաւագոյն լրագրող», «Տարուայ ամենախիստ լրագրող» եւ այլ, սակայն այն երկու կարեւոր ոլորտներում, որտեղ Դինքը պայքարում էր, որոնք են Հայոց Յեղասպանութեան ճանաչումը Թուրքիայի կողմից եւ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների բարելաւում, ոչ մի առաջընթաց չի արձանագրուել: Եւ արդե՞ս միանմութիւն չէր ակնկալել որեւէ առաջընթաց այդ ոլորտներում մէկ տարուայ ընթացքում: Աւելին, այսօր Հրանդ Դինքի այրին եւ փաւակները գտնւում են սպանութեան սպառնալիքի եւ փտանգի տակ: Չեն բացայայտւել Հրանդ Դինքի սպանութեան իրական կապակերպիչներն ու պատուիրատուները: Թուրքական կառավարութիւնը անում է ամէն հնարաւոր բան՝ այս դատաւարութիւնը խեղկատակի վերածելու համար:

Եթէ քննական մի հայեացք նետենք անցնող 90 տարիների հայոց պատմութեան վրայ, ապա կը տեսնենք, որ Թուրքիան ամէն յարմար առիթ օգտագործել է հայ ժողովրդին բնաջնջելու համար: 1915 թուականի ճեղասպանութիւնից արդէն 3 տարի անց թուրքական բանակը Կարաբեքիրի հրամանատարութեամբ արշաւում է Հայաստանի վրայ, ոչնչացնելու ճեղասպանութիւնից վերապրած մի բոռ հայութեանը: Սակայն, հայ ժողովուրդը հաւաքելով իր վերջին ուժերը եւ լարելով իր ճիգերը կարողացաւ արժանի հակահարում տալ Կարաբեքիրի բանակին Մարդարապատի ճակատամարտում՝ եւս մղելով նրանց Հայաստանի սահմաններից: Այսպիսով ճանապարհ հարթուեց դէպի Հայաստանի Հանրապետութեան այնքան բաղձալի անկախութեան հռչակումը:

30-ական թուականներին թուրքեր փորձեցին իրենց կիսատ թողած գործը շարունակել՝ այս անգամ արդեն դիմելով թուրքին յարիլ նենգ եւ խորմանկ միջոցի: Նրանք համագործակցելով գերմանացի ցեղագետների հետ փորձում էին ապացուցել թե՛ հայերն ունեն սեմական ծագում եւ նրանք էլ հրեաների, գնչուների եւ դրինչաների պէս արժանի են ոչնչացման: Բարեբախտաբար, Երոպայում բնակւող մեր գիտնական հայրենակիցներին յաջողուեց ապացուցել հայերի արիականութեան փաստը եւ այս ձեռով փրկել ամբողջ եւրոպահայութիւնն ու հայ ռաբնագերին ստոյգ ոչնչացումից: Այդ ժամանակ եւրոպահայերը թուով մօտաւորապէս 600, 000 (վեցհարիւր հազար) էին, իսկ հայ ռաբնագերիների թիւը հասնում էր 8,000-ի:

Գերմանիայի եւ Խորհրդային Միութեան պատերազմի ամենավտանգաւոր օրերին, երբ պատերազմի էլքը կարծես կանխորոշուած էր Գերմանիայի օգտին, Թուրքիան Խորհրդային Հայաստան ներխուժելու եւ այնտեղ բնակւոյթին հաստատուած ցեղասպանութեան վերապրողների եւ բնիկներին բնաջնջելու նպատակով Հայաստանի արեւմտեան սահմանի կենտրոնացրել էր 160.000 փնտոր: Ստալինգրադում թուրքերի համար ճակատամարտը ունեցաւ անյաջող աւարտ եւ Խորհրդային Հայաստան ներխուժելու նրանց ծրագիրը չիրականացաւ:

1915 թուականին Թուրքիան ոչնչացրեց հայկական վեց նահանգների ողջ հայ ազգաբնակչութեանը, սակայն ոչնչացումից փրկուեց պոլսահայութիւնը: Նրանք ապրիլի 24-ին ձերբակալեցին եւ ոչնչացրին պոլսահայութեան միայն հայ ինտիլիգենցիայի ներկայացուցիչներին: Սակայն քառասունական թուականներին թուրքերը վերսկսեցին իրենց կիսատ թողած գործը՝ այս անգամ արդեն ոչնչացնելով 1915 թուականին ցեղասպանութեան չենթարկուած պոլսահայութիւնը: 1942-43 թուականին «ունեւորութեան տուրք»-ի անուան տակ շատ հայերի սեփականութիւնն ու ունեցածքը գրաւելուց յետոյ 50.000 հայեր ուղարկուեցին Էրպուրմի շրջան՝ ձմեռուայ ցրտին ճանապարհներ շինելու: Իրենց ողջ կեանքում, շինարարական ոչ մի գործիք չբռնած պոլսահայերից 37.000 չդիմանալով ցրտին ու տաժանակիր աշխատանքին մահացան, իսկ ուրբեր էլ վերադարձան տուն, քայքայուած առողջութեամբ երկար չկարողացան ապրել: Ոչ հեռու անցեալում արդեն մէկ անգամ ցեղասպանութեան ենթարկուած ժողովրդի գենոֆոնդի պահպանման ու նրա շարունակականութիւնը ապահովելու տեսանկիւնից սա անչափելի մեծութեան մարդկային կորուստ էր:

Հայաստան ներխուժելու ծրագիր Թուրքիան կազմել էր նաեւ 90-ականների սկզբին, Խորհրդային Միութեան խլուրդումից յետոյ, այս անգամ արդեն անկախ Հայաստան: Թուրքիան կարծեց թե՛ Միութեան փլուրդումից յետոյ փլուրդեց նաեւ բոլոր դաշինքները: Սակայն այս անգամ էլ Ռուսական բանակի հրամանատարի յայտարարութիւնը նրանց հիապօստեցրեց: Նա յայտարարեց, որ Հայաստանի դէմ ուղղուած որեւէ փնտորական գործողութիւն Ռուսաստանը կ'ընկալի որպէս իր դէմ ուղղուած գործողութիւն եւ կը ձեռնարկի համապատասխան գործողութեան:

2007-ին սպանուեց Հրանդ Դինքը: Դինքի սպանութիւնը յիշեցում էր հայ ժողովրդին, որ ոչինչ չի մոռացուել, ոչ մի ծրագիր չի հնացել: Թուրքը չի հրաժարուել հայաջինջ իր քաղաքականութիւնից, պարպապէս սպասում էր յարմար պահի:

Այս ամէնը ի մոտի ունենալով պէտք է մտածենք, թե՛ սպանուած Դինքը ինչ պատգամ պիտի փոխանցէր մեզ, մանաւանդ այս օրերին, երբ Հայաստանում եւ Սփիւռքում գրեթէ բոլոր հայկական համայնքներում կազմակերպում են Դինքի յիշատակին նուիրուած սգահանդէսներ: Դինքը միամեայ հեռադրութիւնից մեզ պատգամում է. հայ ժողովուրդ հաւատարիմ մնայ քո հաւատքին ու եկեղեցուն, հաւատարիմ մնայ քո մշակոյթին, հաւատարիմ մնայ քո աւանդութիւններին ու սովորութիւններին, եւ ձգտիր այս ամէնը խնամաւորորդ միասնականութեան: Միասնականութիւնն է մեր ներկայի եւ ապագայի յաջողութեան միակ նախապայմանն ու գրաւականը:

ԿՈՄՊՈՍՏԵԼԱ ԲԱՂԱՔԻ ՄԱՆԹԻԱԳՕ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

2007 թ. դեկտեմբերի 8-ին՝ շաբաթ օրը, Սպանիոյ Կոմպոստելա քաղաքի Սանթիագո Մայր Տաճարի Լուսարարպետ Գերշ. Տ. Յովե Դիալը այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան՝ ընկերակցութեամբ Կոմպոստելայի քաղաքապետարանի աւագանու ներկայացուցիչներու: Կոմպոստելայէն ժամանած պատուիրակութիւնը Երուսաղէմ կը գտնուէր Կոմպոստելա քաղաքի եւ անոր պաշտպան Սուրբի՝ Սր. Յակոբոս Առաքելային նուիրուած գիտաժողովին մասնակցելու համար, որը կազմակերպուած էր Կոմպոստելայի եւ Երուսաղէմի քաղաքապետարաններու նախաձեռնութեամբ:

Պատրիարքարանի ընդունելութեան սրահի մէջ հիւրերը ընդունուեցան Պատրիարք Սրբապան Հօր եւ Միաբան Հայրերու կողմէ:

Պատրիարք Սրբապան Հայրը ողջունեց Գերշ. Տ. Յովե Դիալը եւ անոր ուղեկցող պատուիրակութեան ներկայութիւնը Հայոց Պատրիարքարանի մէջ եւ այդ այցը որակեց պատմական: Ապա պատասխան խօսքով հանդէս եկաւ Գերշ. Տ. Յովե Դիալ, որը նախ իր երախտագիտութիւնը յայտնեց իրենց հանդէպ ցուցաբերուած ջերմ ընդունելութեան համար եւ ներկայացուց գիտաժողովէն մանրամասնութիւններ: Ան նաեւ հանդէս եկաւ անակնկալ առաջարկութեամբ եւ ըսաւ, - «2010 թուականը Կոմպոստելայի համար յորեպիսանական տարի հռչակուած է, եւ քանի որ Կոմպոստելայի եւ Երուսաղէմի Պատրիարքութեան միջեւ կայ քրիստոնէական եղբայրութիւն, ուստի մեր ցանկութիւնն է, որ Հայոց Պատրիարքարանը եւս մասնակցի յորեպիսանական տարուայ հանդիսութիւններուն»: Գերշ. Տ. Դիալը մասնաւորապէս առաջարկեց Կոմպոստելայի Մայր Տաճարի մէջ Պատրիարքական պատարագ մատուցել հայկական ծէսով, կազմակերպել Երուսաղէմի Պատրիարքութեան զանաւորէն կազմուած ցուցահանդէս մը, ինչպէս նաեւ կազմակերպել մշակութային, գրական եւ պատմական գիտաժողովներ ու ներկայացնել Հայ Ժողովրդի, Հայ Եկեղեցու եւ Հայոց Յեղասպանութեան պատմութիւնը: Ի պատասխան Գերշ. Տ. Դիալի կողմէ եղած անակնկալ առաջարկութիւններուն՝ Պատրիարք Սրբապանը ըսաւ, թէ յօժարական է ընդունել առաջարկութիւնները եւ սկսիլ ծրագրերու յառակեցմամբ: Հանդիպման աւարտին Գերշ. Տ. Դիալ եւ Պատրիարք Սրբապան Հայրը յիշատակի նուէրներ փոխանակեցին: Պատրիարք Սրբապան ընդունեց սպաներէն Եագոպոս ձեռագրի լուսատիպ մէկ օրինակ, եւ Գերշ. Տ. Դիալին ներկայացուց սատափէ կողքով Աստուածաշունչ մը: Ապա հիւրերը հրաժեշտ տալով Պատրիարք Սրբապանին եւ Միաբանութեան անդամներուն առաջնորդուեցան դէպի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար, ուր Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրիան Արք. Մանուկեան հիւրերուն ծանօթացուց Եկեղեցուն եւ տուաւ հակիրճ տեղեկութիւններ Տաճարի մասին: Հիւրերը Գլխադրի մատրան մէջ ուխտի աղօթք կատարելէ վերջ՝ հրաժեշտ տալով մեկնեցան Հայոց Վանքէն:

ՏԻԱՐ ԴԱԻԹ ԱԵՏԵՍԵԱՆԻ ԱՅՅԸ ՀԱՅՈՅ ՎԱՆՔ

2007 թ. դեկտեմբերի 29-ին՝ շաբաթ օրը, տարեկան իր միասնեայ արձակուրդը եւ տօնական շրջանը անցկացնելու նպատակով Երուսաղէմի Հայոց Վանք ժամանեց Հայաստանի Հանրապետութեան Տնտեսութեան եւ Էլեմէնտից փոխ-նախարար Տիար Դաւիթ Աւետիսեան:

Իր միանման կեցության ընթացքին Տիար Աւետիսեան մասնակցեցաւ եկեղեցեական բոլոր տոնակատարութիւններուն եւ ծիսական արարողութիւններուն, ինչպէս նաեւ տոնական հանդիսութիւններուն: Ան մասնակցեցաւ նաեւ տոնական առիթներով մատուցուած միաբանական ճաշկերպութիւններուն, որոնց ընթացքին խօսք առնելով իր երախտագիտութիւնը յայտնեց վանական իշխանութեանը՝ իր հանդէպ ցուցաբերած ջերմ ընդունելութեան եւ վերաբերմունքի համար ու իր գնահատանքը արտայայտեց Սուրբ Երկրի մէջ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ծառայած հայանպաստ եւ ազգանուէր գործունէութեանց համար:

Տիար Աւետիսեան առիթ ունեցաւ նաեւ այցելել Սուրբ Յարութեան, Բէթղէհէմի, Գեթսեմանիի, Համբարձման լերան եւ Գալիլիոյ շրջանի սրբավայրերն ու եկեղեցիները եւ հոգեպէս շփուել այդ վայրերու մէջ գտնուող սրբութիւններու հետ: Ան այցելեց նաեւ Բարայէի մէջ գտնուող տարբեր պատմական եւ մշակութային արժէք ներկայացնող վայրեր:

Տիար Աւետիսեան նաեւ եղաւ այս տարուայ Ծննդեան տօնի առթիւ կատարուող ջրօրհնէքի կնքահայրը: Ի դէպ նշենք, որ Տիար Աւետիսեան մկրտուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մէջ եւ ինքզինք կը համարէ այս Տաճարի հոգեւոր պաւսկը:

2008 թ. յունուարի 30-ին, հոգեպէս նորոգուած եւ գոհունակ պրտով Տիար Աւետիսեան վերադարձաւ Հայաստան:

Կ'ակնկալենք, որ Տիար Դաւիթ Աւետիսեանի օրինակին հետեւեն հայրենի իշխանութեան այլ պաշտօնատար այրեր, ովքեր պիտի նախընտրեն իրենց տարեկան արձակուրդը եւ տօնական շրջանը անցկացնել Երուսաղէմի Միաբանութեան անդամներու եւ հայ համայնքի հետ:

Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԸ ԱՄԵՆ. Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐԸ. ՄՈՒԹԱՖԵԱՆԻ ԱՅՅԸ ԵՐՈՒՍԱԴԵՄ

2008 թ. Յունուար 13-ին՝ կիրակի օրը, հին տոմարով Բրիաւոսի Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնը նշելու համար Երուսաղէմ ժամանեց Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան: Պատրիարք Սրբապանին կ'ողեկցէին Արժպ. Տ. Պօղոս Աւագ Բահանայ Պարոնեան եւ ուխտաւորներու խումբ մը:

Միջաբաթեայ իրենց կեցութեան ընթացքին, Պատրիարք Սրբապան Հայրը եւ ուխտաւորները մասնակցեցան եկեղեցական արարողութիւններուն եւ տօնական հանդիսութիւններուն: Յունուարի 13-ի երեկոյեան ուխտաւորները մասնակցեցան Ժառանգաւորաց Վարժարանի Ամանորեայ հանդէսին, որմէ ետք Բաղչաթաղի վարդապետաց ճաշարանի մէջ անոնք Ամանորի առթիւ մատուցուած տօնական ընթրիք ունեցան Պատրիարք Սրբապան Հօր եւ միաբանութեան անդամներու հետ: Նոյն օրը կէսգիշերին անոնք մասնակցեցան մեծ բակի մէջ Երուսաղէմին յառուկ Ամանորեայ տօնական հանդիսութեանը:

Յունուար 18-ին, Բէթղէհէմի մէջ նշուեցաւ Բրիաւոսի Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնը: Պատրիարք Սրբապան Հայրը եւ ուխտաւորները իրենց մասնակցութիւնը բերին Ծննդեան Տաճարի մէջ մատուցուող յառուկ ծիսական արարողութիւններուն եւ թափօրներուն: Պատրիարք Սրբապան Հայրը հանդիսապետեց նաեւ մուրի թափօրը ինչպէս նաեւ մասնակցեցաւ Ծննդեան տօնի առթիւ տրուած երեկոյեան հիւրասիրութեանը, որուն իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Պաղեստինի Ինքնավարութեան նախագահ Տիար Մահմուդ Աբբասը՝ ընկերակցութեամբ

Պաղեստինեան կառավարութեան պաշտօնատար այրերու եւ բարձրաստիճան վիճակ ունեւորակներու:

Յունուարի 19-ին, Պատրիարք Սրբապան Հայրը եւ ուխտաւորները հոգեպէս պօրացած վերադարձան Կ. Պոլիս:

Ի դէպ, այս տարի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօներուն մասնակցելու նպատակով Երուսաղէմ ժամանած էին նաեւ հոգեւորականներ Սր. Էջմիածնէ: Յունուարի 16-ին Երուսաղէմ ժամանեցին Էջմիածնի Մայր Տաճարի Լուսարարապետ Գերշ. Տ. Արարատ Եպս. Գալթագճեան, Հոգշ. Տ. Մեսրոպ Արղ. Պարսամեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Արղ. Բարսեղեան: Հիւր հոգեւորականները իրենց մասնակցութիւնը բերին տօնական շրջանի ծիսական արարողութիւններուն եւ ուխտի պատարագ մատուցեցին Սր. Գլխաղբի, Բրիստոսի Գերեզմանի, Բեթղէիէմի եւ Գեթսէմանիի սրբավայրերու մէջ: Հակառակ իրենց կեցութեան կարճ ընթացքին, անոնք կրցան այցելել նաեւ Համբարձման լերան եւ Գալիլիոյ շրջանի սրբավայրերը եւս, ինչպէս նաեւ Իսրայէլի պատմա-մշակութային կարեւորութիւն ներկայացնող տեսարժան վայրեր: Անոնք մասնակցեցան նաեւ Յորդանան գետ կառարուած ուխտագնացութեանը եւ ջրօրինէքի արարողութեանը: Յունուարի 28-ին, հիւր հոգեւորականները իրենց ուխտը նորոգած եւ հոգեկան գոհունակութեամբ վերադարձան Սր. Էջմիածին:

Նշենք նաեւ, որ Ծննդեան ու Աստուածայայտնութեան տօնը նշելու նպատակով, Հայաստանէն Երուսաղէմ ժամանած էին ուխտաւորներու խումբ մը՝ Արծպ. Տ. Միսիթար Բին. Ալոյեանի ուղեկցութեամբ:

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՍՏԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԷՍ

2008 թ. Յունուարի 13-ին՝ կիրակի օրը, Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամանորեայ համոյնը:

Պատրիարք Սրբապան Հօր եւ Միաբան հայրերու սրահ մուտք գործելէն ետք Ժառանգաւոր սաները երգեցին Վարժարանի հիմնը՝ «Միրոս ի սիրոս»-ը, որուն յաջորդեց Վարժարանի տեսուչ Հոգշ. Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեանի բացման խօսքը:

Այնուհետեւ Ժառանգաւոր սաները խմբային երգեցողութեամբ կատարեցին «Երնէկ թէ այս Նոր Տարին», «Ապգ փառապանծ» եւ «Joy to the world» երգերը: Սաներէն Լեւոն Ալոյեան, Անդրանիկ Յովհաննէսեան, Տիգրան Բէքիսիպեան, Զատին Ոսկանեան եւ Գէորգ Առաքելեան վարպետօրէն ասմունքեցին հայ դասականներու բանաստեղծութիւններ, իսկ Էդգար Գէորգեան փայլուն կատարմամբ դաշնամուրի վրայ նուագեց դասական կտորներ:

Հանդէսի ընթացքին Ժառանգաւոր սաները ներկայացուցին Յովհաննէս Թումանեանի «Բարեկենդան» եւ «Բեֆ անողին, քեֆ չի պակասի» հեքիաթներուն գեղեցիկ բեմականացումը՝ բեմադրող Վարժարանի ուսուցիչ Տիար Դաիթ Հաարաթեանի մասնակցութեամբ:

Բեմադրութենէ վերջ, սրահ մուտք գործեց Կաղանկ Պապուկը, որ ողջունեց բոլոր ներկաներուն եւ իր բարեմաղթանքները փոխանցեց անոնց:

Հանդէսի աւարտին՝ փակման խօսքի ընթացքին Պատրիարք Սրբապան Հայրը շնորհաւորեց բոլոր ներկաներու Ամանորը եւ մասնաւորապէս նշեց, «Այլ շնորհաւորեմ բոլորիդ Ամանորը այն ակնկալիքով, որ այս նոր տարին շնորհներով ծաղկուն եւ արդիւնաշատ տարի մը պիտի ըլլայ, եւ իւրաքանչիւրս իրեն բաշխուած աստուածոտր շնորհը ի սպաս դնելով մեր համայնական կեանքի ծաղը պիտի ճոխացնէ:

Յակոբեանց Միաբանությունը՝ Պատրիարք Սրբապան Հօր զխառնությունը ուխտագնացություն կատարեց դէպի Յորդանան գետ: Ուխտագնացությունը կը կատարուի դէպի այն վայրը, ուր ըստ աւանդութեան մկրտուած է Յիսուս Բրիստոս, որն սակայն այժմ կը գտնուի Իսրայէլի Կինուորական արգելեալ գօտիի մէջ: Հոն այցելելու համար կը պահանջուի յատուկ արտօնություն եւ Կինուորական ուղեկցություն:

Յորդանան գետի ափին, Պատրիարք Սրբապան Հօրը Կինուորական Կօրամասի հրեայ հրամանատարի դիմաորելէն վերջ կատարուեցաւ Հոգեհանգստեան արարողություն եւ երգուեցան քանի մը շարականներ:

Ապա Միաբանութեան անդամները եւ ուխտաւորները իջան գետի ափ, ուր Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեանի հանդիսապետութեամբ կատարուեցաւ ջրօրհնէքի արարողություն, որու ընթացքին խաչը իջեցուեց գետը եւ «Առաքելոյ Աղանոյ» շարականի երգեցողութեամբ Սուրբ Միռոնը թափուեցաւ Յորդանան գետի մէջ:

Այնուհետեւ, հրաժեշտ տալով Կինուորական հրամանատարին, միաբանությունը ճաշեց Երիքովի ճաշարաններէն մէկուն մէջ, որմէ վերջ այցելեց նաեւ Երիքովի վանքապատկան կալուածք, ուր հիւրընկալուեցաւ կալուածքի պահապան ընտանիքի կողմէ: Երուսաղէմ վերադարձի ճանապարհին, միաբանությունը այցելեց նաեւ Փորձութեան լեռ:

Ուխտագնացութեանը կը մասնակցէին մեծ թուով սաղիմահայեր, ինչպէս նաեւ Իսրայէլի տարբեր քաղաքներու մէջ բնակուող հայեր: Յորդանան գետի դիմացի ափէն ջրօրհնէքի արարողութեանը կը հետեւէին նաեւ հոն ժամանած խումբ մը յորդանանահայեր:

ԿՈՐԻՒՆ ԱՐԵՂԱՅ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄԱԿԱՆՔ

Եր. 1 Դեկտ. 07.- Արքեպ. Առաքելոցն՝ Անդրէի եւ Փիլիպպոսի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Տ. Թադէոս Վրդ. Զիրիկեանց։

Կիր. 2 Դեկտ. 07.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Երվանդան։ Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան։

Քշ. 3 Դեկտ. 07.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Արք. Երվանդան։

Գշ. 4 Դեկտ. 07.- Ընծայումն Ս. Աստուածածնի։ Առաւօտուն, Տ. Արիս Արք. Երվանդանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար։ Օրումն հանդիսատար Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան։

Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն, Կիւլլապի Կիւլպէնկեանի եւ իր գերդաստանի հոգիներուն ի հանգիստ։ Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Երվանդան։

Եր. 8 Դեկտ. 07.- Արքեպ. Նիկողայոսի Աբիւռայ Սմանչեպետը Հայրապետին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Տ. Շահէ Բեյ. Հայրապետեան։

Կիր. 9 Դեկտ. 07.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ։ Ժամարարն էր Տ. Եղիշէ Արք. Դաւթեան։

Ուր. 14 Դեկտ. 07.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Արք. Երվանդան։

Եր. 15 Դեկտ. 07.- Առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Տ. Նորայր Արք. Գազազեան։

Կիր. 16 Դեկտ. 07.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան։ Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

Ուր. 21 Դեկտ. 07.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Արք. Երվանդան։

Եր. 22 Դեկտ. 07.- Յղութիւն Ս. Աստուածածնի։ Առաւօտուն, Տ. Արիս Արք.

Երվանդանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար։ Օրումն հանդիսատար Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Գուսան Վրդ. Այնանեան։

Կիր. 23 Դեկտ. 07.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ։ Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէֆեան։

Ուր. 28 Դեկտ. 07.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Եր. 29 Դեկտ. 07.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան։

Կիր. 30 Դեկտ. 07.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Արքազան Ժամարարն էր Տ. Ընծայ Վրդ. Բարախանեան։

Ուր. 4 Յուն. 08.- Լուսարարապետ Արքազան հանդիսապետեց Մայր Տաճարի մէջ պաշտօնած Աւագ տօներու առաջին հանդիսատար նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս. Արոող յ «Օրհնեցէ՛ք զՏէր» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան։

Եր. 5 Յուն. 08.- Ս. Դաւթի Արքազարէին եւ Յակովբայ Տեառնեղբոր (Տօն Առաքելական Ս. Արքեպ. Երուսաղէմի)։ Ըստ սովորութեան առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Պատրիարք Արքազան Հայր շուրջաւ եւ եմփփորոն զգեցած կանգնեցաւ Տեառնեղբոր Արքեպ. պատուանդանին առջեւ, ուր մնաց, մինչեւ ժամերգութեան աւարտը. ընդունելով, Միաբանութեան եւ զպիրներուն շնորհաւորութիւնները։

Օրումն հանդիսատար Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Արիս Արք. Երվանդան։

- Ս. Պատարագին «Հայր Մեր»էն առաջ Տ. Սեւան Արք. Ղարիպեան հանդիսապետեց Ս. Արոող յ հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին։

Կիր. 6 Յուն. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Իսահակ Արք. Մինասեան։

- Կէսօրէ ետք, Լուսարարայեւտ Սրբազանը հանդիսացեալ Մայր Տաճարին մէջ պաշտօնած Ս. Ստեփանոսի նախատօնակին: Բուրվառակիր հայրերն էին Տ. Բագրատ Վրդ. Պուրնէճեան եւ Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Եր. 7 Յուն. 08.- Արքայն Ստեփանոսի նախասարկաւագին եւ առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Արոտոյս քարեշնորհ սարկաւագները եւ ուրարակիրները, թիւով 12 առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներու, մարգարտագարդ սաղաւարտներով, տապանակ ու բուրվառ ի ձեռնին, կատարեցին «Սարկաւագաց Հանդէսը»: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս. Ստեփանոսի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Եղիշէ Արդ. Դաւթեան:

- Դիշերասկիզբին ժառանգաւորաց ճաշարահին մէջ տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք՝ Սարկաւագաց Տօնին առթիւ: Խօսք առին Տրդ. Իվան Գեաղայեան, դպրոցին Տնօնչը Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան, սարկաւագապետներն Տ. Բագրատ Վրդ. Պուրնէճեան, Հայաստանի Տնտեսութեան փոխ-նախարար Տիար Դաւիթ Աւետիսեան, փոխ տեսուչ Տ. Շնորհի Արդ. Պալոյեան, սարկաւագներու կողմէն Սահակ Արկ. Յովակիմեան, շնորհաւորական խօսք քրաւ Տ. Սեւան Արք. Դարիպեան: Պատրիարք Սրբազան Հայրը քրաւ իր փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ «Պահպանիչ»ով:

- Դիշաւոր Առաւելոյց նախատօնակին հանդիսացեալ Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Նախատօնակէն ետք Դրդ. դասարանէն Կարապետ Հայրապետեան, եւ Անտոն Բայեան, ստացան Ուրարի տըշութիւն, ձեռամբ Տ. Սեւան Արք. Դարիպեանի:

Դշ. 8 Յուն. 08.- Ս. Առաւելոյցն Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատուցեց Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Դշ. 9 Յուն. 08.- Կէսօրէ ետք Լուսարարայեւտ Սրբազանը հանդիսացեալ Որդւոյ Որոտման հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք, Ս. Արոտոյ «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը քարծրացաւ Պատրիարքարան:

Եշ. 10 Յուն. 08.- Տօն Արքայն Որդւոյն Որդաւան: Մայր Տաճարի Ս. Դիւղարի մատրան մէջ, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Լուսարարայեւտ Սրբազանը: Առընթերակայ վարդապետներն էին Տ. Բագրատ Վրդ. Պուրնէճեան եւ Տ. Թէոդորոս Վրդ.

Զաւարեան: Բուրվառակիր վարդապետներն էին Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան եւ Տ. Եղիշէ Արդ. Դաւթեան:

- Լուսարարայեւտ Սրբազանը ամպիոպանի տակ խաչափայտի մասունքն ի ձեռնին, հանդիսացեալ, եռադարձ մեծահանդէս քափօրին: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը քափօրով Ս. Արոտոյ «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ քարծրացան Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը, օրհնուած ճշխար քաժնելով բոլորին, փակելով Աւագ Տօներու շարքը:

Եր. 12 Յուն. 08.- Արքայն Բարսէղի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւղարի: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

Կիր. 13 Յուն. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսացեալ էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

- Իրիկնադէմին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ եղան, ժառանգաւորաց սրահին մէջ, տեղի ունեցած «Կաղանդի» հանդէսին:

Բշ. 14 Յուն. 08.- Կաղանդ - Նոր Տարի քստ Հին Տոմարի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց «Ժամօրհնող» Տ. Կանիկ Վրդ. Մանկասարեան:

Որ. 18 Յուն. 08.- Զրազայոյց Ս. Մննդեան: Առաւօտեան ժամը 9ին ընդհանուր ոստիկանապետը, Երուսաղէմի ոստիկաններ Պատրիարք Սրբազան Հօր այցելեցին Ս. Մննդը շնորհաւորելու եւ դէպի Բերդեհէմ քափօրին հսկողութեան համար: Ժամը 10ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը շարանով ճամբայ ելաւ դէպի Բերդեհէմ:

Ճամբու կիսուն Յունաց Ս. Եղիայի վանքին առջեւ դիմաւորելու եկած էին Պէյր-Սահուրի եւ Պէյր-Ճալայի քաղաքապետները, Բերդեհէմի փոխ քաղաքապետ եւ պետական ներկայացուցիչները: Իսրայէլեան հինգ ոստիկան ծիաւորներ ընկերացան Պատրիարք Սրբազան Հօր ինքնաշարժին, առջեւէն եւժովերէն մինչեւ Ռաֆէլի գերեզմանը, որմէ ետք քափօրը Պաղեստինեան չորս ծիաւորներով առաջնորդուեցաւ դէպի Թերդեհէմ: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով Պատրիարք Սրբազանը եւ Միաբանութիւնը յառաջացան դէպի հրապարակ: Բերդեհէմի հրապարակին վրայ, դիմաւորուելով կառավարիչէն, ընդհանուր ոստիկանապետէն, քաղաքապետէն, Հ. Ե. Միութեան

և Մ.Լ.Միտրեան և այլ սկստուական խումբերէն, «Թորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ բափօր բարձրացաւ Ս. Մենդեան Տաճարի Հայոց Վանքը:

- Յետ միջօրէի ժամը 2ին Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Պատրիարք Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»ով մուտք կատարուեցաւ Ս. Մենդեան Տաճար և Ս. Այր:

Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուցեց Տ. Մեսրոպ Արդ. Պարսամեան: Ապա Միաբանութիւնը բարձրացաւ Հայոց Վանք, բակին մէջ կարդացուեցաւ Ս. Մենդեան Աւետարան և երգուեցաւ «Փառք ի Բարձունս»:

Շր. 19 Յուն. 08.- Տօն Մենդեան և Աստուածայայտութեան: Կէս գիշերէն երկու ժամ առաջ ժամը 10ին, գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Մ. Մենդեան այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի Բարձունս»ի երգեցողութիւնը: Պաղեստինեան կառավարութեան վարչապետը, և Աւագանին ներկայ եղան, և Պատրիարք Սրբազան Հօր Հայերէն և Անգլերէն պատգամներէն ետք մեկնեցան, շնորհաւորելով Պատրիարք Սրբազան Հայրը: Պաշտամունքները շարունակուեցան տաճարին մէջ: Պատրիարք Սրբազան Հայրերը և Լուսարարապետ Սրբազանը վերադարձան երուսաղէմ: Աւագ Սեղանին վրայ պատարագեց և բարոքեց Տ. Պարբեւ Արդ. Բարսեղեան: Ջրօրհնէֆի արարողութեան հանդիսապետեց Տ. Արարատ եպս. Գալբագեան: Ս. Մենդեան Այրին մէջ պատարագեց Տ. Արարատ եպս. Գալբագեան: Պաշտամունքներու տարտին, ժամը 6ին, Միաբանութիւնը բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ս. Մենդեան Աւետարան և երգուեցաւ «Փառք ի Բարձունս»: Միաբանութիւնը վերադարձաւ երուսաղէմ: Երուսաղէմի մէջ նրագալոյցի արարողութիւն կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Տ. Նիշէ Արդ. Դաւթեան: Նախատօնակին հանդիսապետեց տաճարին տեսուչը Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան: Արարողութիւնները կ'աւարտին Տեսչարանին մէջ: Առաւօտուն Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պատարագեց Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան: «Ջրօրհնէֆ»ի արարողութեան հանդիսապետեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Կիր. 20 Յուն. 08.- Յիշատակ Մեռելոց: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Պատարագեց Աւագ Թարգման Տ. Գուսան Վրդ. Այնանեան: Հոգեհանգստեան կարգին հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շր. 26 Յուն. 08.- Տօն Անուանակոչութեան

Տաճան: Առաւօտուն, Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց և բարոքեց Տ. Արարատ եպս. Գալբագեան: Դէպի վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն, Միաբանութիւնը «Լոյս ի լուսոյ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց «Տնօրհնէֆ»ի արարողութեան, որ կրկնուեցաւ վարդապետաց սեղանատան մէջ:

Կիր. 27 Յուն. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ծախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Բշ. 28 Յուն. 08.- Տօն Մենդեան Ս. Յովհաննէս Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թաղէս Վրդ. Ջրիկեանց:

Շր. 2 Փետր. 08.- Արքեպիսկոպոս Թագաւորին և Խօթն մանկանցն եփեսոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան:

Կիր. 3 Փետր. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գալագեան:

Շր. 9 Փետր. 08.- Արքեպիսկոպոս Կիւրաքի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Շնորհիմ Արդ. Պաղոյեան:

Կիր. 10 Փետր. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ծախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 16 Փետր. 08.- Արքեպիսկոպոս Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 17 Փետր. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէկեան:

Ուր. 22 Փետր. 08.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շր. 23 Փետր. 08.- Ս. Մարգարէ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս.

Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Արաջանեան:

- Ըստ սովորութեան կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն հանգուցեալ ազգային բարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի ծնողաց Սարգսի եւ Տիրուհոյ եւ գերդաստանի ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիր. 24 Փետր. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արք. Մինասեան:

Դշ. 26 Փետր. 08.- Տեառներնդ առաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

- Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցե՛ք» ի եւ «Հսկման» կարգը: Հանդիսապետեց Տ. Արիս Արք. Երվանեան:

Դշ. 27 Փետր. 08.- Տեառներնդ առաջ: Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Արիս Արք. Երվանեան:

Եր. 1 Մարտ 08.- Արքայն Իսահակայ Պարբեւի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Արք. Բաղդասարեան:

Կիր. 2 Մարտ 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արք. Յովհաննիսեան:

Դշ. 5 Մարտ 08.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Եշ. 6 Մարտ 08.- Ս. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 Վկայիցն: Յիշատակ Մեռելոց եւ Տօն Ազգային: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Ժողովապետաց Վարժարանի Տեսուչը Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան:

Լուսարարապետ Սրբազանը հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կարողիկոսի անուան տօնին ստրիւ կատարուած «Հայրապետական Մաղարանք»ին:

Ուր. 7 Մարտ 08.- Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Անտարապնիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան որ նաեւ քարոզեց: Ժամարարն էր Տ. Վազգէն Արք. Ալեքեան:

Եր. 8 Մարտ 08.- Կ. Պապայ. Վ. Ժողովայն Հարիւր Յիսուն Հայրապետացն: Ս. Պատարագը

մատուցուեցաւ ի Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Երպէթեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ Խորանը. Սեղանները եւ գլխաւոր Սրբանկարները, Համարածի շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռնով:

Կիր. 9 Մարտ 08.- Ընդհանրական: Փակեալ Խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Տ. Բարսեղ Վրդ. Գալեմտէրեան:

Դպրապետի պաշտօնը վարեց Տ. Դուսան Վրդ. Ալեանեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Բագրատ Վրդ. Պուրնէճեան:

Դշ. 12 Մարտ 08.- Սկիզբն Կարգաց Մեծի Պահոց: Առաօտեան, Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Արեւազայ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք «Խաղաղական»ի առաջին ժամերգութիւնը:

Եշ. 13 Մարտ 08.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ քարոզեց Լուսարարապետ Սրբազանը:

Ուր. 14 Մարտ 08.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Եր. 15 Մարտ 08.- Արքայն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Թադէոս Վրդ. Զիրիկեան:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամատրան մէջ, պաշտուեցան ժամերգութիւնը եւ նախատօնակը: Կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր քափօր: Թափօրապետն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրանեան:

Կիր. 16 Մարտ 08.- Բառասնորդաց: Արտաւանան: Գիշերային եւ Առաօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Լուսարարապետ Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք, մեր բաժնին մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ մեծահանդէս եռադարձ քափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանաւորելոյն շուրջ, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

2007 թ. Դեկտեմբեր 24-ին՝ Երկուշաբթի, Ծննդեան նախառոնակին, Բեթղեհեմի նախագահական պալատին մեջ՝ Պաղեստինեան Ինքնավարության նախագահ Տիար Մահմոդ Աբբասի կողմէ Լատինաց Պաղեստինի Ամեն. Ս. Միշէլ Սապահ պարգեւատրուեցաւ շքանշանով: Պարգեւատրման հանդիսութեանը մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեանի եւ Տ. Գուսան Վրդ. Ալմանեան:

2007 թ. Դեկտեմբեր 26-ին՝ Չորեքշաբթի, Ծննդեան տօնը շնորհաւորելու նպատակով միաբանութեան անդամները՝ գլխաւորութեամբ Գերշ. Ս. Արիս Արք. Շիրվանեանի այցելեցին Ֆրանչիսկան միաբանութեան Բուստոլին եւ անդամներուն ինչպէս նաեւ Լատինաց Պաղեստինի Ամեն Ս. Միշէլ Սապահին:

Նոյն օրը, Ծննդեան տօնը շնորհաւորելու նպատակով, Պաղեստինի Սրբապան Հայրը այցելեց Պապական Նուիրակ Անթոնիօ Ֆրանքօին՝ ընկերակցութեամբ Ս. Արիս Արք. Շիրվանեանի եւ Տ. Իսահակ Արք. Մինասեանի:

2007 թ. Դեկտեմբեր 31-ին՝ Երկուշաբթի, Իսրայէլի նախագահ Շիմօն Պերէսի կողմէ Նոր Տարուայ առթիւ Երուսաղէմի քրիստոնէայ կրօնական պետերուն տրուած հիւրասիրութեանը Հայոց Պաղեստինաբարանի կողմէ մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան, Ս. Սեան Արք. Լարիպեան եւ Տ. Գուսան Վրդ. Ալմանեանը:

2008 թ. Յունուար 8-ին՝ Երեքշաբթի, Ծննդեան տօնը շնորհաւորելու նպատակով, միաբանութեան Անդամները՝ գլխաւորութեամբ Ս. Սեան Արք. Լարիպեանի այցելեցին

Լարի, Ասորի եւ Եթովպիական եկեղեցիներու կրօնական պետերուն:

2008 թ. Յունուար 10-ին՝ Հինգշաբթի, պաշտօնական այցով Իսրայէլ գտնուող Միացեալ Նահանգներու նախագահ Տիար George Bush այցելեց Բեթղեհեմի Ծննդեան Սբ. Տաճար: Տաճարի մուտքին ան դիմաւորուեցաւ Ս. Արիս Արք. Շիրվանեանի, Տ. Գուսան Վրդ. Ալմանեանի, Տ. Խաղ Արք. Ճոննուրեանի եւ յունաց ներկայացուցիչներու կողմէ:

2008 թ. Յունուար 15-ին՝ Երեքշաբթի, Հայոց Ծննդեան տօնին հրապրելու նպատակով, Պաղեստինի Սրբապան Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեան քանի մը Սրբապան եւ Վարդապետ հայրերու, այցելեց Պաղեստինի Ինքնավարութեան նախագահ Տիար Մահմոդ Աբբասին:

2008 թ. Յունուար 22-ին՝ Երեքշաբթի, Հայոց Ծննդեան տօնը շնորհաւորելու նպատակով Պաղեստինաբարան այցելեցին Լատինաց Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Ամեն. Ս. Միշէլ Սապահ Պաղեստինի Սրբապանի, Ֆրանչիսկան միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Կուստոլի, ինչպէս նաեւ Լարի, Ասորի, Եթովպիական, Անգլիկան, Լուտերական եւ այլ եկեղեցիներու Հոգեւոր Պետեր:

2008 թ. Յունուար 23-ին՝ Չորեքշաբթի, Նոր Տարուայ առթիւ Երուսաղէմի քաղաքապետ Ուրի Լուփոյիանակու կողմէ քաղաքապետարանի մէջ տրուած հիւրասիրութեանը Հայոց Պաղեստինաբարանի կողմէ մասնակցեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան եւ Տ. Գուսան Վրդ. Ալմանեան:

2008 թ. Փետրուար 4-ին՝ Երկուշաբթի, Հայոց Ծննդեան տօնը շնորհադրելու նպատակով, Հայոց Պատրիարքարան այցելեց Պապական Նուիրակ Անթոնիո Ֆրանքոն:

2008 թ. Փետրուար 21-ին՝ Հինգշաբթի, King David հիւրանոցի մէջ, պաշտօնական այցով Իսրայէլ գտնուող Ռումինիոյ Արտաքին Գործերու Նախարարի պատուին տրուած հիւրասիրութեանը ներկայ գտնուեցան Տ. Արիս Արք. Շիրվանեան եւ Տ. Գոսան Վրդ. Ալճանեան:

2008 թ. Փետրուար 25՝ Երկուշաբթի, Պատրիարք Սրբապան Հայրը ընդունեց Վատիկանէն Երուսաղէմ ժամանած Կարդինալ Leonardo Saroni-ին, որուն կ'ընկերակցէր Երուսաղէմի Պապական Նուիրակ Անթոնիո Ֆրանքո:

Նոյն օրը՝ կէսօրէ վերջ, Եաֆայի դրան մօտ Կարդինալ Leonardo Saroni դիմադրուեցաւ քրիստոնէական տարբեր յարանոսանութեանց կրօնական ներկայացուցիչներու կողմէ: Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչներ էին Տ. Արիս Արք. Շիրվանեան եւ Տ. Գոսան Վրդ.

Ալճանեան: Ապա ան եկեղեցական թափօրով առաջնորդուեցաւ դէպի Սբ. Յարութեան Տաճար, ուր դիմադրուեցաւ Տաճարի հայ, յոյն եւ լատին տեսուչներու կողմէ:

2008 թ. Փետրուար 28-ին՝ Հինգշաբթի, Լիթվանիոյ անկախութեան տօնի առթիւ՝ դեսպանի կողմէ Tel-Aviv-ի Gan-Hair սրահին մէջ կապմակերպուած հիւրասիրութեանը եւ համերգին ներկայ գտնուեցաւ Տ. Գոսան Վրդ. Ալճանեան:

2008 թ. Մարտ 3-ին՝ Երկուշաբթի, Իսրայէլի նախագահ Տիար Եիսօն Պերէսի կողմէ՝ պաշտօնական այցով Իսրայէլ գտնուող Հունգարիոյ նախագահի պատուին տրուած հիւրասիրութեանը ներկայ գրուեցաւ Տ. Գոսան Վրդ. Ալճանեան:

2008 թ. Մարտ 10-ին՝ Երկուշաբթի, American Colony հիւրանոցի մէջ Անգլիոյ նախկին վարչապետ Tony Blair-ի նախաձեռնութեամբ Երուսաղէմի տարբեր եկեղեցիներու հոգևոր պետերու հետ տեղի ունեցած ժողովին մասնակցեցաւ Տ. Գոսան Վրդ. Ալճանեան:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենդեան Պատգամ	Գարեգին Բ.	
	Վեհ. Կաթողիկոս	3-5
Մենդեան Պատգամ	Թ. Ա. Մ.	6-7
<i>Christmas Message</i>	<i>T.A.M.</i>	8-10
ԿՐՕՆԱԿԱՆ		
- «Որդիք Որոտման»	Նուրհան Արք.	
	Մանուկեան	11-13
- Երկնային Բոյս»	Սամուէլ Մ. Վրդ.	
	Աղոյեան	14-16
- Թարգմանիչները	Բագրատ Վրդ.	
	Պուրնէֆեան	17-20
- Գերսեմանիի Երկունքը	Ջարեհ Թօփալեան	20-25
- Ես եմ Ճշմարիտ	Ալպէն	
Որբատունկը	Նորատունկեան	26-28
- Յամեցող Գարունը	Յակոբ Արք.	
	Գլենեան	29-31
ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ		
- Փառաւորեմ	Լուսինէ	
Անունը Սուրբ	Մարաբեան	32
ԳՐԱԿԱՆ		
- Եղիշէ Արք. Դուրեան	Ժիրայր	
(1860-1930)	Նտտեան	33-36
- Օշական	Եղիշէ Արք.	
	Դուրեան	36-37
- Սուրէնը	Մարգարէտ Մարկոսեան	38-40
ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ		
- Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսէն		41
- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսէն		42
- Հոռմի Պենետիկդ ԺԶ. Սրբազան Պապէն		43
- Թուսիոյ Ալէքսէյ Բ. Ամեն. Սրբազան Պատրիարքէն		44
ԵԿԵՂԵՅԱԳԻՏԱԿԱՆ		
- Հայ Եկեղեցւոյ Տոները	Ջաւէն Ա. Քենյ.	
Ըստ Տոնացոյցի	Արգումանեան	45-47
- Ո՞ւր Մկրտեց Յովհաննէս	Անգլերէնէն Բարգմանեց	
	Բարսեղ Վրդ.	
	Գալէմտէրեան	48-54

- Էմմաուսի ծամբուն վրայ	Ջարեհ Թօփալեան	55-59
- Սրտառուչ Հաւաքական եւ Գիտակցական Մկրտութիւն մը	Գեղարդ Արդ. Քիւսպէկեան	60-61
- Խոսքովիկ Թարգմանիչ Հայոց	Գրաբարէ Բարգմանեց Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան	62-68

ՊԱՏՄԱԿԱՆ

- Անիրաւ Ոտնձգութիւններ եւ Պատմագրական Խեղարքիւրումներ	Թորգոմ Փոսթանեան	69-75
--------------------------------------------------------------	---------------------	-------

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

- Անսովոր Աստիճանի մը Պտտմութիւնը	Նահապետ Մելիքեան	76-81
- Հոլանտայի «Խենքը»	Ջենոբ Ա. Քենյ.	82-89
- Մարդկային Հոգեկան Երկուութիւնը	Նալպանտեան	89-90
- Լաւատեսութիւնը քէ Յոռետեսութիւն	Սամուէլ Սրկ. Սաֆարեան	91-93
- Վերջին Այց Երուսաղէմի Ս. Փրկիչ Վանքի	Արտէն Ա. Քենյ. Աշենեան	94-95
- Հրանդ Դինքի Անմար Յիշատակին	Կորին Արդ- Բաղդասարեան	96
- Կոմպոստելա Քաղաքի Սանքիագո Մայր Տաճարի Լուսարարայետի Այցը Պատրիարքարան		96-97
- Տիար Դաւիթ Աւետիսեանի Այցը Հայոց Վանք		97-98
- Կ. Պոլսոյ Պատրիարք Մեսրոպ Արք. Մուրաֆեանի Այցը Երուսաղէմ		98-99
- Ժառանգաւորաց Վարժարանի Ամանորեայ Հանդէս		99
- Մահմուտ Արքայ Այցելեց Բերդեհէմ Շնորհաւորեց Հայկական Մշտնդը		99-100
- Ուխտագնացութիւն դէպի Յորդանան Գետ	Կորին Արդ. Բաղդասարեան	

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

- Բովանդակութիւն		101-106
------------------	--	---------



Ե2. 27 Դեկտ. 07.- Ս. Մենդեան Տանարի Տարեկան մաքրութիւն



Բ2. 31 Դեկտ. 07.- Իսրայէլի Նախագահ Շիմոն Փերեզի Նոր Տարուան հիւրասիրութիւն կրօնական համայնեմբում:



Եր. 5 Զու. 08.- Տօն Առաքելական Սուրբ Արույ: Պատրիարք Սրբազանը
 Ա. Արույի պատուանդանին առջեւ: Աջակողման Դասին մէջ Լուսարարացեալ
 Եւսեբիան Արք. Մանուկեան: Օրուան պատարագի՝ Արքա Արք. Երբովանեան:



Քշ. 7 Յուն. 08.- Տօն Ա. Ստեփանոսի: Սաղաւարտ ի զլուխ եւ բուրվառ ի ձեռին (Զախէն Աջ) Աթանաս Ուր. Կիրակոսեան, Հրայր Ուր. Լալայեան, Սահակ Սրկ. Յովակիմեան, Պաւլ Սրկ. Կարապետեան, Նարեկ Սրկ. Մկրտչեան, Արտակ Սրկ. Յակոբեան, Սամուէլ Սրկ. Սաֆարեան, Արարատ Սրկ. Զարգարեան, Իվան Ուր. Գեաղայեան, Արմէն Ուր. Պուլուզեան, Արտակ Ուր. Վարդանեան, Յովհաննէս Ուր. Մարտիրոսեան:



Ա. Ստեփանոսի տօնին առիթով երկու Սարկաւազապետեր՝ Բագրատ Վրդ. Պուրճէֆեան եւ Իսահակ Արդ. Մինասեան, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Նուրիան Արք. Մանուկեանի: Սարկաւազաց Դասը Պատրիարքարանի ղազիլինին մէջ Պատրիարք Սրբազանին հետ:



Քշ. 7 Յուն. 08.- Ս. Ստեփանոսի տօնին առիթով Սարկաւազաց ի պատիւ տրուած ընթրիքին մասնակցեցան Միաբանութեան անդամները եւ ուսուցչական կազմը:



Եջ. 10 Յուն. 08.- Տօն Ռդդոնց Ռրոման: Ա. Գլխարկի մատուրն մէջ
Ա. Պատարագը մատուց Լուսարարագետ Նուրիան Արք. Մանուկեան:



ԵՂ. 10 Յուն. 08.- Տօն Որդւոցն Որոտման: Ս. Պատարագէն յետոյ
 եռադարձ քափօրին հանդիսապետեց Լուսարարապետ Նուրհան Արք.
 Մանուկեան: Ապա Միաբանութիւն եւ ժողովուրդ քափօրով Պատրիարքարան
 քարձրացան, եւ Պատրիարք Սրբազան նշխարի քաժնեց ներկաներուն:



Կիր. 13 Յուն. 08.- Կաղանդի գիշեր ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ:



Քշ. 14 Յուն. 08.- Նոր Տարուան Ս. Պատարագի աւարտին, Պատրիարքարանի դահլիճին մէջ Թարգմանչաց Վարժարանի անունով ուղեբձէն յետոյ Պատրիարք Սրբազան աւանդական նարինջ քաժնեց ներկաներուն:



Ուր. 18 Յուն. 08.- Հայկական Մնունդի Ճրագալոյցի առաւօտուն,
 Երուսաղէմի Իսրայէլեան ոստիկանապետեր Պատրիարքարան կ'այցելեն
 շնորհաւորանքի եւ բափօրը առաջնորդելու դէպի Բեթղեհէմ: Ս. Նղիայի
 վանքին առջեւ ներկայացուցիչներ Բեթղեհէմէն, Պէյք Ճալայէն Պէյք
 Սահուրէն կը դիմաւորեն բափօրը, եւ Իսրայէլեան ձիաւորներ
 կ'առաջնորդեն մինչեւ Ռաֆէլի գերեզման:



Ուր. 18 Յուն. 08.- Պաղեստինեան ձիաւորներով երբ դէպի Բերզեհէմ:
 Մենդեան հրապարակին վրայ դիմաւորում Հ.Ե.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի եւ այլ
 համայնեան սկաւառակաւ խումբերէն, Բերզեհէմի քաղաքացիներէն,
 Ոստիկանացիներէն, Զինուորացիներէն, եւ բաւորը Բերզեհէմի Հայոց վանք
 կը բարձրանայ:



Ուր. 18 Յուն. 08.- Թափօրը Բերդեհէմի Հայոց Վանք կը բարձրանայ եւ Տ. Թորգոմ եւ Տ. Մեսրոպ Սրբազան Պատրիարք Հայրերը կ'ընդունին շնորհաւորանքի մաղբանքներ Բերդեհէմի քաղաքացիներ Տֆ. Վիքթօր Պաքարսէյի եւ Պաղեստինեան Իշխանութեան նախագահի ներկայացուցիչ Զիատ-էլ-Պանտաֆի:



Ուր. 18 Յուն. 08.- Հայկական Մեծոռնի Ճրագալոյցի արարողութիւն եւ Սուրբ Պատարագ նախագահութեամբ Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարք Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի: Պատարագիչ՝ Տ. Մեսրոպ Արք. Պարսամեան, Ս. Էջմիածնէն:



Հայկական Մեծոռնի կէս գիշերուան պաշտամունքին, Քրիստոսի Մենդեան Բարայրին մէջ, ներկայ գտնուեցան Պաղեստինեան իշխանութեան Վարչապետ Սալլամ Ֆայեատ եւ ներկայացուցիչներ:



Ուր. 18 Յուն. 08.- Հայկական Մեծնդի տօնին առիթով Բերդեհէմի Հայոց Վանքի ներքնասրահին մէջ հիւրասիրութիւն ի ներկայութեան Պաղեստինեան Իշխանութեան Նախագահ Մահմուտ Աբրասի:



Ուխտաւորներու խումբեր, Երեւանէն Դեկտեմբեր 2007ին եւ Յունուար 2008ին, եւ Կ. Պոլիսէն Յունուար 2008ին:



Շր. 26 Յուն. 08.- Տօն Անուանակոչութեան: Քրիստոսի Ս. Դերեզմանին վրայ Ս. Պատարագի մատուցումէն յետոյ Միարանութիւն եւ ժողովուրդ Պատրիարքարանի դահլին բարձրանալով տնօրհնէ՛ք կը կատարուի:



Կիր. 27 Յուն. 07.- Ուխտագնացութիւն դէպի Յորդանան Գետ, Միաբանութեամբ
 եւ ժողովուրդով:



Բշ. 21 Յուն. 08.- Հայկական Մեծնդի առիբով Պատրիարքարանի դահլիհնն մէջ շնորհաւորանքի այցելութիւն Լատինաց Պատրիարքի, Ֆրանսիսկեան Միարանութեան եւ այլ յարանուանութեանց, եւ Ղպտի, Ասորի, Հապէշ Ուղղափառ Եկեղեցիներու Հոգեւոր Պետերու եւ ներկայացուցիչներու:



Եր. 8 Դեկտ. 07.- Ապանիոյ Դամփօսթէլլա Բաղարի Սանդիակօ Մայր Տանարի
 Լուսարարապետ Դեր. Տ. Յօզէ Ֆերնանտէզի եւ Քաղաքապետի այցը, ընկերակիցներով,
 Պատրիարքարան եւ Ս. Գլխադրի մատուոյ:

Պատրիարք Սրբազան կ'ընդունի Ապաններէն Եպիսկոպոս ձեռնադրի լուսատիպ մէկ
 օրինակը, եւ կը ներկայացնէ Աստուածաշունչ մը սատակէ կողմով, ուր Աստու-
 ծամայրը՝ Երկու կողմը կանգնած Յովհ. Աւետարանիչ եւ Գր. Լուսաւորիչ, կ'ընդունի
 Ս. Յակոբի Դուխը շղարշի մը մէջ Երկու հրեշտակներու ձեռնով ներկայացուած:

«Սիոն» Ամսագրի բաժանորդագրություն

- Սիոն ամսագրի խմբագրությունը կը փորձէ սրբագրել եւ ամբողջացնել ցամակը իր բաժանորդներուն։
 - Եթէ կը ցամակաք որ ձեր անունը ունենանք ցամակիմ մէջ մեր բաժանորդներուն, համեմտեք մերքեւի կտրումը յստակ եւ զիսագիր տառերով ամբողջացնել եւ փութով մեր մօր հասցէիմ ղրկել։ P.O.Box 14235 Jerusalem, Old City, Isr.
 - Նախորդ տարիներում Սիոն ամսագիրը ձրի ղրկուած է հարիւրմներով հասցէներու։ Նկատի առած մամուլամղ զումաւոր էշերու տպագրութեամ սղութիւնը պարտաւոր ենք ձեզմէ բաժանորդագիմ իմղրել։

Խմբագրութիւն

**ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԼԷՄ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՆԻ**

Անուն.-----
 Տիտղոս.-----
 Կազմակերպութիւն.-----

 Հասցէ.-----

 Համեմտեք մերքեակ գտնել մեր փոխգիրը-----
 Իր բաժանորդագիմ ՍՈՒՆԻ-----
 ՊԱՐՁ Կամ ՕՂԱՅԻՆ ԹՂԹԱՏԱՐՈՎ ՂՐԿԵԼՈՒ-----
 Ատորագրութիւն
 Բաժմնէիմ.-

*արզ Թղթատարով	Մէկ տարի	Օղայիմ Թղթատարով
US\$108*	Երկու տարի	US\$ 128
US\$200		US\$ 240

*Կամ՝ ձեր երկրիմ համապատասխան զումարով։



NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is drawing up a new updated list of subscribers to its official gazette, SION.
 In order to ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance, as soon as possible.
 Please write to our new address: POB 14235, Jerusalem, Israel.
 We would like to point out that while in previous years it has been the custom to distribute the gazette virtually free of charge to hundreds of subscribers, escalating costs and, particularly, the introduction of colour printing, has imposed upon us the obligation of trying to recover part of these costs.

The Editor

"SION" SUBSCRIPTION RENEWAL FORM

Name:	Address:
Title:	
Organisation:	

Please enter my/our subscription for "SION," for a period of _____ year(s).
 My/our check for _____ covering the cost of subscription and
 Surface/Airmail charges, made out to the Patriarchate, is enclosed.

Signature:	RATES: Surface Mail	Air Mail
Official seal:	1 year: US\$108*	1 year: US\$ 128
	2 years: US\$200	2 years: US\$ 240

*Or equivalent in your local currency.

